ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՆՈՅԵՄԲԵՐ 2012

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Նվազեցվել են լիաժամկետ միսիոներների տարիքային պահանջները

Հայտարարվել են երկու նոր տաճարներ

Ներկայացվել է երիտասարդների նոր ուսումնական ծրագիրը

© WALTER RANE, ՉՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Եվ ամենքը կերան և կշտացան, Վոլթեր Ռեյն

«Եվ այն հինգ հացը և երկու ձուկն առած [Հիսուսը] դեպի երկինքը նայեց՝ օրհնեց կտրեց հացերը, և իր աշակերտներին տվավ որ զցեն նորանց առաջը. և այն երկու ձուկը բաժանեց ամենին. Եվ ամենքը կերան և կշտացան» (Մարկոս 6.41–42):

«Եվ ուտողները հինգ հազարի չափ մարդիկ էին բացի կանանցից և երեխաներից» (Մատթեոս 14.21):

Բովանդակություն Նոյեմբեր 2012

Հատոր 13 • Համար 4

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

4 Բարի գալուստ համաժողով
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

6 Այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում:
Երեց Քվենթին Լ. Քուք

10 Ես գիտեմ դա: Ես ապրում եմ դրանով: Ես սիրում եմ դա:
Էնն Մ. Դիք

12 Անասելի պարգև Աստծուց
Երեց Քրեյգ Ս. Քրիսչենսեն

15 «Որովհետեւ ես կենդանի եմ, եւ դուք կենդանի կլինեք»
Երեց Շեյն Մ. Բոուեն

18 Հարցրեք միսիոներներին: Նրանք կարող են օգնել ձեզ:
Երեց Ռասսել Մ. Նելսոն

21 Ափսոսանքների և վճիռների մասին
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

25 Եկեղեցու պաշտոնյաների հաստատումը
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

26 Դառնալ լավ ծնողներ
Երեց Լ. Թոմ Փերի

29 Եռանդուն ներգրավված
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

32 «Եկեք ինձ մոտ, ով Դուք, Իսրայելի տուն»
Երեց Լարի Էքո Հոք

34 Ի՞նչ փրկանք կտա մարդ իր անձի համար
Երեց Ռոբերտ Ք. Գեյ

37 Տաճարի չափանիշ
Երեց Սքոթ Դ. Վայթինգ

39 Ձեր հավատքի փորձությունը
Երեց Նիլ Լ. Անդերսեն

43 Պաշտպանել երեխաներին
Երեց Դալլին Հ. Օուքս

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

47 Եղբայրներ, մենք գործ ունենք կատարելու
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

51 Եղեք անվեհեր խիզախության, ուժի և գործի մեջ
Եպիսկոպոս Գարի Է. Սթիվենսոն

54 Զգուշացեք ձեզ համար
Երեց Էնթոնի Դ. Փերքինս

57 Քահանայության վերականգնումը
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

60 Օգնեք նրանց բարձր նպատակներ դնել
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

68 Տեսեք ուրիշներին այնպես, ինչպիսին նրանք կարող են դառնալ
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

72 Որտե՞ղ է տաղավարը
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

75 Քավությունը
Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

78 Նախ նկատեք, ապա ծառայեք
Լինդա Ք. Բըրթըն

81 Սրտով սովորել
Երեց Վոլթեր Ֆ. Գոնզալես

83 Առաջին մեծ պատվիրանը
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

86 Հիշեք օրհնությունները
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

90 Լինել ավելի քրիստոսանման քրիստոնյա
Երեց Ռոբերտ Դ. Հեյզ

93 Մահացածներին փրկագնելու ուրախությունը
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

96 Մեկ քայլ մոտ Փրկչին
Ռասսել Տ. Օսգաթորպ

99 Հավատքով են կատարվում բոլոր բաները
Երեց Մարկոս Բ. Նաշ

101 Դառնալով ճշմարիտ հետևորդ
Երեց Դենիել Լ. Ջոնսոն

104 Հաղորդության օրհնությունները
Երեց Դոն Ռ. Քլարկ

106 Դարձ դեպի Տերը
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

110 Տեր ընդ ձեզ մինչև նոր հադիպում
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ

111 Արդյոք Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ հավատքը գրվա՞ծ է մեր սրտերում:
Լինդա Ք. Բըրթըն

115 Արթնանանք մեր պարտականության մեջ
Քերոլ Մ. Սթեֆենս

118 Տերը մեզ չի մոռացել
Լինդա Շ. Ռիվս

121 Խնամատարներ
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

64 Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

125 Համաժողովի պատմությունների ցուցիչ

126 Եկեղեցու նորությունները

128 Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

182-րդ ամենամյա գերագույն համաժողովի ամփոփում

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2012
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացման աղոթք՝ Երեց Քեվին Ռ. Դանքըն: Փակման աղոթք՝ Երեց Խուան Ա. Ուսեդա: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայըն Մըրֆի, երգեհոնահարներ՝ Քլեյ Քրիսչենսեն և Ռիչարդ Էլիոթ. "Glory to God on High," *Hymns,* no. 67; "How Firm a Foundation," *Hymns,* no. 85, arr. Wilberg, pub. Oxford; "Lord, I Would Follow Thee," *Hymns,* no. 220; "We Thank Thee, O God, for a Prophet," *Hymns,* no. 19; "I Will Follow God's Plan," *Children's Songbook,* 164, arr. Hofheins, unpublished; "Now Let Us Rejoice," *Hymns,* no. 3, arr. Wilberg, unpublished:

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2012
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացման աղոթք՝ Երեց Ջերիթ Վ. Գոնգ: Փակման աղոթք՝ Երեց Հոսե Լ. Ալոնսո: Երաժշտություն՝ երիտասարդների միացյալ երգչախումբ Բենյոնիցն Թեյլորսվիլից, Յուտա; խմբավար՝ Լի Թարանթ, երգեհոնահարներ՝ Լինդա Մարջեթս և Բոննի Գուդլիֆ. "Arise, O Glorious Zion," *Hymns,* no. 407; "I Am a Child of God," *Hymns,* no. 301, arr. Perry, unpublished; "Let Us All Press On," *Hymns,* no. 243; "On This Day of Joy and Gladness," *Hymns,* no. 64, arr. Huff, unpublished:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԱՆ, ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2012
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացման աղոթք՝ Երեց Ջեյ Ի. Ջենսեն: Փակման աղոթք՝ Երեց Պատրիկ Քիրոն: Երաժշտություն՝ Մելքիսեդեկյան Քահանայության երգչախումբ Օգդենից, Յուտա; խմբավարներ՝ Ստեֆեն Պ. Շանկ և Դերեկ Ֆարչ, երգեհոնահար՝ Էնդրյու Անսվորթ. "Praise to the Lord, the Almighty," *Hymns,* no. 72; "Love One Another," *Hymns,* no. 308, arr. Furch, unpublished; "Guide Us, O Thou Great Jehovah," *Hymns,* no. 83; "Hope of Israel," *Hymns,* no. 259, arr. Schank, unpublished:

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2012
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացման աղոթք՝ Երեց Մարլին Ք. Ջենսեն: Փակման աղոթք՝ Երեց Քեյթ Ռ. Էդվարդս: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝ Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Անսվորթ. "Oh Say, What Is Truth?" *Hymns,* no. 272; "The Morning Breaks," *Hymns,* no. 1, arr. Wilberg, unpublished; "Does the Journey Seem Long?" *Hymns,* no. 127, arr. Wilberg, unpublished (Shane Warby, soloist); "Called to Serve," *Hymns,* no. 249; "If the Savior Stood Beside Me," CSMP by Sally DeFord, arr. Cardon, unpublished; "If the Way Be Full of Trial, Weary Not," *Songs of Zion* (1912), no. 158, arr. Wilberg, unpublished:

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2012
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացման աղոթք՝ Երեց Օկտավիանո Տենորիո: Փակման աղոթք՝ Երեց Լարի Վ. Գիբբոնս: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայըն Մըրֆի, երգեհոնահարներ՝ Բոննի Գուդլիֆ և Լինդա Մարջեթս. "The Day Dawn Is Breaking," *Hymns,* no. 52, arr. Murphy, unpublished; "Did You Think to Pray?" *Hymns,* no. 140, arr. Wilberg, pub. Jackman; "Rejoice, the Lord Is King," *Hymns,* no. 66; "God Be with You Till We Meet Again," *Hymns,* no. 152, arr. Wilberg, unpublished:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԱՆ, ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2012
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող՝ Լինդա Կ. Բըրթըն: Բացման աղոթք՝ Մարիա Տորես: Փակման աղոթք՝ Մելինդա Բարոու: Երաժշտություն՝ երիտասարդ ամուրի քույրերի երգչախումբ Սոլթ Լեյք Բոննեվիլ, Սոլթ Լեյք Հոլլադեյ և Մյուրեյ Յուտա ԵԱ ցցերից, խմբավար՝ Էմիլի Վեդլի, երգեհոնահար՝ Լինդա Մարջեթս. "Let Us All Press On," *Hymns,* no. 243; medley of "He Sent His Son," *Children's Songbook,* 34, and "I'm Trying to Be like Jesus," *Children's Songbook,* 78, arr. Sally DeFord, unpublished; "I Stand All Amazed," *Hymns,* no. 193; "I Need Thee Every Hour," *Hymns,* no. 98, arr. Beebe, pub. Larice:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Տարբեր լեզուներով գերագույն համաժողովի ելույթները մատչելի են **conference.lds.org** կայքում: Ընտրեք լեզուն:

Սովորաբար համաժողովից հետո երկու ամիսների ընթացքում աուդիո ձայնագրությունները մատչելի են բաշխման կենտրոններում:

ՏՆԱՅԻՆ ԵՎ ԱՅՑԵԼՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐ
Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար խնդրում ենք ընտրեք այն ելույթը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում այցելում եք:

ԿԱՋՄԻ ՎՐԱ
Առջևում. Լուսանկարը՝ Դերեկ Իսրաելսենի:
Ետևում. Լուսանկարը՝ Լեսլի Նիլսոնի:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ
Գերագույն համաժողովի տեսարանները Սոլթ Լեյք Սիթիում լուսանկարվել են Քրեյգ Դայմոնդի, Վելդեն Ս. Անդերսենի, Ջոն Լյուքի, Մեթյու Ռեյերի, Քոդի Բելի, Լեսլի Նիլսոնի, Վեստոն Քոլթոնի, Սառա Ջենսենի, Դերեկ Իսրայելսենի, Սքոթ Դեյվիսի, Քրիսթի Ջորդանի, Ռենդի Քոլյերի, Լոյդ Էլդրիջի և Կառա Քոլի կողմից, Բոտսվանայում՝ Ջոն Հանթսմանի, Բրազիլիայում՝ Ֆրանսիսկո Ֆլավիո Դայաս Կարնեյրոյի, Էստոնիայում՝ Ամանդա Ռոբինսոնի, Հունաստանում՝ Դեյվիդ Լ. Մոուերի, Իտալիայում՝ Քրիստոֆեր Դինի, Մեքսիկայում՝ Կառլոս Իսրայել Քիթեռեզ Ռոբլսի, Մոզամբիկում՝ Դենիել Օսբորնի, Լեհաստանում՝ Լոյս Ջենսենի, Շոտլանդիայում՝ Ջոն Ջ. Գեհեմի, Իսպանիայում՝ Էնթոնի Գարսիա Քորիուսի, և Տայվանում՝ Դեննի Չեն Լայի կողմից:



ՆՈՅԵՄԲԵՐ 2012 ՀԱՏ. 13 Հ. 4
ԼԻԱՀՈՆԱ 10491 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Քֆ. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ջոզեֆ Բ. Վիրթլին, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քուենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Քրեյգ Ա. Քարդոն
Խորհրդատուներ. Շեյն Մ. Բոուեն, Բրեդլի Դ. Ֆոսթեր, Քրիստոֆել Գոլդեն Կրտս., Էնթոնի Փերքինս

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Թ. Ուորներ
Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Վինսենթ Ա. Վոն
Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալլան Ռ. Լոյբորգ
Գործարար կառավարիչ. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն
Գլխավոր խմբագրի օգնական. Լառեն Փորթեր Գանթ
Հրատարակչության օգնական. Մելիսա Ջենտենո
Ստեղծագործական և խմբագրական կազմ. Սյուզան Բարեթ, Ռայան Քար, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Մինդի Ռեյ Ֆրիդման, Հիքարի Լոֆտաս, Լիա ՄակՔանահան, Մայքլ Ռ. Մորիս, Ռիչարդ Մ. Ռոմնի, Փոլ Վանդենբերգ, Ջուլիա Վուդբըրի

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նաղսեն
Արվեստի գծով տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն
Դիզայնի կազմ. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Փ. Անդրուս, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Քերի Լին Ս. Հերին, Քոլին Հինքլի, Էրիկ Պ. Ջոնսեն, Սքոթ Մ. Մոյ, Բրեդ Թիլր
Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Հրատարակչության կազմ. Քոնի Բոթորփ Բրիջ, Հովարդ Գ. Բրաուն, Ջուլի Բարդեթ, Բրայան Վ. Գիջի, Քեթլին Հովարդ, Դենիս Քըրբի, Ջինի Ջ. Նիլսոն, Թայ Փիլչեր, Գեյլ Թեյթ Ռաֆերթի
Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ
Բաշխման տնօրեն. Էվան Լարսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար կապվեք եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոնի կամ ծխի/ճյուղի ղեկավարի հետ:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թայերեն, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատվիերեն, լեհերեն, լիտվերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քբեռաևան, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների:)

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և նկարները կարելի է պատճենահանել առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: November 2012 Vol. 13 No. 4. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send address changes to Salt Lake Distribution Center, Church Magazines, PO Box 26368, Salt Lake City, UT 84126-0368.

ԽՈՍՆԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Այրինգ, Հենրի Բ., 60, 72, 121
Անդերսեն, Նիլ Լ., 39
Բալլարդ, Մ. Ռասսել, 29
Բեդնար, Դեյվիդ Ա., 106
Բըրթըն, Լինդա Ք., 90, 111
Բոուեն, Շեյն Մ., 15
Գայ, Ռոբերտ Ս., 34
Գոնզալես, Վոլթեր Ֆ., 81
Դիբ, Էնն Մ., 10
Էքո Հոք, Լարի, 32
Հեյլս, Ռոբերտ Դ., 90
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 83
Մոնսոն, Թոմաս Ս., 4, 68, 86, 110
Նաշ, Մարկուս Բ., 110
Նելսոն, Ռասսել Մ., 18
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 21, 57
Ջոնսոն, Դենիել Լ., 117
Ռիվս, Լինդա Ս., 118
Սթեֆենս, Քերոլ Մ., 115
Սթիվենսոն, Գարի Ի., 51
Սքոթ, Ռիչարդ Գ., 93
Վայթինգ, Սքոթ Դ., 37
Փաքեր, Բոյդ Ք., 75
Փերի, Լ. Թոմ, 26
Փերքինս, Էնթոնի Դ., 54
Քլարկ, Դոն Ռ., 104
Քուք, Քվենթին Լ., 6
Քրիսչենսեն, Քրեյգ Ս., 12
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 47
Օուքս, Դալլին Հ., 43
Օսգութորփ, Ռասսել Թ., 109

ԹԵՄԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ակտիվացում, 68
Աղոթք, 86
Ամուսնություն, 26, 43, 47
Աշակերտություն, 21, 29, 90, 83, 90, 117
Աշխատանք, 47
Աշխատանք, 29
Ապաշխարություն, 34, 75
Առաջնահերթություններ, 21
Բժշկում, 81
Գթություն, 121
Դարձ, 6, 54, 81, 109, 106
Երախտագիտություն, 127
Երեխաներ, 15, 43
Երիտասարդներ, 60
Զոհաբերություն, 34
Ընտանեկան պատմություն, 93
Ընտանիք, 26, 43, 54
Ընտրություն, 51
Իսրայելի տուն, 32
Ծառայություն, 12, 29, 57, 72, 90, 117, 127, 115, 121
Հաղորդություն, 104
Համեստություն, 34, 72
Հայտնություն, 60
Հավատարմություն, 83
Հավատք, 39, 72, 110, 111
Հարությունը, 15
Հիսուս Քրիստոս, 15, 18, 75, 110, 111, 118
Հնազանդություն, 117
Հույս, 15
Զախորդություն, 39, 127, 115
Մահ, 15
Մաքրաբարոյություն, 6, 39
Մերկագրություն, 6
Միսիոներական աշխատանք, 4, 18
Մորմոնի Գիրք, 32
Նվիրագործում., 51
Ոգեշնչում, 86
Ուխտեր, 54
Ուսուցանել, 18, 109
Ուրախություն, 21, 57
Չափանիշներ, 37
Պարտավորություն, 115
Սեր, 10, 90, 83, 118
Սովորել, 10, 109
Սուրբ Հոգի, 12, 81, 110
Սփոփող Միություն, 111, 115, 121
Վերականգնում, 18
Վկայություն, 68, 106
Տաղանդներ, 60
Տաճարներ, 4, 12, 37, 93
Քահանայություն, 47, 51, 54, 57
Քաջություն, 51, 68
Քավություն, 6, 75, 104, 111
Քրիստոնեություն, 90

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Բարի գալուստ համաժողով

Եկեք ուշադիր լսենք այն ուղերձները, . . . որպեսզի մենք լցվենք Տիրոջ Հոգով և ստանանք այն գիտելիքը, որը Նա ցանկանում է մեզ համար:

Որքան որ տեսնում եմ, բոլոր նստատեղերը զբաղեցված են, բացի այն մի քանիսը ետևում: Կա բարելավվելու տեղ: Սա քաղաքավարի մոտեցում է նրանց, ովքեր կարող են փոքր ինչ ուշանալ ճանապարհային խցանումների պատճառով, որպեսզի նրանք տեղ գտնեն, երբ ներս մտնեն:

Սա մեծ օր է՝ համաժողովի օր: Մենք լսեցինք սքանչելի երգչախմբի հրաշալի կատարումը: Ամեն անգամ, երբ ես լսում եմ երգչախմբի կատարում, երգեհոն կամ դաշնամուր, մտածում եմ մորս մասին, ով ասել է. «Ես ուրախ եմ ամեն նվաճումով, որ դու ունեցել ես, բոլոր աստիճաններով, որ դու ձեռք ես բերել և ամբողջ աշխատանքով, որ դու արել ես: Իմ միակ ափսոսանքն է, որ դու չշարունակեցիր դաշնամուր նվագելը»: Շնորհակալություն, մայրիկ: Որքան կուզենայի դա արած լինեի:

Որքան լավ է, իմ եղբայրներ և քույրեր, ողջունել ձեզ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի 182-րդ կիսամյա գերագույն համաժողովին:

Վեց ամիս առաջ մեր վերջին հանդիպումից հետո երեք նոր տաճարներ են նվիրագործվել և մեկ տաճար՝ վերանվիրագործվել: Մայիսին ես պատիվ ունեցա նվիրագործելու սքանչելի Կանզաս Սիթի Միսսուրի տաճարը և ներկա գտնվեցի դրա հետ կապված մշակութային տոնակատարությանը: Ավելի մանրամասն կպատմեմ այդ տոնակատարության մասին վաղվա առավոտյան իմ ելույթում:

Հունիսին Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը նվիրագործեց երկար սպասված տաճարը Մանաուսում, Բրազիլիա, իսկ սեպտեմբերի սկզբին Նախագահ Հենրի Բ. Այրինգը վերանվիրագործեց վերանորոգված տաճարը Բուենոս Այրեսում, Արգենտինա, որը ես պատիվ եմ ունեցել նվիրագործել մոտ 27 տարի առաջ: Միայն երկու շաբաթ առաջ Նախագահ Բոյդ Կ. Փաքերը նվիրագործեց գեղեցիկ Բրիգամ Սիթի տաճարը իր հարազատ քաղաքում, որտեղ նա ծնվել և մեծացել է:

Նախկինում ես նշել եմ, որ չկա Եկեղեցու կողմից կառուցված որևէ շինություն, որն ավելի կարևոր է, քան տաճարը, և մենք աշխարհով մեկ ունենք 139 գործող տաճար, 27 տաճար՝ հայտարարված կամ կառուցման ընթացքում: Մենք երախտապարտ ենք այդ սրբազան շինությունների և այն օրհնությունների համար, որ դրանք բերում են մեր կյանք:

Այս առավոտ ես հաճույքով հայտարարում եմ երկու լրացուցիչ տաճարների մասին, որ կկառուցվեն գալիք ամիսների և տարիների ընթացքում հետևյալ վայրերում՝ Տուսկոն, Արիզոնա, և Առեքիպա, Պերու: Այս տաճարներին վերաբերող մանրամասները կտրամադրվեն ապագայում, երբ ձեռք բերվեն անհրաժեշտ թույլտվությունները և հաստատումները:

Եղբայրներ և քույրեր, այժմ անդրադառնանք մեկ այլ հարցի՝ միսիոներական ծառայությանը:

Որոշ ժամանակի ընթացքում Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը թույլ էին տվել որոշ երկրներից երիտասարդ տղամարդկանց ծառայել 18 տարեկան հասակում, եթե նրանք արժանի են, ունակ, ավարտել են ավագ դպրոցը և անկեղծ ցանկություն են արտահայտել ծառայելու: Սա որոշակի երկրների համար նախատեսված քաղաքականություն էր, որը թույլ տվեց հազարավոր երիտասարդ տղամարդկանց ծառայել պատվավոր միսիաներ և նաև կատարել պահանջվող զինվորական պարտավորությունները և ունենալ կրթության հնարավորություն:

Այդ 18 տարեկան միսիոներների հետ կապված մեր փորձառությունը դրական էր: Նրանց միսիաների նախագահները զեկուցում են, որ նրանք հնազանդ են, հավատարիմ, հասուն և ծառայում են նույնքան

արհեստավարժությամբ, որքան նույն միսիաներում ծառայող ավելի ավագ միսիոներները: Նրանց հավատարմությունը, հնազանդությունը և հասունությունը թույլ են տվել մեզ միսիոներական վաղատարիք այս ծառայության տարբերակը տարածել *բոլոր* երիտասարդ տղամարդկանց վրա, անկախ իրենց բնակության երկրից:

Ես հաճույքով հայտարարում եմ, որ այս պահից ուժի մեջ է մտնում այն, որ բոլոր արժանի երիտասարդ տղամարդիկ, ովքեր ավարտել են ավագ դպրոցը կամ դրան համարժեք դպրոց, անկախ իրենց բնակության վայրից, հնարավորություն ունեն երաշխավորվելու միսիոներական ծառայության 19-ի փոխարեն 18 տարեկանից: Ես չեմ առաջարկում, որ այդ տարիքի բոլոր երիտասարդ տղամարդիկ ծառայեն, կամ պետք է ծառայեն: Ելնելով անձնական հանգամանքներից, ինչպես նաև քահանայության ղեկավարների որոշումից, այս հնարավորությունն այժմ մատչելի է:

Աղոթքով խորհելով այն մասին, թե որ տարիքից կարող են երիտասարդ տղամարդիկ սկսել իրենց միսիոներական ծառայությունը, մենք նաև քննարկել ենք երիտասարդ կանանց ծառայելու հնարավոր տարիքը: Այսօր ես ուրախությամբ հայտարարում եմ, որ արժանի երիտասարդ կանայք, ովքեր ծառայելու ցանկություն ունեն, կարող են երաշխավորվել միսիոներական ծառայության սկսած ոչ թե 21, այլ 19 տարեկանից:

Մենք հաստատում ենք, որ միսիոներական աշխատանքը քահանայության պարտականություն է, և խրախուսում ենք բոլոր արժանի և ֆիզիկապես ու մտավոր առումով ունակ երիտասարդ տղամարդկանց արձագանքել ծառայելու կոչմանը: Շատ երիտասարդ կանայք նույնպես ծառայում են, սակայն նրանք նույն պարտավորությունը չեն կրում, ինչպես երիտասարդ տղամարդիկ: Համենայն դեպս, մենք հավատացնում ենք, որ Եկեղեցու երիտասարդ քույրերը արժեքավոր ներդրում են կատարում որպես միսիոներներ, և մենք ողջունում ենք նրանց ծառայությունը:

Մենք շարունակում ենք ավելի ու ավելի շատ ավագ զույգերի կարիք ունենալ: Եթե թոշակի անցնելուց հետո ձեր պայմանները և ձեր առողջությունը թույլ են տալիս, ես խրախուսում եմ ձեզ դիմել լիաժամկետ միսիոներական ծառայությանը: Ամուսինը և կինը՝ երկուսն էլ մեծ ուրախություն կզտնեն, երբ միասին ծառայեն մեր Հոր զավակներին:

Այժմ, իմ եղբայրներ և քույրեր, եկեք ուշադիր լսենք այն ուղերձները, որոնք կներկայացվեն հաջորդ երկու օրերի ընթացքում, որպեսզի մենք լցվենք Տիրոջ Հոգով և ստանանք այն գիտելիքը, որը Նա ցանկանում է մեզ համար: Որ սա լինի մեր փորձառությունը, ես աղոթում եմ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորումից

Այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում:

Եկեղեցու անդամներից ոմանք Ալմայի հարցին չեն կարող այո բարձրաձայնել: Նրանք այժմ չունեն նման զգացում:

Նախագահ Մոնսոն, մենք սիրում, հարգում և աջակցում ենք ձեզ: Միսիոներական ծառայության հետ կապված այս պատմականորեն նշանակալից հայտարարությունը ոգեշնչող է: Այս կարող եմ հիշել այն ոգևորությունը, որը առկա էր 1960 թվականին, երբ ծառայող տղաների տարիքը 20-ից իջեցվեց 19 տարեկանի: Ես նոր էի եկել Բրիտանական միսիա որպես նոր կանչված 20 տարեկան միսիոներ: Մեր միսիա ժամանած առաջին 19 տարեկան միսիոները երեց Ջեֆրի Ռ. Հոլանդն էր՝ անհավանական ավելացում: Մի քանի ամիս նա ամաչում էր 20 տարեկաններից: Ապա մեկ տարվա ընթացքում 19 տարեկան շատերը եկան միսիայի: Նրանք հնազանդ և հավատարիմ միսիոներներ էին և աշխատանքը առաջադիմում էր: Համոզված եմ, որ ավելի մեծ բերքահավաք կհավաքվի, երբ արդար և նվիրված միսիոներները կկատարեն ավետարանը քարոզելու Տիրոջ պատվիրանը:

Իմ կարծիքով, դո՛ւք, աճող սերնդի ներկայացուցիչներդ, ավելի լավ եք պատրաստված, քան նախորդ սերունդներից որևէ մեկը: Սուրբ գրությունների ձեր գիտելիքները հատկապես տպավորիչ է: Այնուամենայնիվ, այն մարտահրավերները, որոնց ձեր սերունդը հանդիպում է, մինչ պատրաստվում է ծառայության, նման են բոլոր Եկեղեցու անդամների մարտահրավերներին: Բոլորս գիտենք, որ աշխարհի մշակույթները, մեծամասամբ, չեն նպաստում արդարությանը ոչ էլ հոգեւոր

նվիրվածությանը: Եկեղեցու ողջ պատմության ընթացքում ղեկավարները նախազգուշացրել են ժողովրդին և ապաշխարություն են ուսուցանել: Մորմոնի Գրքում Ալմա կրտսերը այնքան էր մտահոգված անարդարությամբ և պատասխանատվության բացակայությամբ, որ նա հրաժարվեց Նեփիի ժողովրդի ղեկավարի՝ գլխավոր դատավորի պաշտոնից, և ողջ իր ջանքերը կենտրոնացրեց իր մարգարեական կոչման վրա:[1]

Բոլոր սուրբ գրությունների ամենախորիմաստ հատվածներից մեկում Ալման հայտարարում է. «Եթե դուք զգացել եք սրտի մի փոփոխություն, և եթե դուք տրամադրված եք եղել երգելու քավիչ սիրո երգը, ես կկամենայի հարցնել, այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում:[2]

Տեղական ղեկավարները ողջ աշխարհում տեղեկացնում են, որ ընդհանուր առմամբ, Եկեղեցու անդամները, հատկապես մեր երիտասարդությունը, երբևէ ավելի ուժեղ չի եղել: Բայց նրանք գրեթե միշտ բարձրացնում են երկու մտահոգություն, առաջինը՝ անարդարության աճի մարտահրավերը աշխարհում և երկրորդը՝ անտարբերությունը և պատասխանատվության բացակայությունը որոշ անդամների մոտ: Նրանք խորհուրդ են փնտրում, թե ինչպես օգնեն անդամներին՝ հետևելու Փրկչին և հասնելու խորը և տևական դարձի:

«Այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում» հարցը հնչում է դարերի միջով: Այն ամենով հանդերձ, ինչ մենք ստացել ենք ներկա տնտեսության ժամանակ՝ ներառյալ Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության Վերականգնումը, հոգևոր պարգևների հորդումը և երկնքի անվիճելի օրհնությունները, Ալմայի մարտահրավերը երբեք ավելի կարևոր չի եղել:

1943 թվականին Էզրա Թաֆթ Բենսոնը Առաքյալ կանչվելուց ոչ շատ անց, Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթը[3] խորհուրդ տվեց. «Ձեր առաքելությունն է . . . նախազգուշացնել ժողովրդին . . . այնպիսի բարությամբ, ինչպիսին հնարավոր է, որ ապաշխարությունը միակ

սպեղանին կլինի այս աշխարհի չարիքների համար»:[4] Երբ այս միտքն արտահայտվեց, մենք Երկրորդ Աշխարհամարտի մեծ հակամարտության մեջ էինք:

Այսօր բարոյական այլասերումն ավելի է սաստկացել: Մի նշանավոր գրող վերջերս ասել է. «Բոլորը գիտեն, որ մշակույթը վնասակար է դարձել և ոչ ոք հույս չունի, որ այն կփոխվի»:[5] Բռնության և անբարոյականության անընդհատ պատկերումը երաժշտության, զվարճության, արվեստի և այլ տեղեկատվության մեջ, մեր ամենօրյա մշակույթում աննախադեպ է: Սա տխրությամբ նկարագրվել է մի շատ հարգելի մկրտական աստվածաբանի կողմից, երբ նա ասել է. «Ողջ քաղաքակրթության հոգևոր իմունային համակարգը խոցված է»:[6]

Զարմանալի չէ, որ Եկեղեցու անդամներից ոմանք Ալմայի հարցին չեն կարող այո բարձրաձայնել: Նրանք այժմ չունեն նման զգացում: Նրանք զգում են, որ իրենք հոգևոր երաշտ են ապրումՈմանք էլ բարկացած են, վիրավորված կամ հիասթափված: Եթե այս նկարագրությունները վերաբերում են ձեզ,[7] ձեզ համար կարևոր կլինի գնահատել, թե ինչու «այժմ դուք չունեք այդպիսի զգացում»:

Շատերը, ովքեր հոգևոր երաշտ և նվիրվածության պակասություն են ապրում, անպայման չէ, որ մեծ մեղքերի կամ օրինազանցությունների մեջ ընկած լինեն, սակայն նրանք կատարել են ոչ իմաստուն ընտրություններ: Ոմանք անփույթ են սրբազան ուխտերին հետևելիս: Մյուսներն իրենց ժամանակի մեծ մասը ծախսում են՝ առաջնակարգ նվիրում տածելով ավելի քիչ կարևորություն ունեցող գործերին: Ոմանք թույլ են տալիս, որ մշակութային կամ քաղաքական եռանդուն տեսակետները թուլացնեն իրենց նվիրվածությունը Հիսուս Քրիստոսի ավետարանի հանդեպ: Ոմանք էլ սուզվում են համացանցի նյութերի մեջ, որոնք մեծացնում են, չափազանցեցնում, իսկ որոշ դեպքերում էլ հնարում են թերություններ Եկեղեցու վաղ շրջանի ղեկավարների մեջ: Ապա նրանք գալիս են ոչ ճիշտ եզրակացությունների, որոնք կարող են ազդել վկայության վրա: Նրանցից յուրաքանչյուրը, ովքեր արել են այս ընտրությունները, կարող են ապաշխարել և հոգեպես նորոգվել:

Սուրբ գրությունների մեջ խորասուզվելը էական դեր ունի հոգևոր սնուցման համար:[8] Աստծո խոսքը նվիրվածություն է ոգեշնչում ներգործում է որպես ապաքինող սպեղանի վիրավորված զգացումների, բարկության կամ հիասթափության համար:[9] Երբ մեր նվիրվածությունը նվազում է, ինչ-որ պատճառով, լուծման մի մասն ապաշխարությունն է:[10] Նվիրվածությունն ու ապաշխարությունը սերտորեն միահյուսված են:

Կ. Ս. Լյուիսը՝ այդ աշխատասեր, գործնապաշտ քրիստոնյա գրողը, կտրուկ անդրադարձել է այս հարցին: Նա պնդել է, որ քրիստոնեությունը քարոզում է մարդկանց ապաշխարել և նրանց ներում է խոստանում, բայց մինչև մարդիկ գիտակցում են և զգում, որ իրենք ներման կարիք ունեն, քրիստոնեությունը չի խոսում նրանց հետ: Նա նշել է. «Երբ դուք հիվանդ եք, դուք կկամենաք լսել բժշկին»:[11]

Մարգարե Ջոզեֆը նշել է, որ միչև ձեր մկրտությունը, դուք կարող եք լինել չեզոք գոտում բարու և չարի միջև: Բայց «երբ դուք միանում եք այս Եկեղեցուն, դուք համաձայնվում եք ծառայել Աստծուն: Երբ դուք անում եք դա, դուք թողնում եք չեզոք գոտին և դուք երբեք չեք կարող ետ [գնալ]»: Նրա խորհուրդն էր, որ մենք երբեք չլքենք Տիրոջը:[12]

Ալման շեշտում է, որ Հիսուս Քրիստոսի Քավությամբ «ողորմածության բազուկները մեկնված են» դեպի նրանց, ովքեր ապաշխարում են:[13] Այնուհետև նա հարցնում է մանրամասն և կարևոր հարցեր՝ ինչպիսիք են. Արդյոք մենք պատրաստ ե՞նք հանդիպելու Աստծուն: Արդյոք մեզ պահում ե՞նք անմեղ: Մենք պետք է բոլորս մտածենք այս հարցերի շուրջ: Ալմայի անձնական փորձառությունը, երբ թերացել էր հետևել իր հավատարիմ հորը, իսկ հետո եկել էր ցնցող մի ըմբռնման, թե որքան շատ կարիք ունենք ներման և թե ինչ էր նշանակում երգել քավող սիրո երգը, հզոր է և ազդեցիկ:

Չնայած որ նվիրվածությունը թուլացնող ցանկացած բան հատևանք է թողնում, այնուամենայնիվ, երկու փորձություն կա, որ հաճախ են տեղի ունենում և կարևոր է, որ գիտակցենք: Առաջինը՝ անբարոյացակամությունն է, կոպտությունը և ընտանեկան բռնությունը: Երկրորդը՝ սեռական անբարոյականությունն է և անմաքուր մտքերը: Դրանք հաճախ նախորդում են նվիրվածության թուլացմանը և հայտնվում են ավելի քիչ նվիրված լինելու ընտրության հիմքում:

Այն, թե ինչպես ենք վերաբերվում մեզ ամենամոտ մարդկանց, արմատական կարևորություն ունի: Կոպտությունը, բռնությունը, քաղաքավարության բացակայությունը և անհարազալից վերաբերմունքը ընտանիքում ընդունելի չեն՝ ընդունելի չեն ոչ մեծերի համար, ոչ էլ աճող սերնդի համար: Հայրս ակտիվ չէր Եկեղեցում, բայց նշանակալիորեն լավ օրինակ էր, հատկապես մայրիկիս հանդեպ իր վերաբերմունքով: Նա ասում էր. «Աստված տղամարդկանց պատասխանատու կհամարի իրենց պատճառով իրենց կանանց ամեն մի թափած արցունքի համար»: Այս նույն տեսակետը շեշտադրվում է «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին» հռչակագրում: Այն ասում է. «[Նրանք,] ովքեր բռնություն են գործադրում իրենց կողակցի կամ երեխաների հանդեպ. . . . մի օր հաշվետու կլինեն Աստծո առջև»:[14] Անկախ նրանից, թե ինչ մշակույթում ենք մենք մեծացել և արդյոք մեր ծնողները բռնացել են թե ոչ մեզ վրա, մենք չպետք է ֆիզիկապես, զգացմունքներով կամ խոսքով բռնանաք որևէ մեկ ուրիշի հանդեպ:[15]

Հասարակության մեջ քաղաքավարության անհրաժեշտությունը երբեք ավելի կարևոր չի եղել: Բարության և քաղաքավարության արմատավորումը սկսվում է մեր տներում: Զարմանալի չէ, որ ընտանիքի թուլացմանը զուգընթաց մեր հասարակական դատողությունը ցածրացել է: Ընտանիքը սիրո և

հոգևորությունը պահպանելու հիմքն է: Ընտանիքը խթանում է մի մթնոլորտ, որտեղ կրոնական գործունեությունը կարող է ծաղկել: Իսկապես «շուրջ բոլորը գեղեցիկ է, երբ սեր կա տան մեջ»:[16]

Սեռական անբարոյականությունը և անմաքուր մտքերը խախտում են չափանիշը, որը հաստատվել էր Փրկչի կողմից:[17] Մեզ նախազգուշացվել է արդի տնտեսության սկզբում, որ սեռական անբարոյականությունը, հավանաբար, կլինի մեծագույն մարտահրավերը:[18] Այդպիսի վարքը, չապաշխարելու դեպքում, կառաջացնի հոգևոր երաշտ և նվիրվածության կորուստ: Կինոնկարները, հեռուստատեսությունը և համացանցը հաճախ հաղորդում են այլասերող ուղերձներ և պատկերներ: Դիտեր Ֆ. Ուխդորֆը և ես վերջերս գտնվում էինք Ամազոնի ջունգլիում գտնվող մի գյուղում և նկատեցինք արբանյակային սկավառակներ նույնիսկ փոքրիկ հասարակ կառուցված հյուղակներից մի քանիսի վրա: Մենք ուրախացանք այն սքանչելի տեղեկացվածության համար, որը մատչելի էր այս հեռավոր տարածքում: Մենք նաև ընդունեցինք, որ փաստորեն չկա որևէ վայր երկրի վրա, որը չենթարկվի վավաշոտ, անբարոյական և հեշտասեր պատկերների ազդեցությանը: Սա է պատճառներից մեկը, թե մերկագրությունն ինչու է այդպիսի համաճարակ դարձել մեր օրերում:

Ես վերջերս մի իմաստալի զրույց ունեցա 15-ամյա Ահարոնյան Քահանայություն կրող մի պատանու հետ: Նա օգնեց ինձ հասկանալ, թե որքան հեշտ էր այս ինտերնետային դարում երիտասարդների համար գրեթե անզգուշորեն ենթարկվել անմաքուր և նույնիսկ մերկապատկեր նկարների ազդեցության: Նա նշեց, որ Եկեղեցու սկզբունքների մեծ մասը, որոնք ուսուցանվում են, առնվազն որոշ ընդունելություն են գտնում հասարակության մեծ մասի մեջ, որ այս սկզբունքների խախտումը կարող է ունենալ աղետալի ազդեցություն մարդու առողջության և բարօրության վրա: Նա խոսում էր երիտասարդների կողմից ծխախոտ

ծխելու, թմրադեղերի օգտագործման և ալկոհոլ օգտագործելու մասին: Չնայած դրան, նկատեց նա, ինչ վերաբերում է մերկագրությանը կամ անբարոյականությանը, հասարակության կողմից չկա համապատասխան բողոքի բարձր ձայն, նույնիսկ նշանակալի նախազգուշացում:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, այդ երիտասարդի վերլուծությունը ճիշտ է: Ո՞րն է պատասխանը: Տարիներ շարունակ մարգարեներն ու առաքյալներն ուսուցանել են տանը կրոնական գործունեության կարևորությունը:[19]

Ծնողնե՛ր, Եկեղեցու ժողովներին և ծրագրերին սովորական ակտիվ մասնակցությամբ, չնայած դա կարևոր է, դուք չեք կարողանա իրականացնել ձեր երեխաներին բարոյական, արդար կյանքով ապրելու և Տիրոջ առջև շիտակորեն քայլել ուսուցանելու ձեր սրբազան պարտականությունը. այդ օրերը վաղուց անցել են: Կարևոր է, որ դա հավատարմորեն իրականացվի տանը, որոնք ապաստանավայրեր են, որտեղ բարությունը, ներողամտությունը, ճշմարտությունը և արդարակեցությունն է գերիշխում: Ծնողները պետք է խիզախություն ունենան ֆիլտրելու կամ վերահսկելու համացանցի հասանելիությունը, հեռուստատեսությունը, կինոֆիլմերը և երաժշտությունը: Ծնողները պետք է քաջություն ունենան ասելու՝ ոչ, պաշտպանելու ճշմարտությունը և բերելու հզոր վկայություն: Ձեր երեխաները պետք է իմանան, որ դուք ունեք հավատք Փրկչի հանդեպ, սեր ձեր Երկնային Հոր հանդեպ և աջակցություն Եկեղեցու ղեկավարների հանդեպ: Մեր տներում պետք է ծաղկի հոգևոր հասունությունը: Իմ հույսն է, որ ոչ ոք չհեռանա այս համաժողովից առանց հասկանալու, որ բարոյական հարցերը մեր օրերում պետք է քննարկվեն մեր ընտանիքներում: Եպիսկոպոսները, քահանայությունը և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները պետք է աջակցեն ընտանիքներին և հոգ տանեն, որ հոգևոր սկզբունքներ ուսուցանվեն: Տնային և այցելող ուսուցիչները կարող են օգնել, հատկապես միայնակ ծնողների երեխաներին:

Երիտասարդը, որի մասին ես նշեցի, լրջորեն հարցրեց, թե Առաքյալներն արդյոք գիտեն, թե որքան վաղ պետք է կյանքում ուսուցանել և պաշտպանել մերկագրությունից և անմաքուր մտքերից: Շեշտադրելով՝ նա նշեց, որ նույնիսկ Երեխաների խմբում, նախքան դեռահաս դառնալը չպետք է չափազանց վաղ համարվի որոշ հարցերի մասին ուսուցանելը:

Դեռահասները, ովքեր ենթարկվում են անբարոյական պատկերների ազդեցությանը շատ վաղ հասակում, սարսափի մեջ են ընկնում, որ գուցե իրենք արդեն իրենց անարժան են դարձրել միսիոներական ծառայության և սրբազան ուխտերի համար: Արդյունքում, նրանց հավատքը կարող է խիստ վնասվել: Ես ուզում եմ հավաստիացնել ձեզ՝ երիտասարդներ, ինչպես ուսուցանվում է՝ ապաշխարությամբ դուք կարող եք արժանի դառնալ երկնքի բոլոր օրհնություններին:[20] Դա է Փրկչի Քավության ողջ իմաստը: Խնդրում ենք խոսեք ձեր ծնողների կամ վստահելի խորհրդատուի հետ և խորհուրդակցեք ձեր եպիսկոպոսի հետ:

Երբ խոսքը վերաբերում է բարոյականությանը, որոշ չափահասներ հավատում են, որ առաջնակարգ մարդասիրական որևէ նախագծի կամ սկզբունքի հետևելը վերացնում է Փրկչի ուսմունքներին հետևելու անհրաժեշտությունը: Նրանք հավատացնում են իրենց, որ սեռական սխալ վարքագիծը «աննշան բան

է . . . [եթե ես] . . . բարի և գթառատ մարդ եմ»:[21] Այսպիսի մտածողությունը մեծ ինքնախաբեություն է: Որոշ երիտասարդներինձ տեղեկացնում են, որ ժամանակակից մշակույթում այնքան էլ «հեղինակավոր» բան չէ խիստ ջանասեր լինել տարբեր ոլորտներում, ներառյալ արդար սկզբունքներին խստորեն հետևելը:[22] Խնդրո՛ւմ եմ, մի ընկեք այդ թակարդը:

Մկրտության ժամանակ մենք խոստանում ենք մեր վրա վերցնել «[Հիսուս] Քրիստոսի անունը, ունենալով *վճռականություն* ծառայելու Նրան մինչև վերջ»:[23] Այդպիսի ուխտը պահանջում է քաջարի ջանքեր, պարտավորվածություն և շիտակություն, եթե մենք ուզում ենք շարունակել երգել քավող սիրո երգը և մնալ իսկապես դարձի եկած:

Բոլոր դարերի համար ուժեղ և անսասան մնալու պարտավորվածության պատմական մի օրինակ է եղել Բրիտանացի մի օլիմպիական, որը 1924 թվականին մասնակցել է Փարիզում՝ Ֆրանսիա, անցկացվող Օլիմպիական խաղերին:

Էրիկ Լիդելը շոտլանդացի միսիոների որդի էր Չինաստանում և նվիրված կրոնասեր մարդ էր: Նա կատաղեցրեց Օլիմպիադայի Բրիտանացի ղեկավարներին՝ հրաժարվելով, նույնիսկ ահռելի ճնշման տակ, վազել նախնական 100 մետրանոց մրցավազքը, որը տեղի էր ունենալու կիրակի օրը: Վերջում նա հաղթեց 400 մետրանոց մրցավազքում: Առանձնապես ոգեշնչող էր կիրակի օրը վազելուց հրաժարվելու Լիդելի օրինակը:

Նրա պատվին նվիրված նկարագրություններն ու հուշերը մեջ են բերել Եսայիայից ոգեշնչող խոսքերը. «Բայց Տիրոջն ապավինողները կնորոգուին ոյժով, թեւերով վեր կսլանան արծիւների պէս, կվազեն եւ չեն վաստակիլ, կգնան եւ չեն յոգնիլ»:[24]

Լիդելի հիացմունքի արժանի վերաբերմունքը շատ ազդեցիկ էր մեր ամենակրտսեր որդու որոշման վրա՝ չմասնակցել կիրակի օրը սպորտի և ամենակարևորը, իրեն հեռու պահել անարդար և աշխարհիկ վարվելակերպից: Նա օգտագործեց Լիդելի կողմից Եսայիայի մեջբերումը որպես իր դպրոցական տարեգրքի սիրելի մեջբերում: ԷրիկԼիդելը սկզբունքի հանդեպ վճռական ու պարտավորված լինելու զորավոր օրինակ թողեց:

Երբ բոլորս ապրում ենք Փրկչի ուսուցանած սկզբունքներով և պատրաստվում հանդիպելու Աստծուն,[25] մենք հաղթում ենք շատ ավելի կարևոր մի մրցավազքում:[26] Մենք կունենանք Սուրբ Հոգին որպես մեր առաջնորդ՝ հոգևոր ուղղորդման համար: Նրանց համար, ում կյանքը կարգին չէ, հիշեք, երբեք խիստ ուշ չէ դարձնել Փրկչի Քավությունը մեր հավատքի և կյանքի հիմքը:[27]

Եսայիայի խոսքերով ասած. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պէս լինին, ձիւնի պէս պիտի սպիտականան, եթե նորանք որդան կարմիրի պէս լինին, ասրի պէս սպիտակ պիտի դառնան»:[28]

Իմ անկեղծ աղոթքն է, որ մեզանից յուրաքանչյուրը կատարի ամեն անհրաժեշտ գործ՝ զգալու Հոգին *այժմ,* որպեսզի *մենք կարողանանք* երգել քավող սիրո երգը ողջ մեր սրտով: Ես վկայում եմ Փրկչի Քավության զորության մասին՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ալմա 4.15–19:
2. Ալմա5.26:
3. Այդ ժամանակ Ջորջ Ալբերտ Սմիթը Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահն էր: Նա դարձավ Եկեղեցու Նախագահը 1945 թվականի մայիսի 21-ին: (Տես *Deseret News 2012 Church Almanac* [2012], 98:)
4. George Albert Smith, in Sheri L. Dew, *Ezra Taft Benson: A Biography* (1987), 184.
5. Peggy Noonan, “The Dark Night Rises,” *Wall Street Journal,* July 28–29, 2012, A17.
6. Dr. R. Albert Mohler Jr., president, The Southern Baptist Theological Seminary, presentation to religious leaders, New York City, Sept. 5, 2012.
7. Տես 2 Նեփի 2.27:
8. Տես Հովհաննես 5.39; Ամովս.11; տես նաև James E. Faust, “A Personal Relationship with the Savior,” *Ensign,* Nov. 1976, 58–59:
9. Տես Ալմա 31.5:
10. Տես Ալմա 36.23–26:
11. C. S. Lewis, *Mere Christianity* (1952), 31–32. Lewis was a Fellow in English literature at Oxford University and was subsequently chair of Medieval and Renaissance English at Cambridge University.
12. Տես *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները՝ Ջոզեֆ Սմիթ* (2007), 324, տես նաև Հայտնություն Գ.15–16:
13. Ալմա 5.33:
14. «Ընտանիք. Հայտարարություն Աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
15. Տես Richard G. Scott, “Removing Barriers to Happiness,” *Ensign,* May 1998, 85–87: Որոշ մշակութային ավանդույթներ գտնվում են հակադրության մեջ Փրկչի ուսմունքների հետ և կարող են մեզ մոլորեցնել: Երբ ես Խաղաղ Օվկիանոսի հարավային մասում էի, ես հանդիպեցի մի մարդու, որը տարիներ շարունակ ուսումնասիրում էր Եկեղեցին: Նա հաղորդեց, որ խորապես հուզվեց, երբ Եկեղեցու մի առաջնորդ ուսուցանեց քահանայության համաժողովում. «Ձեռքերը, որոնք դուք գործածել եք ձեր երեխաներին ծեծելու համար, պետք է օգտագործվեն ձեր երեխաներին օրհնելու համար»: Նա անցավ միսիոներական դասերը, մկրտվեց և դարձավ մեծ առաջնորդ:
16. «Մեր տան մեջ», *Hymns,* no. 294:
17. Տես Ալմա 39:
18. See Ezra Taft Benson, “Cleansing the Inner Vessel, *Ensign,* May 1986, 4:
19. Նախագահ Գորդոն Բ. Հինքլին «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» հռչակագիրը ներկայացրել է Սփոփող Միության գերագույն ժողովին՝ 1995թ. սեպտեմբերին: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը նախագահել է Եկեղեցու *Բ ձեռնարկի. Կառուցել Եկեղեցին* (2010), առաջին գլխի՝ «Ընտանիքը Եկեղեցում Աստծո ծրագրում» փոփոխություններ կատարելու հանձնախմբում:
20. Տես Ալմա 13.27–30; 41.11–15:
21. Ross Douthat, *Bad Religion: How We Became a Nation of Heretics* (2012), 238; տես նաև Ալմա 39.5:
22. Թույլ մի տվեք որևէ մշակույթի, որը լցված է բռնությամբ և անբարոյականությամբ և քննադատաբար է վերաբերվում նրանց, ովքեր ապրում են Փրկչի ուսմունքներով, որ խռովի ձեր հավատքը: Ինչպես Վոդվորթն է հեզորեն գրել. «Մենք ձեր [միտքը] սքանչելի մտքերով, որպեսզի ոչ չար լեզուները, ոչ էլ անխոհեմ դատողությունները, ոչ էլ եսասեր մարդկանց քմծիծաղը . . . երբևէ չգերիշխի . . . կամ էլ խռովի ձեր զվարթ հավատքը» (“Lines Composed a Few Miles above Tintern Abbey,” in *The Oxford Book of English Verse,* ed. Christopher Ricks [1999], 346):
23. Մորոնի 6.3; շեշտադրումն ավելացված է, տես նաև Մոսիա 18.13:
24. Եսայիա 40.31; տես Robert L. Backman, “Day of Delight,” *New Era,* June 1993, 48–49:
25. Տես Ալմա 34.32:
26. Տես Ա Կորնթացիս Թ.24–27:
27. Տես Հելաման 5.12: Օլիվեր Վենդել Հոլմս Կրտսերը գրել է. «Ես գտնում եմ, որ այս աշխարհում մեծ բան է, ոչ թե այն թե որտեղ ենք կանգնած, այլ թե որ ուղղությամբ ենք մենք շարժվում»: Երկնքի նավահանգստին հասնելու համար, երբեմն մենք պետք է նավարկենք քամու հետ և երբեմն էլ դրան հակառակ, բայց մենք պետք է նավարկենք, և ընթացքը չշեղենք ոչ էլ խարիսխ գցած կանգ առնենք (*The Autocrat of the Breakfast-Table* [1858], 105):
28. Եսայիա Ա.18:

Էնն Մ. Դիբ
Երիտասարդ կանանց գերագույն նախագահության երկրորդ խորհրդական

Ես գիտեմ դա: Ես ապրում եմ դրանով: Ես սիրում եմ դա:

Մենք մեր Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի հետևորդներն ենք: Նման դարձը և վստահությունը ջանասեր և նպատակաուղղված ջանքի արդյունք է: Դա անհատական է: Դա կյանքի տևողություն ունեցող գործընթաց է:

Ես *ոգեշնչված* եմ Եկեղեցու արդար անդամների, ներառյալ ազնվազարմ երիտասարդների, օրինակով: Դուք խիզախաբար նայում եք Փրկչին: Դուք հավատարիմ եք, հնազանդ և մաքուր: Ձեր բարության շնորհիվ ձեր ստացած օրհնությունները խորապես, բայց հաճախ անհայտ ճանապարհներով ազդում են ոչ միայն ձեր, այլ նաև իմ և անթիվ մարդկանց կյանքի վրա:

Մի քանի տարի առաջ ես կանգնած էի հերթի մեջ մեր մոտակա մթերային խանութում: Ինձանից առաջ կանգնած էր 15 տարեկան մի երիտասարդ աղջիկ: Նա վստահ և երջանիկ տեսք ուներ: Ես նկատեցի նրա վերնաշապիկը և չկարողացա չխոսել: Ես ասացի. «Դու այս նահանգից չես, այդպե՞ս չէ»:

Նրան զարմացրեց իմ հարցը, և նա պատասխանեց. «Այո, ես Կոլորադոյից եմ: Ինչպե՞ս իմացաք»:

Ես բացատրեցի. «Քո վերնաշապիկից»: Ես իմ ճշգրիտ ենթադրությունը կատարել էի, կարդալով նրա վերնաշապիկի վրա գրված խոսքերը. «Ես մորմոն եմ: Իսկ դո՞ւք»:

Ես շարունակեցի. «Ես պետք է ասեմ քեզ, որ տպավորված եմ քո ինքնավստահությամբ, նման համարձակ հայտարարություն կրելու համար: Ես տեսնում եմ, որ տարբերվում ես, և կուզենայի, որ Եկեղեցու յուրաքանչյուր երիտասարդ կին և յուրաքանչյուր անդամ ունենար նույն համոզմունքը և վստահությունը»: Մենք կատարեցինք մեր գնումները, հրաժեշտ տվեցինք և բաժանվեցինք:

Այս պատահական պահից հետո օրեր և շաբաթներ անց ես, այնուամենայնիվ, շարունակում էի լրջորեն մտածել այդ մասին: Ես մտածում էի, թե ինչպես կարող էր Կոլորադոյից այդ երիտասարդ աղջիկը նման վստահություն ձեռք բերել որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ իր ինքնության վերաբերյալ: Ես չէի կարողանում ազատվել այն մտքից, թե ինչ իմաստալից արտահայտություն կընտրեի *իմ* վերնաշապիկի համար, որպեսզի այն արտահայտեր իմ հավատքը և վկայությունը: Մտքովս անց էի կացրել բազմաթիվ հնարավոր ասացվածքներ: Ի վերջո, գտա կատարյալ արտահայտությունը, որը հպարտությամբ կկրեի. «Ես մորմոն եմ: Ես գիտեմ դա: Ես ապրում եմ դրանով: Ես սիրում եմ դա»:

Այսօր ես կցանկանայի իմ ելույթը կենտրոնացնել այդ համարձակ և հուսալից հայտարարության շուրջ:

Հայտարարության առաջին մասը ինքնավստահեցնող է և անհերքելի՝ «Ես մորմոն եմ»: Ինչպես մթերային խանութում ինձ հանդիպած երիտասարդ աղջիկը չէր վախենում աշխարհին հայտնել, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցու անդամ էր, ես հուսով եմ, որ մենք երբեք չենք վախենա կամ վարանի արտասանել՝ «Ես մորմոն եմ»: Մենք պետք է վստահ լինենք, ինչպես Պողոս Առաքյալը, երբ հայտարարեց. «Որովհետև ես Քրիստոսի ավետարանը ամոթ չեմ համարում. որովհետև Աստծո զորություն է փրկելու համար ամեն հավատացողին»:[1] Որպես անդամներ, մենք մեր Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի հետևորդներն ենք: Նման դարձը և վստահությունը ջանասեր և նպատակաուղղված ջանքի արդյունք է: Դա անհատական է: Դա կյանքի տևողություն ունեցող գործընթաց է:

Հայտարարության հաջորդ մասը հաստատում է. «Ես գիտեմ դա»: Այսօր աշխարհում կան բազմաթիվ զբաղմունքներ, թեմաներ և հետաքրքրություններ, որոնք պայքարում են մեր ուշադրության ամեն մի րոպեի համար: Այդ բազմաթիվ շեղող երևույթներով, արդյո՞ք մենք ունենք անհրաժեշտ ուժը, կարգապահությունը և պարտավորվածությունը, որպեսզի կենտրոնացած մնանք առավել կարևորի վրա: Արդյո՞ք մենք նույնքան ջանասեր ենք ավետարանի ճշմարտությունների մեր ուսուցման մեջ, որքան մեր ուսման,

կարիերայի, նախասիրությունների, սպորտի կամ էլեկտրոնային հաղորդագրություններ և տեքստեր ուղարկելու մեջ: Արդյո՞ք մենք ակտիվորեն փնտրում ենք մեր հարցերի պատասխանները սուրբ գրություններից և մարգարեների ուսմունքներից սնվելու միջոցով: Արդյո՞ք մենք փնտրում ենք Հոգու հաստատումը:

Գիտելիք ձեռք բերելու կարևորությունը հավերժական սկզբունք է: Մարգարե Ջոզեֆ Սմիթը սիրում էր գիտելիքը դրա արդարակյաց զորության համար:[2] Նա ասել է. «Գիտելիքն անհրաժեշտ է կյանքի և աստվածայնության համար: . . . Եղբայրներ, բոլորդ լսեք, այս մեծ բանալին՝ գիտելիքը Աստծո զորությունն է ի փրկություն»:[3]

Բոլոր ճշմարտությունը և գիտելիքը կարևոր են, սակայն մեր առօրյա կյանքի անդադար շեղումների պայմաններում, մենք պետք է հատկապես մեծ ուշադրություն դարձնենք ավետարանի մեր գիտելիքի խորացման վրա, որպեսզի կարողանանք հասկանալ, թե ինչպես կիրառենք ավետարանի սկզբունքները մեր կյանքում:[4] Ավետարանի մեր գիտելիքի աճի հետ մենք կսկսենք ավելի վստահ լինել մեր վկայությունների մեջ և կկարողանանք ասել. «Ես գիտեմ դա»:

Հաջորդը՝ «Ես ապրում եմ դրանով» արտահայտությունն է: Սուրբ գրություններն ուսուցանում են, որ մենք պետք է լինենք «խոսքը անողներ, . . . և ոչ միայն լսողներ»:[5] Մենք ապրում ենք ավետարանով և դառնում «խոսքը անողներ», գործադրելով հավատք, լինելով հնազանդ, սիրով ծառայելով մյուսներին և հետևելով մեր Փրկչի օրինակին: Մենք գործում ենք ազնվությամբ և անում այն, ինչը, գիտենք, որ ճիշտ է «բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում»,[6] անկախ նրանից, ով կտեսնի կամ չի տեսնի մեզ:

Մեր մահկանացու վիճակում ոչ ոք կատարյալ չէ: Ավետարանով ապրելու մեր առավել ջանասեր ջանքերում անգամ մենք բոլորս սխալներ կունենանք և բոլորս էլ մեղքեր կգործենք: Ինչպիսի

սփոփիչ է, իմանալը, որ մեր Փրկչի քավող զոհաբերության շնորհիվ մենք կարող ենք ներվել և կրկին մաքուր լինել: Ճշմարիտ ապաշխարության և ներման այս գործընթացը ամրացնում է մեր վկայությունը և վճռականությունը հնազանդվելու Տիրոջ պատվիրաններին և մեր կյանքը ապրելու համաձայն ավետարանի չափանիշների:

Երբ ես մտածում եմ «Ես ապրում եմ դրանով» արտահայտության մասին, հիշում եմ մի երիտասարդ կնոջ, որին հանդիպեցի Կարիգանում: Նա գրել է. «Ես Եկեղեցու անդամ եմ մեկ տարուց մի փոքր ավել: . . . Ուսումնասիրության ժամանակ ինձ համար նշաններից մեկը, որ սա ճշմարիտ Եկեղեցի է, այն էր, որ ես վերջապես գտա մի եկեղեցի, որն ուսուցանում է համեստություն և չափանիշներ: Իմ աչքերով ես տեսել եմ, ինչ է պատահում մարդկանց հետ, երբ նրանք անտեսում են պատվիրանները և ընտրում սխալ ուղի: Շատ ժամանակ առաջ ես ինձ համար վճռել էի ապրել բարոյական չափանիշներով: . . . Ես այնքան օրհնված եմ ինձ զգում, որ գտել եմ ճշմարտությունը և մկրտվել: Ես այնքան երջանիկ եմ»:[7]

Իմ հայտարարության վերջին արտահայտությունն է՝ «Ես սիրում եմ դա»: Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին գիտելիք ձեռք բերելը և մեր առօրյա կյանքում ավետարանի սկզբունքներով պարտաճանաչ ապրելը Եկեղեցու շատ անդամների թույլ է տալիս ուրախությամբ բացականչել. «Ես սիրում եմ ավետարանը»:

Այդ զգացումը գալիս է, երբ մենք զգում ենք, ինչպես է Սուրբ Հոգին մեզ վկայում, որ մենք մեր Երկնային Հոր զավակներն ենք, որ Նա մտածում է մեր մասին, և որ մենք ճիշտ ուղու վրա ենք: Ավետարանի հանդեպ մեր սերն աճում է, երբ մենք զգում ենք մեր Երկնային Հոր սերը և Փրկչի խոստացած խաղաղությունը, երբ մենք ցույց ենք տալիս Նրան, որ պատրաստ ենք հնազանդվել և հետևել Իրեն:

Մեր կյանքի տարբեր ժամանակներին, անկախ նրանից, նորադարձ ենք Եկեղեցում, թե անդամներ ողջ կյանքում, մենք երբեմն նկատում ենք, որ այդ կենսական եռանդը մարում է: Երբեմն դա պատահում է, երբ դժվար ժամանակներ ենք ապրում և պետք է համբերություն գործադրենք: Երբեմն դա պատահում է մեր բարգավաճման և առատության գագաթնակետին: Երբ էլ որ ես ունենում եմ այս զգացումը, գիտեմ, որ կարիք ունեմ կրկին կենտրոնացնելու իմ ջանքերը ավետարանի իմ գիտելիքը խորացնելու և իմ կյանքում ավետարանի սկզբունքներով ավելի լիարժեք ապրելու վրա:

Ավետարանի առավել արդյունավետ, սակայն կիրառելու համար երբեմն դժվար սկզբունքներից մեկը խոնարհությունն է և Աստծո կամքին ենթարկվելը: Գեթսեմանի այգում Իր աղոթքում Քրիստոսն ասաց Հորը. «Ոչ թե իմ կամքը, բայց Քո կամքը լինի»:[8] Սա պետք է լինի նաև մեր աղոթքը: Հաճախ այդ հանգիստ աղոթալից պահերին է, որ մենք զգում ենք պարուրված Երկնային Հոր սիրով, և երբ վերականգնվում են այդ ուրախ և սիրալիր զգացմունքները:

Երիտասարդ Կանանց ղեկավարների հավաքին Յուջինում, Օրեգոն, ես պատիվ ունեցա հանդիպելու և խոսելու Քույր Քեմի Վիլբերգերի հետ: Պատմությունը, որով ինձ հետ կիսվեց Քույր Վիլբերգերը, վկայություն էր մի երիտասարդ

կնոջ զորության և օրհնության մասին, որը գիտեր, ապրում էր և սիրում էր ավետարանը:

Քույր Վիլբերգի 19-ամյա դուստրը՝ Բրուքը, ողբերգական ձևով սպանվել էր մի քանի տարի առաջ համալսարանի առաջին տարուց հետո ամառային արձակուրդների ժամանակ: Քույր Վիլբերգը հիշում է. «Դա ծանր և մութ ժամանակ էր մեր ընտանիքի համար: Ինչևէ, Բրուքը մեզ մեծ պարգև տվեց: Մենք չէինք հասկանում դա, երբ նա մեծանում էր, բայց իր կարճ կյանքի ամեն տարին և վայրկյանը Բրուքը մեզ նվիրում էր այս մեծագույն պարգևը, որը դուստրը կարող է նվիրել իր ծնողներին: Բրուքը Աստծո արդար դուստր էր: . . . Այդ պարգևի և հատկապես Քավության փրկող զորության շնորհիվ ես ստացա ուժ, սփոփանք և Փրկչի խոստացված խաղաղությունը: Ես կասկած չունեմ նրանում, թե որտեղ է այժմ Բրուքը, և սպասում եմ մեր սիրալիր միավորմանը»:[9]

Ես վկայություն ունեմ հավերժական երջանկության համար մեր Երկնային Հոր մեր ծրագրի մասին: Ես գիտեմ, որ Նա ճանաչում և սիրում է մեզ: Ես գիտեմ, որ Նա պատրաստել է մարգարե՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին, խրախուսելու և օգնելու, որ մենք վերադառնանք Իր մոտ: Ես աղոթում եմ, որ յուրաքանչյուրս ջանք գործադրի, որ կարողանա վստահությամբ հայտարարել. « Ես ասում ես այս ամենը խոնարհաբար, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Նշում. *Հետագա ուսումնասիրության համար ես առաջարկում եմ կարդալ Արմա 32 և Երեց Դալլին Հ. Օուքսի «Դառնալու մարտահրավերը» ելույթը (*Լիահոնա, *հունվ. 2001, 40–43):*

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հռովմայեցիս 1.16:
2. George Q. Cannon, in *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 261.
3. *Teachings: Joseph Smith,* 265; տես նաև Martha Jane Knowlton Coray, notebook, Church History Library, Salt Lake City:
4. Տես գիտելիքի արժեքի փորձ հ. 1, *Երիտասարդ Կանանց Անձնական Զարգացում* (գրքույկ, 2009), 38:
5. Հակոբոս 1.22:
6. Մոսիա 18.9:
7. Անձնական նամակագրություն:
8. Ղուկաս 22.42:
9. Անձնական նամակագրություն:

Երեց Քրեյգ Ք. Քրիսչենսեն
Յոթանասունի Նախագահությունից

Անասելի պարգև Աստծուց

Սուրբ Հոգին կատարյալ միասնության մեջ է գործում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ, կատարելով բազմաթիվ կարևոր դերեր և հատակ պատասխանատվություններ:

1994 թ. Նախագահ Հովարդ Վ. Հանթերը կոչ արեց Եկեղեցու բոլոր անդամներին «տաճարը համարել . . . մեր անդամության հզոր խորհրդանիշը»:[1] Ավելի ուշ այդ նույն տարում Յուտայի Բառնթիֆուլ տաճարի շինարարությունն ավարտվեց: Շատերի պես մենք անհամբեր մեր երիտասարդ ընտանիքով այցելեցինք նվիրագործումից առաջ բաց դռների օրը: Մենք ջանում էինք պատրաստել մեր երեխաներին տաճար մտնելուն, եռանդով աղոթում էինք, որ նրանք հոգևոր փորձ ձեռք բերեին, որպեսզի տաճարը դառնար նրանց կյանքի կարևոր մասը:

Երբ մենք ակնածանքով շրջում էինք տաճարում, ես հիացած էի հրաշալի ճարտարապետությամբ, նրբագեղ ձևավորումով, բարձր պատուհաններից ներս թափանցող շողացող լույսով և բազմաթիվ ոգեշնչող յուղանկարներով: Այդ սուրբ կառույցի ամեն ինչն իսկապես սքանչելի էր:

Մտնելով սելեստիալ սենյակ ես հանկարծ նկատեցի, որ մեր փոքր որդին, վեցամյա Բենը, կառչում է ոտքիցս: Նա անհանգիստ էր, գուցե մի փոքր էլ նեղված:

«Ի՞նչ պատահեց որդիս», - շշնջացի ես:

«Հայրիկ,- պատասխանեց նա,- ի՞նչ է կատարվում այստեղ: Ես երբեք այսպիսի բան չեմ զգացել»:

Ես ծնկի եկա նրա կողքին, գիտակցելով, որ սա առաջին անգամն էր, որ մեր փոքր որդին նման տպավորիչ կերպով զգաց Սուրբ Հոգու ազդեցությունը: Մինչ մյուս այցելուները քայլում էին մեր կողքով, Բենը և ես մի քանի րոպե կողք-կողքի միասին սովորեցինք Սուրբ Հոգու մասին: Ես ապշել էի, թե մենք որքան անկաշկանդ կարողացանք քննարկել նրա սուրբ զգացողությունները: Զրուցելիս պարզ դարձավ, որ Բենն ամենաշատը տպավորվել էր ոչ թե իր *տեսածով*, այլ *զգացածով*, ոչ թե մեզ շրջապատող ֆիզիկական գեղեցկությամբ, այլ իր սրտում՝ Աստծո Հոգու մեղմ, ցածր ձայնով: Ես նրա հետ կիսվեցի, թե ինչ եմ սովորել իմ անձնական փորձից, ինչպես նրա մանկական զարմանքը իմ մեջ խորը երախտագիտություն

արթնացրեց Աստծո այդ անասելի պարգևի՝ Սուրբ Հոգու պարգևի համար:[2]

Ո՞վ է Սուրբ Հոգին:

Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է, և, ըստ էության, Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի նման Նա գիտի մեր մտքերը և մեր սրտի մտադրությունները:[3] Սուրբ Հոգին սիրում է մեզ և ցանկանում է, որ երջանիկ լինենք: Իմանալով մեր դեմ ծառացած խնդիրները, Նա կարող է մեզ առաջնորդել և ուսուցանել բոլոր բաները, որ մենք պետք է անենք կրկին մեր Երկնային Հոր մոտ վերադառնալու և Նրա հետ ապրելու համար:[4]

Ի տարբերություն Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի, ովքեր մսից և ոսկորից փառավորված մարմիններ ունեն, Սուրբ Հոգին հոգեղեն անձնավորություն է, որը հաղորդակցվում է մեր հոգիների հետ զգողությունների և տպավորությունների միջոցով:[5] Որպես հոգևոր էակ, Նա առանձնահատուկ պատասխանատվություն ունի լինելու գործակալ, որի շնորհիվ անձնական հայտնություն է գալիս: Սուրբ գրություններում Սուրբ Հոգին հաճախ անվանվում է Տիրոջ Հոգի, Խոստումի Սուրբ Հոգի կամ պարզապես Հոգի:[6]

Ո՞րն է Սուրբ Հոգու առաքելությունը:

Սուրբ Հոգին կատարյալ միասնության մեջ է գործում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ, կատարելով բազմաթիվ կարևոր դերեր և հստակ պատասխանատվություններ: Սուրբ Հոգու գլխավոր նպատակն է՝ վկայել Հայր Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի[7] մասին, և ուսուցանել ճշմարտությունը բոլոր բաների մասին:[8] Սուրբ Հոգուց եկող հաստատուն վկայությունը կրում է ավելի շատ համոզվածություն, քան այլ աղբյուրից եկող վկայությունը: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսուցանել է, որ «մարդու հոգու հետ խոսող Աստծո Հոգին զորություն ունի ճշմարտությունը հաղորդել ավելի մեծ ուժով և հասկացողությամբ, քան ճշմարտությունը կարող

է հաղորդվել անգամ երկնային էակների հետ անձնական շփման ժամանակ»:[9]

Սուրբ Հոգին նաև հայտնի է որպես Մխիթարիչ:[10] Նեղության կամ չարչարանքի պահին, կամ երբ պարզապես ուզում ենք իմանալ, որ Աստված մոտ է, Սուրբ Հոգին կարող է բարձրացնել մեր հոգին, հույս պարգևել և ուսուցանել մեզ «արքայության խաղաղարար բաները»,[11] օգնելով մեզ զգալ «Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է»:[12]

Մի քանի տարի առաջ, երբ մեր մեծ ընտանիքը հավաքվել էր տոնական սեղանի շուրջ, հայրս սկսեց խաղ խաղալ իր բազմաթիվ թոռների հետ: Հանկարծակի նա վայր ընկավ և վայրկյանապես մահացավ: Այդ անսպասելի միջադեպը շատ ցավալի էր հատկապես իր թոռների համար, բարձրացնելով հարցեր, որոնց դժվար էր պատասխանել: Սակայն երբ մենք հավաքվեցինք մեր երեխաների հետ միասին, աղոթեցինք և կարդացինք Մորմոնի Գրքի մարգարեների խոսքերը կյանքի նպատակի մասին, Սուրբ Հոգին մեզ անհատապես սփոփեց: Երբ դժվար է խոսքերով նկարագրել, պատասխանները, որ մենք փնտրում էինք, հստակ եկան մեր սիրտ: Այդ օրը մենք խաղաղություն զգացինք, որն իսկապես գերազանցեց *մեր* հասկացողությունը, իսկ Սուրբ Հոգու կողմից վկայությունն անկասկած էր, անժխտելի և ճշմարիտ:

Սուրբ Հոգին ուսուցիչ և հայտնող է:[13] Երբ մենք ավետարանի ճշմարտությունների մասին ուսումնասիրում ենք, խորհում և աղոթում, Սուրբ Հոգին լուսավորում է մեր միտքը և խորացնում է մեր հասկացողությունը:[14] Նա ճշմարտությունը անջնջելիորեն գրում է մեր հոգում և մեծ փոփոխություն է առաջացնում մեր սրտում: Երբ այդ ճշմարտությունների մասին կիսվում ենք մեր ընտանիքների, Եկեղեցու մտերիմ անդամների, մեր համայնքի ընկերների և հարևանների հետ, Սուրբ Հոգին դառնում է նաև նրանց ուսուցիչը, քանի որ Նա ավետարանի ուղերձը հասցնում է «մարդկանց զավակների սրտերին»:[15]

Սուրբ Հոգին ոգեշնչում է մեզ ծառայության միջոցով հասնել մյուսներին: Մյուսներին ծառայելիս Սուրբ Հոգու հուշումներին ականջ դնելու ամենավառ օրինակները ես քաղում եմ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի

կյանքից և ծառայությունից, որն ասել է. «Մեր պարտականությունները կատարելիս ես սովորել եմ, որ երբ մենք ականջ ենք դնում լուռ հուշումներին և անհապաղ հետևում դրանց, մեր Երկնային Հայրն ուղղորդում է մեր քայլերը և օրհնում մեր ու մյուսների կյանքը: Ես գիտեմ, որ ոչ մի փարձառություն այնքան քաղցր չէ և ոչ մի զգացում այնքան թանկ չէ, որքան հուշումին ականջ դնելը, երբ հայտնագործում ես, որ Տերը քո միջոցով պատասխանել է մեկ ուրիշի աղոթքին»:[16]

Կկիսվեմ պարզապես մի նրբանկատ փորձառությամբ: Երբ Նախագահ Մոնսոնը ծառայում էր որպես եպիսկոպոս, նա իմացավ, որ իր ծխի անդամներից մեկը՝ Մերի Վաթսոնը հիվանդանոցում էր: Երբ գնաց այցելելու նրան, հիվանդանոցում նա տեսավ, որ Մերին պառկած էր մի քանի հիվանդների հետ մեծ հիվանդասենյակում: Քույր Վաթսոնին մոտենալիս նա նկատեց, որ կողքի մահճակալի վրա պառկած հիվանդը արագ ծածկեց իր դեմքը:

Նախագահ Մոնսոնը զրուցեց Քույր Վաթսոնի հետ և նրան քահանայական օրհնություն տվեց, սեղմելով նրա ձեռքը, ցտեսություն ասաց և պատրաստվեց հեռանալ: Այդ ժամանակ մի պարզ, միևնույն ժամանակ, ապշեցուցիչ բան տեղի ունեցավ: Այժմ այդ փորձառության մասին կներայացնեմ Նախագահ Մոնսոնի խոսքերով.

«Ես չէի կարողանում հեռանալ նրա կողքից: Իմ ուսերի վրա կարծես մի անտեսանելի ձեռք պահում էր ինձ, և հոգով զգացի, որ լսում եմ այս խոսքերը. «Մոտեցիր կողքի մահճակալի երիտասարդ աղջկան, որը քո ներս մտնելու պահին ծածկեց իր դեմքը»: Ես մոտեցա . . .

Ես մոտեցա մյուս հիվանդին, թեթևակի դիպչեցի նրա ուսին և զգույշ ետ քաշեցի նրա դեմքը ծածկող սավանը: Այ քեզ բա՜ն, նա էլ էր իմ ծխի անդամը: Ես չգիտեի, որ նա հիվանդանոցում էր: Նրա անունը Քեթլին Մակքի էր: Երբ մեր հայացքներն իրար հանդիպեցին, նա արցունքների միջից ասաց. «Եպիսկոպոս, երբ դուք ներս մտաք, ինձ թվաց եկել եք ինձ տեսակցելու և օրհնելու՝ ի պատասխան իմ աղոթքների: Ես ներքուստ ուրախացա« կարծելով, թե դուք իմացել եք, որ ես այստեղ եմ, բայց երբ մոտեցաք այլ մահճակալի, հուսահատվեցի« տեսնելով, որ ինձ համար չեք եկել»:

Ես ասացի [Քույր] Մակքիին. «Կարևորն այն չէ, որ ես չգիտեի, որ դու այստեղ ես, այլ այն է, որ մեր Երկնային Հայրն իմացել է, և որ դու լուռ աղոթել ես քահանայական օրհնության համար: Նա՛ ինձ հուշեց, որ քեզ մոտենամ»:[17]

Ինչպե՞ս է Սուրբ Հոգին խոսում մեզ հետ:

Բոլորս էլ փորձառություն ենք ունեցել Սուրբ Հոգու հետ, անգամ եթե միշտ չէ, որ ընկալել ենք դա: Երբ մեր միտք ոգեշնչված մտքեր են գալիս, դրանց իսկությունը իմանում ենք մեր սիրտ թափանցող հոգևոր զգացողություններից: Նախագահ Բոյդ Կ. Փաքերն ուսուցանել է. «Սուրբ Հոգին խոսում է մի ձայնով, որը դուք ավելի շատ *զգում* եք, քան *լսում* . . . Երբ խոսում ենք Հոգու հուշումները «լսելու» մասին, հիմնականում հոգևոր հուշումը նկարագրում ենք հետևյալ կերպ. «Ես *զգացի* . . .»:[18] Սուրբ Հոգու կողմից եկող այդ սուրբ զգացողությունների շնորհիվ ենք մենք իմանում, թե ինչ է Աստված ցանկանում, որ մենք անենք, քանզի ինչպես սուրբ գրություններում է ասվում, դա «հայտնության հոգին է»:[19]

Ի՞նչ է նշանակում ստանալ Սուրբ Հոգու պարգևը:

Մեր վեցամյա որդուն՝ Բենին ուսուցանելիս, ես կարևորեցի բացատրել տարբերությունը Սուրբ Հոգու ազդեցությամբ նրա զգացածի և Սուրբ Հոգու պարգևի միջև, որը նա ստանալու էր մկրտությունից հետո: Նախքան մկրտությունը, ճշմարտության բոլոր ազնիվ և անկեղծ փնտրողները ժամանակ առ ժամանակ կարող են զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը: Ինչևէ, Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը և դրա հետ կապված բոլոր օրհնությունների *լիությունը* հասու են միայն մկրտված արժանի անդամներին, ովքեր ստանում են Սուրբ Հոգու պարգևը, ձեռնադրվելով նրանց կողմից, ովքեր կրում են Աստծո քահանայության իշխանությունը:

Սուրբ Հոգու պարգևով մենք ստանում ենք լրացուցիչ ունակություն և հոգևոր պարգևներ, ավելի շատ հայտնություն և պաշտպանություն, կայուն առաջնորդություն և ուղղություն, և սելեստիալ արքայությունում սրբագործման և վեհացման խոստացված օրհնությունները: Այդ բոլոր օրհնությունները տրվում են մեր անձնական ցանկության արդյունքում և գալիս են, երբ մեր կյանքը համահունչ ենք դարձնում Աստծո կամքին և փնտրում Նրա մշտական առաջնորդությունը:

Վերհիշելով Բաունթիֆուլ Յուտա տաճարում Բենի հետ ունեցած իմ փորձառությունը, ես շատ հաճելի զգացողություններ և տպավորություններ եմ ունենում: Մի բան հստակ եմ հիշում, որ մինչ ես լիովին պարուրվել էի իմ տեսածի

վեհությամբ, իմ կողքին փոքր երեխան իր սրտում հզոր զգացումներ ունեցավ: Մեղմ ակնարկով ես հրավիրվեցի ոչ միայն դադար տալու և ծնկի իջնելու, այլև ականջ դնելու Փրկչի կանչին դառնալով փոքր երեխայի պես՝ խոնարհ, հեզ և պատրաստ լսելու Նրա Հոգու մեղմ, ցածր ձայնը:

Ես վկայում եմ Սուրբ Հոգու կենդանի իրականության և աստվածային առաքելության մասին, և որ Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք իմանալ բոլոր բաների մասին ճշմարտությունը: Ես վկայում եմ, որ Սուրբ Հոգու պարգևը Երկնային Հոր անգին և անասելի պարգևն է բոլորին, ովքեր կգան Իր Որդու մոտ, Իր Եկեղեցում կմկրտվեն Նրա անունով և հաստատումով կստանան Սուրբ Հոգին: Այս սուրբ ճշմարտությունների մասին ես բերում եմ իմ անձնական վկայությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Howard W. Hunter, in Jay M. Todd, "President Howard W. Hunter: Fourteenth President of the Church," *Ensign,* July 1994, 5; տես նաև Howard W. Hunter, "The Great Symbol of Our Membership," *Tambuli,* Nov. 1994, 3.
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.26:
3. Տես Ալմա 12.7; 18.16–18; Վարդապետություն և Ուխտեր 6.15–16:
4. Տես 2 Նեփի 32.5:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 130.22:
6. Տես Ղուկաս 4.1, 18; 11.13; Հովհաննես 1.33; Եփեսացիս 1.13; Վարդապետություն և Ուխտեր 88.3:
7. Տես 2 Նեփի 31.18; 3 Նեփի 28.11; Վարդապետություն և Ուխտեր 20.27:
8. Տես Մորոնի 10.5:
9. Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1:47–48.
10. Տես Հովհաննես 14.26; Վարդապետություն և Ուխտեր 35.19:
11. Վարդապետություն և Ուխտեր 36.2:
12. Փիլիպպեցիս 4.7:
13. Տես Ղուկաս 12.12; Ա Կորնթացիս 2.13; Վարդապետություն և Ուխտեր 50.13–22; *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 132–33:
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 11.13:
15. 2 Նեփի 33.1:
16. Thomas S. Monson, "Peace, Be Still," *Liahona,* Nov. 2002, 55.
17. Տես Thomas S. Monson, "Christ at Bethesda's Pool," *Ensign,* Nov. 1996, 18–19:
18. Boyd K. Packer, "Personal Revelation: The Gift, the Test, and the Promise," *Liahona,* June 1997, 10.
19. Վարդապետություն և Ուխտեր 8.3; տես նաև հատված 2:

Երեց Շեյն Մ. Բոուեն
Յոթանասունից

«Որովհետև ես կենդանի եմ, եւ դուք կենդանի կլինեք»

Նրա շնորհիվ, այսինքն՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհիվ, վշտի, միայնակությունը և հուսահատությունը այդ զգացումները մի օր կուլ կգնան ուրախության լիության մեջ:

Երբ ծառայում էի Չիլիում որպես երիտասարդ միսիոներ, ճյուղում ես և իմ զուգընկերը հանդիպեցինք յոթ հոգուց բաղկացած մի ընտանիքի: Մայրն ամեն շաբաթ հաճախում էր իր հինգ երեխաների հետ: Մենք ենթադրում էինք, որ նրանք երկար ժամանակվա անդամներ էին: Բայց մի քանի շաբաթ անց մենք իմացանք, որ նրանք մկրտված չէին:

Մենք անմիջապես կապվեցինք ընտանիքի հետ և հարցրեցինք, թե կարող էինք գալ իրենց տուն և ուսուցանել նրանց: Հայրը հետաքրքրված չէր սովորել ավետարանի մասին, բայց դեմ չէր իր ընտանիքին մեր ուսուցանելուն:

Քույր Ռամիրեսն արագ առաջադիմում էր դասերի ընթացքում: Նա անհամբեր ուզում էր սովորել ողջ վարդապետությունը, որ մենք ուսուցանում էինք: Մի երեկո, երբ մենք քննարկում էինք մանուկների մկրտությունը, մենք ուսուցանեցինք, որ փոքր երեխաներն անմեղ են և կարիք չունեն մկրտության: Մենք հրավիրեցինք նրան կարդալ Մորոնիի գրքում.

«Ահա, ես ասում եմ ձեզ, որ այս բանը պիտի դուք սովորեցնեք՝ ապաշխարություն և մկրտություն նրանց, ովքեր պատասխանատու են և ընդունակ մեղք գործելու. Այո, սովորեցրեք ծնողներին, որ նրանք պետք է ապաշխարեն և մկրտվեն, և խոնարհեցնեն իրենց, ինչպես իրենց փոքր երեխաները, և նրանք բոլորը պիտի փրկվեն իրենց փոքր երեխաների հետ:

Իսկ նրանց փոքր երեխաները կարիք չունեն ապաշխարության, ոչ էլ մկրտության: Ահա, մկրտությունն ապաշխարության համար է՝ ի կատարումն պատվիրանների՝ մեղքերի թողության համար:

Բայց փոքր երեխաները կենդանի են Քրիստոսով, նույնիսկ աշխարհի հիմնադրումից ի վեր. Եթե ոչ, Աստված կողմնապահ Աստված

է, և նաև փոփոխական Աստված, և մարդկանց հանդեպ՝ աչառ. Քանզի, որքան շատ փոքր երեխաներ են մահացել առանց մկրտության»:[1]

Այս սուրբ գրությունը կարդալուց հետո Քույր Ռամիրեսն սկսեց հեկեկալ: Զուգընկերս և եպշփոթվեցինք: Ես հարցրեցի. «Քույր Ռամիրես, մենք արդյոք ինչ-որ բա՞ն ասացինք կամ արեցինք, որը ձեզ վիրավորեց»:

Նա ասաց. «Օ՜, ո՜չ, երեց, դուք ոչ մի սխալ բան չեք արել: Վեց տարի առաջ ես տղա երեխա ունեի: Նա մահացավ մինչև մենք նրան կմկրտեինք: Մեր քահանան ասաց մեզ, որ քանի որ մենք նրան չէինք մկրտել, նա դժոխքում կլինի ողջ հավերժության ընթացքում: Վեց տարի ես կրում էի այդ ցավն ու հանցանքը: Այս սուրբ գրությունը կարդալուց հետո, ես գիտեմ Սուրբ Հոգու զորությամբ, որ դա ճշմարիտ է: Ես զգացի մեծ ծանրություն վերցվեց իմ վրայից և սրանք ուրախության արցունքներ են»:

Ես հիշեցի Մարգարե Ջոզեֆ Սմիթի ուսմունքների մասին, որն ուսուցանել է այս մխիթարող վարդապետությունը. «Տերը շատերին տանում է, նույնիսկ մանկության ժամանակ, որպեսզի նրանք խուսափեն մարդկանց նախանձից և ներկա աշխարհի ցավերից ու չարիքից. նրանք շատ մաքուր են, շատ սիրուն, երկրի վրա ապրելու համար, ուստի եթե ճիշտ մտածենք, սգալու փոխարեն, մենք պատճառ ունենք ուրախանալու, քանի որ նրանք ազատվում են չարից և շատ չի անցնի, որ նրանք կրկին մեզ հետ կլինեն»:[2]

Անտանելի վշտից ու ցավից գրեթե վեց տարի տառապելուց հետո, Երկնային Հոր կողմից ապրող մարգարեի միջոցով հայտնի դարձված ճշմարիտ վարդապետությունը, բերեց քաղցր խաղաղություն այս տանջված կնոջը: Ավելորդ է ասել, որ Քույր Ռամիրեսը և նրա երեխաները, ովքեր ութ տարեկան էին և ավելի, մկրտվեցին:

Ես հիշում եմ, թե ինչպես գրեցի ընտանիքիս՝ արտահայտելով երախտագիտություն, որ ես զգում էի իմ սրտում Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանի այս գիտելիքի և այնքան շատ այլ պարզ և թանկարժեք ճշմարտությունների համար: Ես երբեք չեմ երազել, թե ինչպես այս սքանչելի ճշմարիտ սկզբունքը ետ կգար ինձ ապագա տարիներին և կդառնար Գաղաադի իմ բալասանը:

Ես կկամենայի խոսել նրանց հետ, ովքեր երեխա են կորցրել և տվել են հետևյալ հարցը. «Ինչո՞ւ ես» կամ գուցե նույնիսկ կասկածի տակ եք դրել սիրառատ Երկնային Հոր հանդեպ ձեր իսկ հավատքը: Իմ աղոթքն է, որ Սուրբ Հոգու զորությամբ ես կարողանամ բերել ինչ-որ չափով հույս, խաղաղություն և հասկացողություն: Իմ ցանկությունն է, որ ես լինեմ մի միջոց ձեր հավատքի վերականգման համար առ մեր սիրառատ Հայրը, որ Երկնքում է, ով գիտի ամեն բան և թույլ է տալիս մեզ տանել փորձություններ, որպեսզի մենք կարողանանք գալ Նրան ճանաչելուն և սիրելուն և հասկանանք, որ առանց Նրա մենք չունենք ոչինչ:

1990 թվականի փետրվարի 4-ին ծնվեց մեր երրորդ որդին՝ մեր վեցերորդ երեխան: Մենք անվանեցինք նրան Թայսոն: Նա գեղեցիկ փոքրիկ տղա էր և ընտանիքը նրան դիմավորեց բաց սրտերով և բաց բազուկներով: Նրա եղբայրներն ու քույրերը այնքան հպարտ էին նրանով: Մենք բոլորս մտածում էինք, որ նա ամենակատարյալ փոքրիկ տղան էր, որը երբևէ ծնվել էր:

Երբ Թայսոնը ութ ամսեկան էր, նա կուլ տվեց մի կտոր կավիճ, որը գտել էր գորգի վրա: Կավիճը խրվել էր Թայսոնի կոկորդում և նա դադարեց շնչել: Նրա ավագ եղբայրը բերեց Թայսոնին աստիճաններով վեր խելահեղորեն բացականչելով. «Երեխան չի՜ շնչում: Երեխան չի՜ շնչում»: Մենք սկսեցինք սրտաթոքային վերակենդանացում կատարել և կանչեցինք 911:

Շտապ օգնության անձնակազմը եկավ և արագ հիվանդանոց հասցրեց Թայսոնին: Սպասասրահում մենք շարունակում էինք ջերմեռանդ աղոթել՝ աղերսելով Աստծուն հրաշք կատարել: Կյանքի չափ թվացող որոշ ժամանակ անց, բժիշկը սենյակ մտավ և ասաց. «Շա՜տ ցավում եմ: Էլ ոչինչ հնարավոր չէ անել: Առանց շտապելու հրաժեշտ տվեք»: Ապա նա հեռացավ:

Երբ մենք սենյակ մտանք, որտեղ Թայսոնն էր պառկած, մենք տեսանք անկենդան դարձած մեր ուրախության փոքրիկ փաթեթը: Թվում էր կարծես իր փոքրիկ մարմնի շուրջը երկնային փայլ ուներ: Նա այնքան լուսաշող էր և մաքուր:

Այդ պահին այնպիսի զգացում առաջացավ, որ կարծես աշխարհը մեզ համար ավարտվեց: Ինչպե՞ս կարող էինք վերադառնալ մյուս երեխաների մոտ և ինչ-որ ձևով փորձել բացատրել, որ Թայսոնը չէր գալու տուն:

Ես կխոսեմ եզակի թվով, երբ պատմեմ այդ փորձառության մնացած մասը: Իմ հրեշտակային կինը և ես տոկացինք այս փորձությանը միասին, բայց ես անհամապատասխան եմ գտնում ինձ արտահայտել մոր զգացումները և նույնիսկ չէի էլ փորձի անել այդ:

Անհնարին է նկարագրել այն խառը զգացմունքները, որ ես ունեցա իմ կյանքի այդ պահին: Ժամանակի մեծ մասը ես այնպես էի զգում կարծես վատ երազի մեջ էի և որ շուտով ես կարթնանամ և այդ սոսկալի մղձավանջը կավարտվի: Շատ գիշերներ ես չէի քնում: Ես հաճախ թափառում էի մի սենյակից մյուսը, համոզվելու համար, որ մեր մյուս երեխաները բոլորն անվտանգ էին:

Հանցանքի զգացումները պատառոտում էին հոգիս: Ես շատ մեղավոր էի զգում: Ինձ կեղտոտ էի զգում: Ես նրա հայրն էի, ես պետք է ավելի շատ բան անեի նրան պաշտպանելու համար: Եթե միայն արած լինեի այս կամ այն: Երբեմն նույնիսկ այժմ՝ 22 տարի անց, այդ զգացումները սկսում են սողոսկել սիրտս, և ես պետք է դրանցից ազատվեմ արագ, որովհետև դրանք կարող են կործանարար լինել:

Թայսոնի մահից մոտ մեկ ամիս անց ես հարցազրույց ունեցա Երեց Դին Լ. Լարսենի հետ: Նա ժամանակ տրամադրեց ինձ լսելու համար և ես միշտ շնորհակալ կլինեմ նրա խորհրդի և սիրո համար: Նա ասաց. «Չեմ կարծում Տերը կկամենար, որ դու պատժեիր ինքդ քեզ քո

փոքրիկ տղայի մահվան համար»: Ես զգացի իմ Երկնային Հոր սերը նրա ընտրյալ անոթներից մեկի միջոցով:

Այնուամենայնիվ, տանջալի մտքերը շարունակում էին անհանգստացնել ինձ և շուտով ես սկսեցի բարկություն զգալ: Սա անարդար էր: Ինչպես կարող էր Աստված այդպես վարվել ինձ հետ: Ինչո՞ւ ես: Ի՞նչ էի ես արել սրան արժանանալու համար: Ես նույնիսկ զգում էի բարկություն այն մարդկանց հանդեպ, ովքեր ուղղակի ուզում էին մխիթարել մեզ: Հիշում եմ, թե ինչպես էին ընկերներս ասում. «Գիտեմ ինչ ես զգում»: Ես մտածում էի մտքումս. «Դուք գաղափար անգամ չունեք, թե ես ինչպես եմ զգում: Ինձ հանգիստ թողեք»: Ես շուտով պարզեցի, որ ինքնախղճահարությունը ևս կարող էր շատ թուլացնող լինել: Ես ամաչում էի ինքս ինձանից՝ անբարյացակամ մտքեր ունենալու համար սիրելի ընկերների հանդեպ, ովքեր ուղղակի փորձում էին օգնել:

Երբ զգացի, որ հանցանքը, բարկությունը և ինքնախղճահարությունը փորձում էին ոչնչացնել ինձ, ես սկսեցի աղոթել, որ սիրտս փոխվի: Անձնական շատ սրբազան փորձառությունների միջոցով, Աստված տվեց ինձ նոր սիրտ, և չնայած դեռ միայնակ էի և ցավի մեջ, իմ ողջ մտահորիզոնը փոխվեց: Ինձ հասկացողություն տրվեց իմանալու, որ ինձ չէին կողոպտել, այլ որ ինձ համար մի մեծ օրհնություն էր սպասվում, եթե ես ապացուցեի իմ հավատարմությունը:

Կյանքս սկսեց փոխվել, և ես կարողացա ավելի շուտ առաջ նայել հույսով, քան ետ նայել հուսահատությամբ: Ես վկայում եմ, որ այս կյանքը վերջը չէ: Հոգիների աշխարհը իրական է: Մարգարեների ուսմունքները մահից հետո կյանքի վերաբերյալ ճշմարիտ են: Այս կյանքը միայն անցումային քայլ է առաջ՝ դեպի մեր Երկնային Հայրը մեր ճանապարհորդության ընթացքում:

Թայսոնը մնացել է մեր ընտանիքի խիստ անբաժան մասը: Տարիների ընթացքում սքանչելի էր տեսնել սիրառատ Երկնային Հոր

ողորմածությունն ու բարությունը, ով թույլ տվեց, որ մեր ընտանիքը զգար շատ շոշափելի ձևով Թայսոնի ազդեցության ուղիները: Ես վկայում եմ, որ վարագույրը բարակ է: Հավատարմության, սիրո, ընտանեկան միասնության նույն զգացումները չեն վերջանում, երբ մեր սիրելիներն անցնում են վարագույրի մյուս կողմը, ընդհակառակը, այդ զգացումներն ուժեղանում են:

Երբեմն մարդիկ հարցնում են. «Որքա՞ն ժամանակ պահանջվեց ձեզանից դա հաղթահարելու համար»: Ճշմարտությունն այն է, որ երբեք լիովին չեք հաղթահարի, մինչև նորից միասին չլինեք ձեզանից հեռացած հարազատների հետ: Ես երբեք չեմ ունենա ուրախության լիություն, մինչև մենք չվերամիավորվենք Առաջին Հարության առավոտյան:

«Քանզի մարդը ոգի է: Տարրերը հավերժական են, և ոգին ու տարրը, անբաժանելիորեն միացած, ստանում են ուրախության լիությունը.

Եվ երբ բաժանված են, մարդը չի կարող ստանալ ուրախության լիությունը»:[3]

Բայց միևնույն ժամանակ ինչպես Փրկիչն է ուսուցանել, մենք կարող ենք շարունակել քաջությամբ:[4]

Ես իմացա, որ դառը, գրեթե անտանելի ցավը կարող է դառնալ քաղցր, երբ դուք դիմեք ձեր Երկնային Հորը և աղերսեք Նրա գթությունը, որը գալիս է Նրա ծրագրից, Նրա Որդուց՝ Հիսուս Քրիստոսից և Նրա Մխիթարիչից, որը Սուրբ Հոգին է:

Ինչպիսի փառահեղ օրհնություն է սա մեր կյանքում: Արդյոք ողբերգական չէր լինի, եթե մենք մեծ վիշտ չզգայինք, երբ երեխա ենք կորցնում: Որքան երախտապարտ եմ իմ Երկնային Հորը, որ Նա թույլ է տալիս մեզ խորապես սիրելու և սիրելու հավերժորեն: Այնքա՜ն երախտապարտ եմ ես հավերժական ընտանիքների համար: Այնքա՜ն երախտապարտ եմ ես, որ Նա հայտնի է դարձրել կրկին Իր ապրող մարգարեների միջոցով փրկագնման փառահեղ ծրագիրը:

Հիշեք ձեր հարազատի թաղմանը մասնակցելիս ձեր սրտի զգացումները, երբ հեռանում էիք գերեզմանատնից և ետ էիք նայում՝ տեսնելու այն միայնակ հողաթումբը, զարմանալով, թե ինչպես ձեր սիրտը չի պատռվում:

Ես վկայում եմ, որ Նրա շնորհիվ, այսինքն՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհիվ, վշտի, միայնակությունը և հուսահատությունը այդ զգացումները մի օր կուլ կգնան ուրախության լիության մեջ: Ես վկայում եմ, որ մենք կարող ենք վստահել Նրան, երբ Նա ասել է.

«Ձեզ որբ չեմ թողիլ. Կգամ ձեզ մոտ:

Մի փոքր ժամանակ էլ, եւ աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ, բայց դուք կտեսնեք ինձ. Որովհետև ես կենդանի եմ, եւ դուք կենդանի կլինիք»:[5]

Ես վկայում եմ, որ ինչպես ասվում է *Քարոզիր Իմ Ավետարանը,* գրքում, երբ մենք ապավինենք Հիսուս Քրիստոսի Քավությանը, Նա կարող է օգնել մեզ դիմանալ մեր փորձություններին, հիվանդություններին և ցավերին: Մենք կարող ենք լցված լինել ուրախությամբ, խաղաղությամբ և մխիթարությամբ: Այն ամենն, ինչ անարդար է կյանքում, կարող է դառնալ ճիշտ՝ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:[6]

Ես վկայում եմ, որ Առաջին Հարության այն պայծառ փառահեղ առավոտյան ձեր հարազատները, ինչպեսև իմը դուրս կգան գերեզմանից ինչպես խոստացված է անձնապես Տիրոջ կողմից և մենք կունենանք ուրախության լիություն: Որովհետև Նա ապրում է, նրանք և մենք նույնպես կապրենք: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1 Մորոնի 8.10–12:
2 *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 176.
3 Վարդապետություն և Ուխտեր 93.33–34:
4 Տես Հովհաննես ԺԶ.33:
5 Հովհաննես ԺԴ.18–19:
6 *Քարոզիր Իմ Ավետարանը. Միսիոներական Ծառայության Ուղեցույց* (2004), 52:



Երեց Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հարցրեք միսիոներներին: Նրանք կարող ենք օգնել ձեզ:

Բոլոր միսիոներները՝ երիտասարդ, թե տարեց, ծառայում են միակ հույսով՝ կյանքը մարդկանց համար ավելի լավը դարձնելու նպատակով:

Իմ սիրելի եղբայրներ, քույրեր և ընկերներ, մենք հղում ենք մեր սերը և երախտագիտությունը ձեզանից յուրաքանչյուրին. Մեր սիրտը թրթռում է Նախագահ Թոմաս Մոնսոնի այսօրվա հայտարարությամբ, ըստ որի միսիոներական ծառայությունը սկսելու նվազագույն տարիքը տղաների համար կլինի 18 տարեկանը, իսկ աղջիկների համար՝ 19 տարեկանը: Այդ այլընտրանքի շնորհիվ ավելի շատ երիտասարդներ կարող ենք վայելել միսիայի օրհնությունները:

Երկու տարի առաջ, այս առավոտյան ևս, Նախագահ Մոնսոնը զորությամբ հայտարարեց, «որ յուրաքանչյուր արժանի, ունակ երիտասարդ, պետք է նախապատրաստվի միսիայի ծառայության: Միսիոներական ծառայությունը քահանայության պարտականություն է՝ մի պարտավորություն, որը Տերը ակնկալում է մեզանից, ում այդքան շատ բան է տրված»:[1] Կրկին նա բացատրեց, որ երիտասարդ քույրերի համար միսիան լավ այլընտրանք է, սակայն պարտականություն չէ: Եվ ևս մեկ անգամ նա հրավիրեց տարեց զույգերին ծառայելու:

Միսիային նախապատրաստվելը կարևոր է: Միսիան Աստծուն և մարդկությանը կամավոր ծառայություն է: Միսիոներները այդ արտոնությանը մասնակցում են իրենց անձնական խնայությունների շնորհիվ: Ծնողները, ընտանիքները, ընկերները և Միսիոներական ընդհանուր ֆոնդի նվիրատուները նույնպես կարող են օգնել: Բոլոր միսիոներները՝ երիտասարդ, թե տարեց, ծառայում են միակ հույսով՝ կյանքը մարդկանց համար ավելի լավը դարձնելու նպատակով:

Միսիայում ծառայելու որոշումը կձևավորի միսիոների, նրա ամուսնու կամ կնոջ և գալիք սերունդների նրանց ժառանգների հոգևոր ճակատագիրը: Ծառայելու ցանկությունը դարձի գալու, արժանավոր ապրելու և պատրաստված լինելու բնական հետևանք է:

Այս համաշխարհային լայն լսարանում շատերը չեն անդամակցում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն և շատ քիչ բան գիտեն մեր և մեր միսիոներների մասին: Դուք այստեղ եք և մեզ լսում եք, որովհետև ցանկանում եք ավելին իմանալ մորմոնների մասին և թե ինչ են ուսուցանում մեր միսիոներները: Մեր մասին ավելի շատ իմանալով, դուք կհայտնաբերեք, որ մենք շատ ընդհանուր արժեքներ ենք կիսում: Մենք խրախուսում ենք ձեզ պահել այն ամենը, ինչ բարի և ճշմարիտ է, ապա տեսնել, թե արդյոք մենք կարող ենք ավելին առաջարկել: Խնդիրներով լի այս աշխարհում մենք ժամանակ առ ժամանակ օգնության կարիք ունենք: Կրոնը, հավերձական ճշմարտությունը և մեր միսիոներները այդ օգնության կենսական մասն են:

Մեր երիտասարդ միսիոներները մի կողմ են դնում իրենց կրթությունը, աշխատանքը, ժամադրությունը և այն ամենը, ինչ երիտասարդ ամուրիները սովորաբար անում են կյանքի այդ շրջանում: 18–24 ամիսների ընթացքում նրանք դադարեցնում են այդ ամենը, քանի որ մեծ ցանկություն ունեն ծառայելու Տիրոջը:[2] Մեր միսիոներների մի մասն էլ ծառայում է կյանքի ավելի հասուն տարիքում: Ես գիտեմ, որ նրանց ընտանիքները օրհնվում են: Մեր սեփական ընտանիքում ութ հոգի ներկայումս ծառայում են որպես լիաժամկետ միսիոներներ՝ մեր երեք դուստրերը, նրանց ամուսինները, մեկ թոռնուհին և մեկ թոռը:

Ձեզանից ոմանք, հնարավոր է, մտածում են *Մորմոն* անվան մասին: Դա մականուն է մեզ համար: Դա մեր իրական անունը չէ, թեև մենք լավ հայտնի ենք որպես մորմոններ: Այդ եզրույթը վերցրած է սուրբ գրվածքների սրբազաբ մի գրքից, որը հայտնի է որպես Մորմոնի Գիրք:

Եկեղեցու իրական անունն է՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի

Սրբերի Եկեղեցի: Այն Հիսուս Քրիստոսի վերահիմնված սկզբնական Եկեղեցին է: Երբ Նա քայլում էր երկրի վրա, Նա կազմավորեց Իր Եկեղեցին: Նա կանչեց Առաքյալներ, Յոթանասունականներ և այլ ղեկավարներ, որոնց տվեց Իր քահանայության իշխանությունը՝ գործելու Իր անունով:[3] Նրանից հետո, երբ Քրիստոսը և Նրա Առաքյալները մահացան, մարդիկ փոխեցին արարողությունները և վարդապետությունը. Սկզբնական Եկեղեցին և քահանայությունը կորցվեց: Մութ դարերից հետո Երկնային Հոր ղեկավարությամբ Հիսուս Քրիստոսը ետ վերադարձրեց Իր Եկեղեցին: Այժմ այն կրկին կենդանի է, վերականգնված է և գործում է Նրա աստվածային առաջնորդությամբ:[4]

Մենք հետևում ենք Տեր Հիսուս Քրիստոսին և սովորեցնում Նրա մասին: Մենք գիտենք, որ մահվան հանդեպ Նրա փառավոր հաղթանակից հետո, հարություն առած Տերը մի քանի անգամ հայտնվեց Իր աշակերտներին: Նա ճաշեց նրանց հետ: Նա քայլեց նրանց հետ: Իր վերջնական համբարձումից առաջ Նա հանձնարարեց նրանց. «Գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նորանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունովը»:[5] Առաքյալները հետևեցին այդ հրահանգին: Նրանք նույնպես կանչեցին ուրիշներին՝ օգնելու իրենց կատարել Տիրոջ պատգամը:

Այսօր, ժամանակակից առաքյալների և մարգարեների ղեկավարությամբ, նույն կոչը տրվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներին: Այդ միսիոներները ծառայում են ավելի քան 150 երկրներում: Որպես Տեր Հիսուս Քրիստոսի ներկայացուցիչներ, նրանք ձգտում են կատարել այդ աստվածային պատգամը, որը նորացվել է մեր օրերում անձամբ Տիրոջ կողմից, ավետարանի լրիվությունը հասցնել աշխարհին և օրհնել մարդկանց կյանքն ամենուր:[6]

Դեռահասության վերջին տարիներում կամ 20 տարեկանը նոր բոլորած միսիոներները դեռ երիտասարդ են աշխարհի տեսանկյունից: Սակայն նրանք օրհնված են

Միլան, Իտալիա

պարգևներով, ինչպիսիք են՝ Սուրբ Հոգու զորությունը, Աստծո սերը և ճշմարտության վկայությունները, որոնք նրանց դարձնում են Տիրոջ զորեղ դեսպաններ: Նրանք տարածում են ավետարանի բարի լուրը, որն իրական ուրախություն և հավերժական երջանկություն է բերում բոլորին, ովքեր լսում են իրենց ուղերձը: Եվ շատ դեպքերում, նրանք դա անում են մի երկրում, որի լեզուն օտար է իրենց համար:

Միսիոներները ձգտում են հետևել Հիսուս Քրիստոսին ինչպես խոսքով, այնպես էլ գործով: Նրանք քարոզում են Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին:[7] Նրանք ուսուցանում են Քրիստոսի հնադարյան Եկեղեցու բառացի վերականգնման մասին՝ Տիրոջ վերջին օրերի առաջին մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:

Գուցե, նախկինում դուք դեմ եք ելել կամ անտեսել եք մեր միսիոներներին: Իմ հույսն է, որ դուք չվախենաք, այլ սովորեք նրանցից: Նրանք կարող են լինել ձեզ համար երկնքից ուղարկված միջոց:

Այդպես եղավ Ջերիի՝ 60-անց բողոքական եկեղեցու մի անդամի հետ, որն ապրում է Մեսայում՝ Արիզոնա նահանգ: Ջերիի հայրը մկրտական քահանա էր, նրա մայրը՝ մեթոդական սպասավոր: Մի օր Ջերիի մոտ ընկերուհին՝ Պրիցիլլան պատմեց իր ցավի մասին, որը զգացել էր իր նորածին երեխայի մահից և դրանից քիչ անց հետևած դառը ամուսնալուծությունից: Պայքարելով որպես միայնակ մայր՝ Պրիցիլլան ունի չորս երեխա՝ երեք դուստրս և մեկ որդի: Բացելով իր սիրտը Ջերիին, նա խոստովանեց, որ մտածում էր իր կյանքին վերջ տալու մասին: Ողջ ուժով և սիրով, որ կարող էր կուտակել, Ջերին փորձեց օգնել նրան հասկանալ, որ իր կյանքը արժեք ունի: Նա հրավիրեց նրանց այցելել իր եկեղեցին, բայց Պրիցիլլան բացատրեց, որ այլևս չի հավատում Աստծուն:

Ջերին չգիտեր, թե ինչ աներ: Ավելի ուշ, երբ ջրում էր իր բակի ծառերը, հավատքի այդ մարդը աղոթեց Աստծուն ուղղության համար: Աղոթելիս, նա մտքում մի ձայն լսեց. «Կանգնեցրու հեծանվով անցնող տղաներին»: Մի փոքր շփոթված, Ջերին մտածեց, թե ինչ դա կարող էր նշանակել: Մտածելով իր այդ տպավության մասին՝ նա նայեց դեպի փողոց և տեսավ երկու երիտասարդ տղաների՝ սպիտակ վերնաշապիկներով և փողկապներով, որոնք հեծանիվներով մոտենում էին իր տանը: Ապշած այդ զուգադիպությունից, նա տեսավ, թե ինչպես նրանք անցան կողքով: Ապա, հասկանալով, որ պետք է գործեր ըստ իրավիճակի, բացականչեց. «Հե՜յ, դո՛ւք, խնդրում եմ, կանգնեք: Ես պետք է խոսեմ ձեզ հետ»:

Զարմանքով, սակայն ուրախ հայացքներով, երիտասարդ տղամարդիկ կանգ առան: Երբ նրանք մոտենում էին, Ջերին նկատեց նրանց կրծքապիտակները, որտեղ գրված էր, որ իրենք Հիսուս

Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներ էին: Ջերին նայեց նրանց և ասաց. «Սա կարող է փոքր-ինչ տարօրինակ թվալ, բայց ես աղոթում էի և ինձ ասվեց, որ կանգնեցնեմ հեծանիվ վարող տղաներին: Ես նայեցի դեպի փողոց և տեսա ձեզ: Դուք կարո՞ղ եք ինձ օգնել»:

Միսիոներները ժպտացին և ասացին. «Այո՛, իհարկե, կարող ենք»:

Ջերին բացատրեց Պրիցիլլայի մտահոգիչ կացությունը: Շուտով միսիոներները հանդիպում էին Պրիցիլլային, նրա երեխաներին և Ջերիին: Նրանք քննարկում էին կյանքի նպատակը և նրանց համար Աստծո ծրագիրը: Ջերին, Պրիցիլլան և նրա երեխաները աճում էին հավատքով՝ անկեղծ աղոթքի, Մորմոնի Գրքի ուսումնասիրության և Եկեղեցու անդամների հետ սիրով շփվելու շնորհիվ: Հիսուս Քրիստոսի հանդեպ արդեն իսկ ունեցած հավատքն էլ ավելի ամրացավ: Պրիցիլլայի կասկածները և ինքնասպանության մասին մտքերը վերածվեցին հույսի և երջանկության: Նրանք մկրտվեցին և դարձան Քրիստոսի վերականգնված Եկեղեցու անդամներ:[8]

Այո՛, միսիոներները կարող են օգնել ձեզ շատ ուղիներով: Օրինակ՝ ձեզանից ոմանք, հնարավոր է, ցանկանում են ավելին իմանալ իրենց նախնիների մասին: Դուք գիտեք ձեր ծնողների և պապ ու տատերի չորս անունները, իսկ ի՞նչ կասեք ձեր ութ նախապապերի և նախատատերի մասին: Դուք գիտե՞ք նրանց անունները: Դուք կցանկայի՞ք ավելին իմանալ նրանց մասին: Հարցրեք միսիոներներին: Նրանք կարող են օգնել ձեզ:[9] Նրանց մատչելի են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ընտանեկան պատմության լայնածավալ գրառումները:

Ձեզանից ոմանք անդամներ են, սակայն ներկայումս չեն մասնակցում: Դուք սիրում եք Տիրոջը և հաճախ մտածում Նրա փարախը վերադառնալու մասին: Բայց դուք չգիտեք, ինչպես սկսել: Ես առաջարկում եմ հարցնել միսիոներներին:[10] Նրանք կարող են օգնել ձեզ: Նրանք կարող են նաև օգնել ձեզ, ուսուցանելով ձեր հարազատներին: Մենք և միսիոներները սիրում ենք ձեզ և ցանկանում ենք ձեր կյանք բերել ավետարանի ուրախությունը և լույսը:

Ձեզանից ոմանք, հավանաբար, ցանկանում են իմանալ, թե ինչպես հաղթահարել կախվածությունը, կամ ավելի երկար ապրել կամ ավելի լավ առողջություն ունենալ: Հարցրեք միսիոներներին: Նրանք կարող են օգնել ձեզ: Անկախ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որպես խումբ՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները բավականին առողջ են: Մահվան ցուցանիշները ամենացածրն են, իսկ կյանքի տևողությունը ավելի երկար, քան որևէ այլ լավ սահմանված երկար ժամանակահատվածում ուսումնասիրված խմբի դեպքում:[11]

Ձեզանից ոմանք, գուցե զգան, թե կյանքը զբաղված և քաոսային է, թեև սրտի խորքում կարող եք զգալ աճող դատարկություն՝ առանց ուղղության կամ նպատակի: Հարցրեք միսիոներներին: Նրանք կարող են օգնել ձեզ: Նրանք կարող են օգնել ձեզ սովորել կյանքի իրական նպատակի մասին՝ թե ինչու եք դուք այստեղ՝ երկրի վրա, և ուր եք գնալու մահից հետո: Դուք կարող եք սովորել, թե ինչպես Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը կօրհնի ձեր կյանքը այնպես, ինչպես դուք չեք կարող անգամ պատկերացնել:

Եթե դուք մտահոգված եք ձեր ընտանիքով, հարցրեք միսիոներներին: Նրանք կարող են օգնել ձեզ: Ամուսնությունները և ընտանիքները ամրացնելը առավել մեծ կարևորություն է հանդիսանում Վերջին Օրերի Սրբերի համար: Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել: Խնդրեք միսիոներներին սովորեցնել ձեզ, թե ինչպես դա կարող է հնարավոր լինել ձեր ընտանիքի համար:

Միսիոներները կարող են նաև օգնել ձեզ ավելի շատ գիտելիք ստանալու ձեր ցանկության մեջ: Մարդու հոգին ձգտում է լուսավորման: Որտեղից էլ որ բխի ճշմարտությունը՝ լաբորատորիայից, թե Աստծուց ստացած հայտնությունից, մենք փնտրում ենք այն: Աստծո փառքը բանականությունն է:[12]

Ուսման աճը ներառում է և հոգևոր և նյութական գիտելիք: Մենք շեշտում ենք սուրբ գրությունները հասկանալու կարևորությունը: Վերջերս կատարված անկախ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Վերջին Օրերի Սրբերը քրիստոնեության և Աստվածաշնչի մասին առավել գիտակ մարդիկ են:[13] Եթե դուք ցանկություն ունեք ավելի լավ հասկանալ Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը և ավելի խորը հասկացողություն ձեռք բերել մարդկանց եղբայրության և Աստծո հայրության մասին, հարցրեք միսիոներներին: Նրանք կարող են օգնել ձեզ:

Ձեզանից շատերը մեծ ցանկություն ունեն օգնելու կարիքի մեջ գտնվող մարդկանց: Լինելով Հիսուս Քրիստոսի հետևորդները, Վերջին Օրերի Սրբերը դնում են իրենց առջև այդ խնիրը ևս:[14] Ցանկացած մարդ կարող է միանալ մեզ՝ օգնելու

կարիքավորին և օգնություն տրամադրելու աղետից տուժվածներին աշխարհի ցանկացած վայրում: Եթե ցանկանում եք մասնակցել, հարցրեք միսիոներներին: Նրանք կարող են օգնել ձեզ:

Եվ եթե դուք ավելին եք ուզում իմանալ մահից հետո կյանքի, դրախտի, ձեզ համար Աստծո ծրագրի մասին, եթե դուք ուզում եք ավելին իմանալ Տեր Հիսուս Քրիստոսի, Նրա Քավության և Նրա սկզբնական Եկեղեցու Վերականգնման մասին, հարցրեք միսիոներներին: Նրանք կարող են օգնել ձեզ:

Ես գիտեմ, որ Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Նրա Եկեղեցին վերականգնվել է: Եռանդով ես աղոթում եմ, որ Աստված օրհնի ձեզ և մեր թանկագին միսիոներներից յուրաքանչյուրին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Կրկին հանդիպելով», *Լիահոնա,* նոյ. 2010, 5–6:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 4.3:
3. Տես Մատթեոս 10.1; Ղուկաս 6.13; 10.1; 10.1; Եփեսացիս 4.11–12:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.30:
5. Մատթեոս 28.19:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր; 84.62; 112.28:
7. Տես Ա Կորնթացիս 2.2; 2 Նեփի 25–26:
8. Personal communication from W. Tracy Watson, former president of the Arizona Mesa Mission.
9. Այնտեղ, որտեղ ես օգտագործել եմ «հարցրեք միսիոներներին» արտահայտությունը, դուք կարող եք հարցնել Եկեղեցու անդամ ձեր ընկերոջ օգնությունը:
10. Ակտիվ մասնակցող ազգականները, ընկերները և Եկեղեցու ղեկավարները նույնպես պատրաստ կլինեն աջակցելու:
11. Տես James E. Enstrom and Lester Breslow, “Lifestyle and Reduced Mortality among Active California Mormons, 1980–2004,” *Preventive Medicine,* vol. 46 (2008), 135:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.36:
13. Տես *U.S. Religious Knowledge Survey* (Pew Forum on Religion and Public Life, Sept. 28, 2010), 7:
14. Տես Ram Cnaan, Van Evans, and Daniel W. Curtis, *Called to Serve: The Prosocial Behavior of Active Latter-day Saints* (University of Pennsylvania School of Social Policy and Practice, 2012); “Mormon Volunteerism Highlighted in New Study” (Mar. 16, 2012), http://www.mormonnewsroom.org/article/mormon-volunteerism-report; *Mormons in America: Certain in Their Beliefs, Uncertain of Their Place in Society* (Pew Forum on Religion and Public Life, Jan. 12, 2012), 43; Robert D. Putnam and David E. Campbell, *American Grace: How Religion Divides and Unites Us* (2010), 444–54:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ափսոսանքների և վճիռների մասին

Որքան ավելի շատ մենք նվիրվենք սրբությանն ու երջանկությանը հետամուտ լինելուն, այնքան ավելի քիչ է հավանականությունը, որ մենք կլինենք դեպի ափսոսանքները տանող ուղու մեջ:

Ափսոսանքների մասին

Նախագահ Մոնսոն, մենք սիրում ենք ձեզ: Շնորհակալություն նոր տաճարներ կառուցելու և միսիոներական ծառայության վերաբերյալ ոգեշնչված և պատմական հայտարարության համար: Դրանց շնորհիվ, վստահ եմ, մեծ օրհնություններ կգան մեզ և ապագա բազմաթիվ սերունդներին:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, իմ սիրելի ընկերներ, մենք բոլորս մահկանացու ենք: Հուսով եմ սա անակնկալ չէ որևէ մեկի համար:

Մեզանից ոչ ոք շատ երկար չի լինի երկրի վրա: Մենք մի քանի թանկարժեք տարիներ ունենք, որոնք հավերժական հեռանկարի տեսանկյունից հավասարազոր է լոկ մեկ ակնթարթի:

Իսկ հետո մենք հեռանում ենք: Մեր հոգիները «տարվում են տուն այն Աստծո մոտ, ով մեզ կյանք է տվել»:[1] Մենք մեր մարմինները վայր ենք դնում և ետևում թողնում այս աշխարհի բաները, երբ շարժվում ենք դեպի մեր գոյության հաջորդ փուլը:

Երբ մենք երիտասարդ ենք, մեզ թվում է, որ մենք ապրելու ենք հավերժ: Մենք կարծում ենք անսահման թվով արևածագեր են սպասվում հենց հորիզոնի այն կողմում և ապագան թվում է մեզ չընդհատվող, մեր առջևում անվերջ ձգվող մի ճանապարհ:

Սակայն, որքան տարիք ենք առնում, այնքան ավելի ենք միտված լինում ետ նայել և զարմանում ենք, թե իրականում որքան կարճ է ճանապարհը: Մենք զարմանում ենք, թե որքան արագ անցան տարիները: Եվ սկսում ենք մտածել մեր կատարած ընտրությունների մասին և մեր կատարած գործերի մասին: Այդ ընթացքում մենք հիշում ենք շատ քաղցր րոպեներ, որոնք ջերմություն են տալիս մեր հոգիներին և ուրախություն մեր սրտերին: Բայց մենք նաև հիշում ենք ափսոսանքները՝ այն բաները, որոնք կցանկանայինք ետ գնալ և փոխել:

Մահացող հիվանդների խնամող մի բուժքույր ասում է, որ հաճախ է մի հասարակ հարց տալիս իր հիվանդներին, երբ նրանք պատրաստվում են հեռանալ այս կյանքից:

«Դուք որևէ բաների համար ափսոսո՞ւմ եք», - հարցնում է նա:[2]

Այդ մահկանացու վերջին օրվանն այդքան մոտ լինելը հաճախ պարզություն է տալիս մտքին և ապահովում ներըմբռնում և հեռանկար: Այսպիսով, երբ նա այդ մարդկանց հարցնում էր իրենց ափսոսանքների մասին, նրանք բացում էին իրենց սրտերը: Նրանք մտածում էին, թե ինչը նրանք կփոխեին, եթե միայն կարողանային ետ դարձնել ժամացույցի սլաքը:

Երբ մտորում էի, թե ինչ էին նրանք ասում, ես ցնցվեցի, թե ինչպես Հիսուս Քրիստոսի ավետարանի հիմնական սկզբունքները կարող են ազդել մեր կյանքի ուղղության վրա՝ բարու համար, եթե միայն մենք կիրառենք դրանք:

Ոչ մի խորհրդավոր բան չկա ավետարանի սկզբունքների մեջ: Մենք ուսումնասիրել ենք դրանք սուրբ գրություններում, մենք քննարկել ենք դրանք Կիրակնօրյա Դպրոցում, և մենք լսել ենք դրանց մասին ամբիոնից շատ անգամ: Այդ աստվածային սկզբունքները և արժեքները ուղիղ են և պարզ, դրանք գեղեցիկ են, խորը և հզոր, և դրանք կարող են որոշակիորեն օգնել մեզ խուսափել ապագա ափսոսանքներից:

Երանի ավելի շատ ժամանակ անցկացրած լինեի այն մարդկանց հետ, ում ես սիրում եմ

Հավանաբար, մահացող հիվանդների արտահայտած ամենատարածված ափսոսանքն այն էր, որ իրենք կուզեին ավելի շատ ժամանակ անկացրած լինել այն մարդկանց հետ, ում իրենք սիրում էին:

Տղամարդիկ, հատկապես, արտահայտում էին այս համընդհանուր վիշտը՝ նրանք «խորապես ափսոսում էին այդքան շատ իրենց կյանքից անցկացնելու համար ամենօրյա իրենց աշխատանքի վրա»:[3] Շատերը կորցրել էին իրենց ընտանիքի և ընկերների հետ ժամանակ անցկացնելու ընտիր հիշողությունների հնարավորությունը: Նրանք բաց էին թողել իրենց համար ամենամեծ կարևորությունն ունեցող մարդկանց հետ խորը կապ զարգացնելու հնարավորությունը:

Միթե ճիշտ չէ, որ մենք հաճախ չափից ավելի զբաղված ենք լինում: Եվ ցավալի է ասել, որ մենք նույնիսկ կրում ենք մեր զբաղվածությունը որպես պատվի պիտակ, կարծես թե զբաղված լինելն ինքնին բարեկարգություն է կամ գերազանց կյանքի նշան:

Մի՞թե այդպես է:

Ես մտածում եմ մեր Տիրոջ և Օրինակի՝ Հիսուս Քրիստոսի մասին և Նրա կարճ կյանքի մասին Գալիլեայի և Երուսաղեմի մարդկանց մեջ: Ես փորձեցի պատկերացնել Նրան ժողովների միջև ընկած ժամանակահատվածում շտապելիս կամ Իր գործերի ցուցակից բազմաթիվ հրատապ բաներ իրականացնելիս:

Ես չկարողացա տեսնել այդ:

Փոխարենը, ես տեսնում եմ գթառատ և հոգատար Աստծո Որդուն՝ նպատակաուղղված ապրելով յուրաքանչյուր օրը: Երբ Նա շփվում էր Իր շրջապատում գտնվողների հետ, նրանք զգում էին կարևոր և սիրված: Նա գիտեր մարդկանց անսահման արժեքը, ում հետ Նա հանդիպում էր: Նա օրհնում էր նրանց, ծառայում էր նրանց: Նա բարձրացնում էր նրանց, բժշկում էր նրանց: Նա տալիս էր նրանց Իր ժամանակի թանկարժեք պարգևը:

Մեր օրերում հեշտ է ուղղակի ձևացնել, թե շփվում ենք ուրիշների հետ: Մկնիկի մի շրխկոցով մենք կարող ենք «միանալ» հազարավոր «ընկերների» հետ առանց երբևէ հանդիպելու նրանցից որևէ մեկի հետ: Տեխնոլոգիան կարող է հրաշալի բան լինել և այն շատ օգտակար է, երբ մենք չենք կարողանում մոտ լինել մեր հարազատներին: Կինս և ես հեռու ենք ապրում մեր ընտանիքի թանկագին անդամներից, մենք գիտենք, թե դա ինչ է: Այնուամենայնիվ, ես հավատում եմ, որ մենք ճիշտ ուղղությամբ չենք առաջ ընթանում, թե անհատապես, թե որպես հասարակություն, երբ կապվում ենք ընտանիքի կամ ընկերների հետ մեծամասամբ զվարճալի նկարներ դնելով առցանցում, անկարևոր էլեկտրոնային նամակներ փոխանցելով կամ մեր հարազատների հետ կապվելով ինտերնետային կայքերի միջոցով: Կարծում եմ կան իրավիճակներ, երբ այդպիսի գործունեությունն ընդունելի է, բայց որքա՞ն ժամանակ ենք կամենում ծախսել դրա վրա: Եթե մենք թերանում ենք տրամադրել մեր լավագույն անձնական ես-ը և անբաժանելի ժամանակը նրանց, ովքեր իսկապես կարևոր են մեզ համար, մի օր մենք կափսոսանք դրա համար:

Եկենք վճռենք փայփայել նրանց, ում մենք սիրում ենք, անցկացնելով իմաստալի ժամանակ նրանց հետ, միասին գործեր անելով և թանկարժեք հիշողություններ զարգացնելով:

Երանի ես ապրեի իմ ներուժի սահմաններում

Մեկ այլ ափսոսանք, որ մարդիկ հայտնում էին, այն էր, որ իրենք թերացել էին դառնալ այն անձնավորությունը, որ զգում էին, որ կարող էին և պետք է դառնային: Երբ նրանք ետ էին նայում իրենց կյանքին, նրանք հասկանում էին, որ իրենք երբեք չեն ապրել իրականացնելով իրենց ներուժը, որ չափից շատ երգեր էին մնացել չերգված:

Ես այստեղ չեմ խոսում հաջողության աստիճանը մագլցելու մասին մեր տարբեր մասնագիտություններում: Այդ աստիճանը, անկախ նրանից, թե որքան բարձր կարող

է թվալ այս երկրի վրա, հազիվ թե հավասարազոր լինի մեկ հատիկ քայլին այն մեծ հավերժական ճանապարհորդությունում, որը սպասում է մեզ:

Ես ավելի շուտ խոսում եմ այն անձնավորությունը դառնալու մասին, որ Աստված՝ մեր Երկնային Հայրն է նախատեսել մեզ լինել:

Մենք ժամանում ենք այս աշխարհ ինչպես բանաստեղծն է ասել՝ «փառքի ամպերի հետք թողնելով»՝ նախամահկանացու կյանքից:[4]

Մեր Երկնային Հայրը տեսնում է մեր իրական ներուժը: Նա գիտի բաներ մեր մասին, որոնք մենք ինքներս չգիտենք: Նա հուշում է մեզ մեր կյանքի ընթացքում իրականացնել մեր ստեղծման նպատակը, ապրել արդար կյանքով և վերադառնալ Իր ներկայություն:

Ուրեմն ինչու ենք մենք այդքան շատ ժամանակ և էներգիա ծախսում այն բաների վրա, որոնք այդքան անցողիկ են, այդքան աննպատակ և այդքան մակերեսային: Միթե մենք հրաժարվում ենք տեսնել չնչին և անցողիկ բաներին հետամուտ լինելու անմտությունը:

Ավելի իմաստուն չէ՞ր լինի արդյոք մեզ համար «գանձեր դիզել երկնքումը, ուր ոչ ցեց եւ ոչ ժանկ չեն ապականում, եւ ուր գողերը պատը չեն ծակում եւ չեն գողանում»:[5]

Ինչպե՞ս ենք անում այդ: Հետևելով Փրկչի օրինակին, կիրառելով Նրա ուսմունքները մեր առօրյա կյանքում, ճշմարտապես սիրելով Աստծուն և մեր մերձավորներին:

Մենք, իհարկե, չենք կարող դա անել աշակերտ լինելուն դժկամությամբ մոտենալով, ժամացույցին նայելով կամ էլ քայլել ու դժգոհելով:

Երբ խոսքը վերաբերում է ավետարանով ապրելուն, մենք չպետք է նման լինենք այն տղային, որն իր բթամատը մտցնում է ջրի մեջ և ապա հայտարարում, որ գնացել էր լողալու: Որպես մեր Երկնային Հոր որդիներ և դուստրեր՝ մենք այնքա՞ն ավելի շատ բաների ենք ընդունակ: Դրա համար լավ մտադրությունները բավական չեն: Մենք պետք է *գործենք*: Նույնիսկ ավելի կարևոր է, որ մենք պետք է *դառնանք* այն, ինչ Երկնային Հայրը կամենում է, որ լինենք:

Ավետարանի վերաբերյալ մեր վկայությունը հայտարարելը լավ է, բայց վերականգված ավետարանի ապրող օրինակ լինելն ավելի լավ է: Լավ է ցանկանալը ավելի հավատարիմ լինել մեր ուխտերում, բայց ավելի լավ է իրականում հավատարիմ լինելը մեր սրբազան ուխտերին՝ ներառյալ առաքինի կյանքով ապրելը, մեր տասանորդներն ու զոհաբերությունները վճարելը, Իմաստության Խոսքը պահելը և ծառայելը նրանց, ովքեր կարիքի մեջ են: Լավ է հայտարարելը, որ ավելի շատ ժամանակ կնվիրենք ընտանեկան աղոթքին, սուրբ գրությունների ուսումնասիրմանը և ընտանեկան օգտակար միջոցառումներին, բայց իրականում բոլոր այս բաներն անելը հաստատապես երկնային օրհնություններ կբերեն մեր կյանք:

Աշակերտ լինելը՝ սրբությանը և երջանկությանը հետամուտ լինելն է: Դա է ճանապարհը դեպի մեր լավագույն և ամենաերջանիկ ինքնությունը:

Եկեք վճռենք հետևել Փրկչին և աշխատել ջանասիրաբար՝ դառնալու այն մարդը, որ մենք նախատեսված էինք դառնալ: Եկեք լսենք և հնազանդվենք Սուրբ Հոգու հուշումներին: Երբ այդպես վարվենք, Երկնային Հայրը հայտնի կդարձնի մեզ այն բաները, որոնք մենք երբեք չէինք իմացել մեր մասին: Նա նախապես կլուսավորի ճանապարհը և կբացի մեր աչքերը՝ տեսնելու մեր անհայտ, և հավանաբար, աներևակայելի տաղանդները:

Որքան ավելի շատ մենք նվիրվենք սրբությանն ու երջանկությանը հետամուտ լինելուն, այնքան ավելի քիչ է հավանականությունը, որ մենք կլինենք դեպի ափսոսանքները տանող ուղու մեջ: Որքան ավելի շատ ապավինենք Փրկչի շնորհին, այնքան ավելի շատ կզգանք, որ մենք այն ուղու վրա ենք, որը Երկնային Հայրն է նախատեսել մեզ համար:

Երանի, ես ինձ թույլ տված լինեի ավելի երջանիկ լինել

Մահվան շեմին կանգնած մարդկանց կողմից արտահայտած մեկ այլ ափսոսանք կարող է զարմանալի թվալ: Նրանք կցանկանային, որ իրենց թույլ տված լինեին ավելի երջանիկ լինել:

Այնքան հաճախ ենք բռնվում այն պատրանքներով, որ կա ինչ-որ բան մեր հասանելությունից վեր, որը մեզ երջանկություն կբերեր՝ ավելի լավ ընտանեկան իրավիճակ, ավելի լավ ֆինանսական իրավիճակ կամ որևէ դժվարին փորձության ավարտ:

Որքան ավելի ենք մեծանում, այնքան ավելի շատ ենք ետ նայում և գիտակցում, որ արտաքին հանգամանքներն իրականում նշանակություն չունեն կամ չեն որոշում մեր երջանկությունը:

Իրականում *մենք* է, որ նշանակություն ունենք: *Մենք* ենք որոշում մեր երջանկությունը:

Դուք և ես ենք ի վերջո պատասխանատու մեր իսկ երջանկության համար:

Կինս՝ Հարիեթը, և ես սիրում ենք հեծանիվ վարել: Սքանչելի է դուրս գալ և վայելել բնության գեղեցկությունները: Մենք ունենք որոշակի երթուղիներ, որոնցով սիրում ենք հեծանիվ վարել, բայց մենք այնքան էլ շատ ուշադրություն չենք դարձնում, թե որքան հեռու ենք գնում կամ որքան արագ ենք ճանապարհորդում համեմատած այլ հեծանվորդների հետ:

Սակայն երբեմն մտքովս անցնում է, որ մենք պետք է մի քիչ ավելի մրցակցական լինենք: Ես անգամ մտածում եմ, որ եթե մի քիչ մեզ լարենք, մենք կարող ենք ժամանակի ավելի լավ ցուցանիշ ունենալ կամ ավելի բարձր արագությամբ զբոսանք կատարել: Երբեմն ես նույնիսկ մեծ սխալ եմ կատարում՝ նշելով այս միտքը իմ սքանչելի տիկնոջը:

Նրա բնորոշ արձագանքը այս բնույթի իմ առաջարկներին միշտ շատ բարի, շատ հստակ և շատ ուղիղ է: Նա ժպտում է և ասում. «Դիթեր, սա մրցավազք չէ, սա ճամփորդություն է: Վայելիր պահը»:

Որքա՞ն ճիշտ է նա:

Երբեմն կյանքում մենք այնքան ենք կենտրոնանում եզրագծի վրա, որ թերանում ենք ուրախություն

գտնել ճամփորդության ընթացքում: Ես չեմ գնում հեծանիվ վարելու իմ կնոջ հետ, որովհետև ինձ հուզում է վերջնագիծը: Ես գնում եմ, որովհետև նրա հետ լինելու զգացումը քաղցր է և հաճելի:

Միթե՞ հիմարություն չի թվում փչացնել քաղցր և ուրախալի փորձառությունները, որովհետև մենք անընդհատ սպասում ենք այն պահին, թե երբ են դրանք ավարտելու:

Միթե՞ մենք լսում ենք երաժշտություն՝ սպասելով վերջին նոտայի մարվելուն նախքան թույլ կտանք մեզ ճշմարտապես վայելելու այն: Ո՛չ: Մենք լսում ենք և միանում մեղեդուելևէջներին, ռիթմին և ներդաշնակությանը ողջ ստեղծագործության ընթացքում:

Միթե՞ մենք ասում ենք մեր աղոթքները՝ սպասելով միայն «ամեն»-ին կամ վերջին: Իհարկե, ո՛չ: Մենք աղոթում ենք Երկնային Հորը մոտ լինելու համար Նրա Հոգին ստանալու և Նրա սերը զգալու համար:

Մենք չպետք է սպասենք երջանիկ լինելու, մինչև որ հասնենք ինչ-որ կետի ապագայում, միայն բացահայտելու, որ երջանկությունը հասանելի էր ողջ ժամանակ: Կյանքը նախատեսված չէ գնահատելու միայն հետադարձ հայացքով: «Սա այն օրն, է որ Տերն արաւ, թող ցնծանք եւ ուրախ լինինք սորանում»:[6]

Եղբայրներ և քույրեր, անկախ մեր մարտահրավերներից կամ փորձություններից, յուրաքանչյուր օրվա մեջ կա ինչ-որ բան, որը կարող է բերել երախտագիտություն և ուրախություն, եթե միայն մենք տեսնենք և գնահատենք այն:

Հավանաբար, մենք պետք է նայենք ավելի քիչ մեր աչքերով և ավելի շատ մեր սրտերով: Ես սիրում եմ մեջբերումը. «Միայն սիրտն է սրատես: Ամենագլխավորը աչքով չես տեսնի»:[7]

Մեզ պատվիրված է «շնորհակալություն հայտնել բոլոր բաներում»:[8] Այսպիսով, ավելի լավ չէ՞ տեսնել մեր աչքերով և սրտերով նույնիսկ փոքր բաները, որոնց համար մենք *կարող* ենք շնորհակալ լինել, քան ավելի շուտ խոշորացնել բացասականը մեր ներկա վիճակում:

Տերը խոստացել է. «Նա ով ստանում է բոլոր բաները գոհությամբ, պիտի փառավորվի. և այս աշխարհի բաները պիտի ավելացվեն նրա համար, նույնիսկ հարյուրապատիկ»:[9]

Եղբայրներ և քույրեր, մեր Երկնային Հոր առատ օրհնությունները, Նրա առատաձեռն փրկության ծրագիրը, վերականգված ավետարանի աստվածային ճշմարտությունները, և այս մահկանացու ճամփորդության շատ գեղեցկությունները «միթե՞ պատճառ չեն ուրախանալու»:[10]

Եկեք, ուրեմն, վճռենք երջանիկ լինել, անկախ մեր հանգամանքներից:

Վճիռների մասին

Մի օր մենք կկատարենք այդ անխուսափելի քայլը և կանցնենք մահկանացու ոլորտից դեպի մյուս ոլորտը: Մի օր մենք ետ կնայենք մեր կյանքին և կզարմանանք, թե կարող էինք արդյոք ավելի լավը լինել, կատարել ավելի լավ որոշումներ, կամ օգտագործել մեր ժամանակը ավելի իմաստուն ձևով:

Կյանքի ամենխորը ափսոսանքներից խուսափելու համար, մենք իմաստուն կլինեինք ընդունել մի քանի վճիռներ այսօր: Ուստի եկեք.

- Վճռենք ավելի շատ ժամանակ անցկացնել նրանց հետ, ում սիրում ենք:
- Վճռենք ձգտել ավելի լրջորեն դառնալ այն անձնավորությունը, որ Աստված է ցանկանում, որ մենք լինենք:
- Վճռենք երջանկություն գտնել, անկախ մեր հանգամանքներից:

Իմ վկայությունն է, որ վաղվա շատ խորը ափսոսանքներ կարող ենք կանխել՝ հետևելով Փրկչին այսօր: Եթե մենք մեղանչել ենք կամ սխալներ կատարել, եթե կատարել ենք ընտրություններ, որոնց համար ափսոսում ենք, կա Քրիստոսի Քավության թանկագին պարգևը, որի միջոցով մենք կարող ենք ներվել: Մենք չենք կարող ետ գնալ ժամանակի մեջ և փոխել անցյալը, բայց մենք կարող ենք ապաշխարել: Փրկիչը կարող է սրբել մեր ափսոսանքի արցունքները[11] և հեռացնել մեր մեղքերի բեռը:[12] Նրա Քավությունը թույլ է տալիս մեզ թողնել անցյալը ետևում և առաջ շարժվել մաքուր ձեռքերով և անարատ սրտով[13] և ավելի լավ գործելու և հատկապես ավելի լավը դառնալու վճռականությամբ:

Այո, այս կյանքը արագ է անցնում, մեր օրերը թվում է թռչնում են արագ. և մահը երբեմն երկյուղալի է թվում: Այնուամենայնիվ, մեր հոգին կշարունակի ապրել և մի օր կմիավորվի մեր հարություն առած մարմնի հետ՝ ստանալու անմահ փառք: Ես բերում եմ հանդիսավոր վկայություն, որ ողորմած Քրիստոսի շնորհիվ մենք բոլորս կապրենք նորից և հավերժ: Մեր Փրկչի և Քավչի շնորհիվ մի օր մենք իսկապես կհասկանանք և կուրախանանք «մահվան խայթը կուլ է գնացել Քրիստոսում» խոսքերի իմաստով:[14]

Ուղին դեպի մեր աստվածային ճակատագրի իրականացումը որպես Աստծո որդիներ և դուստրեր հավերժական է: Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, սիրելի ընկերներ, մենք պետք է սկսենք քայլել այդ հավերժական ուղով *այսօր*, մենք չենք կարող վատնել անգամ մեկ օր: Ես աղոթում եմ, որ մենք չսպասենք մինչև պատրաստ լինենք մեռնելու, նախքան մենք իսկապես կսովորենք ապրել: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ալմա 40.11:
2. Տես Susie Steiner, "Top Five Regrets of the Dying," *Guardian,* Feb. 1, 2012, www.guardian.co.uk/lifeandstyle/2012/feb/01/top-five-regrets-of-the-dying:
3. Bronnie Ware, in Steiner, "Top Five Regrets of the Dying."
4. "Ode: Intimations of Immortality from Recollections of Early Childhood," *The Complete Poetical Works of William Wordsworth* (1924), 359.
5. Մատթեոս 6.20:
6. Սաղմոս 118.24:
7. Անտուան դը Սենտ Էքզյուպերի, *Փոքրիկ իշխանը*, 2001, էջ 45:
8. Մոսիա 26.39, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 59.7:
9. Վարդապետություն և Ուխտեր 78.19:
10. Ալմա 26.35:
11. Տես Հայտնություն Է.17:
12. Տես Մատթեոս ԺԱ.28–30:
13. Տես Սաղմոս ԻԴ.4:
14. Մոսիա 16.8; տես նաև Ա Կորնթացիս ԺԵ.54:

Ներկայացրեց Նախագահ Հենրի Բ. Այրինգը
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատումը

Առաջարկվում են հաստատման Թոմաս Սպենսեր Մոնսոնը որպես մարգարե, տեսանող և հայտնող, և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ; Հենրի Բենյոն Այրինգը որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆը որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, կարող են քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Բոյդ Քենեթ Փաքերը որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, և հետևյալ անձինք որպես այդ քվորումի անդամներ. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն և Նիլ Լ. Անդերսեն:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդականները և Տասներկու Առաքյալները որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, արտահայտեք նույն կերպ:

Երեց Ջեյ Ի. Ջենսենն ազատվել է Յոթանասունի Քվորումների Նախագահության անդամի ծառայությունից:

Ովքեր կարող են միանալ մեզ և երախտագիտություն հայտնել, խնդրում ենք, քվեարկել:

Առաջարկվում է հաստատման Երեց Քրեյգ Ս. Քրիսչենսենը որպես Յոթանասունի Քվորումների Նախագահության անդամ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Դե՞մ:

Առաջարկվում է իր հիանալի ծառայության համար երախտագիտության քվեով ազատել Երեց Մարլին Կ. Ջենսենին որպես Եկեղեցու Պատմաբան և Արձանագրող իր ծառայությունից:

Բոլորն ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում է հաստատման Երեց Ստիվեն Ի. Մնոուն որպես Եկեղեցու Պատմաբան և Արձանագրող:

Բոլորն ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Դե՞մ:

Առաջարկվում է ազատել Երեցներ Քեյթ Կ. Հիլբիգին, Ջեյ Ի. Ջենսենին, Մարլին Կ. Ջենսենին և Օկտավիանո Տենորիոյին Յոթանասունի Առաջին Քվորումի անդամների իրենց ծառայությունից և նշանակել նրանց Պատվավոր Բարձրագույն Իշխանություններ:

Առաջարկվում է ազատել Երեցներ Քեյթ Ռ. Էդվարդսին և Լարի Վ. Գիբբոնսին Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամների իրենց ծառայությունից:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս եղբայրների հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանությունները, Տարածքային Յոթանասունականները, և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր հաստատող ձայնի և ձեր հավատքի, նվիրման և աղոթքների համար: ■

Երեց Լ. Թոմ Փերի
Տասներկու Առաքյալների Քվորում

Դառնալ լավ ծնողներ

Կան շատ ուղիներ, որոնցով լավ ծնողները կարող են ստանալ օգնություն և աջակցություն, որի կարիքն ունեն՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը իրենց երեխաներին ուսուցանելու համար:

Այս ամառ ես հասա հատուկ մի ուղենիշի՝ ես իմ 90-րդ ծննդյան տարեդարձի ականատեսը եղա: Երբ հասնում եք որոշակի ուղենիշների ձեր կյանքում, օգտակար և ուսանելի է մտածել անցյալի իրադարձությունների և փորձառությունների մասին: Դուք, երիտասարդներ՝ լսելով կամ կարդալով այս ելույթը, գուցե այնքան էլ չտպավորվեք 90 տարվա կյանքով, բայց այն ժամանակ, երբ ես եմ ծնվել, այսքան երկար ապրելը մեծ նվաճում էր համարվում: Ամեն օր ես գոհություն եմ հայտնում Երկնային Հորը ինձ երկար կյանքով օրհնելու համար:

Այնքան շատ բան է փոխվել իմ կյանքի ընթացքում: Ես տեսել եմ արդյունաբերական դարաշրջանի և տեղեկատվական դարաշրջանի զարգացումները: Ավտոմեքենաների, հեռախոսների և ինքնաթիռների զանգվածային արտադրությունը իմ վաղ օրերի մեծ նորարարություններն էին: Այսօր ուղիները, որոնցով մենք գտնում, կիսվում և օգտագործում ենք տեղեկությունը փոխվում է գրեթե ամեն օր: Իմ տարիքում ես զարմանում եմ սրընթաց փոփոխվող աշխարհով, որում ապրում ենք բոլորս: Նորօրյա հայտնագործություններից շատերն են հուզում երևակայությունը՝ կյանքն ավելի լավը դարձնելու իրենց հնարավորություններով:

Մեր շրջապատի բոլոր այդ արագընթաց փոփոխությունների մեջ մենք լրջորեն աղոթում և ջանք ենք թափում, որպեսզի հավաստիանանք, որ Հիսուս Քրիստոսի ավետարանի արժեքները հարատևում են: Արդեն դրանցից մի քանիսը կորչելու վտանգի տակ են: Այդ արժեքների ցուցակի վերին մասում և, հետևաբար, հակառակորդի գլխավոր նշանակետում ամուսնության սրբությունն է և ընտանիքների կարևոր դերը: Դրանք ապահովում են խարիսխ և ապահով նավահանգիստ տան համար, որտեղ սիրառատ Երկնային Հոր յուրաքանչյուր զավակ կարող է բարու ազդեցություն կրել և ձեռք բերել այլ հավերժական արժեքներ:

Իմ սեփական ընտանիքը, սպասելով իմ կյանքի 90-ամյա ուղենիշի տոնակատարությանը, սկսեց օգնել ինձ հիշել և գնահատել իմ երկար կյանքի փորձառությունները: Օրինակ՝ իմ եղբոր աղջիկը հավաքեց և տվեց ինձ մի քանի նամակներ, որոնք ես գրել էի իմ ծնողներին մոտավորապես 70 տարի առաջ իմ Ռազմածովային առաջապահ ուղեկալից՝ Խաղաղ օվկիանոսի Սապան կղզուց՝ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ:

Այդ նամակներից մեկը հատկապես գրավեց իմ ուշադրությունը: Դա մի նամակ էր, որը ես գրել էի մայրիկիս, խնդրելով, որ նա բացեր և կարդար այն 1945 թվականի Մայրերի օրը: Ես կկամենայի կիսվել որոշ հատվածներով ձեզ հետ, հույս ունենալով, որ դուք կտեսնեք, թե ինչու ես հավիտյան երախտապարտ կլինեմ իմ հոգատար հորը և մորը այն դասերի համար, որ ես սովորել էի տանը նրանց ուսուցումից: Իմ ծնողները հիշողությանս մեջ պահպանված իմ պատկերացմամբ լավ ծնողների բնորոշ օրինակ էին, ովքեր դրել էին իրենց ամուսնությունը և երեխաների ճիշտ դաստիարակությունը որպես իրենց բարձրագույն առաջնահերթություն:

Մայրերի Օրվա 1945 թվականի նամակը սկսվում էր հետևյալ ձևով.

«Սիրելի մայրիկ,

Վերջին չորս տարիների ընթացքում ինձ բախտ չի վիճակվել քեզ հետ անցկացնել Մայրերի օրը: Ամեն տարի ես ցանկացել եմ լինել քեզ հետ և ասել քեզ ուղղակի, թե որքան շատ եմ քեզ սիրում, և որքան շատ եմ մտածում քո մասին, բայց քանի որ դա կրկին հնարավոր չէ, ես կանեմ հաջորդ լավագույն բանը և կուղարկեմ իմ մտքերը նամակով:

Այս տարի՝ ավելի շատ, քան մյուս տարիները, ես կարողանում եմ տեսնել, թե սքանչելի մայր ունենալը ինչ է եղել ինձ համար: Առաջինը՝ ես կարոտել եմ այն փոքրիկ բաներին, որ դու, սովորաբար, անում էիր ինձ համար: Երբ առավոտյան ես վեր էի կենում անկողնուց, ես երբեք չէի անհանգստանում, թե արդյոք կգտնեի մաքուր վերնաշապիկ և մաքուր գուլպաներ: Միակ բանը, որ պետք է անեի, դարակը բացելն էր, և ես գտնում էի դրանք: Ճաշին ես միշտ գիտեի, որ կգտնեի ուտելու մի բան, որը սիրում էի՝ հնարավորինս լավագույն ձևով պատրաստված: Գիշերը ես միշտ գիտեի, որ կգտնեի մաքուր սպիտակեղեն անկողնուս վրա և հենց

ճիշտ այնքան ծածկոցներ, որոնք ինձ շատ հարամարավետ կպահեին: Տանն ապրելը իսկապես մեծ հաճույք էր»:

Երբ կարդացի նամակի այս առաջին երկու պարբերությունները, սկզբում շփոթվեցի, թե որքան զգացապաշտ էին դրանք հնչում: Հավանաբար, վրանում ապրելը և ճամբարում մոծակների դեմ պաշտպանացանցով մահճին քնելը մտքերս ուղղել էին դեպի իմ շատ առանձնահատուկ տունը:

Մայրիկիս ուղղված նամակը շարունակվում էր.

«Բայց ավելի խորն է զգացումը քո հանդեպ, այն օրինակի համար, որ դու ես ինձ համար հանդիսացել: Կյանքն այնքան վայելքով էր լցված մեզ համար որպես ընտանիք, որ մենք ուզում էինք քայլել ձեր հետքերով, շարունակելով վայելել նույն ուրախությունը, որը մենք ունեցել էինք ավելի վաղ տարիներին: Դու միշտ ժամանակ էիր գտնում ընտանիքին տանել ձորը և մենք կարող էինք ապավինել քեզ ամեն բանում՝ սկսած լեռները մագլցելուց մինչև մեզ հետ գնդակով խաղալը: Դու և հայրիկը երբեք մենակ չէիք գնում հանգստանալու: Ընտանիքը միշտ ձեր հետ էր: Այժմ, երբ ես հեռու եմ տնից, ես միշտ ուզում եմ խոսել իմ ընտանեկան կյանքի մասին, որովհետև դա այնքան հաճելի էր: Ես չեմ կարող շեղվել քո ուսուցումներից այժմ, որովհետև իմ գործողություններն արտացոլում են քո բնավորությունը: Կյանքը մեծ մարտահրավեր է ինձ համար՝ արժանի լինելու կոչվել Նոռա Սոնի Փերիի որդին: Ես շատ հպարտ եմ այս կոչումով և ես հույս ունեմ, որ միշտ արժանի կլինեմ դրան:

Հուսով եմ, որ հաջորդ տարի քեզ հետ կլինեմ, որպեսզի ցույց տամ լավ ժամանակ անցկացնելու այն ծրագիրը, որը ես նախապատրաստում եմ Մայրերի օրվա համար չորս տարի շարունակ:

Թող Աստված օրհնի քեզ այն բոլոր հրաշալի բաների համար, որ դու ես արել այս անհանգիստ աշխարհում:

Ողջ իմ սիրով՝ Թոմ»:[1]

Երբ վերընթերցեցի նամակս, ես

մտածեցի նաև ընտանիքի, ծխի, ցցի և համայնքի մշակույթի մասին, որում ես դաստիարակվել էի:

Մշակույթը որոշվում է ժողովրդի կենսակերպով: Գոյություն ունի եզակի ավետարանական մշակույթ՝ արժեքների և ակնկալիքների և սովորությունների մի համակարգ, որն ընդհանուր է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի բոլոր անդամների համար: Ավետարանական այդ մշակույթը կամ կենսակերպը գալիս է փրկության ծրագրից, Աստծո պատվիրաններից և ապրող մարգարեների ուսմունքներից: Այն իր արտահայտությունն է գտնում նրանում, թե ինչպես ենք մենք մեծացնում մեր ընտանիքները և վարում մեր անձնական կյանքը:

Առաջին հրահանգը Ադամին իր մահկանացու պարտավորության վերաբերյալ գտնվում է Ծննդոց Բ.24 հատվածում. «Սորա համար մարդը կթողէ իր հայրը եւ իր մայրը, եւ կյարի իր կնոջը. Եւ մէկ մարմին կլինին»:

Տղամարդու և կնոջ պաշտոնապես և օրինավոր ամուսնությամբ միանալը ոչ միայն նախապատրաստում է ապագա սերունդներին երկիրը ժառանգելու հնարավորություն տալ, այլ նաև բերում է մեծագույն ուրախություն և բավականություն, որը կարելի է գտնել այս մահկանացու փորձառության ընթացքում: Դա հատկապես ճշմարիտ է, երբ քահանայության զորությամբ հայտարարվում է, որ ամուսնությունը լինի ժամանակի և ողջ հավերժության համար: Երեխաները, որոնք ծնվում են այս ամուսնություններից ունեն ապահովություն, որը ոչ մի ուրիշ տեղ չի կարելի գտնել:

Դասերը, որոնք ուսուցանվում են տանը լավ ծնողների կողմից, խիստ կարևոր են դառնում այսօրվա աշխարհում, որտեղ հակառակորդի ազդեցությունն այդքան լայնատարած է: Ինչպես գիտենք, նա փորձում է քայքայել և կործանել մեր հասարակության բուն հիմքը՝ ընտանիքը: Խորամանակ և զգուշորեն ծպտված ուղիներով նա հարձակվում է ընտանեկան կյանքի պարտավորության վրա ողջ աշխարհում և քայքայում է հավատարիմ Վերջին Օրերի Սրբերի մշակույթն ու ուխտերը: Ծնողները պետք է վճռական լինեն, որ ուսուցումն ընտանիքում ամենասրբազան և կարևոր պարտականությունն է: Չնայած այլ հաստատություններ, ինչպիսիք են եկեղեցին և դպրոցը, կարող են օգնել ծնողներին «կրթել երեխային իր ճանապարհին համեմատ» (Առակաց ԻԲ.6), այս պարտականությունը ի վերջո մնում է ծնողների վրա: Համաձայն երջանկության մեծ ծրագրի՝ լավ ծնողներին է վստահվում Երկնային Հոր զավակների հոգատարությունն ու զարգացումը:

Մեր ծնողական մեծ պատասխանատվության մեջ, կան շատ ուղիներ, որոնցով լավ ծնողները կարող են ստանալ օգնություն և աջակցություն, որի կարիքն ունեն՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը իրենց երեխաներին ուսուցանելու համար: Թույլ տվեք առաջարկել հինգ բան, որ ծնողները կարող են անել, որպեսզի ստեղծեն ավելի ուժեղ ընտանեկան մշակույթ.

Առաջին՝ ծնողները կարող են լրջորեն աղոթել՝ խնդրելով Հավերժական Հորը օգնել իրենց սիրել, հասկանալ և առաջնորդել երեխաներին, որոնց Նա ուղարկել է իրենց:

Երկրորդ՝ նրանք կարող են

ընտանիքով աղոթել, միասին սուրբ գրություններ ուսումնասիրել և ընտանեկան երեկոներ անցկացնել և որքան հնարավոր է ընտանիքով ճաշել՝ ուտելը դարձնելով հաղորդակցության և արժեքներ ուսուցանելու մի ժամանակ:

Երրորդ՝ ծնողները կարող են լիովին օգտվել Եկեղեցու աջակցության ցանցից, հաղորդակցվելով իրենց Երեխաների միության ուսուցիչների, դեռահասների ղեկավարների և դասարանի և քվորումի նախագահությունների հետ: Հաղորդակցվելով իրենց երեխաների հետ աշխատելու համար կանչված և ի սպաս դրված մարդկանց հետ՝ ծնողները կարող են էական ըմբռնում ձեռք բերել երեխայի առանձնահատուկ և որոշակի կարիքների մասին:

Չորրորդ՝ ծնողները կարող են հաճախակի իրենց վկայություններով կիսվել իրենց երեխաների հետ, պարտավորեցնել նրանց պահել Աստծո պատվիրանները և խոստանալ օրհնություններ, որոնք մեր Երկնային Հայրը խոստանում է Իր հավատարիմ զավակներին:

Հինգերորդ՝ մենք կարող ենք կազմակերպել մեր ընտանիքները՝ հիմնվելով մաքուր, պարզ ընտանեկան կանոնների և ակնկալիքների վրա, առողջարար ընտանեկան ավանդությունների և ծեսերի վրա, և «ընտանեկան տնտեսության» վրա, որտեղ երեխաներն ունեն տնային պարտականություններ և վաստակում են օրաբաժին, որպեսզի կարողանան սովորել կառավարել, խնայել և տասանորդ վճարել այն փողից, որ նրանք վաստակում են:

Ավելի ամուր *ընտանեկան մշակույթ* ստեղծելու այս առաջարկները հավասարապես լծակից են Եկեղեցու մշակույթի հետ: Մեր զորացված ընտանեկան մշակույթը կպաշտպանի մեր երեխաներին «հակառակորդի կրակոտ նետերից» (1 Նեփի 15.24), որոնք արմատավորված են իրենց հասակակիցների մշակույթում՝ զվարճությունների ու համբավի մշակույթում, պատվի և տիտղոսների մշակույթում և համացանցի ու տեսաձայնային մշակույթում, որոնց ազդեցությանը նրանք



անընդհատ ենթարկվում են: Դա կօգնի մեր երեխաներին «ապրել աշխարհում», բայց չդառնալ «աշխարհից» (տես Հովհաննես Ե.19):

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսուցանել է. «Ծնողների պարտականությունն է Հիսուս Քրիստոսի ավետարանի այս փրկարար սկզբունքներն ուսուցանել իրենց երեխաներին, որպեսզի նրանք իմանան, թե ինչու պետք է իրենք մկրտվեն, և որ իրենք իրենց սրտերում տպավորված լինեն ցանկությամբ շարունակելու պահել Աստծո պատվիրանները իրենց մկրտությունից հետո, որպեսզի կարողանան Նրա ներկայությունը վերադառնալ: Դուք, իմ լավ եղբայրներ և քույրեր, ցանկանո՞ւմ եք ձեր ընտանիքները, ձեր երեխաները ձեր հետ լինեն. ուզո՞ւմ եք կնքվել ձեր հայրերին և ձեր մայրերին նախքան դուք . . . Եթե այդպես է, ապա դուք պետք է սկսեք ուսուցանել օրորոցից սկսած: Դուք պետք է ուսուցանեք ինչպես օրինակով, այնպես էլ ցուցումով»:[2]

Ընտանիքի վերաբերյալ հայտարարության մեջ ասվում է.

«Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար: «Որդիքը Տիրոջ ժառանգությունն են» (Սաղմոս ՃԻԷ.3): Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապաշտ քաղաքացիներ լինել, որտեղ էլ, որ ապրեն. . . .

. . . Ըստ աստվածային ծրագրի՝ հայրերը պետք է ղեկավարեն իրենց ընտանիքները սիրով ու առաքինությամբ, և պատասխանատու լինեն ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը: Մայրերը, հատկապես, պատասխանատու են իրենց երեխաների դաստիարակման համար: Այս սուրբ պարտականություններն իրականացնելիս, հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ»:[3]

Ես հավատում եմ, որ աստվածային ծրագրով է, որ մայրության դերը շեշտադրված է հաջորդ սերնդին դաստիարակելու և ուսուցանելու համար: Բայց հիանալի է տեսնել ամուսինների և կանանց, ովքեր գործում են որպես իսկական ընկերակիցներ, որտեղ նրանք միաձուլում են իրենց ազդեցությունը և արդյունավետ հաղորդակցվում են, ինչպես իրենց երեխաների հարցում զրուցելիս, այնպես էլ իրենց երեխաների հետ շփվելիս:

Ամբարշտության կատաղի հարձակումները մեր երեխաների դեմ ավելի նենգ և ավելի լկտի են դառնում, քան երբևէ եղել են: Ավելի ամուր ընտանեկան մշակույթ կառուցելը ևս մեկ շերտ է ավելացնում մեր երեխաների պաշտպանության համար՝ պահպանելով նրանց աշխարհիկ ազդեցություններից:

Աստված օրհնի ձե՛զ, Սիոնի լավ մայրեր և հայրեր: Նա ձեր խնամքին է վստահել Իր հավերժական զավակներին: Որպես ծնողներ՝ մենք գործակից ենք, նույնիսկ միավորված ենք Աստծո հետ՝ իրականացնելու Նրա գործը և փառքը Իր զավակների մեջ: Մեր սրբազան պարտքն է անել մեր լավագույնը: Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով՝ ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Mother's Day letter from L. Tom Perry to his mother, sent from Saipan, dated May 3, 1945:
2. Joseph Fielding Smith, in Conference Report, Oct. 1948, 153:
3. «Ընտանիք. Հայտարարություն Աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Եռանդուն ներգրավված

Մեծ գործերն իրականացվում են և բեռը թեթևանում է «քարի գործում ջերմեռանդ ներգրավված» բազմաթիվ ձեռքերի օգնությամբ:

Երեց Փերի, կարծում եմ դուք պետք է որ լինեք ամբողջ Եկեղեցում ամենաերիտասարդ 90 տարեկանը: Դուք նկատեցիք, ինչպես նա վեր ցատկեց իր աթոռից:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ամեն անգամ, երբ վայելում եմ թարմ, հասունացած լոլիկը կամ ուտում ծառից նոր քաղված հասած հյութալի դեղձը, մտքով գնում եմ 60 տարի ետ, երբ հայրս ուներ փոքր դեղձի այգի Հալադեյում, Յուտա: Նա այնտեղ փեթակներ էր պահում, որպեսզի մեղուները փոշոտեին դեղձի ծաղիկները, որոնք ավելի ուշ աճում էին, դառնալով շատ մեծ, համեղ դեղձեր:

Հայրս սիրում էր իր նուրբ մեղուներին և հիանում էր նրանով, ինչպես են հազարավոր մեղուներ միասին աշխատում՝ դեղձի ծաղիկներից հավաքած նեկտարը փոխակերպելով քաղցր, ոսկեգույն մեղրի, որը բնության ամենասննդարար ուտելիքներից մեկն է: Իրականում, սննդի մասնագետներն ասում են մեզ, որ դա այնպիսի սնունդ է, որ ներառում է կյանքի համար անհրաժեշտ բոլոր նյութերը՝ էնզիմներ, վիտամիններ, հանքային նյութեր և ջուր:

Հայրս միշտ փորձում էր ներգրավել ինձ իր մեղվագործության մեջ, բայց ես շատ ուրախ էի, որ թողնում էի իրենց իր մեղուներին խնամելու գործը: Սակայն, դեռևս այդ օրերից ես սովորել եմ ավելին այդ բարձր կազմակերպված փեթակների մասին, որտեղ կար մոտ 60 000 մեղու:

Մեղուները պահվում են փոշոտելու, նեկտար հավաքելու և նեկտարը մեղրի վերածելու համար: Դա նրանց բացառիկ հրաշալի հատկանիշն է, որ դրվել է իրենց գենետիկական կոդում մեր Արարչի կողմից: Հաշվարկվել է, որ կես լիտր մեղր արտադրելու համար միջին չափի փեթակի 20 000–60 000 մեղուները պետք է այցելեն միլիոնավոր ծաղիկների և անցնեն այնքան ճանապարհ, որը հավասար է երկրագնդի շուրջը երկու անգամ պտտվելուն: Մի քանի շաբաթից մինչև չորս ամիս իր կարճատև կյանքի ընթացքում մեկ բանվոր մեղուն թեյի գդալի միայն մեկ տասներկուերորդական չափով մեղր է ստեղծում փեթակում:

Ճիշտ է, համեմատելով ընդհանուրի հետ, չնչին բան է թվում, սակայն յուրաքանչյուր մեղվի թեյի գդալի մեկ տասներկուերորդ չափով մեղրը կարևոր է փեթակի կյանքի համար: Մեղուները կախված են իրարից: Աշխատանքը, որ կարող էր շատ ծանր լինել մի քանի մեղուների համար, ավելի է հեշտանում, որովհետև բոլոր մեղուները բարեխղճորեն կատարում են իրենց հասանելիք մասը:

Փեթակը միշտ կարևոր խորհրդանիշ է եղել մեր Եկեղեցու պատմության մեջ: Մորմոնի Գրքում մենք սովորում ենք, որ հազարավոր տարիներ առաջ Հարեղացիները Ամերիկաներ ճամփորդելիս իրենց հետ տարան փեթակները (տես Եթեր 2.3): Բրիգամ Յանգը ընտրեց փեթակը որպես խորհրդանիշ, որպեսզի պիոներների մեջ խրախուսի և ոգեշնչի համատեղ աշխատանքը,

Մեծ Սոլթ Լեյքի շրջակայքի ամայի տափաստանները վերածելու բերրի հովիտների, որ այսօր մենք ունենք: Մենք նրանց համատեղ տեսլականից և տքնաջան աշխատանքից օգտվողներն ենք:

Փեթակի խորհրդանիշը կարելի է գտնել մեր շատ տաճարների ներքին և արտաքին հարդարման մեջ: Այս ամբիոնը, որի մոտ ես կանգնած եմ, պատրաստված է Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ետնաբակում աճած կաղնու փայտից, և զարդարված է փեթակի փորագրված պատկերներով:

Այս ամենում խորհրդանշականն այն է, որ մեծ գործերն իրականացվում են և բեռը թեթևանում է «բարի գործում ջերմեռանդ ներգրավված» (ՎԵՈՒ 58.27) բազմաթիվ ձեռքերի օգնությամբ: Պատկերացրեք, թե աշխարհում ինչ կարող էին կատարել միլիոնավոր Վերջին Օրերի Սրբեր, եթե գործեին փեթակի ձևով՝ Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների հանդեպ սևեռված, կենտրոնացած մեր պարտականությամբ:

Փրկիչն ուսուցանել է, որ առաջին և մեծ պատվիրանն է.

«Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը: . . .

Երկրորդն էլ սրան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պես:

Այս երկու պատվիրանքից կախված են բոլոր օրենքը և մարգարեները» (Մատթեոս 22.37, 39–40):

Փրկչի խոսքերը պարզ են, բայցև խորիմաստ ու կարևոր: Մենք պետք է սիրենք Աստծուն, սիրենք և հոգ տանենք մեր ընկերների մասին, ինչպես մեզ համար: Պատկերացրեք, թե ինչ բարիք կարող ենք գործել աշխարհում, եթե բոլորս միասնական՝ որպես Քրիստոսի հետևորդներ, ձերմեռանդ և ջանասիրաբար արձագանքենք մյուսների կարիքներին և ծառայենք մեզ շրջապատող մարդկանց՝ մեր ընտանիքներին, ընկերներին, հարևաններին և համաքաղաքացիներին:

Ինչպես Հակոբոսի թուղթն է նշում, ծառայությունը՝ անարատ կրոնասիրությունն է (տես Հակոբոս 1.27):

Մենք կարդում ենք աշխարհում Եկեղեցու անդամների կողմից մատուցված ծառայության, հատկապես՝ մարդասիրական ծառայության մասին, որ տրամադրվում է աղետների՝ հրդեհների, և ջրհեղեղների, և փոթորիկների, և պտուտահողմերի ժամանակ: Արտակարգ իրավիճակներում այդ անչափ անհրաժեշտ և այնքան գնահատված արձագանքները անշուշտ պետք է շարունակվեն որպես միմյանց բեռը կրելու եղանակ: Իսկ ի՞նչ պետք է անել մեր առօրյա կյանքում: Ինչպիսի՞ն կլինի ամեն օր մյուսների հանդեպ մեր կողմից քրիստոսանման անկեղծ սիրով կատարվող կարեկցանքի միլիոնավոր փոքր գործերի համընդհանուր ազդեցությունը: Ժամանակի ընթացքում դա կթողնի փոխակերպող ազդեցություն մեր Երկնային Հոր բոլոր զավակների վրա՝ մեր միջոցով նրանց հանդեպ Նրա սիրո տարածման շնորհիվ: Մեր անհանգիստ աշխարհն այսօր Քրիստոսի այս սիրո կարիքն ունի ավելի քան երբևէ, և նույնիսկ դրա կարիքն ավելի շատ կլինի գալիք տարիներին:

Այդ ամենօրյա ծառայության հասարակ գործերը ինքնին շատ չեն թվա, իսկ համատեղ դիտարկելու դեպքում դրանք դառնում են փեթակում մեկ մեղվի կողմից ստեղծված թեյի գդալի տասներկուերորդական չափով մեղրի պես: Աստծո և Նրա զավակների հանդեպ մեր սիրո մեջ ուժ կա, իսկ երբ այդ սերը զգալիորեն դրսևորվում է քրիստոնեական միլիոնավոր բարի գործերում, այն քաղցրացնում և սնուցում է աշխարհը կյանքի համար անհրաժեշտ հավատքի, հույսի և գթության նեկտարով:

Ի՞նչ պետք է անենք, որ դառնանք նվիրված մեղուների պես և նվիրվածությունը դառնա մեր էության մասը: Մեզանից շատերը հնազանդ հաճախում են մեր Եկեղեցու ժողովներին, և մենք տքնաջան աշխատում ենք մեր կոչումներում, հատկապես կիրակի օրերին: Դա անկասկած, գովասանքի արժանի է: Իսկ շաբաթվա մյուս օրերին արդյո՞ք մեր մտքերն ու սրտերը ջերմեռանդ ներգրավված են բարի գործերում: Արդյո՞ք պարզապես մեխանիկորեն կատարում ենք մեր պարտականությունները, թե՞ իսկապես դարձի ենք եկել դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը: Ինչպե՞ս ենք վերցնում մեր մտքերում փայփայված հավատքի սերմը և խորը ցանում մեր հոգու պարարտ հողում: Ինչպե՞ս ենք սրտի հզոր փոփոխություն ունենում, որն ըստ Ալմայի կարևոր է մեր հավերժական երջանկության և խաղաղության համար (տես Ալմա 5.12–21):

Հիշեք, որ մեղրը պարունակում է կյանքի համար բոլոր անհրաժեշտ նյութերը: Իսկ Քրիստոսի վարդապետությունը և ավետարանը հավերժական կյանք ձեռք բերելու միակ ուղին են: Երբ մեր վկայությունը չի հիմնվում միայն մեր մտքի վրա, այլ խորը արմատավորվում մեր սրտում, առ Փրկիչ սերը դառնում է սիրելու և ծառայելու մեր շարժառիթը: Միայն այդ ժամանակ մենք կդառնանք հիմնովին դարձի եկած Քրիստոսի աշակերտներ՝ զորացած Հոգով՝ հասնելու մեր մերձավորների սրտերին:

Երբ մեր սրտերն այլևս դրված չեն աշխարհի բաների վրա, մենք այլևս չենք տենչում մարդկանց գովասանքներին կամ չենք գոհացնում մեր հպարտությունը (տես ՎԵՈՒ 121.35): Փոխարենը, մենք վերցնում ենք Քրիստոսանման հատկանիշները, որ Հիսուսն է ուսուցանել.

- Մենք մեղմ ենք, հեզ և երկայնամիտ (տես ՎԵՈՒ 121.41):
- Մենք բարի ենք, առանց կեղծավորության կամ նենգության (տես ՎԵՈՒ 121.42):
- Մենք գթասիրտ ենք բոլոր մարդկանց հանդեպ (տես ՎԵՈՒ 121.45):
- Մենք միշտ առաքինի մտքեր ունենք (տես ՎԵՈՒ 121.45):
- Մենք այլևս չենք ցանկանում չարիք գործել (տես Մոսիա 5.2):
- Սուրբ Հոգին մեր մշտական ընկերակիցն է, և քահանայության վարդապետություններն իջնում են մեր հոգու վրա, ինչպես ցողը երկնքից (տես ՎԵՈՒ 121.45–46):

Այժմ, եղբայրներ և քույրեր, ես չեմ քաջալերում կրոնական մոլեռանդություն կամ ֆանատիզմ: Ճիշտ հակառակը: Պարզապես առաջարկում եմ, որ առ Քրիստոսի ավետարան մեր լիարժեք դարձի ընթացքում մենք կատարենք մյուս տրամաբանական քայլը՝ ավետարանի վարդապետությունները խորը արմատավորենք մեր սրտում և հոգում, որպեսզի գործենք և ապրենք համապատասխանաբար, և ազնվորեն, ինչին մենք հավատում ենք:

Դա հեշտացնում է մեր կյանքը և ուժեղացնում է մեր զգայունությունը հանդեպ Հոգին և մյուսների կարիքները: Այն բերում է ուրախություն մեր կյանք և խաղաղություն մեր հոգուն, այնպիսի ուրախություն և խաղաղություն, որը գալիս է, երբ մենք ապաշխարում ենք մեր մեղքերից և հետևում Փրկչին՝ պահելով Նրա պատվիրանները:

Ինչպե՞ս ենք մենք կատարում այդ փոփոխությունը: Ինչպե՞ս ենք արմատավորում Քրիստոսի այդ սերը մեր սրտում: Կա առօրյա պարզ քայլ, որ կարող է տարբերություն բերել Եկեղեցու յուրաքանչյուր անդամի, ներառյալ ձեր կյանքում՝ տղաներ և դուք՝ աղջիկներ, երիտասարդ տղամարդիկ և կանայք, ամուրի չափահասներ, հայրեր և մայրեր:

Այդ պարզ քայլն է՝ ձեր ամենօրյա առավոտյան աղոթքում խնդրել Երկնային Հորը առաջնորդել ձեզ, որպեսզի գտնեք Իր թանկագին զավակներից որևէ մեկին ծառայելու հնարավորություն: Ապա զբաղվեք ձեր գործերով ձեր սիրտը լի հավատքով և սիրով, փնտրելով որևէ մեկին, որ օգնեք: Կենտրոնացեք դրա վրա, ինչպես մեղուներն են կենտրոնացած ծաղիկների վրա, որտեղից հավաքում են նեկտարն ու ծաղկափոշին: Այդ ժամանակ, ձեր հոգևոր զգայունությունը կուժեղանա, և դուք կհայտնաբերեք ծառայելու հնարավորություններ, որ երբեք նախկինում չեք նկատել:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է, որ շատ դեպքերում Երկնային Հայրը պատասխանում է մեկ այլ մարդու աղոթքներին ձեր և իմ, մեր բարի խոսքերի և գործերի, մեր ծառայության և սիրո պարզ գործերի միջոցով:

Իսկ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Աստված իրոք նկատում է մեզ, և հետևում է մեզ: Բայց հիմնականում մեկ այլ անձնավորության միջոցով է Նա բավարարում մեր կարիքները: Հետևաբար, կարևոր է, որ մենք ծառայենք միմյանց» (*Teachings of Presidents of the Church*: *Spencer W. Kimball* [2006], 82):

Ես գիտեմ, որ եթե դուք դա անեք՝ տանը, դպրոցում, աշխատավայրում և եկեղեցում, Հոգին կառաջնորդի ձեզ, և դուք կկարողանաք հայտնաբերել նրանց, ովքեր որոշակի ծառայության կարիք ունեն, որը միայն դո՛ւք կարող եք մատուցել: Հոգին կհուշի ձեզ և դուք հրաշալիորեն կառաջնորդվեք, որպեսզի ներգործեք աշխարհի վրա Քրիստոսի մաքուր սիրով և Նրա ավետարանով:

Եվ հիշեք, որ փեթակին տված փոքրիկ մեղվի թեյի գդալի մեկ տասներկուերորդական մեղրի պես, եթե մենք բազմապատկենք մեր ջանքերը տասնյակ հազարավոր և անգամ միլիոնավոր աղոթալից ջանքերով, կիսելով Իր զավակների հանդեպ ունեցած Աստծո սերը քրիստոնեական ծառայության միջոցով, առաջ կգա բարիք ստեղծող միացյալ ջանք, որը Քրիստոսի Լույսը կբերի այս անընդհատ մթագնող աշխարհ: Միասնական՝ մենք սեր և կարեկցանք կբերենք մեր իսկ ընտանիք և միայնակներին, աղքատներին, հուսահատվածներին և մեր Երկնային Հոր այն զավակներին, ովքեր ճշմարտություն և խաղաղություն են փնտրում:

Եղբայրներ և քույրեր, իմ խոնարհ աղոթքն է, որ մեր ամենօրյա աղոթքներում ոգեշնչում խնդրենք՝ գտնելու ինչ-որ մեկին, ում մենք կարող ենք իմաստալից ծառայություն մատուցել, ներառյալ՝ ավետարանի ճշմարտությամբ և մեր վկայություններով կիսվելը: Ամեն օրվա վերջում, թող որ մենք կարողանանք դրական պատասխանել հետևյալ հարցին. «Այսօր աշխարհում բարիք գործեցի՞, որևէ կարիքավորի արդյոք օգնեցի՞» (*Hymns,* no. 223):

Սա Աստծո աշխատանքն է: Թող որ մենք այդ գործում լինենք այնքան բարեխիղճ, որքան փոքր մեղուներն են իրենց աշխատանքում, ես խոնարհ աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Մեխիկո, Մեքսիկա

Երեց Լարի Էքո Հոք
Յոթանասունից

«Եկեք ինձ մոտ, ով Դուք, Իսրայելի տուն»

Երբ զանք մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մոտ, և մաքրագործենք մեր սրտերը, մենք բոլորս էլ գործիքներ կդառնանք՝ իրագործելու Մորմոնի Գրքի հզոր խոստումները:

Վիետնամի պատերազմի ժամանակ ես որպես կամավոր ծառայել եմ Միացյալ Նահանգների Նավատորմում: Հիմնական զորավարժությունների համար Քուանթիկո՝ Վերջինիա, ժամանելուց կարճ ժամանակ անց ես արդեն կանգնած էի զորանոցի իմ մահճակալի առջև Նավատորմի մնացած զորաբանակի 54 նորակոչիկների շարքում: Ես հանդիպեցի իմ շարքային հրահանգիչին՝ կռվում կոփված մի վետերանի, երբ նա ոտքի հարվածով բացեց զորանոցի դուռը և ներս մտավ, հայհոյախառն արտահայտություններ գոռալով:

Այս սարսափեցնող նախաբանից հետո նա սկսեց զորամասի մի ծայրից և դեմ առ դեմ կանգնելով հարցեր էր ուղղում նորակոչիկներին: Առանց բացառությանն որևէ բան էր գտնում յուրաքանչյուր նորակոչիկի մոտ՝ բարձրաձայն և գռեհկորեն նրան ծաղրելու համար: Անցնելով շարքով նա զինվորներից լսում էր պատասխանները, որոնք պատվիրված էր նրանց տալ՝ «Այո» կամ «Ոչ, սերժանտ»: Ես չէի կարողանում պարզ տեսնել, թե ինչ էր նա անում, քանի որ մեզ պատվիրված էր կանգնել՝ զգաստ հայացքը վեր ուղղված: Երբ իմ հերթը հասավ, նա վերցրեց իմ պայուսակը և դատարկեց դրա պարունակությունը իմ հետևում գտնվող ներքնակի վրա: Նա զննեց իմ իրերը, այնուհետև ետ վերադարձավ՝ կանգնելով իմ դիմաց: Ես նախապատրաստվել էի նրա խիստ քննադատությանը: Նրա ձեռքում էր գտնվում իմ Մորմոնի Գիրքը: Ես սպասում էի, որ նա կգոռար ինձ վրա. դրա փոխարեն նա մոտեցավ ինձ և շշնջաց. «Դու Մորմո՞ն ես»:

Ինչպես պատվիրված էր, ես բարձր ձայնով պատասխանեցի. «Այո, սերժանտ»:

Կրկին ես սպասում էի վատագույնին: Դրա փոխարեն նա մի պահ կանգ առավ և բարձրացրեց իր ձեռքը, որով բռնել էր Մորմոնի Գիրքը, և հետո շատ ցածր ձայնով նա ասաց. «Դու հավատու՞մ ես այս գրքին»:

Ես կրկին բացականչեցի. «Այո, սերժանտ»:

Այդ պահին ես վստահ էի, որ նա արհամարհական բառեր կգոռար Մորմոնների և Մորմոնի Գրքի վերաբերյալ, սակայն նա պարզապես լուռ կանգնեց այնտեղ: Մեկ րոպե անց նա վերադարձավ իմ մահճակալի մոտ և զգուշորեն ցած դրեց իմ Մորմոնի Գիրքը: Նա այնուհետև շարունակեց առանց կանգնելու քայլել իմ կողքով և շարունակեց հայհոյանքներով ծաղրել և արհամարհել մյուս նորակոչիկներին:

Հաճախ եմ խորհել այն մասին, թե ինչու ծովային հետևակի այդ կոպիտ սերժանտը խնայեց ինձ այդ օրը: Սակայն երախտապարտ եմ, որ կարողացա առանց հապաղելու ասել. «Այո, ես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եմ» և «Այո, ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է»: Այս վկայությունը թանկարժեք պարգև է, որ տրվել է ինձ Սուրբ Հոգու միջոցով՝ երկու միսիոներների և քահանաների քվորումի խորհրդատուի օգնությամբ:

Երբ 14 տարեկան էի, երկու միսիոներներ՝ Լի Փիրսոնը և Բոյդ Քամփույսենը, սովորեցրեցին իմ ընտանիքին Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը, և ես մկրտվեցի: Երկու տարի անց իմ քահանաների քվորումի խորհրդատուն՝ Ռիչարդ Բորեն, հանձնարարեց ինձ կարդալ Մորմոնի Գիրքը: Ես ընդունեցի այդ հանձնարարությունը, և ես ամեն երեկո կարդում էի ամենաքիչը 10 էջ, մինչև ավարտեցի այն:

Տիտղոսաթերթում ես կարդացի, որ այն «գրված է Լամանացիներին, որոնք Իսրայելի տան մի մնացորդ են. և նաև հրեային ու հեթանոսին»: Մորմոնի Գրքի՝ Եվս Մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի Վերաբերյալ, նախաբանում ասվում է, որ լամանացիներն են «Ամերիկյան Հնդկացիների նախահայրերը»: Երբ ես կարդացի Մորմոնի Գիրքը, ինձ թվաց, որ դա իմ Ամերիկյան Հնդկացի նախնիների մասին էր: Այն տալիս է մի ժողովրդի պատմություն, որի մի մասը հետագայում նկարագրվում է որպես «լամանացիներ», ովքեր գաղթել էին Երուսաղեմից դեպի «խոստումի երկիր» (1 Նեփի 2.20)՝ Ք.ծ. 600 տարի առաջ: Այն մի հիշատակարան է Ամերիկյան աշխարհամասի որևէ մասում բնակվող հնագույն բնակիչների

հետ Աստծո գործերի մասին: Այն ներառում է նրանց մեջ Հիսուս Քրիստոսի ծառայության արձանագրությունը՝ Նրա հարությունից հետո: Մորմոնի Գրքի հատվածները հուշում են, որ ժամանակի ընթացքում նրանք ցրվել են Ամերիկյան աշխարհամասում և մոտակա ծովերի կղզիներում (տես Ալմա 63.9–10): Նրանց մարգարեները կանխագուշակել են, որ հեթանոսների շատ բազմություններ, ի վերջո, կգան այս խոստումի երկիրը, և Աստծո ցասումը կլինի լամանացիների վրա, և նրանք կցրվեն, կխարազանվեն և գրեթե կկործանվեն (տես 1 Նեփի 13.10–14):

Իմ նախապապ Էքո Հոքը՝ Փավնիից մի հնդկացի, ծնվել էր 1800-ականների կեսերին այն վայրում, որն այժմ կոչվում է Նեբրասկա: Երբ նա 19 տարեկան էր, Փավնիի ժողովրդին ստիպեցին թողնել իրենց 23 միլիոն ակր (9.3 միլիոն հեկտար) սեփական հողերը, որպեսզի տեղ հատկացնեին նորաբնակներին: 1874թ. Փավնիի բնակիչները ոտքով անցան մի քանի հարյուր կիլոմետր դեպի հարավ և տեղավորվեցին մի փոքր վայրում, որը գտնվում էր Օկլահոմայի Հնդկական տարածքներում: Փավնիի ժողովրդի բնակիչների թիվը նվազել էր, 12000-ից հասնելով մինչև 700 -ից էլ պակաս, երբ նրանք հասան Օկլահոմա: Փավնին, ինչպես մյուս ցեղերը, ցրվել, խարազանվել և գրեթե կործանվել էր:

Մորմոնի Գիրքը հատուկ ուղերձ ունի լամանացիների հետնորդների՝ Իսրայելի տան մնացորդի համար: Նեփին տալիս է այս ուղերձի բացատրությունը, երբ մեկնաբանում է այս վերջին օրերի վերաբերյալ իր հոր տեսիլքը. «Եվ այն օրը մեր սերնդի մնացորդը կիմանա, որ իրենք Իսրայելի տնից են, և որ իրենք Տիրոջ ուխտի ժողովուրդն են. և այն ժամանակ նրանք կիմանան և կգնան իրենց նախահայրերի իմացությանը, և նաև Քավչի ավետարանի իմացությանը, որը տրվել էր իրենց հայրերին նրա կողմից. ուստի նրանք կգնան իրենց Քավչի և նրա վարդապետության ամեն մի կետի իմացությանը, որպեսզի նրանք կարողանան իմանալ՝ ինչպես գան դեպի նա և փրկվեն» (1 Նեփի 15.14):

Մորմոնի Գիրքը սրբազան սուրբ գրություն է: Այն պարունակում է հավիտենական ավետարանի լրիվությունը: Մարգարե Ջոզեֆ Սմիթը գրել է, որ. «Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 64): Այսպիսով, այն ուղերձ ունի աշխարհի բոլոր մարդկանց համար:

Որպես 17-ամյա տղա, ով առաջին անգամ էր կարդում Մորմոնի Գիրքը, ես կենտրոնացա Մորոնիի խոստումի վրա. «Եվ երբ դուք ստանաք այս բաները, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չեն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ» (Մորոնի 10.4):

Երբ աղոթքով ծնկի իջա, ես ստացա հզոր հոգևոր վկայություն, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Այդ վկայությունը օգնեց ինձ կյանքում գտնել իմ ուղին:

Ես հորդորում եմ բոլոր մարդկանց կարդալ Մորմոնի Գիրքը՝ Եվս Մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի Մասին:

Ես հատկապես խնդրում եմ Իսրայելի տան մնացորդին՝ Մորմոնի Գրքի ժողովրդի հետնորդներին, որտեղ էլ որ դուք լինեք՝ կարդացեք և վերընթերցեք Մորմոնի Գիրքը: Ծանոթացեք Մորմոնի Գրքում պարունակվող խոստումներին: Հետևեք Հիսուս Քրիստոսի ուսմունքներին և օրինակին: Տիրոջ հետ ուխտեր կապեք և պահեք դրանք: Փնտրեք և հետևեք Սուրբ Հոգու առաջնորդությանը:

Ես ավարտում եմ իմ ելույթը Մորոմնի Գրքի մեկ այլ մարգարեի՝ Ամուղեկի խոսքերով. «Եվ արդ, իմ սիրելի եղբայրներ, ես կկամենայի, որ դուք գաք Քրիստոսի մոտ, որը Սուրբն է Իսրայելի, և ճաշակեք նրա փրկությունից և նրա փրկագնման զորությունից: Այո, եկեք նրա մոտ և մատուցեք ձեր ողջ հոգիները նրան՝ որպես ընծա, և շարունակեք ծոմով ու աղոթքով, և համբերեք մինչև վերջ, և ինչպես կենդանի է Տերը, դուք կփրկվեք» (Օմնի 1.26):

Երբ գանք մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մետ, և մաքրագործենք մեր սրտերը, մենք բոլորս էլ գործիքներ կդառնանք՝ իրագործելու Մորմոնի Գրքի հզոր խոստումները: Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Երեց Ռոբերտ Ք. Գայ
Յոթանասունից

Ի՞նչ փրկանք կտա մարդ իր անձի համար

Մենք պետք է թողնենք մեր բոլոր մեղքերը՝ մեծ թե փոքր, որպեսզի Հոր կողմից ստանանք հավերժական կյանքի պարգևը:

Փրկիչը մի անգամ իր աշակերտներին տվեց հետևյալ հարցը. «Ի՞նչ փրկանք կտա մարդ իր անձի համար»:[1]

Սա մի հարց է, որի շուրջ հայրս սովորեցրեց լրջորեն խորհել տարիներ առաջ: Մինչ ես մեծանում էի, իմ ծնողները ինձ ամեն օր ինչ-որ աշխատանք էին հանձնարարում կատարել տան գործերից և մի փոքր գումար էին վճարում ինձ այդ աշխատանքի համար: Ես հաճախ ծախսում էի այդ գումարը՝ շաբաթական 50 սենթից մի փոքր ավելի, կինոներ գնալու համար: Այն ժամանակ կինոյի տոմսը 11 տարեկանների համար արժեր 25 սենթ: Ինձ մոտ մնում էր 25 սենթ կոնֆետների վրա ծախսելու համար, որոնց հատն արժեր 5 սենթ: Կինո՝ հինգ կոնֆետների հետ միասին: Դրանից լավ լինել չէր կարող:

Ամեն ինչ կարգին էր, մինչև ես դարձա 12 տարեկան: Մի օր կեսօրին, երբ հերթ էի կանգնել, ես իմացա, որ 12 տարեկանների համար տոմսն արժեր 35 սենթ, և դա նշանակում էր երկու կոնֆետ պակաս: Դեռևս պատրաստ չլինելով կատարել այդ զոհաբերությունը՝ ես ինքս ինձ մտածեցի. «Դու ունես նույն տեսքը, ինչ մեկ շաբաթ առաջ»: Այնուհետև ես առաջ գնացի և խնդրեցի 25 սենթանոց մի տոմս: Տոմսավաճառը ոչինչ էլ չկասկածեց և ես, ինչպես միշտ, գնեցի իմ հինգ կոնֆետները երեքի փոխարեն:

Իմ արարքով խանդավառված ես հետո վազեցի տուն, որ հայրիկիս պատմեի իմ մեծ հաջողության մասին: Մինչ ես ամեն բան մանրամասնորեն պատմում էի, նա ոչինչ չէր ասում: Երբ ես վերջացրեցի, նա պարզապես նայեց ինձ և ասաց. «Որդիս, դու կծախսե՞ս քո հոգին հինգ սենթով»: Նրա խոսքերը մխրճվեցին իմ սրտի մեջ: Դա մի դաս էր, որը ես երբեք չմոռացա:

Տարիներ անց ես գտա ինձ այս նույն հարցը քիչ-ակտիվ Մելքիսեդեկյան Քահանայություն կրողին տալիս: Նա հրաշալի մարդ էր, ով սիրում էր իր ընտանիքը: Նա, այնուամենայնիվ, շատ տարիներ չէր եղել եկեղեցում: Նա ուներ շնորհալի տղա, ով խաղում էր հաճախակի մրցումների մեկնող պրոֆեսիոնալ սպորտային թիմում, որը մարզվում և խաղում էր կիրակի օրերին: Այդ թիմը հաղթել էր բազմաթիվ գլխավոր առաջնություններում: Երբ մենք հանդիպեցինք, ես հիշեցրեցի նրան, որ որպես քահանայություն կրող նա ուներ խոստում, որ եթե նա մեծարեր իր քահանայության երդումն ու ուխտը, նա կստանար «այն ամենն, ինչ [մեր] Հայրն ունի»:[2] Այնուհետև ես հարցրեցի նրան. «Ազգային առաջնությունն ավելի՞ արժեքավոր է, քան այն ամենն, ինչ Հայրն ունի»: Նա մեղմորեն ասաց. «Ես հասկանում եմ, թե դուք ինչ ի նկատի ունեք» և հանդիպում նշանակեց իր եպիսկոպոսի հետ:

Այսօր շատ հեշտ է խճճվել աշխարհի աղմուկի մեջ՝ մեր կամքից անկախ: Աշխարհը ստիպում է մեզ «նշանակետից այն կողմ նայել»:[3] Ինչ-որ մեկը վերջերս հարցրեց ինձ. «Մեկ բաժակ խմիչքը արդյո՞ք նշանակություն ունի»: Դուք նկատու՞մ եք, որ դա հակառակորդի հարցն է: Կայենը հարցրեց. «Ո՞վ է Տերը, որ ես պետք է ճանաչեմ նրան»[4] և այնուհետև կորցրեց իր հոգին: Փոքր մեղքերի ինքնարդարացմամբ Սատանան հաղթում է: Մեկ շիշ կաթի,[5] տառասխալով գրված անվան,[6] և մի աման ապուրի,[7] համար անդրանիկության իրավունքներ և ժառանգություններ են փոխանակվել:

Երբ մենք խորհում ենք մեր կյանքում գումարի կամ ազգային առաջնության փոխանակումների վերաբերյալ, մենք կարող ենք կամ Կայենի պես արդարացնել մեր արարքները կամ ձգտել հնազանդվել Աստծո կամքին: Մեր առջև դրված չէ այն հարցը, թե արդյոք մենք անում ենք բաներ, որոնք ուղղելու կարիք ունեն, քանի որ մենք միշտ անում ենք: Այլ հարցը նրանում է, թե արդյոք մենք «կընկրկենք», թե «կավարտենք» մեզ պատվիրված աշխատանքը՝ Հոր կամքը կատարելու համար:[8]

Տերը հավանում է մեր արդարակեցությունը, սակայն պահանջում է

մեզանից շարունակ ապաշխարել և հնազանդվել: Աստվածաշնչում մենք կարդում ենք, որ պատվիրանները պահող, հարուստ երիտասարդն էր, որ ծնկի իջավ Փրկչի առաջ և հարցրեց, թե ինչ պետք է նա աներ, որ հավիտենական կյանք ունենար: Նա տրտմած ետ դարձավ, երբ Փրկիչն ասաց. «Մէկ բան պակաս է քեզ, . . . ինչ որ ունիս ծախիր»:[9]

Մեկ այլ հարուստ, սակայն աշխարհիկ մարդ՝ լամանացիների թագավորը՝ Լամոնիի հայրը, նույնպես տվեց այդ հարցը հավերժական կյանքի մասին, ասելով. «Ի՞նչ պիտի ես անեմ, որ կարողանամ ծնվել Աստծուց, այս ամբարիշտ հոգին արմատախիլ անելով իմ կրծքից, և ստանամ նրա Հոգին: . . . Ես կթողնեմ իմ թագավորությունը, որպեսզի կարողանամ ստանալ այդ մեծ ուրախությունը»:[10]

Դուք հիշու՞մ եք պատասխանը, որ Տերը տվեց թագավորին Իր ծառա Ահարոնի միջոցով: «Եթե դու ապաշխարես քո բոլոր մեղքերից, և խոնարհվես Աստծո առաջ, և հավատքով կանչես առ նրա անունը, հավատալով, որ դու պիտի ստանաս, այդ դեպքում դու կստանաս հույսը, որ դու ցանկանում ես»:[11]

Երբ թագավորը հասկացավ պահանջվող զոհաբերությունը, նա խոնարհվեց և երեսն ի վայր ընկավ գետնին և այնուհետև աղոթեց. «Ով Աստված, . . . ես կհրաժարվեմ իմ բոլոր մեղքերից՝ քեզ գիտենալու համար»:[12]

Սա է փոփոխությունը, որ Փրկիչը պահանջում է մեզանից. մենք պետք է թողնենք մեր բոլոր մեղքերը՝ մեծ կամ փոքր, Հոր կողմից հավերժական կյանքի պարգևը ստանալու համար: Մենք պետք է մոռանանք ինքներս մեզ արդարացնող պատմությունները, պատճառաբանությունները, հիմնավորումները, պաշտպանության եղանակները, ձգձգումները, ելույթներ ունենալը, անձնական հպարտությունը, քննադատական մտքերը և մեր ձևով բաներ անելը: Մենք պետք է բաժանենք մեր անձը ամեն աշխարհիկությունից և ընդունենք նրա պատկերը մեր դեմքին:[13]

Եղբայրներ և քույրեր, հիշեք, որ այս պարտականությունն ավելին է, քան լոկ վատ բաներ չանելը: Ունենալով գործող թշնամի, մենք պետք է նույնպես գործենք և չնստենք «անմիտ ընդարմության մի վիճակում»:[14] Ընդունել Աստծո պատկերը մեր դեմքին նշանակում է ծառայել միմյանց: Կան բաներ, որ մենք անում ենք, որոնք սխալ են և կան բաներ, որոնք մենք չենք անում, սակայն պետք է անենք, և մենք պետք է վեր գտնվենք այդ երկուսից էլ:

Մինչ ես ծառայում էի որպես միսիայի նախագահ Աֆրիկայում, ես սովորեցի այս մեծ ճշմարտությունը, որը երբեք չեմ մոռանա: Ես մի ժողովի գնալու ճանապարհին էի, երբ ես տեսա միայնակ մի տղայի, ով բարձր ձայնով լաց էր լինում ճամփեզրին: Մի ձայն իմ մեջ ասաց. «Կանգնիր և օգնիր այդ տղային»: Հենց որ ես լսեցի այդ ձայնը, հենց այդ պահին ես պատճառաբանեցի. «Դու չես կարող կանգ առնել, կուշանաս: Դու նախագահող պաշտոնյա ես և չես կարող ուշացած ներս մտնել»:

Երբ ես հասա ժողովատուն, ես լսեցի նույն ձայնը նորից, որ ասում էր. «Գնա օգնիր այդ տղային»: Ես այնուհետև տվեցի մեքենայի բանալիները Աֆասի անունով մի Եկեղեցու անդամի և խնդրեցի նրան տղային բերել ինձ մոտ: Մոտ 20 րոպե անց ես զգացի, որ ինչ որ մեկը հպվեց իմ ուսին: Երիտասարդ տղան դրսում էր:

Նա մոտավորապես 10 տարեկան էր: Մենք իմացանք, որ նրա հայրը մահացել էր և նրա մայրը գտնվում էր բանտում: Նա ապրում էր Ակրայի մի աղքատ թաղամասում իր խնամակալի հետ, ով նրան ուտելիք էր տալիս և քնելու տեղ: Այս ամենը ունենալու համար նա փողոցներում վաճառում էր չորացրած ձուկ: Այդ ամբողջ օրը փողոցներում կանչելով ձուկ վաճառելուց հետո, ձեռքը տանելով գրպանը նա մի անցք էր գտել այնտեղ: Նա կորցրել էր իր ողջ վաստակածը: Աֆասին և ես անմիջապես հասկացանք, որ եթե նա վերադառնար առանց փողի, նրան ստախոս կանվանեին, շատ հավանական է, որ կծեծեին և հետո դուրս կշպրտեին փողոց: Ահա այդ տագնապալի պահին էր, երբ ես առաջին անգամ տեսա նրան: Մենք հանգստացրեցինք նրան, տվեցինք նրան այն, ինչ նա կորցրել էր և նրան հետ տարանք իր խնամակալի մոտ:

Երբ ես տուն գնացի այդ երեկո, ես հասկացա երկու մեծ ճշմարտություններ: Առաջինը, երբեք նախկինում այդքան համոզված չէի, որ Աստված ուշադիր է մեզանից յուրաքանչյուրի հանդեպ և երբեք մեզ անօգնական չի թողնի. և երկրորդը,

ես գիտեի, որ մենք պետք է միշտ մեր մեջ լսենք Հոգու ձայնը և անմիջապես[15] գնանք՝ անկախ մեր վախերից կամ անհարմարությունից:

Մի օր աշակերտները հարցրեցին Փրկչին, թե ով է մեծ երկնքի արքայության մեջ: Նա ասաց նրանց, որ դարձի գան, խոնահեցնեն իրենց և ենթարկվող լինեն, ինչպես փոքր երեխաները: Այնուհետև նա ասաց. «Մարդի Որդին եկավ, որ ապրեցնէ կորածը»:[16] Այդ մեկ նախադասությամբ նա սահմանեց մեր առաքելությունը: Մենք պետք է փրկենք կորածին, վերջինին և չնչին նշանակություն ունեցողին: Բավական չէ միայն մեղքից խուսափելը. մենք պետք է «կրենք նրա խաչը»[17] և «ջերմեռանդորեն ներգրավված լինենք»՝[18] օգնելով ուրիշներին դարձի գալ: Կարեկցանի և սիրո միջոցով մենք գրկաբաց ընդունում ենք անառակին,[19] արձագանքում ենք որբերի լացին և նրանց խնդրանքին, ովքեր խավարի ու հուսահատության մեջ են,[20] և կարիքի մեջ գտնվող ընտանիքի կանչին: «Սատանան կարիք չունի բոլորին դարձնել Կայենի կամ Հուդայի պես . . . », ասել է Երեց Նիլ Ա. Մաքսվելը: «Նրան հարկավոր է միայն, որ մարդկանց հնարավորություն տա . . . տեսնել իրենց որպես չեզոք դիրքում գտնվողներ»:[21]

Վերջերս ցցի համաժողովից հետո մի պատանի մոտեցավ ինձ և հարցերեց. «Արդյո՞ք Աստված սիրում է ինձ»: Թող որ մեր ծառայությամբ լի կյանքը միշտ հաստատի, որ Աստված չի թողնում ոչ ոքի:

«Ի՞նչ փրկանք կտա մարդ իր անձի համար» հարցին ի պատասխան Սատանան կկամենար, որ մենք վաճառեինք մեր կյանքը կոնֆետների կամ այս աշխարհի առաջնության համար: Ինչևէ, Փրկիչն կանչում է մեզ անհատույց փոխանակել մեր մեղքերը, վերցնել մեզ վրա Նրա պատկերը, և հասցնել դա նրանց սրտերին, ովքեր գտնվում են մեր շրջապատում: Սրա համար մենք կարող ենք ստանալ այն ամենը, ինչ Աստված ունի, որը մեզ ասվել է, որ ավելի մեծ է, քան այս աշխարհի ամբողջ գանձերը միասին:[22] Դուք կարո՞ղ եք պատկերացնել դա:

Վերջերս Նիկարագուա կատարած ճամփորդության ժամանակ, երբ այցելել էինք մի ընտանիքի, նրանց համեստ տանը ես նկատեցի մի ափսե: Դրա մեջ գրված էր. «Իմ վկայությունը իմ ամենաթանկ ունեցվածքն է»: Դա այդպես է նաև ինձ համար: Իմ վկայությունը իմ հոգու գանձն է, և իմ ողջ սրտով ես թողնում եմ ձեզ իմ վկայությունը, որ այս եկեղեցին Աստծո ճշմարիտ Եկեղեցին է, որ մեր Փրկիչը դրա գլուխն է և ղեկավարում է այն Իր ընտրյալ մարգարեի միջոցով: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս ԺԶ. 26:
2. Վարդապետություն և Ուխտեր 84.38:
3. Հակոբ 4.14:
4. Մովսես 5.16:
5. Մի շիշ կաթն ու դրա սերուցքն (յուղային մասն) էին գտնվում եղբայր Բ. Մարշի կնոջ և տիկին Հարրիսի վիճաբանության կենտրոնում, ովքեր համաձայնվել էին միացնել իրենց ունեցած կաթը և պանիր պատրաստել: Երբ տիկին Հարրիսը պարզեց, որ տիկին Մարշը չէր ներառում սերուցքը կաթի մեջ, այլ պահում էր այն իր համար, տիկին Հարրիսը բողոքեց և կանայք վիճեցին: Թոմաս Մարշը խնդիրը ներկայացրեց եպիսկոպոսին, ով գտավ, որ տիկին Հարրիսն էր ճիշտ: Այդ հարցը եպիսկոպոսին ներկայացնելուց հետո ներկայացվեց բարձրագույն խորհրդին, Առաջին Նախագահությանը, ովքեր բոլորն էլ համաձայնվեցին, որ տիկին Մարշը սխալ էր: Սա սեպ մտցրեց Թոմաս Մարշի և եղբայրների միջև: Դրանից կարճ ժամանակ անց Թոմաս Մարշը վկայեց Միսսուրիի դատավորի առաջ, որ մորմոնները թշնամական վերաբերմունք ունեին Միսսուրիի նահանգի հանդեպ: (See George A. Smith, “Discourse,” *Deseret News,* Apr. 16, 1856, 44.)
6. Երբ մարգարե Ջոզեֆ Սմիթը կանչեց Սայմոնդս Ռայդերին ծառայել որպես միսիոներ, Ռայդերը նկատեց, որ տպագրված հայտնության մեջ իր անունը գրված էր «Ռիդեր»: Նա նեղացավ և սա պատճառ դարձավ նրա ուխտադրժությանը և, ի վերջո, նա մասնակցեց մարգարեին ձյութելուն և փետուրներով պատելուն: Ռայդերը չգիտեր, որ Ջոզեֆ Սմիթը սովորաբեր թելադրում էր հայտնությունները իր դպիրներին և կապ չուներ ուղղագրության հետ: (See Milton V. Backman Jr., *The Heavens Resound: A History of the Latter-day Saints in Ohio, 1830–1838* [1983], 93–94; Donald Q. Cannon and Lyndon W. Cook, eds., *Far West Record: Minutes of The Church of Jesus Christ of Latter-day Saints, 1830–1844* [1983], 286.)
7. Ծննդոց 25-ում մենք իմանում ենք, որ Եսավը վաճառում է իր անդրանիկության իրավունքը Հակոբին «հացի և մի աման ոսպապուրի» դիմաց (հատված 34):
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 19.18–19:
9. Տես Մարկոս Ժ.21–22:
10. Ալմա 22.15:
11. Ալմա 22.16:
12. Ալմա 22.18:
13. Տես Ալմա 5.14–19:
14. Ալմա 60.7:
15. Տես Մարկոս 1.18:
16. Մատթեոս 18.11:
17. Հակոբ 1.8:
18. Վարդապետություն և Ուխտեր 58.27:
19. Տես Ղուկաս 15.11–32:
20. Տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.15–16:
21. Neal A. Maxwell, *Deposition of a Disciple* (1976), 88.
22. Տես Վարդապետություն և Ուխտեր 19.38:

Երեց Սքոթ Դ. Վայթինգ
Յոթանասունից

Տաճարի չափանիշ

Տաճար կառուցելու համար այս Եկեղեցու կողմից նախատեսված բարձր չափանիշները օրինակ և նույնիսկ խորհրդանիշ են, թե մենք ինչպես պետք է ապրենք մեր իսկ կյանքը:

Մինչ վերջերս շրջում էի Բրիգամ Սիթիի Յուտա Տաճարում, ես հիշեցի մի փորձառություն, որ ունեցել էի, երբ ծառայում էի որպես կոորդինատոր պատմական Լեյի Հավայան Տաճարի բաց դռների, վերանվիրագործման և մշակութային տոնակատարության ժամանակ:

Խոշոր վերանորոգման աշխատանքի ավարտից մի քանի ամիս առաջ ինձ հրավիրեցին շրջել տաճարում Տաճարային Բաժնի Գործադիր Տնօրենի՝ Երեց Վիլիամ Ռ. Վաքերի և նրա Տաճարային Բաժնի աշխատակիցների հետ: Այնտեղ ներկա էին նաև վերանորոգման աշխատանքները կատարած ընկերության մի շարք անդամներ: Շրջելու նպատակը մասամբ նաև կատարված աշխատանքի հաջողությունը և որակը վերանայելն էր: Այս շրջագայության ժամանակ կատարված էր աշխատանքի մոտավորապես 85 տոկոսը:

Երբ մենք առաջ էինք շարժվում տաճարում, ես նայում և լսում էի Երեց Վաքերին և նրա աշխատակիցներին, մինչ նրանք ստուգում էին աշխատանքը և զրուցում աշխատանքների գլխավոր պատասխանատուի հետ: Այդ ընթացքում ես նկատեցի մի մարդու, ով անընդհատ շոշափում էր պատերը, մինչ մենք անցնում էինք սենյակից սենյակ: Մի քանի անգամ դա անելուց հետո նա շփում էր մատներն իրար հետ և այնուհետև ասում գլխավոր պատասխանատուին. «Ես անհարթություն եմ զգում այս պատի վրա: Անհարթությունը տաճարի չափանիշ չէ: Դուք պետք է կրկին հղկեք և հարթեցնեք այս պատը»: Պատասխանատուն պարտականության զգացումով յուրաքանչյուր դիտողության հետ կապված նշումներ էր կատարում:

Երբ մենք մոտեցանք տաճարի մի մասի, որ միայն մի քանի աչքեր երբևէ կտեսնեին այն, նույն մարդը կանգնեցրեց մեզ և մեր ուշադրությունը հրավիրեց նոր տեղադրված, գեղեցիկ, ապակե պատուհանի վրա: Այս պատուհանը ուներ 0.6 մ լայնություն և 1.8 մ բարձրություն և պարունակում էր խոր ընկած, փոքր երկրաչափական պատկերներ: Նա մատնացույց արեց մի փոքրիկ 5 սմ գունավոր ապակյա քառակուսի, որ հասարակ նախշի մի մասն էր կազմում և ասաց. «Այդ քառակուսին ուղիղ չէ»: Ես նայեցի քառակուսուն, և իմ աչքին այն ուղիղ թվաց: Այնուամենայնիվ, երբ ես չափող սարք օգտագործեցի այն ավելի մոտիկից ստուգելու համար, ես նկատեցի, որ այնտեղ թերություն կար և որ այս փոքրիկ քառակուսին իրոք 3 մմ թեքություն ուներ: Այդ ժամանակ պատասխանատուին հրահանգ տրվեց, որ այս պատուհանը պետք է փոխվեր, քանի որ այն չէր համապատասխանում տաճարի չափանիշին:

Ես խոստովանում եմ, որ զարմացել էի, որ ամբողջ պատուհանը պետք է փոխվեր այսպիսի փոքր, հազիվ նկատելի թերության պատճառով: Անկասկած, դա անհավանական էր, որ որևէ մեկը երբևիցե կիմանար կամ նույնիսկ կնկատեր այս պատուհանը, քանի որ այն գտնվում էր տաճարի այն մասում, որը ոչ շատ մարդիկ երբևէ կտեսնեին:

Այդ օրը տաճարից տուն վերադառնալիս ես խորհում էի այն մասին, թե ինչ էի սովորել այդ փորձառությունից: Կամ, ավելի ճիշտ, իմ կարծիքով, ինչ էի սովորել: Մի քանի շաբաթ անց, երբ ինձ հրավիրեցին շրջել արդեն աշխատանքներն ավարտի հասցված տաճարում, նախորդ շրջագայության ժամանակ ունեցած փորձառության ժամանակ ձեռք բերած իմ հասկացողությունն ավելի պարզ դարձավ:

Երբ ես ներս մտա ամբողջովին վերանորոգված Լեյի Հավայան Տաճար, ես հիացա դրա գեղեցկությամբ և ավարտին հասցված գործերի որակով: Դուք կարող եք հասկանալ, որ ես հետաքրքրված էի կրկին տեսնել «անհարթ» պատերը և «թերի» պատուհանը: Արդյո՞ք պատասխանատուն կրկին հղկել և հարթեցրել էր պատերը: Պատուհանը իրո՞ք փոխվել էր: Մոտենալով անհարթ պատերին, ես զարմացա, տեսնելով, որ բոլոր պատերը պատված էին գեղեցիկ պաստառով: Իմ առաջին միտքը հետևյալն էր. «Ահա, թե ինչպես պատասխանատուն լուծեց անհարթության հետ կապված խնդիրը. նա ծածկեց այն»: Բայց, ոչ, ես իմացա, որ միշտ էլ նախատեսված է եղել պաստառապատել այս պատերը: Ես զարմացա, թե ինչո՞ւ մի փոքր, դժվար նկատելի անհարթությանը կարևորություն տրվեց,

եթե պաստառը պիտի ծածկեր այն: Այնուհետև, ես անհամբերությամբ գնացի այն տեղը, որտեղ տեղադրված էր թերի պատուհանը և զարմացա, տեսնելով գեղեցիկ, հատակից առաստաղին հասնող սենյակային բույսը, որը տեղադրված էր անմիջապես պատուհանի դիմաց: Ես կրկին մտածեցի. «Ահա, թե ինչպես է պատասխանատուն լուծել թեքություն ունեցող փոքրիկ քառակուսու հետ կապված խնդիրը. նա թաքցրել է այն»: Ավելի մոտենալով և մի կողմ տանելով բույսի տերևները ես ժպտացի, տեսնելով, որ պատուհանը իսկապես փոխվել էր: Նախկինում թեքություն ունեցող փոքրիկ քառակուսին այժմ հստակորեն և համահավասար տեղադրված էր իր ճիշտ տեղում: Ես իմացա, որ այս պատուհանի դիմաց բույս ունենալը միշտ էլ ներքին հարդարման մաս է կազմել:

Ինչո՞ւ պիտի մի փոքր անհարթություն ունեցող պատերը և մի փոքր անհամաչափություն ունեցող պատուհանը պահանջեին լրացուցիչ աշխատանք և նույնիսկ փոփոխություն, երբ ընդամենը մի քանի մարդու ձեռքեր կամ աչքեր երբևէ կիմանային այդ մասին: Ինչո՞ւ էր պատասխանատուից պահանջվում կատարել աշխատանքը համաձայն այդքան բարձր չափանիշների:

Երբ մտքերի մեջ խորասուզված դուրս եկա տաճարից, ես գտա իմ պատասխանը, մինչ վեր նայեցի դրսի վերանորոգված պատին և տեսա այս բառերը. «Սրբություն Տիրոջը, Տիրոջ Տուն»:

Այս Եկեղեցու տաճարները ճշգրիտ են, ինչպես և հայտարարվում են: Այս սուրբ շինությունները կառուցվում են մեր օգտագործման համար, և դրանց պատերի ներսում սրբազան և փրկող արարողություններ են կատարվում: Սակայն ոչ մի կասկած չպիտի լինի այն հարցի շուրջ, թե այն իրականում ում տունն է: Պահանջելով կառուցման ժամանակ ենթարկվել ճշգրիտ չափանիշներին՝ ներառյալ մանրամասներից փոքրագույնը, մենք ցուցադրում ենք ոչ միայն մեր սերն ու հարգանքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ, այլև մենք ցուցադրում ենք բոլոր դիտորդներին, որ մենք հարգում և պաշտում ենք Նրան, ում պատկանում է այս տունը:

Նավույում տաճար կառուցելու վերաբերյալ Ջոզեֆ Սմիթին տրված հայտնության մեջ Տերը հրահանգել է.

«Եկեք ձեր ողջ ոսկով և ձեր արծաթով և ձեր թանկարժեք քարերով և ձեր ողջ հնություններով. և բոլոր նրանց հետ, ովքեր գիտելիք ունեն հնությունների մասին, . . . և բերեն . . . երկրի թանկարժեք ծառերը. . . . Եվ տուն կառուցեք իմ անվան համար՝ Բարձրյալի համար, որ նա բնակվի այնտեղ»:[1]

Սա հետևում է այն օրինակին, որ հաստատվել էր Սողոմոն թագավորի կողմից Հին Կտակարանում, երբ նա տաճար կառուցեց Տիրոջ համար՝ օգտագործելով միայն ամենալավ նյութերն ու վարպետությունը:[2] Այսօր մենք շարունակում ենք հետևել այս օրինակին պատշաճ չափավորությամբ, երբ մենք կառուցում ենք Եկեղեցու տաճարները:

Ես սովորեցի, որ չնայած մահկանացու աչքերն ու ձեռքերը միգուցե երբեք չտեսնեն կամ չզգան թերությունը, Տերը գիտի մեր ջանասիրության չափը, և թե արդյոք մենք արել ենք մեր ամենալավագույնը: Նույնը ճիշտ է նաև մեր անձնական ջանքերի հետ կապված՝ ապրել տաճարի օրհնություններին արժանի կյանքով: Տերը խորհուրդ է տվել.

«Եվ որքան որ իմ ժողովուրդը Տիրոջ անունով տուն կառուցի ինձ համար, և թույլ չտա, որ որևէ անմաքուր բան մտնի այնտեղ, որպեսզի այն չապականվի, իմ փառքը պիտի հանգչի դրա վրա.

Այո, իմ ներկայությունը պիտի լինի այնտեղ, քանզի ես կմտնեմ այնտեղ, և բոլոր սրտով մաքուրները, որոնք կմտնեն այնտեղ, պիտի տեսնեն Աստծուն:

Բայց եթե այն պղծվի, ես չեմ մտնի այնտեղ, և իմ փառքը չի լինի այնտեղ, քանզի ես չեմ մտնի անսուրբ տաճարներ»:[3]

Պատասխանատուի պես, երբ մենք տեղեկանում ենք մեր կյանքի մանրամասների մասին, որոնք համահունչ չեն Տիրոջ ուսմունքների հետ, երբ մեր ջանքերը չեն հասնում մեր ամենալավագույնին, մենք պետք է շտապենք և ուղղենք ցանկացած բան, որ թերի է, գիտակցելով, որ մենք չենք կարող մեր մեղքերը թաքցնել Տիրոջից: Մենք պետք է հիշենք, որ «երբ մենք ձգտում ենք քողարկել մեր մեղքերը, . . . ահա, երկինքները ետ են քաշվում. [և] Տիրոջ Հոգին տրտմում է»:[4]

Ես նաև սովորեցի, որ տաճար կառուցելու համար այս Եկեղեցու կողմից նախատեսված բարձր

չափանիշները օրինակ և նույնիսկ խորհրդանիշ են, թե մենք ինչպես պետք է ապրենք մեր իսկ կյանքը: Մեզանից յուրաքանչյուրը կարող է կիրառել Պողոս Առաքյալի ուսմունքները, տրված վաղ շրջանի Եկեղեցուն, երբ նա ասաց.

«Չգիտե՞ք, որ դուք Աստծո տաճար եք, և Աստծո Հոգին բնակված է ձեզանում:

Եթե մեկն Աստծո տաճարն ապականէ, նորան էլ Աստված կապականէ. որովհետև Աստծո տաճարը սուրբ է՝ որ դուք եք»:[5]

Մեզանից յուրաքանչյուրը պատրաստված է լավագույն նյութերից, և մենք աստվածային վարպետության հրաշալի արդյունք ենք: Այնուամենայնիվ, երբ մենք հասնում ենք պատասխանատվության տարիքին և ոտք ենք դնում մեղքի ու գայթակղության մարտադաշտ, մեր սեփական տաճարը կարող է վերանորոգման և փոփոխության կարիք զգալ: Հավանաբար մեր մեջ կան պատեր, որ անհարթ են և հարթեցման կարիք ունեն կամ մեր հոգում կան պատուհաններ, որ կարիք ունեն փոխվելու, որպեսզի մենք կարողանանք կանգնել սուրբ տեղերում: Մենք երախտապարտ ենք, որ տաճարի չափանիշը, որով մենք պետք է ապրենք, կատարելությունը չէ, չնայած որ մենք ձգտում ենք դրան, այլ դրա փոխարեն մենք պետք է պահենք պատվիրանները և անենք մեր լավագույնը, որ ապրենք ինչպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ: Իմ աղոթքն է, որ մենք բոլորս էլ ճիգ գործադրենք, որ ապրենք այնպիսի կյանքով, որ արժանի լինենք տաճարի օրհնություններին՝ անելով մեր լավագույնը, հասնելով անհրաժեշտ զարգացմանը և սահմանափակելով անհարթություններն ու անկատարելությունները, որպեսզի Աստծո Հոգին կարողանա միշտ բնակվել մեր մեջ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 124.26–27:
2. Տես Գ Թագավորաց 6–7:
3. Վարդապետություն և Ուխտեր 97.15–17:
4. Վարդապետություն և Ուխտեր 121.37:
5. Ա Կորնթացիս Գ.16–17, տես նաև հատված 19:

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ձեր հավատքի փորձությունը

Թեժ կրակի պես, որը երկաթը պողպատի է վերածում, եթե հավատարիմ մնանք մեր հավատքի բորբոքված փորձության մեջ, մենք հոգևորապես կհղկվենք և կամրանանք:

Տաս տարի առաջ ես և կինս՝ Քեթին, ապրում էինք Սան Պաուլոյում, Բրազիլիա: Նախագահ Դեյվիդ Մերիոթը նախագահում էր Բրազիլիայի Սան Պաուլո Ինտերլագոս միսիայում: Նա և նրա կինը՝ Նիլը, նրանց որդիները՝ Վիլը, Վեսլին և Թրեյսին ապրում էին մեր հարևանությամբ: Նրանք թողել էին իրենց տունը, բիզնեսները և ընտանիքից շատերին, արձագանքելով միսիայում ծառայելու մարգարեի կոչին:

Մի երեկո Նախագահ Մերիոթը զանգահարեց ինձ: Իրենց 21-ամյա թանկագին արդարակյաց դուստրը՝ Ջորջիան, Ինդիանա Համալսարանի առաջին ջութակը, վթարի էր ենթարկվել. Եկեղեցու ժողովից հեծանվով տուն վերադառնալիս նրան հարվածել էր բեռնատարը: Սկզբում ասում էին, որ Ջորջիան լավ էր: Ժամեր անց նրա վիճակը կտրուկ վատացավ:

Ընտանիքը և ընկերները սկսեցին ծոմ պահել և աղոթել հրաշքի համար: Նրա մայրը գիշերը թռավ Բրազիլիայից: Հաջորդ օրը Ինդիանայի օդանավակայանում նրան դիմավորեցին ավագ երեխաները, որոնք գրկեցին նրան և, լաց լինելով, ասացին, որ Ջորջիայի հետ էին, երբ նա մահացավ:

Ես հետևում էի Մերիոթների ընտանիքին, երբ նրանք անցնում էին այս փորձառության միջով, և հաջորդող ամիսների և տարիների ընթացքում: Նրանք սգում էին, նրանք աղոթում էին, նրանք խոսում էին Ջորջիայի մասին, նրանք անսահման ցավ և տխրություն էին ապրում, բայց նրանց հավատքը չէր թուլացել: Այս առավոտյան նիստի ժամանակ, մենք լսեցինք նմանատիպ հավատքի մասին Բոուեն և Վիլբերգեր ընտանիքների հրաշալի կյանքում:[1]

Հավատքի սկզբունքը հոգևոր անգին օժտում է: «Սա է հավիտենական կյանքը, - աղոթում էր Հիսուսը, - որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստված. և նորան, որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին»:[2]

Մեր հավատքը կենտրոնացած է մեր Հայր Աստծո և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի, մեր Փրկչի և Քավիչի շուրջ: Այն ամրապնդվում է մեր գիտելիքով այն մասին, որ

ավետարանի լրիվությունը վերականգնվել է երկրի վրա, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է, և որ մարգարեները և առաքյալները այսօր կրում են քահանայության բանալիները: Մենք փայփայում ենք մեր հավատքը, աշխատում ամրացնել այն, աղոթում ենք ավելի մեծ հավատքի համար և անում մեր ուժերի սահմաններում հնարավորինը, որ պաշտպանենք և պահպանենք մեր հավատքը:

Պետրոս Առաքյալը բացահայտել է մի բան, որը կոչել է «հավատքի փորձառություն»:[3] Նա զգացել է դա: Հիշենք Հիսուսի խոսքերը.

«Սիմոն, Սիմոն, ահա Սատանան ձեզ ուզեց, որ մաղէ ցորենի պես.

Բայց ես աղաչեցի քեզ համար, որ քո հավատքը չպակասի»:[4]

Ավելի ուշ Պետրոսը քաջալերում էր մյուսներին. «Օտար բան *մի* համարեք այն բորբոքված նեղությունը որ ձեզ փորձելու համար լինում է, իբր թե մի օտար բան է պատահում ձեզ»:[5]

Այդ բորբոքված նեղությունները միտված են ձեզ ավելի ամուր դարձնելու, սակայն դրանք նաև ներուժ են կրում թուլացնելու, անգամ կործանելու ձեր վստահությունը դեպի Աստծո Որդին, և նվազեցնելու Նրան տված խոստումները պահելու ձեր վճռականությունը: Այդ փորձությունները հաճախ քողարկվում են և դառնում դժվար բացահայտվող: Դրանք արմատ են գցում մեր թուլությունների, մեր խոցելիության, մեր զգայունության կամ այլ բաների մեջ, որոնք առավել կարևոր են մեզ համար: Իրական, միևնույն ժամանակ, կառավարելի քննությունը մեկի համար կարող է բորբոքված նեղություն լինել մեկ ուրիշի համար:

Ինչպե՞ս եք դուք մնում «հաստատուն և անխախտ»[6] հավատքի փորձության ժամանակ: Դուք ընկղմվում եք այն ամենի խորքը, ինչն օգնել է ձեզ կառուցել ձեր հավատքի առանցքը. դուք գործադրում եք հավատք առ Քրիստոս, դուք աղոթում եք, դուք խորհում եք սուրբ գրքերի մասին, դուք ապաշխարում եք, դուք պահում եք պատվիրանները և դուք ծառայում եք մյուսներին:

Երբ հանդիպում եք հավատքի փորձությանը, ինչ էլ որ անեք, մի շրջվեք Եկեղեցուց: Աստծո արքայությունից ձեզ հեռացնելը, երբ հավատքի փորձության մեջ եք, նման է ապահով տանիքի տակից դուրս գալուն հենց այն պահին, երբ փոթորիկը տեսադաշտում է:

Պողոս Առաքյալն ասել է. «Այլևս օտար և պանդուխտ չեք, այլ սուրբերի հետ քաղաքացիներ և Աստծո հետ ընտանիքներ»:[7] Եկեղեցու պատերի ներսում է, որ մենք պաշտպանում ենք մեր հավատքը: Հանդիպելով մյուսների հետ, ովքեր հավատում են, մենք աղոթում ենք և գտնում մեր աղոթքների պատասխանները, երկրպագում երաժշտության միջոցով, կիսվում Փրկչի մասին վկայությամբ, ծառայում միմյանց և զգում Տիրոջ Հոգին: Մենք ճաշակում ենք հաղորդությունը, ստանում քահանայության օրհնությունները, և այցելում տաճար: Տերը հայտարարել է. «Արարողություններում է բացահայտվում աստվածայնության զորությունը»:[8] Երբ հանդիպում եք հավատքի փորձառությանը, մնացեք Աստծո տան ապահով և անվտանգ սահմաններում: Այնտեղ ձեզ համար միշտ տեղ կա: Չկա այնպիսի փորձություն, որը մենք չկարողանանք միասին հաղթահարել:[9]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Հասարակության բարոյական կողմնացույցը [մեծ արագությամբ փոփոխվում է]: Վարքը, . . . որը նախկինում համարվել է ոչ պատշաճ և անբարոյական, այժմ . . . դիտվում է . . . շատերի կողմից որպես ընդունելի»:[10]

Եկեղեցում կան շատ չափահաս ամուրիներ, արդեն անցած իրենց չափահասության վաղ տարիներից: Թեև նրանց ներկա կյանքը տարբերվում է նրանից, ինչ իրենք ակնկալում էին, նրանք պահում են մաքրաբարոյության օրենքը:[11] Դա կարող է լինել իրենց հավատքի փորձությունը: Ես իմ խորին հարգանքն ու հիացմունքն եմ արտահայտում Քրիստոսի այդ աշակերտների հանդեպ:

Աստված պատվիրել է, «որ ծնունդ տալու սուրբ զորությունը օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին»:[12] Նոր Կտակարանում Փրկիչը բարձրացրել է բարոյականության սանդղակը Իր հետևորդների համար, հայտարարելով. «Ամեն ով որ մի կնկայ վերայ մըտիկ տայ նորան ցանկանալու համար, նա արդեն շնացավ նորա հետ իր սրտի մեջ»:[13] Նա մեզ սովորեցրել է չդատել ուրիշներին, բայց Նա չի վախեցել ուղղակիորեն ասել. «Գնա, և այսուհետև մեղք մի գործիր»:[14]

Մենք ունենք ընտանիքի մի ընկերուհի: Մի գուցե, դուք ճանաչում եք նրա պես մեկին, կամ, մի գուցե, դուք եք նրա նման: Միշտ հավատարիմ, ազնվազարմ ձևով նա ծառայում է Եկեղեցում, հիացնում է իր արհեստավարժությամբ, ընտանիքը հմայվում է նրանով, և, թեև նա ակնկալում էր, որ երեխաներ և ընտանիք կունենար, ամուրի է: «Ես որոշում եմ կայացրել, - ասում է նա, - իմ վստահությունը դնել Հիսուս Քրիստոսի վրա: Հաճախակի տաճար գնալն օգնում է ինձ ուշադրությունս ավելի շատ կենտրոնացնել հավերժության վրա: Այն ինձ հիշեցնում է, որ ես երբեք միայնակ

չեմ: Ես հավատք ունեմ, . . . որ ոչ մի . . . օրհնություն չի պահվի ինձանից, . . . եթե ես . . . մնամ հավատարիմ իմ ուխտերին, ներառյալ՝ մաքրաբարոյության օրենքին»:[15]

Մեկ այլ ընկեր ծառայել է գերազանց միսիա, որից հետո դժվարին ակադեմիական կրթություն է ստացել: Նա ընտանիք էր փափագում: Նրա հավատքի փորձությունը նույն սեռի հանդեպ հակվածությունն է: Վերջերս նա ինձ գրել է. «Իմ հայրապետական օրհնության մեջ ինձ խոստացվել է, որ մի օր ես կունենամ իմ ընտանիքը: Լինի դա այս կյանքում, թե՝ հաջորդ, ես չգիտեմ: Բայց ես վստահ եմ, որ չեմ ուզում անել որևէ բան, որը վտանգի տակ կդնի օրհնությունները, որոնք Աստված խոստացել է ինձ և իմ ապագա սերունդներին: . . . [Մաքրաբարոյության օրենքով] ապրելը դժվար է, բայց արդյո՞ք մենք չենք գալիս երկիր դժվարությունների հանդիպելու և Աստծուն մեր սերն ու հարգանքը ցույց տալու համար Նրա պատվիրանները պահելու միջոցով: Ես օրհնված եմ լավ առողջությամբ, ավետարանով, սիրող ընտանիքով և հավատարիմ ընկերներով: Ես երախտապարտ եմ իմ բազմաթիվ օրհնությունների համար»:[16]

Աշխարհը բողոքում է, թե ինչպե՞ս մենք կարող ենք այդքան բան պահանջել: Տերը պատասխանում է.

«Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն . . .

«Այլ ինչպես որ բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են իմ ճանապարհները ձեր ճանապարհներից և իմ խորհուրդները ձեր խորհուրդներից»:[17]

Քրիստոսի այս երկու հետևորդները և նրանց նման տասնյակ հազարավորները զգացել են Փրկչի խոստումը. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ոչ թե ինչպես աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չխռովի և չվախենա»:[18]

Ահա մեկ այլ փորձություն: Միշտ կլինեն մի քանիսը, ովքեր կփորձեն հեղինակազրկել Եկեղեցին և ոչնչացնել հավատքը: Այսօր նրանք օգտագործում են համացանցը:

Եկեղեցու մասին որոշ տեղեկություն, անկախ նրանից, թե որքան համոզիչ է, պարզապես ճշմարիտ չէ: 1985 թվականին, հիշում եմ, ինչպես իմ աշխատակիցներից մեկը մտավ իմ գրասենյակ Ֆլորիդայում: Նա բերել էր *Time* ամսագրի հոդվածը, որը կոչվում էր «Մորմոնիզմի կասկածյալ արմատները»: Այն պատմում էր վերջերս հայտնաբերված նամակի մասին, որն, իբր, գրվել էր Մարթին Հարիսի կողմից, և որը հակասում էր Մորմոնի Գրքի թիթեղները գտնելու Ջոզեֆ Սմիթի պատմությանը:[19]

Աշխատակիցս հարցրեց, թե արդյոք այս նոր տեղեկությունը չի կործանի Եկեղեցին: Հոդվածում մեջբերվում էր մի անձնավորություն, որն ասում էր, որ հեռանում էր Եկեղեցուց այդ փաստաթղթի պատճառով: Հետագայում, ասվեց, որ ուրիշները նույնպես հեռացել էին Եկեղեցուց:[20] Ես վստահ եմ, դա նրանց հավատքի փորձությունն էր:

Մի քանի ամիս անց մասնագետները բացահայտեցին (իսկ կեղծարարը խոստովանեց), որ նամակը բացարձակ կեղծիք էր: Ես իսկապես հույս էի տածում, որ այս խաբեության պատճառով Եկեղեցին լքած մարդիկ կգտնեին իրենց ետդարձի ճանապարհը:

Ոմանք կասկածի տակ են դնում իրենց հավատքը, երբ գտնում են

Եկեղեցու որևէ ղեկավարի ասվածը տասնամյակներ առաջ, որը համահունչ չէ մեր վարդապետությանը: Կարևոր մի սկզբունք կա, որը կարգավորում է Եկեղեցու վարդապետությունը: Վարդապետությունն ուսուցանվում է Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի բոլոր 15 անդամների կողմից: Այն թաքնված չէ որևէ առանձին ելույթի անորոշ տողերում: Ճշմարիտ սկզբունքները ուսուցանվում են հաճախ և շատերի կողմից: Մեր վարդապետությունը դժվար չէ գտնել:

Եկեղեցու ղեկավարները ազնիվ, բայց ոչ կատարյալ տղամարդիկ են: Հիշում եք Մորոնիի խոսքերը. «Մի դատապարտեք ինձ իմ թերությունների համար, ոչ էլ իմ հորը, . . . այլ, ավելի շուտ, գոհություն հայտնեք Աստծուն, որ նա հայտնի է դարձրել ձեզ մեր թերությունները, որպեսզի դուք սովորեք լինել ավելի իմաստուն, քան մենք ենք եղել»:[21]

Ջոզեֆ Սմիթն ասել է. «Ես երբեք չեմ ասել ձեզ, որ կատարյալ եմ, բայց չկա սխալ հայտնությունների մեջ»:[22] Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պատմության և ճակատագրի մեջ Աստծո ձեռքի հրաշքը կհասկացվի միայն հոգևոր որոնումների ոսպնյակների միջոցով: Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Ամեն [անձ], ի վերջո, կանգնում է հավատքի պատի առաջ և դրան նա պետք է հիմնվի»:[23] Չզարմանաք, եթե դա պատահի ձեզ հետ:

Ըստ սահմանման, փորձությունները փորձող կլինեն: Կլինեն ցավ, շփոթություն, անքուն գիշերներ, արցունքներից թրջված բարձեր: Բայց մեր փորձությունները չպետք է հոգեպես մահացու լինեն: Դրանք չպետք է մեզ հեռացնեն մեր ուխտերից կամ Աստծո տնից:

«Հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, երբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ

վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի»:[24]

Թեժ կրակի պես, որը երկաթը պողպատի է վերածում, եթե հավատարիմ մնանք *մեր* հավատքի բորբոքված փորձության մեջ, մենք հոգևորապես կհղկվենք և կամրանանք:

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը բացատրել է, թե ինչ է սովորել անձնական փորձությունից. «Թեև ես այդ ժամանակ տառապեցի, երբ ետ եմ նայում, շնորհակալ եմ, որ իմ խնդրին արագ լուծում չեղավ: Այն փաստը, որ ես ստիպված էի երկար տարիների ընթացքում գրեթե ամեն օր դիմել Աստծո օգնությանը, ինձ իսկապես սովորեցրեց ինչպես աղոթել և ստանալ աղոթքի պատասխանները, և ես գործնականում սովորեցի հավատք ունենալ առ Աստված: Ես ճանաչեցի իմ Փրկչին և իմ Երկնային Հորը այնպես և այն աստիճան, որ այլ ճանապարհով հնարավոր չէր լինի կամ դրան հասնելու համար ավելի երկար ժամանակ կպահանջվեր: . . . Ես սովորեցի ապավինել Տիրոջը իմ ողջ սրտով: Ես սովորեցի ամեն օր քայլել Նրա հետ»:[25]

Պետրոսը նկարագրում է այդ փորձառությունները որպես «ավելի պատվական, . . . քան . . . ոսկին»:[26] Մորոնին ավելացնում է, որ վկայությունը հաջորդում է «ձեր հավատքի փորձությանը»:[27]

Ելույթիս սկզբում ես պատմեցի Մերիոթների ընտանիքի մասին: Անցած շաբաթ Քեթին և ես նրանց հետ Ջորջիայի գերեզմանի մոտ էինք: Տաս տարի է անցել: Ընտանիքը և ընկերները պատմում էին սիրո և հուշերի մասին, որ ունեին Ջորջիայի մասին: Այնտեղ էին բերվել սպիտակ օդային փուչիկներ՝ նրա կյանքը տոնելու համար: Արցունքներն աչքերին Ջորջիայի մայրը քնքշությամբ պատմեց իր մեծացած հավատքի և հասկացողության մասին, իսկ Ջորջիայի հայրը շշուկով ինձ ասաց խոստացված «վկայության» մասին, որը նա ստացել էր:

Հավատքի հետ մեկտեղ գալիս են հավատքի փորձությունները, բերելով ավելի մեծ հավատք: Մարգարե Ջոզեֆ Սմիթին Աստծո տված մխիթարիչ հավաստիացումը այն նույն խուստումն է, որը Նա տալիս է ձեզ հավատքի փորձության ժամանակ: «Շարունակիր, . . . մի վախեցիր, . . . քանզի Աստված քեզ հետ կլինի հավիտյանս հավիտենից»:[28] Այս մասին եմ ես բերում իմ սուրբ վկայությունը՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Շեյն Բոուեն, «Որովհետեւ ես կենդանի եմ, եւ դուք կենդանի կլինեք», և Էնն Մ. Դիբ, «Ես գիտեմ դա: Ես ապրում եմ դրանով: Ես սիրում եմ դա», 2012 հոկտեմբերի գերազույն համաժողով, շաբաթ առավոտյան նիստ:
2. Հովհաննես 17.3:
3. Ա Պետրոս 1.7:
4. Ղուկաս 22.31–32:
5. Ա Պետրոս 4.12; շեշտադրումն ավելացված է:
6. Ալմա 1.25:
7. Եփեսացիս 2.19:
8. Վարդապետություն և Ուխտեր 84.20:
9. Տես Մոսիա 18.8–10:
10. Թոմաս Ս. Մոնսոն, «Կանգնեք սուրբ տեղերում», *Լիահոնա,* նոյ. 2011, 82:
11. Տես Ezra Taft Benson, "The Law of Chastity," *New Era*, Jan. 1988, 4–7; "The Law of Chastity" in *Brigham Young University 1987–88 Speeches* (1988), 1–5, speeches.byu.edu; տես նաև *Ավետարանի սկզբունքները* (2009), 224–32:
12. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
13. Մատթեոս 5.28:
14. Հովհաննես 8.11:
15. Անձնական նամակագրություն, 2012:
16. Անձնական նամակագրություն, 2012:
17. Եսայիա 55.8–9:
18. Հովհաննես 14.27:
19. Տես Richard N. Ostling, "Challenging Mormonism's Roots," *Time,* May 20, 1985, 44:
20. Տես Gordon B. Hinckley, "Lord, Increase Our Faith," *Ensign,* Nov. 1987, 52:
21. Մորմոն 9.31:
22. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 522.
23. Ezra Taft Benson, "The Book of Mormon Is the Word of God," *Tambuli,* May 1988, 6:
24. Հելաման 5.12:
25. Դ. Թոդ Քրիսթոֆերսոն, «Տուր մեզ այսօր հացն մեր հանապազօրյա» (Եկեղեցու Կրթական Համակարգ, հունվ. 9, 2011), lds.org/broadcasts:
26. Ա Պետրոս 1.7; տես նաև Ա Պետրոս 4.13:
27. Եթեր 12.6:
28. Վարդապետություն և Ուխտեր 122.9; Նախագահ Ջորջ Քենոնն ասել է. «Կարևոր չէ, թե որքան լուրջ է փորձությունը, որքան մեծ ճնշումը, որքան դաժան հալածանքը, [Աստված] երբեք մեզ չի լքի: Նա երբեք դա չի արել, և չի անի: Նա չի կարող անել դա: Դա Նրա բնավորությունը չէ: Նա անփոփոխ էակ է՝ նույնը երեկ, նույնը այսօր, նույնը կլինի հավերժության մեջ: Մենք գտել ենք այդ Աստծուն: Մենք դարձրել ենք Նրան մեր ընկերը, հնազանդվելով Նրա Ավետարանին, և Նա կլինի մեր կողքին: Մենք կանցնենք թեժ կրակով, խոր ջրերով, բայց մենք չենք ոչնչացվի կամ հոգնի: Մենք դուրս կգանք այդ բոլոր փորձությունների և դժվարությունների միջից, դառնալով ավելի մաքուր և լավը, եթե միայն ապավինենք մեր Աստծուն և պահենք Նրա պատվիրանները» ("Remarks," *Deseret Evening News,* Mar. 1891, 4); տես Jeffrey R. Holland, "Come unto Me," *Ensign,* Apr. 1998, 16–23:

Երեց Դալլին Հ. Օուքս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Պաշտպանել երեխաներին

Ոչ ոք չպետք է մերժի այն խնդրանքը, որ մենք միավորվենք, մեծացնելով մեր մտահոգությունը երեխաների՝ աճող սերնդի բարեկեցության և ապագայի համար:

Մենք բոլորս էլ կարող ենք հիշել մեր զգացմունքները, երբ փոքր երեխան լաց է եղել և ձեռքերը պարզել է մեզ՝ օգնության համար: Սիրող Երկնային Հայրը տալիս է մեզ այդ զգացողությունները, որ դրդի մեզ օգնել Իր զավակներին: Խնդրում եմ, վերհիշեք այդ զգացողությունները, մինչ ես կխոսեմ երեխաներին պաշտպանելու և նրանց բարօրության համար գործելու մեր պարտականության մասին:

Ես խոսում եմ Հիսուս Քրիստոսի ավետարանի, ներառյալ Նրա փրկության ծրագրի տեսանկյունից: Դա իմ կոչումն է: Եկեղեցու տեղական ղեկավարները պարտավորություն ունեն կապված միայն իրենց տարածքի հետ, օրինակ՝ ծխում կամ ցցում, սակայն Առաքյալի պարտականությունն է վկայել ամբողջ աշխարհին: Յուրաքանչյուր ազգի յուրաքանչյուր ցեղի ու դավանանքի բոլոր երեխաները Աստծո զավակներն են:

Չնայած, որ ես չեմ խոսում քաղաքական կամ հասարակական օրենքների տեսանկյունից, ինչպես այլ Եկեղեցու ղեկավարներ, ես չեմ կարող խոսել երեխաների բարօրության վերաբերյալ, առանց քննարկելու նաև ընտրությունները, որոնք կատարում են քաղաքացիները, պետական ծառայողները և մասնավոր կազմակերպությունների աշխատողները: Մենք բոլորս էլ պարտավորություն ունենք Տիրոջից սիրել և հոգ տանել իրար համար, և հատկապես թույլերի և անպաշտպանների համար:

Երեխաները շատ խոցելի են: Նրանք քիչ ուժ ունեն կամ նույնիսկ անզոր են պաշտպանել կամ ապահովել իրենց և փոքր ազդեցություն ունեն այնքան շատ բաների վրա, որ արժեքավոր են իրենց բարօրության համար: Երեխաները կարիք ունեն, որ ուրիշները խոսեն իրենց փոխարեն և նրանք կարիք ունեն որոշումներ կայացնողների, ովքեր նրանց բարօրությունը չափահասների հետաքրքրություններից բարձր են դասում:

I.

Մեզ հուզում է այն փաստը, որ աշխարհով մեկ գտնվող միլիոնավոր երեխաներ չափահասների կողմից գործված հանցագործությունների և եսասիրության չարիքի զոհ են դառնում:

Պատերազմական որոշ երկրներում երեխաներին առևանգում են, որպեսզի ծառայեն որպես զինվորներ պատերազմող բանակներում:

Ըստ Միացյալ Ազգերի տվյալների հաշվարկի երկու միլիոն երեխաներ ամեն տարի զոհ են դառնում պոռնկության և պոռնկագրության միջոցով:[1]

Փրկության ծրագրի տեսանկյունից երեխաների իրավունքների ամենալուրջ ոտնահարում է համարվում նրանց ծնվելու իրավունքից զրկելը: Սա համաշխարհային տենդենց է: Միացյալ Նահանգներում ազգային ծնելիության մակարդակը ամենացածրն է 25 տարիների ընթացքում,[2] և Եվրոպական և Ասիական երկրների մեծ մասում ծնելիության մակարդակները երկար տարիներ ցածր են փոխարինման մակարդակներից: Սա միայն կրոնական խնդիր չէ: Մինչ աճող սերունդները քանակապես պակասում են, մշակույթները և նույնիսկ ազգերը տկարանում և ի վերջո անհետանում են:

Ծնելիության մակարդակի նվազեցման պատճառներից մեկը արհեստական վիժեցումներ կատարելն է: Աշխարհով մեկ մոտավոր հաշվարկով տարեկան կատարվում է ավելի քան 40 միլիոն արհեստական վիժեցում:[3] Շատ օրենքներ թույլ են տալիս կամ նույնիսկ աջակցում են արհեստական վիժեցմանը, սակայն մեզ համար սա մեծ չարիք է: Երեխաների իրավունքների մեկ այլ ոտնահարում է համարվում հղիության ընթացքում սաղմին վնաս հասցնելը, որը մոր անհամապատասխան սնունդ կամ դեղամիջոց օգտագործելու արդյունք է հանդիսանում:

Ճակատագրի վշտալի ծաղր է այն փաստը, որ բազմաթիվ երեխաներ մինչև ծնվելը հեռացվում են կամ նրանց վնաս է հասցվում, մինչդեռ շատ զույգեր, որոնք չեն կարողանում երեխաներ ունենալ, փափագում են ունենալ և փնտրում են երեխաներ, որ որդեգրեն:

Երեխաների իրավունքների ոտնահարումը կամ երեխաներին անուշադրության մատնելը, որ ի հայտ են գալիս նրանց ծնվելուց հետո, հասարակության մեջ ավելի տեսանելի են դառնում: Ողջ աշխարհում մոտավորապես ութ միլիոն երեխա մահանում են նախքան հինգ տարեկանը լրանալը, մեծամասամբ հիվանդությունների պատճառով, որոնք և բուժման ենթակա են, և կանխելի:[4] Եվ Համաշխարհային Առողջապահական Կազմակերպությունը տեղեկացնում է, որ չորս երեխաներից մեկը թերաճ են՝ մտավոր և ֆիզիկապես, թերսնվելու պատճառով:[5] Ապրելով և ճամփորդելով աշխարհով մեկ, մենք՝ Եկեղեցու ղեկավարներս, շատ ենք տեսնում նման բաներ: Երեխաների Խմբի գերագույն նախագահությունը տեղեկացնում է «մեր պատկերացումից դուրս» պայմաններում ապրող երեխաների մասին: Մի մայր Ֆիլիպիններում ասել է. «Երբեմն մենք ուտելիքի համար բավականաչափ գումար չունենք, սակայն ամեն ինչ լավ է, որովհետև այն ինձ հնարավորություն է տալիս սովորեցնել իմ երեխաներին հավատքի մասին: Մենք հավաքվում և աղոթում ենք սփոփանքի համար և երեխաները տեսնում են, թե ինչպես է Տերը օրհնում մեզ»:[6] Հարավային Աֆրիկայում երեխաների հետ աշխատող մեկը հանդիպել էր մի փոքրիկ աղջկա, ով միայնակ էր ու տխուր: Սիրով տրված հարցերին ցածրաձայն պատասխանելիս նա ասել էր, որ չուներ մայր, հայր և տատիկ, միայն պապիկ ուներ, որ պետք է հոգ տաներ իր համար:[7] Նման ողբերգություններ հաճախակի են հանդիպում այն աշխարհամասում, որտեղ շատ խնամակալներ մահանում են ՁԻԱՀ-ից:

Նույնիսկ հարուստ ազգերում փոքր երեխաները և պատանիները տուժում են անուշադրության մատնվելու պատճառով: Աղքատության մեջ մեծացող երեխաները ունեն ցածրորակ առողջապահական ծառայություններ և կրթության համար անբավարար հնարավորություններ: Նրանք նաև ենթակա են վտանգավոր պայմանների իրենց ֆիզիկական և մշակութային միջավայրում և նույնիսկ իրենց ծնողների անուշադրության պատճառով: Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը վերջերս կիսվեց ՀՕՍ ոստիկանության սպայի փորձառությամբ: Հետաքննության ժամանակ նա մի բնակարանում գտել էր իրար գլխի հավաքված հինգ երեխաների, որոնք փորձում էին քնել կողտոտ հատակի վրա՝ առանց սպիտակեղենի, որտեղ նրանց մայրը և այլոք խմում էին և զվարճանում: Բնակարանում ուտելիք չկար նրանց կերակրելու համար: Ինքնաշեն անկողնում նրանց լավ ծածկելուց հետո սպան ծնկի եկավ և աղոթեց նրանց ապահովության համար: Երբ նա քայլում էր դեպի դուռը, նրանցից մեկը, որ մոտավորապես վեց տարեկան էր, հետևեց նրան, բռնեց նրա ձեռքից և աղերսեց. «Խնդրում եմ, ինձ կորդեգրե՞ք դուք»:[8]

Մենք հիշում ենք Փրկչի ուսմունքները, երբ Նա մի փոքր երեխա վերցրեց իր մոտ և իր հետևորդներին հայտարարեց.

«Եվ ով որ մի այսպիսի երեխա ընդունի իմ անունովը, ինձ է ընդունում:

Եվ ով որ գայթակղեցնէ այս փոքրներից մեկին, որ հավատում են ինձ, ավելի լավ է նորան, որ մի էշի ջաղացի քար նորա վզիցը կախվի, և նա ծովի անդունդում ընկղմվի» (Մատթեոս 18.5–6):

Երբ մենք խորհում ենք այն վտանգների մասին, որոնցից երեխաները պետք է պաշտպանվեն, մենք պետք է նաև ներառենք հոգեբանական ճնշումները: Ծնողները, այլ խնամակալները, ուսուցիչները կամ հասակակիցները, ովքեր նվաստացնում, ճնշում կամ

վիրավորում են երեխաներին կամ պատանիներին, կարող են ավելի հարատև վնաս պատճառել, քան ֆիզիկական վնասները: Երեխային կամ պատանուն անարժեք, չսիրված կամ անցանկալի լինելու զգացմունքներ հաղորդելը կարող է լուրջ և երկարատև վնաս պատճառել նրա էմոցիոնալ վիճակին և զարգացմանը:[9] Երիտասարդ մարդիկ, ովքեր տառապում են որևէ անսովոր պայմանում, ներառյալ նույն սեռի հանդեպ համակրանքը, մասնավորապես խոցելի են և կարիք ունեն սիրալիր հասկացողության, և ոչ թե ճնշման կամ արտաքսման:[10]

Տիրոջ օգնությամբ մենք կարող ենք ապաշխարել, փոխվել և լինել երեխաներին ավելի սիրող և օգնող, մեր սեփական երեխաներին և նրանց, ովքեր գտնվում են մեր շրջապատում:

II.

Երեխաների համար կան ֆիզիկական կամ էմոցիոնալ վտանգների մի քանի օրինակներ, որոնք նույնքան կարևոր են, ինչպես նրանք, որ առաջ են գալիս իրենց ծնողների կամ խնամակալների հետ հարաբերություններից: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խոսել է այն մասին, ինչը նա կոչել է երեխաների իրավունքների ոտնահարման «նողկալի արարքներ», որտեղ ծնողը կոտրում կամ աղավաղում է երեխային ֆիզիկապես կամ հոգեպես:[11] Ես խորը վիշտ էի ապրում, երբ Յուտայի Գերագույն Դատարանում ծառայելու ընթացքում ստիպված էի լինում ուսումնասիրել նման դեպքերի ցնցող փաստեր:

Երեխաների բարեկեցության համար մեծ կարևորություն ունի, թե արդյոք նրանց ծնողները ամուսնացած են, ամուսնության տեսակը և տևողությունը, և ընդհանուր առմամբ, ամուսնության և երեխաներին խնամելու հետ կապված սովորույթներն ու ակնկալիքները այնտեղ, որտեղ նրանք ապրում են: Ընտանիքի վերաբերյալ հետազոտություններ կատարող երկու անձնավորություններ բացատրել են. «Պատմության ընթացքում

ամուսնությունը առաջին հերթին և ամենակարևորը եղել է երեխաներ արարելու և մեծացնելու հասարակական կարևոր մի ավանդույթ: Այն ապահովել է մշակութային սերտ կապ, որի նպատակն է միավորել հորը իր զավակների հետ՝ կապելով նրան իր զավակների մոր հետ: Սակայն վերջին ժամանակներում երեխաները մեծապես հետ են մղվել ուշադրության կենտրոնում լինելուց»:[12]

Հարվարդի իրավաբանության դասախոսներից մեկը նկարագրում է ներկայիս օրենքը և վերաբերմունքը ամուսնության և ամուսնալուծության վերաբերյալ. «Ամերիկյան [ներկայիս] վերաբերմունքը ամուսնության վերաբերյալ, համաձայն օրենքի և ամենից հայտնի գրականության, ձևակերպվում է մոտավորապես այս ձևով. ամուսնությունը հարաբերություն է, որը գոյություն ունի հիմնականում ամուսիններից յուրաքանչյուրին գոհացնելու համար: Եթե այն դադարում է այդ ֆունկցիան կատարել, ոչ ոք չպիտի մեղադրի և ամուսիններից յուրաքանչյուրը ցանկացած պահի կարող է այն ավարտին հասցնել: . . . Երեխաները հազվադեպ են հանդես գալիս այս պատմություններում, մեծամասամբ նրանց կարծիքին նման իրավիճակներում կարևորություն չի տրվում»:[13]

Մեր Եկեղեցու ղեկավարները ուսուցանել են, որ ամուսնությանը նայելը «որպես պարզապես պայմանագիր, որը կարելի է կնքել հաճույքի համար . . . և խզել այն առաջին իսկ դժվարությանը հանդիպելիս . . . խիստ դատապարտելի չար արարք է», հատկապես այն դեպքում, երբ երեխաները տառապում են:[14] Եվ ամուսնալուծությունները երեխաների վրա հետևանքներ են թողնում: Վերջին տարվա բաժանությունների կեսից ավելին ներառել են փոքր երեխաներ ունեցող զույգերի:[15]

Շատ երեխաներ կունենային իրենց երկու ծնողների կողմից մեծացվելու օրհնությունը, եթե միայն նրանց ծնողները հետևեին ընտանիքի վերաբերյալ

հայտարարության այս ոգեշնչված ուսմունքին. «Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար: . . . Ծնողների սուրբ պարտականությունն է դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները և ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին»:[16] Երեխաների համար ամենազորեղ ուսուցումը տրվում է նրանց ծնողների կողմից: Ամուսնալուծվող ծնողները անխուսափելիորեն ուսուցանում են բացասական դաս:

Իհարկե կան դեպքեր, երբ ամուսնալուծությունը անհրաժեշտ է երեխաների օգտի համար, սակայն այդ հանգամանքները բացառիկ հանգամանքներ են:[17] Դժվարությունների առաջ կանգնած ամուսնության ժամանակ պայքարի մեջ մտած ծնողները ավելի շատ պիտի մտածեն երեխաների օգտի մասին: Տիրոջ օգնությամբ նրանք կարող են դա անել: Երեխաները կարիք ունեն էմոցիոնալ և անձնական ամրության, որը առաջ է գալիս երկու ծնողների կողմից մեծացվելու արդյունքում, ովքեր միավորված են իրենց ամուսնության մեջ և իրենց նպատակներով: Որպես մեկը, ում մեծացրել է ամուրի մայրը, ես գիտեմ իմ անձնական օրինակից, որ սրան միշտ չէ, որ կարելի է հասնել, սակայն սկզբունքն այն է, որ հնարավորության դեպքում հասնենք դրան:

Երեխաներն առաջին զոհն են ներկայիս օրենքների, որոնք թույլ են տալիս այսպես կոչված «առանց մեղադրանքի ամուսնալուծություն»: Երեխաների տեսակետից ամուսնալուծությունը շատ հեշտ է: Ամփոփելով հասարակագիտության տասնամյակների ուսումնասիրությունները, հոգատար գիտնականը եզրակացրել է, որ «ընտանեկան համակարգը, որ լավագույն արդյունքներն է տալիս երեխաների համար, միջին հաշվով երկու կենսաբանական ծնողներն են, ովքեր մնում են ամուսնացած»:[18] *New York Times*–ի լրագրողներից մեկը նշել է «տպավորիչ մի փաստ, որ որքանով ավանդական ամուսնությունը պակասել է Միացյալ Նահանգներում . . . երեխաների բարեկեցության համար այդ կառույցի կարևորության փաստը ավելի է մեծացել»:[19] Այդ իրականությունը ծնողներին պետք է կարևոր առաջնորդություն տա և ծնողները պետք է կարևորեն այն, երբ որոշում կայացնեն ամուսնության և ամուսնալուծության առնչությամբ: Մեզ նաև անհրաժեշտ է, որ քաղաքական գործիչները, օրենքներ սահմանողները և պետական պաշտոնյաները մեծացնեն իրենց ուշադրությունն առ այն, ինչը առավելագույնս կարևոր է երեխաների համար՝ ի հակադրություն կողմերի եսասիրական շահերի և չափահասների շահերը պաշտպանող փաստաբանների:

Երեխաները զոհ են դառնում նաև չկայացված ամուսնությունների դեպքում: Մեր աճող սերնդի բարեկեցության վերաբերյալ որոշ փաստեր ավելի մեծ անհանգստություն են պատճառում, քան վերջին տվյալները, որ Միացյալ Նահանգների բոլոր նորածինների 41 տոկոսը պատկանում են կանանց, ովքեր ամուսնացած չեն:[20] Չամուսնացած մայրերը ունեն վիթխարի դժվարություններ, և ակնհայտ է այն փաստը, որ նրանց երեխաները առավելապես գտնվում են անշահավետ վիճակում, եթե համեմատենք այն երեխաների հետ, ովքեր մեծանում են ամուսնացած ծնողների ներկայությամբ:[21]

Չամուսնացած մայրերի երեխաների մեծամասնությունը՝ 58 տոկոսը, ծնվել են այն զույգերի մոտ, ովքեր միասին են ապրել առանց

ամուսնանալու:[22] Ինչ էլ մենք ասենք այն զույգերի վերաբերյալ, ովքեր չեն ամուսնանում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանց երեխաները մեծապես տառապում են անշահավետ պայմանների պատճառով:[23] Երեխաների համար ամուսնության կայունությունը մեծ նշանակություն ունի:

Մենք պետք է ընդունենք, որ նույն անշահավետ իրավիճակում են գտնվում այն երեխաները, ում մեծացնում են նույն սեռին պատկանող զույգերը: Հասարակագիտության գրականությունը վիճահարույց է և պաշտոնապես քննադատող երեխաների վրա սրա ունեցած երկարատև ազդեցության առնչությամբ, հիմնականում այն պատճառով, ինչպես *New York Times*-ի հեղինակներից մեկն է նկատել. «նույն սեռի ամուսնությունը հասարակական փորձ է, և ինչպես փորձերի մեծամասնությունը այն ժամանակ կպահանջի, որ հասկացվեն դրա հետևանքները»:[24]

III.

Ես խոսեցի երեխաների անունից՝ ամենուր գտնվող երեխաների: Ոմանք կարող են չհամաձայնվել բերված որոշ օրինակների հետ, սակայն ոչ ոք չպետք է դիմակայի խնդրանքին, որ մենք միավորվենք մեծացնելով մեր մտահոգությունը մեր երեխաների՝ աճող սերնդի բարօրության և ապագայի համար:

Մենք խոսում ենք Աստծո զավակների մասին, և Նրա զորեղ օգնությամբ մենք կարող ենք անել ավելին նրանց օգնելու համար: Այս խնդրանքով ես դիմում եմ ոչ միայն Վերջին Օրերի Սրբերին, այլ նաև կրոնական հավատքի տեր բոլոր անհատներին և այլոց, ովքեր ունեն արժեքավոր համակարգ, որը նրանց հնարավորություն է տալիս խոսելու այլոց հետ՝ հատկապես երեխաների բարեկեցության վերաբերյալ:[25]

Կրոնական անձնավորությունները նաև գիտակցում են Փրկչի Նոր Կտակարանի ուսմունքը, որ մաքուր փոքրիկ երեխաները մեր համար խոնարհության և ուսուցանելի լինելու լավ օրինակ են.

«Ճշմարիտ ասում եմ ձեզ. եթե դարձ չգաք և չլինիք երեխաների նման, չէք մտնիլ երկնքի արքայությունը:

Արդ ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնե, նա է մեծ երկնքի արքայության մեջ» (Մատթեոս 18.3–4):

Մորմոնի Գրքում մենք կարդում ենք, թե որն էր պատճառը, որ Տերը ուսուցանեց նեփիացիներին, որ նրանք պետք է ապաշխարեն և մկրտվեն «և դառնան ինչպես մի փոքր երեխա» կամ նրանք չէին կարողանա ժառանգել Աստծո թագավորությունը (3 Նեփի 11.38, տես նաև Մորոնի 8.10):

Ես աղոթում եմ, որ մենք խոնարհեցնենք ինքներս մեզ փոքր երեխաների պես և պարզենք մեր ձեռքերը մեր փոքր երեխաներին պաշտպանելու համար, քանի որ նրանք են մեր, մեր Եկեղեցու և մեր ազգերի ապագան: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես UNICEF, *The State of the World's Children 2005: Childhood under Threat* (2004), 26:
2. Տես Haya El Nasser, "National Birthrate Lowest in 25 Years," *USA Today,* July 26, 2012, A1:
3. Տես Gilda Sedgh, and others, "Induced Abortion: Incidence and Trends Worldwide from 1995 to 2008," *The Lancet,* vol. 379, no. 9816 (Feb. 18, 2012), 625–32:
4. Տես UNICEF, "Young Child Survival and Development," http://www.unicef.org/childsurvival/index.html:
5. Տես World Health Organization, *World Health Statistics 2012* (2012), 109, 118:
6. Report of Primary general presidency, Sept. 13, 2012.
7. Report of Primary general presidency.
8. Տես Jeffrey R. Holland, "Israel, Israel, God Is Calling" (Church Educational System Devotional for young adults, Sept. 9, 2012), lds.org/broadcasts; see also R. Scott Lloyd, "Zion Not Only Where, but How We Live, Says Elder Holland," *Deseret News,* Sept. 10, 2012, B2:
9. Տես Kim Painter, "Parents Can Inflict Deep Emotional Harm," *USA Today,* July 30, 2012, B8; Rachel Lowry, "Mental Abuse as Injurious as Other Forms of Child Abuse, Study Shows," *Deseret News,* Aug. 5, 2012, A3:
10. Տես "End the Abuses," *Deseret News,* June 12, 2012, A10:
11. Thomas S. Monson, "A Little Child Shall Lead Them," *Liahona,* June 2002, 2.
12. W. Bradford Wilcox and Elizabeth Marquardt, eds., *The State of Our Unions: Marriage in America* (2011), 82.
13. Mary Ann Glendon, *Abortion and Divorce in Western Law: American Failures, European Challenges* (1987), 108.
14. David O. McKay, "Structure of the Home Threatened by Irresponsibility and Divorce," *Improvement Era,* June 1969, 5.
15. Տես Diana B. Elliott and Tavia Simmons, "Marital Events of Americans: 2009," *American Community Survey Reports,* Aug. 2011:
16. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
17. Տես Դալլին Հ. Օուրս, «Ամուսնալուծություն», *Լիահոնա,* մայիս 2007, 71:
18. Charles Murray, *Coming Apart: The State of White America, 1960–2010* (2012), 158.
19. Ross Douthat, "Gay Parents and the Marriage Debate," *New York Times,* June 11, 2012, http://douthat.blogs.nytimes.com/2012/06/11/gay-parents-and-the-marriage-debate.
20. Տես Joyce A. Martin and others, "Births: Final Data for 2010," *National Vital Statistics Reports,* vol. 61, no. 1 (Aug. 2012), 10:
21. Տես William J. Doherty and others, *Why Marriage Matters: Twenty-One Conclusions from the Social Sciences* (2002); W. Bradford Wilcox and others, *Why Marriage Matters: Thirty Conclusions from the Social Sciences,* 3rd ed. (2011):
22. Տես Martin, "Births: Final Data for 2010," 10–11:
23. Տես Wilcox, *Why Marriage Matters*:
24. Douthat, "Gay Parents and the Marriage Debate." The latest and most thorough study finds significant disadvantages reported by young adults with a parent who had same-sex relationships prior to the child's turning age 18 (see Mark Regnerus, "How Different Are the Adult Children of Parents Who Have Same-Sex Relationships? Findings from the New Family Structures Study," *Social Science Research,* vol. 41 [2012], 752–70).
25. Վերջին Օրերի Սրբերը հատկապես նվիրված են ծնողական պարտականություններին, որը համարում են կյանքում իրենց ամենակարևոր նպատակներից մեկը (տես Pew Research Center's Forum on Religion and Public Life, *Mormons in America: Certain in Their Beliefs, Uncertain of Their Place in Society,* Jan. 12, 2012, 10, 16, 51):

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Եղբայրներ, մենք գործ ունենք կատարելու

Որպես քահանայության տղամարդիկ, մենք կարևոր դեր ունենք կատարելու հասարակության մեջ, տանը և Եկեղեցում:

Եղբայրներ, վերջին տարիներին շատ բաներ են ասվել և գրվել տղամարդկանց և տղաների մարտահրավերների մասին: Նմանատիպ գրքերի օրինակներ են՝ *Why There Are No Good Men Left (Ինչու չեն մնացել լավ տղամարդիկ), The Demise of Guys (Երիտասարդ տղաների անկումը), The End of Men (Տղամարդկանց վերջը), Why Boys Fail (Ինչու են տղաները ձախողվում),* և *Manning Up (Պատասխանատվության ստանձնում)*: Հետաքրքրականն այն է, որ գրքերից շատերը գրվել են կանանց կողմից: Ամեն դեպքում, այդ վերլուծությունների մեջ մի ընդհանուր գաղափար կա, որ այսօր շատ հասարակություններում տղամարդիկ և տղաները ստանում են հակասական և նվաստացնող ազդանշաններ հասարակության մեջ իրենց դերի և արժեքի վերաբերյալ:

Manning Up (Պատասխանատվության ստանձնում) գրքի հեղինակն այսպես է բնութագրում դա. «Քաղաքակրթության գրեթե ընդհանուր օրենք է եղել, որ աղջիկները կին են դարձել պարզապես ֆիզիկական հասունության հասնելով, իսկ տղաները պետք է ստուգարք անցնեին: Նրանց պետք էր ցուցադրել քաջություն, ֆիզիկական խիզախություն կամ անհրաժեշտ հմտությունների վարպետություն: Նպատակն ապացուցելն էր, որ կարող են պաշտպանել կանանց և երեխաներին. դա միշտ եղել է նրանց առաջնային սոցիալական դերը: Ինչևէ, երբ այսօր զարգացած տնտեսության պայմաններում կանայք առաջ են գնում, ապահովող ամուսիններն ու հայրերը այժմ անհրաժեշտություն չեն, իսկ բնավորության գծերը, որ տղամարդկանց անհրաժեշտ էր իրենց դերը կատարելու համար՝ տոկունությունը, ամրությունը, համարձակությունը, հավատարմությունը, հնացած են և անգամ փոքր ինչ շփոթեցնող»:[1]

Կանանց համար՝ հնարավորություն ընձեռելու իրենց խանդավառության մեջ, որը մենք ողջունում ենք, կան այնպիսիք, ովքեր նվաստացնում են տղամարդկանց և իրենց ավանդը: Նրանք կյանքին նայում են որպես տղամարդու և կնոջ մեջ մրցակցություն, երբ մեկը պետք է իշխի մյուսին, և այժմ կանանց հերթն է: Ոմանք ապացուցում են, որ կարիերան ամեն ինչ է, իսկ ամուսնությունը և երեխաները ամենևին էլ անհրաժեշտություն չեն, հետևաբար, մեր ինչի՞ն են պետք տղամարդիկ:[2] Բազմաթիվ հոլիվուդյան ֆիլմերում, հեռուստատեսությամբ և կաբելային ծրագրերով, տղամարդիկ ներկայացվում են որպես անընդունակ, տհաս կամ եսակենտրոն: Տղամարդկանց դերի նման սոցիալական թուլացումը վնասակար ազդեցություն է թողնում:

Օրինակ, Միացյալ Նահանգներում հաղորդվում է. «Այժմ բոլոր մակարդակներով աղջիկներն առաջ են անցնում տղաներից, սկսած տարրական դասարանից մինչև ավարտական դասարանը: Մինչև ութերորդ դասարանը, օրինակ, տղաների միայն 20 տոկոսն է վարժ գրում, իսկ 24 տոկոսը՝ վարժ կարդում: Միևնույն ժամանակ 2011թ.-ին երիտասարդ տղաների ընդունելության քննությունների միավորները, վերջին 40 տարիների ընթացքում եղել են ամենացածրը: Ըստ Ազգային Կենտրոնի Կրթական վիճակագրության, աղջիկների համեմատ տղաները 30 տոկոսով ավելի շատ են դուրս մնում ավագ դպրոցից և քոլեջից . . . Կանխատեսվել է, որ մինչև 2016թ. կանայք կվաստակեն բակալավրի կոչումների 60 տոկոսը, մագիստրոսի՝ 63 տոկոսը, և դոկտորական աստիճանի 54 տոկոսը: Հատուկ կրթական թույլ ծրագրով ուսանողների երկու-երրորդը տղաներ են»:[3]

Որոշ տղամարդիկ և երիտասարդ տղաներ բացասական խոսքերը որդեգրում են որպես պատասխանատվությունից խույս տալու արդարացում և իրականում

երբեք չեն աճում: Մի դիտարկման ժամանակ, որը շատ հաճախ ստույգ է լինում, համալսարանական մի պրոֆեսոր նշել է. «Տղաները դասին ներկայանում են բեյսբոլի գլխարկներով և «Word ծրագիրը կերավ իմ տնայինը» [թերի] պատճառաբանություններով, մինչդեռ աղջիկները ստուգում են իրենց ամենօրյա դասացուցակները և երաշխավորագիր են խնդրում իրավագիտության դպրոցում ուսանելու համար»:[4] Կինոնկարների մի կին գրախոս հետևյալ բավականին ցինիկ տեսակետն է հայտնել, որ՝ «քանի որ մենք հաջողակ ենք և ընտրում ենք ունենալ միայն զուգընկեր, տղամարդկանցից կարող ենք ակնկալել, որ լինեն միայն դա՝ զուգընկեր: Ով գտնվում է իր անձնական տարածքում, և հարգում է մեր դիրքը մեր իսկ տարածքում»:[5]

Եղբայրներ, դա մեզ չպետք է վերաբերվի: Որպես քահանայության տղամարդիկ, մենք կարևոր դեր ունենք կատարելու հասարակության մեջ, տանը և Եկեղեցում: Բայց մենք պետք է լինենք տղամարդիկ, որոնց կարող են վստահել կանայք, երեխաները և Աստված: Այս վերջին օրերին Եկեղեցում և Աստծո արքայությունում մենք չենք կարող հանդուրժել, որ ունենանք պասսիվ տղամարդիկ և տղաներ: Մենք չենք կարող հանդուրժել երիտասարդ տղաներ, ովքեր անկարգապահ են և ապրում են միայն զվարճանալու համար: Մենք չենք կարող հանդուրժել երիտասարդ չափահասների, ովքեր կյանքում ոչ մի տեղ չեն գնում, ովքեր լուրջ չեն վերաբերվում ընտանիք կազմելուն և այս աշխարհում իրական ավանդ ներդնելուն: Մենք չենք կարող հանդուրժել ամուսինների և հայրերի, ովքեր չեն կարողանում հոգևոր ղեկավարություն ապահովել տանը: Մենք չենք կարող հանդուրժել նրանց, ովքեր գործադրում են Սուրբ Քահանայությունը, ըստ Աստծո Որդու Կարգի, սակայն վատնում են իրենց ուժը պոռնոգրաֆիայում կամ անցկացնում են իրենց կյանքը համացանցում (ճակատագրի հեգնանքով լինելով այս *աշխարհից*, միևնույն ժամանակ չլինելով այս *աշխարհում*):

Եղբայրներ, մենք գործ ունենք կատարելու:

Երիտասարդներ, դուք պետք է լավ սովորեք դպրոցում և դպրոցից հետո շարունակեք ձեր ուսումը: Ձեզանից ոմանք կցանկանան գնալ համալսարան և սովորել գործարարություն, գյուղատնտեսություն, պետական կառավարում կամ այլ մասնագիտություններ: Ոմանք կառաջադիմեն արվեստում, երաժշտության և մանկավարժության մեջ: Ոմանք էլ կընտրեն զինվորական կարիերան կամ արհեստներ կսովորեն: Տարիներ առաջ, մի քանի արհեստավորներ էին աշխատում իմ տան վերանորոգման ժամանակ, և ես հիացած էի այդ մարդկանց տքնաջան աշխատանքով և վարպետությամբ: Ինչ էլ որ ընտրեք, կարևոր է, որ դուք հմտանաք ձեր ընտրած մասնագիտության մեջ, որպեսզի կարողանաք ընտանիք պահել և ձեր ավանդը ներդնել ձեր համայնքում և երկրում:

Վերջերս ես մի տեսաֆիլմ դիտեցի, որտեղ ներկայացվում էր Հնդկաստանում ապրող Ամար անունով 14 տարեկան տղայի մեկ օրը: Նա վաղ արթնանում է, դպրոցից առաջ և դպրոցից հետո աշխատում երկու աշխատավայրում, շաբաթվա մեջ վեցուկես օր: Նրա եկամուտը կազմում է իր ընտանիքի ապրուստի հիմնական մասը: Երկրորդ աշխատանքից հետո, արդեն մութն ընկած, նա իր մաշված հեծանվով շտապում է տուն և մի քանի ժամ տրամադրում տնային աշխատանքին, և գիշերվա տասնմեկի կողմերը մտնում գետնին զցած անկողնու մեջ՝ քնելու իր եղբայրների և քույրերի կողքին: Թեև երբեք նրան չեմ հանդիպել, ես հպարտանում եմ նրա ջանասիրությամբ և քաջությամբ: Նա իր սահմանափակ կարողություններով և հնարավորություններով անում է ամեն ինչ, և օրինություն է իր ընտանիքի համար:

Չափահաս տղամարդիկ՝ հայրեր, ամուրիներ, ղեկավարներ, տնային ուսուցիչներ, եղեք արժանի օրինակներ և տղաների աճող սերնդին օգնեք տղամարդ դառնալ: Նրանց սովորեցրեք սոցիալական և այլ հմտություններ, ինչպես մասնակցել խոսակցությանը, ինչպես ծանոթանալ և շփվել մյուսների հետ, ինչպես վերաբերվել կանանց և աղջիկներին, ինչպես ծառայել, ինչպես լինել ակտիվ և վայելել զվարճանքը, ինչպես հետամուտ լինել սիրած զբաղմունքին հակվածություն ձեռք չբերելով, ինչպես ուղղել սխալները և ավելի լավ ընտրություններ կատարել:

Այսպիսով բոլորին, ովքեր լսում են ինձ, ուր էլ որ լինեք, ես ասում եմ՝ ինչպես Եհովան ասաց Հեսուին. «Զորացիր և քաջ եղիր» (Հեսու 1.6): Արիացեք ու ինչպես հարկն է պատրաստվեք, ինչպիսին էլ լինեն ձեր պայմանները: Պատրաստվեք լինել լավ ամուսին և հայր, լավ ու բարեխիղճ քաղաքացի, պատրաստվեք ծառայել Տիրոջը, որի քահանայությունը դուք կրում եք: Ուր էլ որ լինեք, ձեր Երկնային Հայրը հոգ է տանում ձեր մասին: Դուք միայնակ չեք, դուք

ունեք քահանայություն և Սուրբ Հոգու պարգևը: Եթե դուք շարունակեք աշխատել և պահել Նրա պատվիրանները, ապագայում ձեզ համար հնարավորություններ կբացվեն:

Ձեզ համար անհրաժեշտ շատ վայրերից ամենակարևորը քահանայության ձեր քվորումն է: Մեզ պետք են քվորումներ, որոնք կիրակի օրը հոգևոր սնուցում են ապահովում անդամների համար և նաև ծառայում են: Մեզ պետք են քվորումների ղեկավարներ, ովքեր կենտրոնացած են Տիրոջ գործը կատարելու և քվորումի անդամներին և իրենց ընտանիքներին աջակցելու վրա:

Դիտարկենք միսիոներական աշխատանքը: Երիտասարդ տղաներ, դուք վատնելու ժամանակ չունեք: Դուք չեք կարող սպասել, որ 17 կամ 18 տարեկանում լրջորեն վերաբերվեք պատրաստվելուն: Ահարոնյան Քահանայության քվորումները կարող են օգնել իրենց անդամներին հասկանալ քահանայության խոստումն ու ուխտը և պատրաստվել որպես երեց կարգվելուն, նրանք կարող են օգնել նրանց հասկանալ և պատրաստվել տաճարային ծեսերին, նաև պատրաստվել հաջող միսիա ծառայելուն: Մելքիսեդեկյան Քահանայության քվորումները և Սփոփող Միությունը կարող են օգնել ծնողներին պատրաստել միսիոներներին, ովքեր գիտեն Մորմոնի Գիրքը և ովքեր միսիա կմեկնեն լիովին պարտավորված: Իսկ յուրաքանչյուր ծխում և ճյուղում այդ նույն քվորումները կարող են արդյունավետ համագործակցություն խթանել տվյալ միավորում ծառայող լիաժամկետ միսիոներների հետ:

Աշխատանքը, որ հիմնականում ընկած է քահանայության ուսերին, Փրկչի կանչն է, որը կրկնվում է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի կողմից՝ փրկել նրանց, ովքեր հեռացել են ավետարանից կամ ինչ-որ պատճառով դժգոհ են: Մենք այդ գործում հաջողության ենք հասել, ներառյալ՝ երիտասարդների կողմից տարվող գերազանց աշխատանքը: Նյու Մեքսիկոյում, Ալբուքերկի Ռիո Գրանդ (իսպանական) ծխում Ահարոնյան Քահանայության մի քվորում միասին խորհրդակցեց, թե ում կարող են ետ բերել, և ապա խմբով գնացին յուրաքանչյուրին այցելելու: Մեկն ասել է. «Երբ նրանց տեսա մեր դռան մոտ, ես կարևոր զգացի», մեկ ուրիշն էլ վստահել է. «Ես ներքուստ ուրախ եմ, որ ինչ-որ մեկն իրականում ցանկանում է, որ ես գնամ Եկեղեցի. այժմ ես ցանկանում եմ գնալ Եկեղեցի»: Երբ քվորումի անդամներ հրավիրեցին մի երիտասարդի ետ գալ, նրան խնդրեցին իրենց հետ գնալ հաջորդ այցելությանը, և նա համաձայնեց: Նրանք պարզապես նրան չհրավիրեցին հաճախել Եկեղեցի, այլ անմիջապես նրան ընդգրկեցին քվորումի մեջ:

Մեկ այլ դժվար, բայց խթանող քահանայական աշխատանք է՝ ընտանիքի պատմության և տաճարային աշխատանքը: Շուտով լույս կընծայվի Առաջին Նախագահության նամակը, որը կներկայացնի նորացված կանչը և մեր կատարելիք աշխատանքի այս կարևոր մասի վերաբերյալ ավելի բարձր տեսլականը:

Մեր քվորումներում նաև ձևավորվում է փոխօգնության եղբայրություն: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին մի անգամ ասել է. «Իմ եղբայրներ, հրաշալի օր և Տիրոջ նպատակների իրագործման օր կլինի այն օրը, երբ մեր քահանայության քվորումները դառնան ուժի խարիսխ քվորումին պատկանող յուրաքանչյուր տղամարդու համար, երբ այդ տղամարդիկ, իրենց հերթին, ի վիճակի լինեն ասելու՝ ես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու քվորումի անդամ եմ: Ես պատրաստ կանգնած եմ՝ օգնելու իմ եղբայրներին իրենց կարիքի ժամանակ, և ես վստահ եմ, որ նրանք պատրաստ կանգնած են օգնելու ինձ: . . . Միասին աշխատելով, մենք կարող ենք կանգնել անսասան և անվախ, հակառակորդի ամեն մի քամու դեմ, որ կփչի, լինի դա տնտեսական, սոցիալական, թե՝ հոգևոր»:[6]

Չնայած մեր գործադրած լավագույն ջանքերին, իրերն այնպես չեն դասավորվում ինչպես պլանավորել էինք և հատկապես «հակառակորդի քամին», որը կարող է փչել տղամարդու կյանքում գործազրկությունն է: Վաղ շրջանի Եկեղեցու բարօրության գրքույկում ասվում է. «Գործազուրկ տղամարդը հատուկ նշանակություն ունի Եկեղեցու համար, քանի որ իր ժառանգությունից զրկված, Հոբի պես, նա գտնվում է փորձության մեջ՝ իր շիտակության համար: Երբ ձախորդ օրերը դառնում են շաբաթներ, ամիսներ և անգամ տարիներ, ցավն ավելի է խորանում . . . Եկեղեցին չի կարող հույս ունենալ, որ կիրակի օրը կփրկի այդ տղամարդուն, եթե շաբաթվա ընթացքում ինքնագոհ ականատեսն է նրա հոգու խաչելության»:[7]

2009թ. ապրիլին Նախագահող Եպիսկոպոսության նախկին խորհրդական Ռիչարդ Ս. Էդգլին պատմեց մի օրինակելի քվորումի մասին, որը ջանքերը կենտրոնացնելով, օգնել էր աշխատանքը կորցրած անդամ ընկերոջը.

«Յուտայի Սենթերվիլում Phil's Auto ավտոսպասարկման կետը վկայությունն է այն բանի, թե ինչ կարող են անել քահանայության ղեկավարները: Ֆիլը երեցների քվորումի անդամ էր և մեխանիկ էր աշխատում տեղի ավտովերանորոգման կետում: Ցավոք այդ արհեստանոցը, որոշ ֆինանսական խնդիրներ ուներ, և Ֆիլին ազատեցին աշխատանքից: Նա շատ հուսահատված էր դեպքերի նման շրջադարձի պատճառով:

Լսելով, որ Ֆիլը կորցրել է իր աշխատանքը, նրա եպիսկոպոս Լեոն Օլսոնը և նրա երեցների քվորումի նախագահությունը աղոթքով ուղիներ դիտարկեցին, թե ինչպես կարող են օգնել Ֆիլին կրկին ոտքի կանգնել: Ի վերջո, նա քվորումի անդամ ընկեր էր, եղբայր և օգնության կարիք ուներ: Նրանք հանգեցին եզրակացության, որ Ֆիլն այնպիսի հմտություններ ուներ, որ կարող էր իր բիզնեսն ունենալ: Քվորումի անդամներից մեկը առաջարկեց, որ իր հին ամբարը գուցե հնարավոր լիներ օգտագործել որպես արհեստանոց: Քվորումի մյուս անդամները օգնեցին՝ հավաքելով անհրաժեշտ գործիքները և սարքավորումներով ապահովելով նոր արհեստանոցը: Քվորումի գրեթե բոլոր անդամներն

օգնեցին մաքրել հին ամբարը:

Նրանք գաղափարներ էին տալիս Ֆիլիին, ապա իրենց ծրագրով կիսվեցին քվորումի անդամների հետ: Ամբարը մաքրվեց և վերանորոգվեց, գործիքները հավաքվեցին և ամեն ինչ կարգի բերվեց: Phil's Auto-ն հաջողություն ունեցավ և, ի վերջո, տեղափոխվեց ավելի բարվոք և մշտական տեղ, այդ ամենը կատարվեց ճգնաժամի պահին իր քվորումի եղբայրների օգնության շնորհիվ»:[8]

Ինչպես տարիների ընթացքում կրկնել են մարգարեները. «Տիրոջ ամենակարևոր աշխատանքը, որ դուք երբևէ կանեք, կլինի ձեր տան պատերի ներսում»:[9] Մենք շատ բան ունենք անելու առաջիկայում ամրապնդելու ամուսնությունը մի հասարակությունում, որն ավելի ու ավելի է նվազեցնում դրա կարևորությունը և նպատակը: Մենք շատ բան ունենք անելու առաջիկայում մեր երեխաներին ուսուցանելու գործում՝ «աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ» (ՎԿՈՒ 68.28): Մեր խնդիրն է՝ առնվազն օգնել մեր երեխաներին ունենալ սրտի հզոր փոփոխություն կամ դարձ առ Տերը, որի մասին այնքան պերճախոս ասվել է Մորմոնի Գրքում (տես Մոսիա 5.1–12, Ալմա 26): Սփոփող Միության հետ միասին, քահանայության քվորումները կարող են աջակցել ծնողներին և ամուսնական զույգերին, և քվորումները կարող են քահանայության օրհնություններ տալ միայնակ ծնողով ընտանիքներին:

Այո Եղբայրներ, մենք աշխատանք ունենք կատարելու, Ծնորհակալություն ձեր կատարած զոհաբերությունների և բարիքի համար: Շարունակեք այդպես և Տերը կօգնի ձեզ: Երբեմն զուցե չիմանաք, թե ինչ անեք կամ ասեք, պարզապես առաջ գնացեք: Սկսեք գործել և Տերը կապահովի, որ «արդյունավետ դուռ բացվի [ձեզ] համար» (ՎԿՈՒ 118.3): Սկսեք խոսել, և Նա խոստանում է. «Դուք ամոթով չեք մնա մարդկանց առաջ. Քանզի այն նույն ժամին, այո, այն նույն պահին տրվելու է ձեզ, թե ինչ պիտի ասեք» (ՎԿՈՒ 100.5–6): Ճիշտ է, մենք որոշ հարցերում հասարակ ենք և անկատար, սակայն ունենք կատարյալ Վարդապետ, որը կատարյալ Քավություն գործեց, և մենք դիմում ենք Նրա շնորհին և Նրա քահանայությանը: Եթե ապաշխարենք և մաքրենք մեր հոգին, մեզ խոստացվել է, որ կուսուցանվենք և կօժտվենք զորությամբ ի վերուստ (տես ՎԿՈՒ 43.16):

Եկեղեցին, աշխարհը և կանայք փնտրում են այնպիսի տղամարդկանց, ովքեր զարգացնում են իրենց կարողությունները և տաղանդները, ովքեր ցանկանում են աշխատել և զոհաբերություններ կատարել, ովքեր կօգնեն մյուսներին հասնել երջանկության և փրկության: Նրանք կոչ են անում՝ «Վեր կացեք, Աստծո տղամարդիկ»:[10] Աստված, օգնիր մեզ այս գործում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Kay S. Hymowitz, *Manning Up: How the Rise of Women Has Turned Men into Boys* (2011), 16.
2. «Երբ երիտասարդներին հարցնում ես, թե ինչն է իրենց չափահաս դարձնում, գրեթե ոչ ոք չի նշում ամուսնությունը: Նրանց կարծիքները հանգում են աշխատանքին՝ կրթությունն ավարտել, ֆինանսական անկախություն և լրիվ դրույքով աշխատանք ձեռք բերել: Աշխատանքը, կարիերան, ֆինանսական անկախությունն են հանդիսանում այսօրվա ինքնության չափորոշիչները» (Hymowitz, *Manning Up,* 45): Ընդդեմ ամուսնության կարծիքը հատկապես ուժեղ է ազդում կանանց վրա: Լոնդոնի *Times*-ի մշտական թղթակիցը գրել է. «Ոչ ոք, ոչ իմ ընտանիքը, ոչ էլ իմ ուսուցիչները երբեք չեն ասել. «Իհարկե, ցանկալի է լինել մայր և կին նույնպես»: Նրանք այնքան կենտրոնացած են այն գաղափարի շուրջ, որ պետք է հետևել նոր համընդհանուր, ժամանակակից ուղուն, երբ պատմականորեն կանանց սերունդների ամուսնանալու և ընտանիք կազմելու ակնկալիքները միտումնավոր դուրս են մղվում ապագայի հետ կապված իրենց պատկերացումներից» (Eleanor Mills, "Learning to Be Left on the Shelf," *Sunday Times,* Apr. 18, 2010, www.thetimes.co.uk; in Hymowitz, *Manning Up,* 72): 40-ն անց տարիքի մեկ այլ լրագրող չամուսնանալու վերաբերյալ զղջալու մասին գրված իր հոդվածին ի պատասխան նա այսպիսի արձագանքներ էր ստացել. «Ես ցնցված եմ, որ դուք տղամարդու կարիք ունեք», «Բարձրացրեք ձեր ինքնագնահատականը», «Ձեր փոխկախվածության մակարդակը շատ ցածր է», «Եթե իմ դուստրը մեծանա և ձեր կեսի չափ տղամարդ ցանկանա, ես կիմանամ, որ ինչ-որ տեղ նրան սխալ եմ դաստիարակել» (Lori Gottlieb, *Marry Him: The Case for Settling for Mr. Good Enough* [2010], 55):

   Լավ նորությունն այն է, որ հիմնականում մարդիկ, ներառյալ կրթված երիտասարդ չափահասները, չեն տարվում ամուսնության, ընտանիքի դեմ գաղափարախոսությամբ: «Պենսիլվանիայի Համալսարանից մի տնտեսագետի ուսումնասիրության համաձայն, Միացյալ Նահանգներում 2008թ. քոլեջի կրթությամբ սպիտակամորթ կանանց 86 տոկոսը ամուսնացել էին մինչև 40 տարեկանը, եթե համեմատենք քոլեջի չորսամյա կրթություն չունեցողների 88 տոկոսի հետ: Քոլեջի կրթությամբ սպիտակամորթ տղամարդկանց համար թվերը նույնն են՝ 2008թ. նրանց 84 տոկոսն էր ամուսնացել մինչև 40 տարեկանը: Ի միջիայլոց հետազոտությամբ չհիմնավորված մի տարակարծություն կա, որ ամուսնությունը վատ գործարք է կանանց համար: Բայց քոլեջի կրթությամբ սպիտակամորթ կանայք թերևս չեն հավատում դրան: Նրանք հիմնականում մտածում են, որ «ամուսնացած կանայք չամուսնացածներից ավելի երջանիկ են»: . . . Քոլեջի առաջին կուրսեցիների մեծամասնության՝ 70 տոկոսի կարծիքով ընտանիք կազմելը «կարևոր» է կամ «շատ կարևոր» է իրենց ապագայի համար» (Hymowitz, *Manning Up,* 173–74):
3. Philip G. Zimbardo and Nikita Duncan, *The Demise of Guys: Why Boys Are Struggling and What We Can Do about It* (2012), e-book; see the chapter "Behind the Headlines."
4. Barbara Dafoe Whitehead, *Why There Are No Good Men Left: The Romantic Plight of the New Single Woman* (2003), 67.
5. Amanda Dickson, "'Hunger Games' Main Character a Heroine for Our Day," *Deseret News,* Apr. 2, 2012, www.deseretnews.com.
6. Gordon B. Hinckley, "Welfare Responsibilities of the Priesthood Quorums," *Ensign,* Nov. 1977, 86.
7. *Helping Others to Help Themselves: The Story of the Mormon Church Welfare Program* (1945), 4.
8. Ռիչարդ Ս. Էդգլի «Սա ձեղ զանգն է» *Լիահոնա,* մայիս 2009, 54:
9. *Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* (2000), 134.
10. "Rise Up, O Men of God," *Hymns,* no. 323.

Եպիսկոպոս Գարի Ի. Սթիվենսոն
Նախագահող Եպիսկոպոս

Եղեք անվեհեր խիզախության, ուժի և գործի մեջ

Արժանի եղեք ինչպես 2000 պատանի զինվորները՝ լինելով անվեհեր խիզախության մեջ որպես արժանի քահանայություն կրողներ:

Այսօր ես հատկապես օրհնված եմ զգում որպես եպիսկոպոս խոսել երիտասարդ տղամարդկանց համար՝ Ահարոնյան Քահանայություն կրողների, ովքեր հավաքվել են ողջ աշխարհից քահանայության այս ընդհանուր ժողովում: Ես կկիսվեմ ձեզ հետ Մորմոնի Գրքի պատմվածքով, որը նկարագրում է Հելամանին և նրա 2000 պատանի զինվորներին: Այս սուրբ գրությունը ներրմբռնում կտա ձեզ այդ հնադարյան երիտասարդ տղամարդկանց բնավորության վերաբերյալ և կոգեշնչի ձեզ՝ վերջին օրերի երիտասարդ տղամարդիկ: Ես մեջ կբերեմ մի սիրված սուրբ գրության հատված. «Եվ նրանք բոլորը պատանիներ էին, և նրանք անսահման անվեհեր էին խիզախության մեջ, և նաև ուժի և գործունեության մեջ. Բայց ահա դա բոլորը չէր, նրանք տղաներ էին, որոնք հավատարիմ էին բոլոր դեպքերում»:[1] Խիզախություն, ուժ, գործունեություն և ճշմարտություն՝ ինչպիսի հիանալի բնավորության գծեր:

Ես կկամենայի կենտրոնանալ առաջին հատկանիշի վրա, որը նկարագրում է նրանց. «անվեհեր խիզախության մեջ» արտահայտությունը: Իմ կարծիքով սա նկարագրում է այս երիտասարդ տղամարդկանց համոզմունքը խիզախորեն անելու այն, ինչ ճիշտ է, կամ ինչպես Ալման է նկարագրում. «կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում. . . . և բոլոր տեղերում»:[2] 2000 պատանի զինվորները անհաշիվ անգամներ ցույց տվեցին իրենց խիզախությունը: Ձեզանից յուրաքանչյուրը ևս կունենա խիզախություն պահանջող նշանակալի պահեր ձեր կյանքում: Իմ ընկեր Ջոնը կիսվել է ինձ հետ իր կյանքի այդ պահերից մեկով:

Տարիներ առաջ Ջոնը ընդունվել էր Ճապոնիայի մի բարձրակարգ համալսարան: Ողջ աշխարհից ուրիշ շատ բարձրակարգ ուսանողների հետ միասին նա մասնակցելու էր միջազգային ուսանողական մի ծրագրի: Ոմանք ցուցակագրվել էին իրենց հասկացողությունը խորացնելու՝ մշակույթի և լեզվի ասպարեզում, մյուսներն էլ ընդունվել էին՝ համարելով դա որպես սկզբնական կրթություն՝ Ճապոնիայում վերջնական մասնագիտություն ձեռք բերելու և աշխատելու համար, բայց բոլորն էլ թողել էին իրենց տունը՝ օտար երկրում սովորելու համար:

Ջոնի ժամանելուց ոչ շատ անց մի երեկույթի մասին խոսակցություններ տարածվեցին օտարերկրյա ուսանողների մեջ, որը տեղի էր ունենալու մասնավոր շենքի տանիքին: Այդ երեկո Ջոնը և երկու ընկերներ ուղևորվեցին դեպի ազդարարված հասցեն:

Վերելակով բարձրանալով շենքի տանիքը Ջոնը և իր ընկերները բարձրացան միակ նեղ աստիճաններով, որը տանում էր դեպի տանիքի վերնամասը և սկսեցին ծանոթանալ մյուսների հետ: Երբ գիշերը խորացավ մթնոլորտը փոխվեց: Աղմուկը, երաժշտության բարձր ձայնը և ալկոհոլը առատացավ՝ Ջոնի անհարմարավետության զգացումի հետ զուգահեռ: Ապա, հանկարծ, ինչ-որ մեկը սկսեց ուսանողների լայն շրջան կազմել մարիխուանայի ծխախոտ բաժանելու մտադրությամբ: Ջոնը դեմքի դժգոհ արտահայտությամբ իր երկու ընկերներին հայտնեց, որ ժամանակն էր հեռանալու: Գրեթե ծաղրական տոնով նրանցից մեկը պատասխանեց. «Ջոն դա հեշտ է, մենք ուղղակի կկանգնենք շրջանի մեջ և երբ մեր հերթը գա, մենք, ծխելու փոխարեն, այն կփոխանցենք մյուսներին: Այդ ձևով մենք չենք ամաչի բոլորի առջև հեռանալով»: Դա Ջոնի համար հեշտ էր հնչում, բայց ոչ ճիշտ: Նա գիտեր, որ պետք է հայտարարեր իր մտադրությունը և գործեր: Մի րոպեից նա տիրապետեց իր խիզախությանը և ասաց նրանց, որ իրենք կարող էին անել, ինչպես ցանկանում էին, բայց նա հեռանում էր: Ընկերներից մեկը որոշեց մնալ և միացավ շրջանին, մյուսը դժկամորեն հետևեց Ջոնին՝ աստիճաններով ներքև իջնելով՝ վերելակ նստելու համար: Ի մեծ զարմանս նրանց, երբ վերելակի դռները բացվեցին, ճապոնական ոստիկանության սպաները դուրս

թափվեցին, անցան նրանց կողքով և շտապեցին աստիճաններով դեպի վեր՝ տանիքի վերնամասը: Ջոնը և նրա ընկերը վերելակ մտան և հեռացան:

Երբ ոստիկանությունը հայտնվեց աստիճանների վերևնամասում, ուսանողներն արագ իրենց անօրինականթմրանյութով ծխախոտները տանիքից շպրտեցին, որպեսզի չբռնվեին: Սակայն աստիճանները վերահսկողության տակ պահելով՝ սպաները շարք կանգնեցրին բոլորին տանիքին և խնդրեցին, որ յուրաքանչյուր ուսանող առաջ մեկներ երկու ձեռքերը: Ապա սպաները քայլեցին շարքով, ուշադիր հոտոտելով յուրաքանչյուր ուսանողի բթամատերն ու ցուցամատերը: Բոլորը, ովքեր բռնել էին մարիխուանան, անկախ նրանից ծխել էին թե ոչ, հանցավոր ճանաչվեցին և եղան վիթխարի հետևանքներ: Գրեթե առանց բացառության, ուսանողները, ովքեր մնացել էին տանիքի վերնամասում, հեռացվեցին իրենց համապատասխան համալսարաններից և հանցագործության համար դատապարտվողները, մեծ հավանականությամբ, Ճապոնիայից վտարվեցին: Կրթության վերաբերյալ երազանքները, տարիների նախապատրաստությունները և ապագա աշխատանքի հնարավորությունները Ճապոնիայում մի րոպեում կործանվեցին:

Այժմ թույլ տվեք պատմել, թե ինչ տեղի ունեցավ այդ երեք ընկերների հետ: Ընկերը, որը մնաց տանիքին, հեռացվեց Ճապոնիայի իր համալսարանից, որտեղ ընդունվելու համար նա շատ տքնաջան աշխատել էր, և նրանից պահանջվեց տուն վերադառնալ: Ընկերը, որը հեռացել էր երեկույթից՝ հետևելով Ջոնին, ավարտեց համալսարանը Ճապոնիայում և շարունակեց՝ գիտական աստիճաններ ստանալով Միացյալ Նահանգների երկու պատվավոր համալսարաններում: Նրա կարիերան տարավ նրան ետ՝ դեպի Ասիա, որտեղ նա վիթխարի մասնագիտական հաջողություն ունեցավ: Մինչև այսօր նա երախտապարտ է մնում Ջոնի խիզախ օրինակի համար: Ինչ վերաբերում է Ջոնին, նրա կյանքում անհամար հետևանքներ եղան: Նրա ժամանակը Ճապոնիայում այդ տարի հանգեց երջանիկ ամուսնության, որին հաջորդեց երկու որդիների ծնունդը: Նա շատ հաջողակ գործարար է և վերջերս դարձավ Ճապոնիայի համալսարանի դասախոս: Պատկերացրեք, թե որքան տարբեր կլիներ նրա կյանքը, եթե նա խիզախություն չունենար հեռանալու երեկույթից այդ կարևոր երեկո Ճապոնիայում:[3]



Երիտասարդ տղամարդիկ, կլինեն ժամանակներ, երբ դուք ստիպված կլինեք ցույց տալ ձեր արդար խիզախությունը ձեր հասակակիցների աչքի առջև, որի հետևանքով կարող է ձեզ ծաղրեն և ամաչեցնեն: Բացի այդ, ձեր աշխարհում հակառակորդի հետ մարտեր տեղի կունենան նաև լուռ, միայնակ մարտադաշտում՝ էկրանի առջև: Տեխնոլոգիան իր հիմնավոր օգուտներով հանդերձ բերում է մարտահրավերներ, որոնց չեն հանդիպել նախորդ սերունդները: Ազգային վերջին հետազոտությունները գտել են, որ այսօրվա դեռահասները ամեն օր տագնապալի չափով գայթակղության են ենթարկվում ոչ միայն դպրոցներում, այլ նաև եթերային աշխարհում: Այն բացահայտել է, որ դեռահասները, որոնք տեսնում են հարբեցողության և թմրամոլության պատկերներ սոցիալական վեբկայքերում, երեքից չորս անգամ ավելի հավանականություն ունեն օգտագործելու ալկոհոլ կամ թմրանյութեր: Մեկնաբանելով հետազոտությունը ԱՄՆ-ի աշխատակազմի նախկին քարտուղարը նշել է. «Այս տարվա հետազոտությունները ցույց են տվել դեռահասների մի նոր տեսակի հզոր ճնշում՝ համակարգչային ճնշում: Դեռահասների համակարգչային ճնշումը հեռացնում է երեխայի ընկերներին և այն երեխաներին, որոնց հետ նրանք շփվում են: Այն ներխուժում է տուն և երեխայի ննջարանը համացանցի միջոցով»:[4] Արդար խիզախության ցուցադրումը կարող է նույնքան աննշմար լինել, ինչպես մկնիկով շրխկացնել, թե չշրխկացնելը: Միսիոներներին ուսուցանվում է *Քարոզիր Իմ Ավետարանը* գրքում. «Այն, ինչ ընտրում եք մտածել և անել, երբ դուք մենակ եք և դուք հավատացած եք, որ ոչ ոք չի

նայում, ուժեղ չափորոշիչ է ձեր առաքինության համար»:[5] Եղեք խիզախ: Եղեք ուժեղ: Կանգնեք սուրբ տեղերում և մի շարժվեք:[6]

Երիտասարդ տղաներ, ես խոստանում եմ՝ Տերը կզորացնի ձեզ: «Որովհետեւ Աստուած չտուաւ մեզ երկչոտութեան հոգի, այլ զօրութեան»:[7] Նա կպարգևատրի ձեզ ձեր խիզախության և արդար վարքի համար երջանկությամբ և ուրախությամբ: Այդպիսի խիզախությունը առ Հիսուս Քրիստոս և Նրա Քավությունը ձեր հավատքի, ձեր աղոթքների և պատվիրաններին ձեր հնազանդության արդյունքը կլինի:

Նախագահ Ն. Էլդոն Թաններն ասել է. «Երիտասարդ մի տղա դպրոցական տարածքում կարող է բարու համար հզոր ազդեցություն լինել: Երիտասարդ մի տղամարդ ֆուտբոլի թիմում, կամ հանրակացարանում կամ էլ իր գործընկերների մեջ կարող է ապրելով ավետարանով, պատվելով իր քահանայությունը և պաշտպանելով ճիշտը՝ անել անասելի բարիք: Հաճախ դուք կհանդիպեք շատ քննադատության և ծաղրի, նույնիսկ նրանց կողմից, ովքեր հավատում են, ինչպես դուք եք հավատում, չնայած որ նույն մարդիկ կարող է ձեզ հարգեն ճիշտն անելու համար»: Բայց հիշեք, որ անձամբ Փրկչին տանջեցին, ծաղրեցին, վրան թքեցին և, ի վերջո, խաչեցին, որովհետև նա չտատանվեց իր համոզմունքի մեջ: Երբևէ կանգ առե՞լ եք մտածելու, թե ինչ կպատահեր, եթե նա թուլանար և ասեր. «Օ՜հ, ի՞նչ օգուտ» և թողներ իր առաքելությունը: Միթե՞ մենք ուզում ենք լինել դասալիքներ, թե ուզում ենք լինել անվեհեր ծառաներ չնայած աշխարհում գոյություն ունեցող ողջ ընդդիմությանը և չարին: Եկեք խիզախություն ունենանք կանգնել և համարվել Քրիստոսի ճշմարիտ, նվիրված հետևորդներ»:[8]

Ես կոչ եմ անում ձեզ արժանի լինել ինչպես 2000 պատանի զինվորները՝ լինելով անվեհեր խիզախության մեջ որպես արժանի քահանայություն կրողներ: Հիշե՛ք, ինչ որ անում եք, ուր որ գնում եք

և ինչ որ տեսնում եք, կձևավորի ձեզ, թե ով եք դառնալու: Ո՞վ եք ուզում դառնալ: Դառնալ արժանի սարկավագ, արժանի ուսուցիչ, արժանի քահանա: Նպատակ դրեք արժանի լինել՝ մտնելու տաճար այժմ և արժանի լինեք ստանալու ձեր հաջորդ արարողությունը համապատասխան տարիքում և ի վերջո ստանալու Մելքիսեդեկյան Քահանայություն: Սա է արդարակեցության ուղին, որը հրավիրում է աստվածային օգնություն: Տերը նշել է. «Նրա արարողություններում է բացահայտվում աստվածայնության զորությունը»:[9]

Ծնողները, քահանայության առաջնորդները և մարգարեական առաջնահերթությունները, որոնք գտնվում են *Պարտավորություն Աստծո հանդեպ* և *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկներում կառաջնորդեն ձեզ ուղով:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը վերջերս խորհուրդ է տվել.

«Իմաստուն որոշումներ կայացնելու համար քաջություն է հարկավոր, քաջություն՝ ասելու ոչ, քաջություն՝ ասելու այո. . . .

Ես աղերսում եմ ձեզ վճիռ կայացրեք. . . . հենց այժմ, չշեղվել այն ուղուց, որը կտանի դեպի մեր նպատակը՝ հավերժական կյանք մեր Երկնային Հոր հետ»:[10]

Ճիշտ ինչպես 2000 պատանի զինվորներն արձագանքեցին իրենց առաջնորդ Հելամանի ճակատամարտի կոչին և դրևորեցին իրենց անվեհեր խիզախությունը, դուք ևս կարող եք անել նույնը՝ հետևելով ձեր մարգարե առաջնորդի՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի մարտակոչին:

Իմ երիտասարդ Ահարոնյան Քահանայություն կրողներ, եզրափակելով, ես ներկայացնում եմ իմ վկայությունը Հայր Աստծո և Հիսուս Քրիստոսի մասին և Ջոզեֆ Սմիթի խոսքերի վերաբերյալ. «Եղբայրնե՛ր, արդյոք չպե՞տք է մենք շարունակենք այս մեծ գործը: Գնացե՛ք առաջ և ոչ թե ետ: Քաջությո՛ւն, եղբայրնե՛ր և առա՛ջ, առաջ դեպի հաղթանակ»:[11] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ալմա 53.20:
2. Մոսիա 18.9:
3. Հեղինակին պատմած անձնական պատմություն:
4. Joseph A. Califano Jr., founder and chairman emeritus of the National Center on Addiction and Substance Abuse at Columbia University, in a press release regarding the research, casacolumbia.org.
5. *Քարոզիր Իմ Ավետարանը. միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 118:
6. Վարդապետություն և Ուխտեր 87.8:
7. Բ Տիմոթեոս 1.7:
8. N. Eldon Tanner, “For They Loved the Praise of Men More Than the Praise of God,” *Ensign,* Nov. 1975, 74–75.
9. Վարդապետություն և Ուխտեր 84.20:
10. Թոմաս Ս. Մոնսոն, «Ընտրության երեք դասերը», *Լիահոնա,* նոյ. 2010, 68:
11. Վարդապետություն և Ուխտեր 128.22:

Երեց Էնթոնի Դ. Փերքինս
Յոթանասունից

Զգուշացեք ձեզ համար

Մնացեք քահանայության արահետի վրա՝ խորացնելով ձեր դարձի գալը և ամրացնելով ձեր ընտանիքը: . . . Խուսափեք ողբերգությունից, հետևելով «Զգուշացեք» նշաններին, որոնք դրված են մեր ճանապարհին Աստծո և մարգարեների կողմից:

Երբ ես երիտասարդ տղա էի, մեր ընտանիքով ճամփորդում էինք Ամերիկայի Ռոքիի լեռներով, որպեսզի այցելեինք տատիկին ու պապիկին: Ճանապարհը սկսվում էր հարթավայրերով՝ բարձրանալով զառիվեր սոճիներով ծածկված լանջերով, և վերջում դուրս գալով մի պուրակ և բարձր լեռան մարգագետինները, որտեղ մենք կարող էինք տեսնել գրեթե անվերջանալի հեռուները:

Սակայն այս գեղեցիկ ճանապարհը ամենևին էլ ապահով չէր: Ճանապարհի մեծ մասը կառուցված էր զառիթափ լեռների եզրերին: Ճանապարհորդներին պաշտպանելու համար ճանապարհը կառուցողները կառուցել էին պաշտպանող բազրիքներ և տեղադրել էին նշաններ, որոնց վրա գրված էին. «Զգուշացեք. ցած ընկնող քարեր»: Մենք նկատել ենք այս նախազգուշացումների համար միանգամայն բավարար պատճառներ: Քարերն ու գլաժայռերը սփռված էին գետափին ողջ ճանապարհով մեկ: Ժամանակ առ ժամանակ մենք կարող էինք տեսնել ջախջախված մեքենաներ կիրճի ստորոտում, որտեղ մեքենավարը ողբերգական ավարտ էր ունեցել, ով չէր հետևել նախազգուշացմանը:

Քահանայության երդումը և ուխտը

Եղբայրներ, ձեզանից յուրաքանչյուրը մտել է, կամ շուտով կմտնի Մելքիսեդեկյան Քահանայության երդման և ուխտի մեջ:[1] Այդ ուխտը ներառում է փառահեղ ճամփորդություն, որը սկսվում է փոքրագույն և բարձրագույն քահանայությունները ստանալուց, զարգանում է մեր կոչումները մեծարելու միջոցով և ընդմիշտ ձգվում է վեր, դեպի Աստծո մեծագույն օրհնությունները, մինչև մենք ստանանք «այն ամենն, ինչ Հայրն ունի»:[2]

Այդ երկնային ճանապարհի իմաստուն նախագծողը կառուցել է նախազգուշացնող նշաններ մեր ճամփորդության համար: Քահանայության երդումը և ուխտը ներառում են հոգին քննող այս նախազգուշացումը. «Այժմ ես ձեզ պատվիրան եմ տալիս, որ զգուշանաք ձեր համար»:[3]

Ինչո՞ւ է Աստված պատվիրել մեզ զգուշանալ: Նա գիտի, որ Սատանան իսկապես գոյություն ունի,[4] ով փնտրում է քաշել մեր հոգիները վար՝ դեպի թշվառության անդունդը:[5] Աստված նաև գիտի, որ քահանայություն կրողների մեջ թաքնված է «բնական մարդը»,[6] «ենթակա հեռանալուն»:[7] Այսպիսով, մարգարեները հրավիրում են մեզ «հանել հին մարդուն»[8] և «հագնել Քրիստոսին»[9] հավատքի, ապաշխարության, փրկող արարողությունների և ամեն օր ավետարանով ապրելու միջոցով:

Խուսափել ողբերգությունից

Քահանայության արահետով ընթանալիս ցանկացած տղա կամ տղամարդ կարող է անհաջողության մատնվել, եթե նա զգուշություն չցուցաբերի: Ձեզ երբևիցե ցնցել կամ տխրեցրե՞լ է աչքի ընկնող երիտասարդի, վերջերս վերադարձած միսիոների, հարգված քահանայության ղեկավարի կամ ընտանիքի սիրելի անդամի անսպասելի անկումը:

Հին Կտակարանում Դավիթի պատմությունը քահանայության զորությունը վատնելու ողբերգական օրինակ է: Չնայած, որ նա պատանի հասակում պարտության մատնեց Գողիաթին և արդար կյանքով ապրեց տասնյակ տարիներ,[10] այս մարգարե թագավորը, այնուամենայնիվ, հոգևոր առումով խոցելի էր: Այդ վճռական պահին, երբ իր տանիքից նա տեսավ գեղեցիկ Բերսաբեին լվացվելիս, բարոյականության ոչ մի պահապան կանգնած չէր նրա կողքին, որ աղաղակեր. «Զգուշացիր, Դավիթ, դու հիմարություն ես անում»: Իր համար չզգուշանալով[11] և չգործելով համաձայն Հոգու հուշումների՝[12] նա կորցրեց իր հավերժական ընտանիքը:[13]

Եղբայրներ, եթե նույնիսկ հզոր Դավիթը կարող է ետ մղվել վեհացման ճանապարհից, ինչպե՞ս կարող ենք մենք խուսափել նրա ճակատագրին արժանանալուց:

Անձամբ խորապես դարձի գալը և ամուր ընտանեկան հարաբերությունները՝ որպես երկու պաշտպանող սկզբունքներ օգնում են մեզ մնալ երկնային ճանապարհին:

Սա իմանալով Սատանան խոչընդոտներ է դնում քահանայության զարգացման մեր ճանապարհին, որ վնասի մեր դարձի գալուն և

կործանի մեր ընտանիքները: Բարեբախտաբար, Հիսուս Քրիստոսը և Նրա մարգարեները զգուշացնող նշաններ են դրել մեր ճանապարհին: Դրանք շարունակաբար զգուշացնում են մեզ, որ տեղի չտանք դարձի գալուց հետ մղող հպարտությանը[14] և ընտանիքներ կործանող մեղքերին, ինչպիսին են՝ զայրույթը, ագահությունը և հեշտասիրությունը:

Շատ տարիներ առաջ Մովսեսը խորհուրդ է տվել. «Զգույշ կաց, միգուցէ մոռանաս Տիրոջը»:[15] Մեր զբաղված և զվարճալի ժամանցներով լի կյանքում մարդիկ շարունակում են արագ «մոռանալ Տիրոջը . . . , անօրինություն անում, և մոլորեցվում այն չար մեկի կողմից»:[16]

Խորացնել դարձի գալը և ամրացնել ընտանիքը

Գայթակղության գլաքարերով շրջապատված քահանայության արահետում ապահով մնալու համար ես կհիշեցնեմ մեզ վեց հիմնական սկզբունքներ, որոնք խորացնում են դարձի գալը և ամրացնում են ընտանիքը:

Առաջինը, աղոթելը միշտ բացում է դուռը աստվածային օգնության համար, որ «հաղթենք Սատանային»:[17] Ամեն անգամ, երբ Հիսուսը նախազգուշացնում է քահանայություն կրողներին «զգուշանալ, քանզի Սատանան ցանկանում է մղեղի պես մաղել [ձեզ]», Նա նկարագրում է աղոթքը որպես գայթակղությանը ընդդիմանալու գործողություն:[18] Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է. «Եթե մեզանից որևէ մեկը դանդաղ է եղել ականջ դնելու միշտ աղոթելու խորհրդին, չկա ավելի լավ պահ, քան հիմա սկսելը: . . . Մարդը երբեք ավելի բարձրում չի կանգնում, քան երբ նա ծնկի է իջնում»:[19]

Երկրորդը, հնադարյան և ժամանակակից սուրբ գրություններն ուսումնասիրելը կապում է մեզ Աստծո հետ: Տերը զգուշացրել է Եկեղեցու անդամներին, որ «զգուշանան, թե ինչպես են պահում [մարգարեներին], չլինի թե թեթև բան համարեն, և այդպիսով, դատապարտության տակ ընկնեն և սայթաքեն և ընկնեն»:[20] Որպեսզի մենք խուսափենք այս լուրջ մեղադրանքից, մենք պետք է ջանասիրաբար կարդանք սուրբ գրությունները, ինչպես նաև Եկեղեցու ամսագրերն ու WEB-կայքերը, որոնք մեզ հնարավորություն են տալիս «մանրամասնորեն և անհատապես խորհուրդներ ստանալ [Տիրոջ] ընտրյալ մարգարեի միջոցով»:[21]

Երրորդը, արարողություններին արժանիորեն մասնակցելը նախապատրաստում է մեզ, որ վերցնենք «Սուրբ Հոգին որպես [մեր] ուղեկից»:[22] Երբ Տերը զգուշացրեց. «Զգուշացեք, չլինի թե խաբվեք», Նա խոստացավ, որ այն մեզ չի սպառնա, եթե մենք «հետամուտ [լինենք Հոգու] լավագույն պարգևներին»:[23] Ամեն շաբաթ արժանիորեն հաղորդություն ընդունելը որակավորում է անդամներին, որ «Նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան»:[24] Տաճարային երկրպագության ժամանակ մենք կարող ենք «ստանալ Սուրբ Հոգու լիությունը»:[25]

Չորրորդը, անկեղծ սեր ցուցաբերելը անձնական դարձի և ընտանեկան հարաբերությունների սիրտն է: Բենիամին թագավորն ասել է. «Զգուշացեք, չլինի թե ձեր մեջ հակառակություններ բարձրանան»:[26] Երբեք մի մոռացեք, որ Սատանան «հակառակության հայրն է»[27] և փնտրում է, որ ընտանիքի անդամները «կռվեն ու վիճեն»:[28] Եղբայրներ, եթե մենք զգացմունքներով, բառերով կամ ֆիզիկապես ճնշում ենք մեր ընտանիքի որևէ անդամի, ապա մենք կորցնում ենք քահանայության զորությունը:[29] Ընտրեք վերահսկել զայրույթը: Ընտանիքի անդամները պետք է մեր բերանից լսեն օրհնություններ, ոչ թե՝ հայհոյանքներ: Մենք պետք է ներգործենք ուրիշների վրա միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ, հեզությամբ, անկեղծ սիրով, բարությամբ և գթությամբ:[30]

Հինգերորդը, տասանորդի օրենքին հնազանդվելը հավատքի և ընտանեկան միասնության համար առանցքային տարր է հանդիսանում: Քանի որ Սատանան օգտագործում է ագահությունը և ունեցվածքների ձգտելը, որպեսզի ընտանիքներին հեռացնի երկինք տանող ճանապարհից, Հիսուսը խորհուրդ է տվել. «Զգույշ կացեք ագահությունից»:[31] Ագահությունը զսպվում է, երբ մենք պլանավորում ենք մեր եկամուտները, վճարում ենք ազնիվ տասանորդ և առատաձեռն ծոմի նվիրատվություն, պլանավորում ենք մեր անհրաժեշտ ծախսերը, խուսափում ենք ավելորդ պարտքերից, խնայում ենք հետագա կարիքների համար և դառնում նյութապես ինքնապահովող: Աստված մեզ խոստում է տվել. «Առաջ Աստծո արքայությունը և նրա արդարությունը խնդրեցեք. և այդ ամենը կտրվի ձեզ»:[32]

Վեցերորդը, մաքրաբարոյության օրենքով լիարժեք ապրելու արդյունքում մենք վստահություն ենք ձեռք բերում, որ կկանգնենք «Աստծո ներկայության մեջ»՝ ունենալով Սուրբ Հոգին որպես մեր «մշտական ընկեր»:[33] Սատանան կատաղի հարձակում է գործում առաքինության և ամուսնության վրա անպարկեշտության հեղեղով: Երբ Տերը զգուշացրեց շնացողներին, որ «զգուշանան և անհապաղ ապաշխարեն», Նրա սահմանումը տարածվում էր շնության ֆիզիկական ակտից այն կողմ գտնվող հեշտասիրության մտքերի վրա, որ նախորդում են դրան:[34] Ժամանակակից մարգարեները և առաքյալները հաճախ և պարզ ձևով խոսել են պոռնոգրաֆիայի անվերահսկելի աճի մասին: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանել է. «[Պոռնոգրաֆիան] նման է կատաղի մրրկի, որը կործանում է անհատներին և ընտանիքները, ամբողջությամբ խորտակելով այն, ինչը մի ժամանակ եղել է բարերար և գեղեցիկ: . . . Ժամանակն է, որ մեզանից ցանկացածը, ով ներգրավված է նման բաներում, դուրս քաշի իրեն մեղքից»:[35] Եթե դուք գայթակղվել եք խախտել մաքրաբարոյության օրենքը որևէ ձևով, հետևեք Եգիպտոսի Հովսեփի օրինակին, որ «փախավ դուրս գնաց»:[36]

Այս վեց հիմնական սկզբունքներն օգնում են քահանայություն կրողներին ապահովությամբ շարունակ վեր սլանալ երկնային ճանապարհով՝ լինելով հոգևորապես պաշտպանված անձամբ դարձի գալով

և ընտանեկան հարաբերություններով: Երիտասարդ տղամարդիկ, այս սկզբունքներին հնազանդվելը կնախապատրաստի ձեզ տաճարային ուխտերին, լիաժամկետ միսիա ծառայելուն և հավերժական ամուսնությանը: Մամուսիններ և հայրեր, այս սկզբունքներով ապրելը կորակավորի ձեզ ընտանիքում արդարությամբ նախագահելուն, ծառայելով որպես ձեր ընտանիքի հոգևոր ղեկավար ձեր կնոջ հետ միասին՝ որպես հավասար զուգընկեր:[37] Քահանայության ուղին ուրախությամբ լի ճամփորդություն է:

Մնալ քահանայության արահետի վրա

Վերադառնալով որպես երիտասարդ տղամարդ իմ ունեցած փորձառություններին, ես հիշում եմ մի առանձնակի դեպք, երբ մենք անցնում էինք Ռոքիի լեռներով: Այն բանից հետո, երբ մենք անցանք «Զգուշացեք. ընկնող քարեր» նշանի մոտով, իմ հայրը նկատեց գլաքարեր և փոքր քարեր, որ թափված էին ճանապարհի վրա մեր առջև: Նա անմիջապես դանդաղեցրեց մեքենայի ընթացքը, գրեթե կանգ առնելով, երբ մի բասկետբոլի գնդակի չափ քար անցավ մեր մոտով: Հայրս նախքան շարունակելը սպասեց, մինչև քարերի հոսքը դադարեց: Իմ հոր մշտական զգուշության և անհապաղ կատարվող գործողությունների շնորհիվ մեր ընտանիքը միշտ ապահով հասնում էր իր վերջնական հանգրվանին:

Եղբայրներ, Սատանան փնտրում է «կործանել մարդկանց հոգիները»:[38] Եթե ձեր հոգին դանդաղորեն մոտենում է հոգևոր ժայռաքարափի եզրին, անմիջապես կանգ առեք նախքան ընկնելը և վերադարձեք ճիշտ ճանապարհի վրա:[39] Եթե դուք զգում եք, որ ձեր հոգին վնասված պառկած է ժայռաքարափի ստորոտում, փոխանակ լիներ վերևում՝ քահանայության արահետի վրա, քանի որ դուք անտեսել եք «Զգուշացեք» նշանները և մեղք եք գործել, ես վկայում եմ, որ անկեղծ ապաշխարության և Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության զորության միջոցով դուք կարող եք բարձրանալ և վերադառնալ Աստծո երկնային ճանապարհի վրա:[40]

Հիսուսը սովորեցրել է. «Զգուշացեք . . . կեղծավորությունից»:[41] Եթե դուք արժանի չեք քահանայություն կիրառել, խնդրում եմ, հանդիպեք ձեր եպիսկոպոսի հետ, ով կարող է օգնել ձեզ ապաշխարել: Քաջ եղեք, քանի որ չնայած Փրկիչը հաստատում է, ասելով «Զգուշացեք, և խուսափեք մեղքից»,[42] Նա նաև խոստանում է. «Ես՝ Տերս, ներում եմ ձեզ: . . . Գնացեք ձեր ճանապարհով և այլևս մի մեղանչեք»:[43]

Ես հրավիրում եմ յուրաքանչյուր տղայի և տղամարդու մնալ քահանայության արահետի վրա՝ խորացնելով ձեր դարձի գալը և ամրացնելով ձեր ընտանիքը: Աղոթքները, սուրբ գրությունները և արարողությունները խորացնում են դարձի գալը: Սերը, տասանորդը և մաքրաբարոյությունը ամրացնում են ընտանիքը: Խուսափեք ողբերգությունից, հետևելով «Զգուշացեք» նշաններին, որոնք դրված են մեր ճանապարհին Աստծո և մարգարեների կողմից: Զգտեք հետևել Հիսուս Քրիստոսի կատարյալ օրինակին, ով «կրեց զայթակղություններ, սակայն ուշք չդարձրեց դրանց»:[44]

Ես խոստանում եմ, որ եթե մարդիկ պահեն քահանայության ուխտը և «զգուշանաք ձեր համար»,[45] մենք և մեր ընտանիքները կարող ենք վստահ լինել, որ ապահով և ուրախ կհասնենք մեր վեհացման հանգրվանին երկնային արքայության մեջ: Ես սա վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.33–44:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.38:
3. Վարդապետություն և Ուխտեր 84.43:
4. Տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.16, տես նաև Մովսես 1.12–22:
5. Տես Հելաման 5.12, տես նաև 2 Նեփի 1.13, Հելաման 7.16:
6. Մոսիա 3.19, տես նաև Ա Կորնթացիս Բ.14:
7. "Come, Thou Fount of Every Blessing," *Hymns* (1948), no. 70.
8. Տես Կողոսացիս Գ.8–10, տես նաև Եփեսացիս Դ. 22–24:
9. Գաղատացիս Գ. 27, նաև Հռովմայեցիս 13.14:
10. Տես Ա Թագավորաց ԺԳ.14, ԺԷ.45–47:
11. Տես Բ Թագավորաց 11.1–17:
12. «Երբ դուք մեծ սխալի առաջ կանգնեք, Սուրբ Հոգին ձեզ կնախազգուշացնի դրա մասին» (Բոյդ Ք. Փաքեր, «Խորհուրդ երիտասարդությանը», *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 18):
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 132.39, տես նաև Սուրբ Գրությունների ուղեցույց, «Դավիթ»:
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 23.1, 25.14, 38.39, տես նաև Ezra Taft Benson, "Beware of Pride," *Ensign,* May 1989, 4–7:
15. Երկրորդ Օրինաց Զ.12, տես նաև Երկրորդ Օրինաց Ը.11–19:
16. Ալմա 46.8:
17. Վարդապետություն և Ուխտեր 10.5:
18. Տես Վարդապետություն և Ուխտեր 52.12–15, տես նաև Ղուկաս ԻԲ.31–32, Ալմա 37.15–17, 3 Նեփի 18.18–19:
19. Thomas S. Monson, "Come unto Him in Prayer and Faith," *Liahona,* Mar. 2009, 4.
20. Վարդապետություն և Ուխտեր 90.5, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 41.1,12:
21. Gordon B. Hinckley, "Faith: The Essence of True Religion," *Ensign,* Nov. 1981, 5.
22. Վարդապետություն և Ուխտեր 45.57:
23. Վարդապետություն և Ուխտեր 46.8, տես նաև Եփեսացիս Դ.14, Վարդապետություն և Ուխտեր 52.14–16, Կողոսացիս Բ.8:
24. Մորոնի 4.3, Վարդապետություն և Ուխտեր 20.77, տես նաև 3 Նեփի 18.1–11:
25. Վարդապետություն և Ուխտեր 109.15:
26. Մոսիա 2.32:
27. Տես 3 Նեփի 11.29–30:
28. Մոսիա 4.14:
29. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.36–37; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 63.61–63:
30. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.41–45:
31. Ղուկաս ԺԲ.15, Վարդապետություն և Ուխտեր 38.39:
32. Մատթեոս Զ.33, տես նաև 3 Նեփի 13.33:
33. Վարդապետություն և Ուխտեր 121.45–46, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 67.11, Մովսես 1.11:
34. Տես Վարդապետություն և Ուխտեր 63.14–16, տես նաև Մատթեոս Ե.27–28, 3 Նեփի 12.27–30:
35. Gordon B. Hinckley, "A Tragic Evil among Us," *Liahona,* Nov. 2004, 59, 62; see also Dallin H. Oaks, "Pornography," *Liahona,* May 2005, 87–90; Jeffrey R. Holland, "Place No More for the Enemy of My Soul," *Liahona,* May 2010, 44–46.
36. Ծննդոց ԼԹ.12:
37. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 2.3:
38. Վարդապետություն և Ուխտեր 10.27, տես նաև Ա Պետրոս Ե.8:
39. Տես Վարդապետություն և Ուխտեր 3.9–10, Ա Կորնթացիս Ժ.12–13, Բ Պետրոս Գ.17:
40. Տես Ալմա 13.27–29, Վարդապետություն և Ուխտեր 109.21:
41. Ղուկաս ԺԲ.1, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 50.6–9:
42. Վարդապետություն և Ուխտեր 82.2:
43. Վարդապետություն և Ուխտեր 82.1, 7:
44. Վարդապետություն և Ուխտեր 20. 22, տես նաև Եբրայեցիս Բ.17–18, Դ.14–16:
45. Վարդապետություն և Ուխտեր 84.43, տես նաև Երկրորդ Օրինաց Դ.9, Մոսիա 4. 29–30:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Քահանայության ուրախությունը

Եկեք ընդունենք և հասկանանք քահանայության հրաշքն ու արտոնությունը: Եկեք ընդունենք և սիրենք պատասխանատվությունները, որ տրվել են մեզ կատարելու:

Թռչելու ուրախությունը

Շատ տարիներ առաջ, օդանավի հրամանատար մի քանի ընկերներով մենք որոշեցինք կյանքի կոչել պատանեկան երազանքը և վերանորոգել մի հնագույն օդանավ: Միասին մենք գնեցինք հնամաշ 1938թ. Փայփեր Քաբ սավառնակ և սկսեցինք աշխատել, վերականգնելով նրա նախնական տեսքը: Մենք սիրով էինք կատարում այդ աշխատանքը: Դա հատուկ նշանակություն ուներ ինձ համար, որովհետև երիտասարդ տարիներին ես սովորել էի թռչել նմանատիպ սավառնակով:

Այդ սավառնակն առաջին անգամ կառուցվել էր Ռայթ եղբայրների կատարած առաջին թռիչքից 35 տարի անց: Այդ մասին մտածելիս ինձ շատ ծեր եմ զգում:

Շարժիչը էլեկտրական մեկնարկիչ չուներ, և օդաչուի խցիկից շարժիչը գործի դնելու համար ինչ-որ մեկը պետք է ուժեղ պտտեր ինքնաթիռի պտուտակը, մինչև որ շարժիչը ինքնուրույն կսկսեր աշխատել: Ամեն անգամ շարժիչը գործի դնելը ոգևորություն և քաջություն ներշնչող պահ էր:

Օդ բարձրանալուն պես պարզ դարձավ, որ Փայփեր Քաբը ստեղծված չէր արագության համար: Իրականում, երբ ուժեղ քամին հանդիպակած էր փչում, թվում էր մենք ամենևին չէինք շարժվում: Ես հիշում եմ, որ Գերմանիայում իմ դեռահաս որդու հետ միասին մայրուղու վրայով թռչում էինք և այնքան դանդաղ, որ մեքենաները ներքևում մեզանից արագ էին գնում:

Բայց ես, այնքան շատ էի սիրում այդ փոքր օդանավը: Կատարելապես զգում ես թռիչքի հրաշքը և գեղեկությունը: Կարող ես լսել, զգալ՝ զգալ հոտը, համը, և հասկանալ, թե ինչ է իրականում թռչելը: Ռայթ եղբայրներն այսպես են դա ներկայացրել. «Ոչինչ չի կարող համեմատվել օդաչուների վայելքին, երբ նրանք գնում են օդի միջով հսկա սպիտակ թևերի վրա»:[1]

Ի տարբերություն դրա, այս տարվա սկզբին ես արտոնություն ունեցա թռչելու բարդ F-18 ռեակտիվ կործանիչով՝ Միացյալ Նահանգների աշխարհահռչակ Բլյու Էնջլս ռազմածովային ցուցադրական թռիչքի թիմի հետ: Դա նման էր ետ դեպի հիշողություն կատարված թռիչքի, քանի որ ճիշտ 50 տարի առաջ, նույն օրը ես ավարտեցի ռազմաօդային կործանիչի օդաչուի իմ ուսումնավարժական դասընթացը:

F-18-ով թռիչքն իհարկե լիովին տարբերվում էր Փայփեր Քաբով թռիչքից: Դա ինձ ցուցադրեց թռիչքի ավելի դինամիկ գեղեցկությունը: Այդ ժամանակ, կարծես, ավելի կատարյալ ձևով են կիրառվում աերոդինամիկայի օրենքները: Ինչևէ, Բլյու Էնջլսների հետ թռիչքը նաև անմիջապես հիշեցրեց ինձ, որ ռեակտիվ կործանիչի օդաչու լինելը երիտասարդ մարդու գործ է: Կրկին մեջբերեմ Ռայթ եղբայրների խոսքերը. «Թռիչքի զգացողությունը, ավելի քան որևէ այլ բան, կատարյալ խաղաղություն է, միախառնված հուզմունքի հետ, որն առավելագույնս լարում է բոլոր նյարդերը»:[2] Նաև Բլյու Էնջլսների հետ թռիչքը լիովին այլ տեսնակյունից ցույց տվեց, որ «հրեշտակները» քո շուրջն են և բարձրացնում են քեզ:

Եթե ինձ հարցնեիք, թե այդ երկու թռիչքներից որն եմ ավելի շատ վայելել, չեմ կարող ասել: Ակնհայտորեն դրանք շատ տարբեր էին, եթե չասեմ ավելին: Բայց այնուամենայնիվ, շատ առումներով նման էին:

Եվ Փայփեր Քաբում, և F-18-ում ես զգացի թռիչքի ոգևորությունը, գեղեցկությունը և ուրախությունը: Երկուսում էլ ես հասկացա բանաստեղծի խոսքերը, որ ասում է՝ «երկրի անբարեհաճ կապերը [բաց թող] և [պարիր] երկնքում արծաթե ծիծաղկոտ թևերով»:[3]

Նույն քահանայությունն ամենուր

Այժմ, կարող եք հարցնել, թե ի՞նչ կապ ունեն այդ երկու լիովին իրարից տարբեր թռիչքները մեր այսօրվա հավաքի հետ, քահանայության հետ, որ արտոնություն ունենք կրելու կամ քահանայական ծառայության հետ, որ մենք բոլորս այդքան շատ սիրում ենք:

Եղբայրներ, քահանայական ծառայության մեջ մեր անհատական փորձառությունները կարող են լինել բավականին տարբեր: Կարողենք

ասել, ձեզանից ոմանք թռչում են F-18 կործանիչով, մինչ մյուսները թռչում են Փայփեր Քաբս սավառնակներով: Ոմանք ապրում են ծխերում և ցցերում, որտեղ ամեն մի պաշտոն, քահանայապետերի խմբի օգնականից մինչև սարկավագների քվորումի քարտուղար, զբաղեցնում են ակտիվ քահանայություն կրողներ: Դուք արտոնություն ունեք մասնակցելու ծխի կազմակերպությունում, որտեղ բոլոր պաշտոնները զբաղեցված են:

Ոմանք էլ ապրում են աշխարհի այն մասերում, որտեղ կան քիչ թվով Եկեղեցու անդամներ և քահանայություն կրողներ: Թերևս ձեզ զգաք միայնակ և բոլոր գործերը կատարելու ծանրության տակ: Ձեր դեպքում քահանայության ծառայության «շարժիչը» գործի դնելու համար գուցե շատ ձեռքերի ներգրավվածության կարիքն ունենաք: Երբեմն անգամ կարող է թվալ, թե ձեր ճյուղը կամ ծուխը ամենևին էլ առաջ չի շարժվում:

Ինչևէ, կարևոր չէ թե ինչպիսին են ձեր պատասխանատվությունները կամ հանգամանքները, դուք և ես գիտենք, որ միշտ մի յուրահատուկ ուրախություն է բխում քահանայության նվիրյալ ծառայությունից:

Ես միշտ սիրել եմ թռչել, լինի դա սավառնակով, կործանիչով, թե մեկ այլ ինքնաթիռով: Սավառնակով թռչելիս ես չեմ բողոքել ցածր արագությունից, իսկ F-18-ով թռչելիս ես չեմ տրտնջացել, երբ օդային հնարքների շարքն անողոքաբար բացահայտում էր իմ առաջացած տարիքը:

Այո, միշտ կա ինչ-որ անկատար բան ամեն մի իրավիճակում: Այո, հեշտ է գտնել դժգոհելու պատճառ:

Բայց, եղբայրներ, մենք կրողներն ենք Սուրբ Քահանայության՝ ըստ Աստծո Որդու կարգի: Մեզ բոլորիս ձեռնադրել են, և մենք ստացել ենք Աստծո քահանայությունը: Մեզ տրվել է իշխանություն և պատասխանատվություն գործելու Նրա անունով որպես Նրա ծառաներ Երկրի վրա: Մեծ ծխում, թե փոքր ճյուղում, մենք կոչված ենք ծառայելու, օրհնելու և բոլոր բաներում գործելու հօգուտ ամեն մեկի և ամեն ինչի, որ վստահվել է մեր խնամքին: Ուրիշ ի՞նչը կարող է ավելի մեծ ուրախություն և ոգևորություն պարգևել:

Եկեք հասկանանք, գնահատենք և զգանք քահանայական ծառայության ուրախությունը:

Քահանայության ուրախությունը

Իմ սերը թռիչքի հանդեպ լիովին ազդել է իմ կյանքի ուղու վրա: Բայց որքան էլ օդաչուի իմ փորձառությունը ոգևորիչ և երանելի լիներ, որպես այս Եկեղեցու անդամ իմ փորձառությունը եղել է ավելի խորիմաստ, ավելի ուրախ և ավելի կարևոր: Խորասուզվելով Եկեղեցու ծառայության մեջ ես զգացել եմ Աստծո ամենազոր ուժը և Նրա գորովագութ ողորմությունները:

Որպես օդաչու ես դիպչել եմ երկնքին, իսկ որպես Եկեղեցու անդամ ես զգացել եմ երկնքի գրկախառնումը:

Երբեմն ես կարոտում եմ օդաչուական խցիկը, բայց Եկեղեցու իմ եղբայրների և քույրերի հետ ծառայելը հեշտությամբ փարատում է այդ կարոտը: Ի վիճակի լինելով զգալ վեհ խաղաղությունն ու ուրախությունը, որ աճում են այս մեծ գործի փոքր մասը լինելու շնորհիվ, ես չեմ ուզում կարոտել ոչինչ աշխարհում:

Այսօր մենք հավաքվել ենք որպես քահանայության մեծ խումբ: Մեր սրբազան ուրախությունն ու արտոնությունն է՝ ծառայել Տիրոջը և մեր ընկերներին, մեր մեջ եղած լավագույնը տրամադրել ազնվազարմ գործին, որն է՝ բարձրացնել մյուսներին և կառուցել Աստծո թագավորությունը:

Մենք գիտենք և հասկանում ենք, որ քահանայությունը Աստծո հավերժական զորությունն ու իշխանությունն է: Մենք կարող ենք առանց դժվարության անգիր ասել այս սահմանումը: Ինչևէ, արդյո՞ք մենք իրոք հասկանում ենք այս խոսքերի նշանակությունը: Թույլ տվեք կրկնել՝ *Քահանայությունն Աստծո հավերժական զորությունն ու իշխանությունն է*:

Մտածեք այդ մասին: Քահանայության միջոցով Աստված ստեղծել և կառավարում է երկինքն ու երկիրը:

Այդ զորության միջոցով Նա փրկագնում և վեհացնում է Իր զավակներին, իրականացնելով «մարդու անմահությունը և հավերժական կյանքը»:[4]

Ինչպես Մարգարե Ջոզեֆ Սմիթն է բացատրել, քահանայությունը «անցուղի է, որի միջոցով Ամենազորը սկսեց հայտնել Իր փառքն այս երկրի ստեղծման սկզբին, և որի միջոցով նա շարունակում է իրեն հայտնի դարձնել մարդկանց զավակներին մինչև ներկա ժամանակը, և որի միջոցով նա իր նպատակները հայտնի կդարձնի մինչև

ժամանակների վերջը»:[5]

Մեր ամենազոր Երկնային Հայրը քահանայության իշխանությունը վստահել է մեզ՝ մահկանացու էակներիս, ովքեր ըստ էության թերի են և անկատար: Նա մեզ շնորհում է Իր անունից գործելու իշխանությունը՝ ի փրկություն Իր զավակների: Այս մեծ զորությամբ մենք լիազորված ենք քարոզելու ավետարանը, սպասավորելու փրկության արարողությունները, օգնելու կառուցել Աստծո արքայությունը երկրի վրա, օրհնելու և ծառայելու մեր ընտանիքներին և ընկերներին:

Մատչելի բոլորին

Մենք սուրբ քահանայություն ենք կրում:

Քահանայությունը կամ դրա որևէ պատասխանատվություն չենք կարող գնել կամ պատվիրել: Քահանայության զորության օգտագործման վրա հնարավոր չէ ազդել, համոզել ու հարկադրել՝ պաշտոնով, հարստությամբ կամ ազդեցիկ դիրքով: Դա հոգևոր ուժ է, որը գործում է երկնային օրենքով: Այն գալիս է մեր բոլորի հզոր Երկնային Հորից: Դրա զորությունը կարող է ղեկավարվել և ուղղորդվել միայն արդարության սկզբունքներով,[6] ոչ թե ինքնագոհությամբ:

Քրիստոսը երկրի վրա ողջ ճշմարիտ քահանայության իշխանության և զորության աղբյուրն է:[7] Սա Նրա աշխատանքն է, որում մենք արտոնված ենք օգնելու. «Եվ ոչ ոք չի կարող օգնել այս գործում, եթե նա չլինի խոնարհ և սիրով լի, ունենալով հավատք, հույս և գթություն, ժուժկալ լինելով բոլոր բաներում, ինչ էլ որ վստահված լինի նրա խնամքին»:[8]

Մենք չենք գործում անձնական շահով, այլ փոխարենը մենք ձգտում ենք ծառայել և բարձրացնել մյուսներին: Մենք ղեկավարում ենք ոչ թե հարկադրանքով, այլ «համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով»:[9]

Ամենազոր Աստծո քահանայությունը հասու է արժանավոր տղամարդկանց, որտեղ էլ նրանք լինեն, անկախ իրենց ծագումից, որքան էլ որ համեստ լինեն նրանց պայմանները, լինեն երկրագնդի վրա ամենամոտ, թե ամենահեռու վայրում: Այն մատչելի է առանց փողի կամ աշխարհիկ վճարի: Ինչպես որ հնում մարգարե Եսայիան է ասել՝ *ամեն ոք* ով ծարավ է, եկեք ջրերի մոտ, և փող հարկավոր չէ գալու և ուտելու համար:[10]

Մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հավերժական և անսահման Քավության շնորհիվ Աստծո քահանայությունը կարող է հասու լինել անգամ, եթե դուք սայթաքել եք կամ անարժան եք եղել անցյալում: Հոգեպես զտող և մաքրող ապաշխարության գործընթացի շնորհիվ դուք կարող եք «վեր կենալ և շողալ»:[11] Մեր Փրկչի և Քավիչի անսահման, ներող սիրո շնորհիվ, դուք կարող եք բարձրացնել ձեր աչքերը, դառնալ մաքուր և արժանի, զարգանալ, դառնալով Աստծո արդար և ազնվազարմ որդիները՝ Ամենազոր Աստծո սրբազան քահանայության արժանի կրողները:

Սոբրալ, Բրազիլիա

Քահանայության հրաշքը և արտոնությունը

Ինչ-որ տեղ տխրություն եմ զգում նրանց համար, ովքեր չեն հասկանում և գնահատում քահանայության հրաշքն ու արտոնությունը: Նրանք նման են օդանավի այն ուղևորներին, ովքեր իրենց ժամանակը ծախսում են դժգոհելով գետնանուշի փաթեթի չափսից, մինչ դեռ սավառնում են օդում, ամպերից վեր, մի բան, որը մեկ անգամ փորձելու և զգալու համար հնում թագավորները կտային իրենց ողջ ունեցվածքը:

Եղբայրներ, մենք օրհնված ենք՝ լինելու այս մեծ քահանայության իշխանության և զորության խոնարհ ճաշակողները: Եկեք մեր աչքերը բարձրացնենք և տեսնենք, գիտակցենք և ընդունենք այս հնարավորության իրական էությունը:

Արդար, սիրալիր և նվիրված քահանայական ծառայության շնորհիվ մենք կկարողանանք ընկալել հայտնության բուն իմաստը. «Ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»:[12]

Եկեք ընդունենք և հասկանանք քահանայության հրաշքն ու արտոնությունը: Եկեք ընդունենք և սիրենք պատասխանատվությունները, որ տրվել են մեզ կատարելու մեր տանը և Եկեղեցու մեր միավորներում, անկախ նրանից դրանք մեծ են, թե փոքր: Եկեք մշտապես մեծացնենք արադարակեցությունը, նվիրվածությունը և քահանայության ծառայությունը: Եկեք ուրախություն գտնենք քահանայության ծառայության մեջ:

Մենք կարող եք դա լավագույնս կատարել՝ կիրառելով գիտելիքի, հնազանդության և հավատքի սկզբունքները:

Դա նշանակում է, առաջինը՝ մենք պետք է իմանանք և յուրացնենք քահանայության վարդապետությունը, որը կարող ենք գտնել Աստծո հայտնված խոսքում: Կարևոր է հասկանալ այն ուխտերը և պատվիրանները, որոնց հիման վրա գործում է քահանայությունը:[13]

Հաջորդը, եկեք լինենք իմաստուն, գործենք այս ձեռք բերված գիտելիքով՝ մշտապես և պատվով: Հնազանդվելով Աստծո օրենքներին, կարգավարժելով մեր միտքը և մարմինը, և մեր գործողությունները համահունչ դարձնելով մարգարեների կողմից ուսուցանված արդարակեցության օրինակներին, մենք ուրախություն կզգանք քահանայական ծառայությունից:

Եվ վերջապես, եկեք խորացնենք մեր հավատքն առ մեր Տեր Հիսուս Քրիստոսը: Եկեք մեզ վրա վերցնենք Նրա անունը և պարտավորվենք ամեն օր նորովի քայլել աշակերտության ուղով: Թող որ մեր գործերը մեր հավատքը կատարյալ դարձնեն:[14] Աշակերտ լինելով, մենք կարող ենք զարգանալ՝ հերթական անգամ ծառայելով ընտանիքին, ընկերներին և Աստծուն:

Երբ մենք ծառայում ենք քահանայության մեջ մեր ողջ սրտով, մտքով և ուժով, մենք ունենում ենք վսեմ գիտելիքի, խաղաղության և հոգևոր պարգևների խոստումը: Երբ մենք պատվենք սուրբ քահանայությունը, Աստված էլ մեզ կպատվի, և մենք «վերջին օրը անարատ կկանգնենք [Նրա] առաջ»:[15]

Իմ աղոթքն է, որ մենք միշտ աչք ունենանք տեսնելու և սիրտ՝ զգալու մեր մեծ ու հզոր Աստծո քահանայության հրաշքը և ուրախությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Wilbur Wright, in James Tobin, *To Conquer the Air: The Wright Brothers and the Great Race for Flight* (2003), 238.
2. Wright brothers, in Tobin, *To Conquer the Air,* 397.
3. John Gillespie Magee Jr., “High Flight,” in Diane Ravitch, ed., *The American Reader: Words That Moved a Nation* (1990), 486.
4. Մովսես 1.39:
5. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 108–9.
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.36:
7. Տես Եբրայեցիս 5.4–10; Վարդապետություն և Ուխտեր 107.3:
8. Վարդապետություն և Ուխտեր 12.8:
9. Վարդապետություն և Ուխտեր 121.41:
10. Տես Եսայիա 55.1:
11. Վարդապետություն և Ուխտեր 115.5:
12. Վարդապետություն և Ուխտեր 84.88:
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.33–44; 121.34–46:
14. Տես Հակոբոս 2.22:
15. Վարդապետություն և Ուխտեր 4.2:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Օգնեք նրանց բարձր նպատակներ դնել

Ձեր ուղեկցությամբ, նրանք, ում դուք առաջնորդում եք, կտեսնեն, կցանկանան և կհավատան, որ կարող են իրագործել իրենց ողջ ներուժը Աստծո արքայության մեջ ծառայության համար:

Ես անչափ շնորհակալ եմ այս հնարավորության համար՝ լինելու այս քահանայության մեծ ժողովին, լսելու նման հրաշալի ուսմունք և վկայություն: Դա ստիպեց ինձ խորհել իմ անձնական փորձի մասին: Գրեթե ամեն-ինչ, որ ես կարողացել եմ նվաճել որպես քահանայության կրող, ի շնորհիվ այն անձանց է, ովքեր ճանաչում էին ինձ և տեսնում իմ մեջ այն, ինչ ես ինքնս չէի կարող տեսնել:

Լինելով երիտասարդ հայր, ես աղոթել եմ իմանալու համար, թե ինչ ավանդ կարող են իմ երեխաները ներդնել Տիրոջ արքայության մեջ: Գիտեի, որ տղաներս քահանայության մեջ հնարավորություններ կունենան, իսկ աղջիկներս՝ կմատուցեն Տիրոջը ներկայացնող ծառայություն: Բոլորը կկատարեն Նրա աշխատանքը: Գիտեի, որ յուրաքանչյուրն անհատ է, ուստիև Տերը նրանցից յուրաքանչյուրին հատուկ պարգևներ է տվել Իր ծառայության մեջ օգտագործելու համար:

Այժմ ես չեմ կարող ասել, թե յուրաքանչյուր հայր և երիտասարդների ղեկավար ինչ պետք է անի: Սակայն կարող եմ խոստանալ ձեզ, որ կօրհնեք նրանց, օգնելով ճանաչել ի ծնե ունեցած իրենց հոգևոր պարգևները: Յուրաքանչյուր անձ տարբեր է և տարբեր ավանդներ կարող է ներդնել: Ոչ ոք դատապարտված չէ ձախողման: Երբ հայտնություն փնտրեք տեսնելու այն պարգևները, որ Աստված է տեսնում նրանց մեջ, ում դուք ղեկավարում եք, հատկապես՝ երիտասարդներին, դուք կօրհնվեք բարձրացնելու նրանց հայացքը դեպի այն ծառայությունը, որ նրանք կարող են կատարել: Ձեր ուղեկցությամբ նրանք, ում դուք առաջնորդում եք, կտեսնեն, կցանկանան և կհավատան, որ կարող են իրագործել իրենց ողջ ներուժը Աստծո արքայության մեջ ծառայության համար:

Իմ երեխաների հարցում ես աղոթել եմ, որպեսզի հայտնությամբ իմանամ, թե ինչպես կարող եմ օգնել նրանցից յուրաքանչյուրին անհատապես պատրաստվել Աստծուն ծառայելու յուրահատուկ հնարավորություններին: Ապա օգնել եմ նրանց պատկերացնել, հույս տածել և աշխատել այս

ապագայի համար: Որդիներիցս յուրաքանչյուրի համար տախտակի վրա փորագրել եմ նրանց հատուկ պարգևները ներկայացնող սուրբ գրության հատված և տվյալ պարգևը ներկայացնող նկար: Նկարի և խոսքերի ներքևում ես փորագրել էի յուրաքանչյուր տղայի մկրտության և քահանայության պաշտոններում կարգվելու ամսաթվերը, վերջիններիս կողքին նշելով նաև այդ ժամանակ նրանց հասակի չափը:

Ես կնկարագրեմ տախտակները, որ փորագրել եմ իմ յուրաքանչյուր որդու համար՝ օգնելով նրանց տեսնել, թե որոնք են իրենց հոգևոր պարգևները և ինչ կարող են նվիրաբերել Տիրոջ աշխատանքին: Ինձ նման դուք էլ կոգեշնչվեք հայտնաբերելու հատուկ պարգևները և եզակի հնարավորությունները ձեր երիտասարդներից յուրաքանչյուրի համար, ում դուք սիրում և ղեկավարում եք:

Երբ ավագ որդիս դարձավ սարկավագ և Արծիվ սկաուտ, նրա և նրա ապագայի մասին մտածելիս արծվի պատկերը եկավ միտքս: Մենք ապրում էինք Այդահոյում, Հարավային Տետոն լեռան ստորոտի մոտ, որը մենք մագլցում էինք միասին և դիտում՝ ինչպես են արծիվները սավառնում: Այդ մտապատկերը ինձ հիշեցրեց Եսայիայի խոսքերը.

«Նա է հոգնածին ուժ տվողը. և նա կարողություն չունեցողին զորություն է շատացնում:

Եվ երիտասարդները կհոգնեն և կվաստակեն, և ընտիրները թուլությունով կթուլանան,

Բայց Տիրոջն ապավինողները կնորոգվին ուժով, թևերով վեր կսլանան արծիվների պես, կվազեն և չեն վաստակիլ, կգնան և չեն հոգնիլ»:[1]

Իրականում, այդ ամենաավագ որդու հետ, մենք կանգ էինք առնում Հարավային Տետոնի գագաթին չհասած, որովհետև որդիս հոգնում էր: Նա ուզում էր կանգ առնել: Նա ասաց. «Արդյո՞ք միշտ պետք է ներողություն խնդրեմ, որ չեմ կարողանում մագլցել մինչև գագաթ: Հայրիկ, դու շարունակիր, չեմ ուզում, որ դու հիասթափվես»:

Ես պատասխանում էի. «Ես երբեք չեմ հիասթափվի, դու էլ երբեք վատ

մի զգա: Մենք միշտ կհիշենք, որ մագլցել ենք միասին»: Նրա աճի տախտակի վերևում ես փորագրեցի արծիվ և մակագրեցի՝ Արծվի թևերի վրա:

Տարիների ընթացքում որդիս որպես միսիոներ սավառնեց ավելի վեր, քան ես կարող էի պատկերացնել իմ նվիրական հույսերում: Միսիայի որոշ դժվարություններ, որոնց նա դիմակայել էր, թվացել էին իր ուժերից վեր: Տղային, որին բարձրացնում ես, ինչպես եղավ որդուս դեպքում, Տերն իմ սպասելիքներից ավելի բարձրացրեց նրան ավետարանը բարդ լեզվով քարոզելիս: Եթե բարձրացնեք երիտասարդին զգալու համար իր քահանայական հնարավորությունները, խոստանում եմ՝ Տերը կասի ձեզ որքան անհրաժեշտ է: Տղան կարող է ունենալ անգամ ավելի մեծ ներուժ, քան Տերը կհայտնի ձեզ: Օգնեք նրան բարձր նպատակներ դնել:

Տղան, որին դուք քաջալերում եք, կարող է շատ երկչոտ թվալ հզոր քահանայության ծառա լինելու համար: Որդիներիցս մյուսը փոքր հասակում այնքան ամաչկոտ էր, որ չէր խոսում խանութի աշխատողի հետ: Նա անչափ վախենում էր, ես անհանգստանում էի, երբ աղոթում էի նրա քահանայական ապագայի մասին: Ես մտածում էի, որ միսիայի դաշտում նա խոստումնալից չի երևում: Ես առաջնորդվեցի Առակացի գրությամբ. «Ամբարիշտը փախչում է առանց մեկի հալածելու, բայց արդարները առ յուծի պես համարձակ են»:[2]

Նրա տախտակի վրա, առյուծի մեծ գլխի պատկերի տակ ես փորագրեցի՝ «Առյուծի պես համարձակ» խոսքերը: Իր միսիայում և հետևող տարիներին նա իրագործեց իմ փայփայած հույսը: Իմ երբեմնի ամաչկոտ տղան մեծ համոզվածությամբ քարոզեց ավետարանը և քաջարի դիմակայեց վտանգներին: Նա հզորացավ Տիրոջը ներկայացնելող իր պարտականություններում:

Դա տեղի կունենա այն պատանու հետ, որին դուք առաջնորդում եք: Դուք պետք է զարգացնեք նրա հավատքը, որ իրեն Տերը կարող է փոխակերպել՝ դարձնելով քաջարի ծառա:

Մենք գիտենք, որ Տերը Իր ծառաներին համարձակ է դարձնում: Պատանի Ջոզեֆը, որ ծառերի պուրակում տեսավ Հայր Աստծուն և Նրա Որդի Հիսուս Քրիստոսին, փոխակերպվեց հոգևոր հսկայի: Փարլի Պ. Փրատը ականատեսն է եղել, թե ինչպես է Մարգարե Ջոզեֆ Սմիթը հանդիմանում ստոր պահակներին, ովքեր հսկում էին նրանց: Երեց Փրատը գրել է.

«Հանկարծ նա ոտքի ելավ և ամպրոպի կամ մոնչացող առյուծի ձայնով, որքանով որ հիշում եմ, ասաց հետևյալ խոսքերը.

«ԼՌԵՔ, դուք դժոխքի ծնունդներ,. Հիսուս Քրիստոսի անունով ես ձեզ հանդիմանում եմ, և պատվիրում եմ, որ լռեք: Ես մեկ բոպե անգամ չեմ հանդուրժի, որ նման խոսքեր լսեմ: Դադարեցրեք այդ խոսակցությունները, այլապես ես կամ դուք կմեռնենք ՀԵՆՑ ՀԻՄԱ»:

Այդ փորձառության մասին Երեց Փրատը գրել է. «Արժանապատվություն և մեծափառություն տեսել եմ միայն *մեկ անգամ*, կեսգիշերին շղթայակապ կանգնած Միսուրիի աննշան գյուղի զնդանում»:[3]

Տերն Իր արդար ծառաներին հնարավորություններ կտա լինել առյուծների պես համարձակ, երբ նրանք որպես Նրա քահանայության վկաներ խոսեն Իր անունից:

Մյուս որդիս, պատանի հասակում ուներ ընկերների մեծ շրջապատ, ովքեր մշտապես ձգտում էին նրա ընկերակցությանը: Նա հեշտությամբ էր ընկերական կապեր հաստատում: Երբ աղոթեցի և փորձեցի կանխատեսել նրա ավանդը Աստծո

արքայության մեջ, զգացի, որ նա ուժ ուներ մարդկանց մոտեցնելու սիրո և միասնության մեջ։

Դա ինձ հիշեցրեց Վարդապետություն և Ուխտերում մի պատմություն, որտեղ նկարագրվում են Միսուրիում Սիոնը կառուցելիս քահանայության երեցների ջանքերը՝ ի ազդարարումն հրեշտակների, ովքեր տեսան նրանց ջանքերը և նվիրաբերումները։ Դրա համար մեծ զոհաբերություն պահանջվեց։ Վարդապետություն և Ուխտերում հայտնությունն ասում է. «Այնուամենայնիվ, օրհնված եք դուք, քանզի վկայությունը, որ դուք բերել եք, արձանագրվել է երկնքում, հրեշտակների համար, որ կարդան. և նրանք ցնծում են ձեր համար, և ձեր մեղքերը ներված են ձեզ»։[4]

Իմ որդու հասակի տախտակի վրա ես մակագրեցի. «Հրեշտակները ցնծում են քեզ համար»։

Այս որդուս՝ մարդկանց հավաքելու և նրանց գրավելու մեծ ունակությունը շարունակվեց նրա դպրոցական տարիներից հետո։ Քահանայություն կրող իր ընկերների հետ նա կազմակերպում էր ցցի միջոցառումներ, որոնք իր տարածքի երիտասարդներին պարգևում էին հավատք տոկալու համար և անգամ հաղթանակ՝ դժվարին իրավիճակներում։ Հավատք զարգացնելով այդ երիտասարդ տղաների և աղջիկների մեջ, նա օգնել է կազմակերպել Սիոնի փոքր խմբեր Ամերիկայի քաղաքային կենտրոններում։ Ես փորագրել էի փողհարող հրեշտակներ, քանի որ ավելի հեշտ էր փորագրել փողհարող, քան բացականչող հրեշտակներ։

Հրեշտակները ցնծում են, երբ քահանայության ղեկավարները երկրագնդով մեկ կառուցում են Սիոնը իրենց ծխերում, ցցերում և միսիաներում։ Եվ նրանք կցնծան երիտասարդ տղաներով և աղջիկներով, ում դուք օգնում եք կառուցել Սիոնը, որտեղ և ինչպիսի պայմաններում էլ որ նրանք լինեն։ Սիոնը՝ ուխտով և սիրով միմյանց հետ կապված մարդիկ են։ Ես կոչ եմ անում ձեզ օգնել ձեր երիտասարդներին միանալ։

Իմ որդիներից մեկի համար ես հուշում ստացա, որ փորագրեմ արև՝ արև երկնքում, և Փրկչի Միջնորդական աղոթքի խոսքերից՝ Սա է հավերժական կյանքը։ Իր երկրային ծառայության ավարտին Փրկիչն աղոթեց Իր Հորը.

«Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստված. և նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին։

Ես քեզ փառավորեցի երկրի վրա. այն գործը կատարեցի, որ տվիր ինձ՝ որ անեմ»։[5]

Իմ որդին մատուցել է քահանայական ծառայություն երեք մայրցամաքներում, իսկ ամենակարևորը՝ իր տանը և իր ընտանիքում։ Նա իր կյանքը կառուցել է նրանց շուրջը։ Նա աշխատում է տանը մոտ, և հաճախ է ընդմիջմանը գալիս տուն՝ ճաշելու իր կնոջ ու երեխաների հետ։ Նրա ընտանիքը շատ մոտ է ապրում ինձ ու քույր Այրինգին։ Նրանք մեր բակի համար խնամք են տանում։ Այս որդիս ապրում է ոչ միայն հավիտենական կյանքին արժանանալու, այլև ընտանիքի երախտապարտ անդամներով հավերժ շրջապատված լինելու համար։

Հավերժական կյանքը ընտանիքներով միասին ապրելն է Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ։ Հավերժական կյանքը հնարավոր է միայն Աստծո քահանայության բանալիների միջոցով, որոնք վերականգնվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով։ Երիտասարդների համար, որոնց դուք ղեկավարում եք, հրաշալի պարգև է, երբ դուք պահում եք այդ հավերժական նպատակը նրանց առաջ։ Դուք դա հիմնականում կանեք ձեր անձնական ընտանիքի օրինակով։ Նրանք, ում դուք ղեկավարում եք, գուցե ընտանիք չունեն Եկեղեցում, բայց ես կոչ եմ անում ձեզ՝ օգնեք նրանց զգալ և ցանկանալ ընտանիքի սերը վարագույրի երկու կողմում էլ։

Հասակի տախտակները, որ ներկայացրեցի, մեկ միջոց են՝ օգնելու երիտասարդներին նշմարել այն վեհությունը, որ Աստված տեսնում է նրանց մեջ, և նրանց ապագահն ու այն յուրահատուկ ծառայությունը, որի համար Նա պատրաստում է նրանց։ Նա կօգնի ձեզ հասկանալ ինչպես անել դա ձեր երեխաների կամ մյուս երիտասարդների համար։ Իսկ երբ աղոթքով ձգտեք ինքնուրույն տեսնել այդ ապագան և նույնը հաղորդել երիտասարդներին մեկ առ մեկ, դուք կհասկանաք, որ Աստված անհատապես սիրում է Իր զավակներից յուրաքանչյուրին և մեծ ու եզակի պարգևներ է տեսնում նրանցից յուրաքանչյուրի մեջ։

Որպես հայր ես օրհնվել եմ տեսնելու Աստծո արքայությունում իմ դուստրերի համար մեծ ապագա ևս։ Երբ աղոթքով առաջնորդություն եմ փնտրել, ինձ ցույց է տրվել, ինչպես կարող եմ օգնել իմ դուստրերին՝ ընկալել Աստծո վստահությունը իրենց հանդեպ՝ որպես ծառաներ, ովքեր կարող են կառուցել Նրա արքայությունը։

Երբ դուստրերս փոքր էին, ես զգացի, որ կարող ենք օգնել մյուսներին զգալ սերը նրանց, ովքեր սերունդներ ի վեր գտնվում էին վարագույրի այն կողմում։ Ես գիտեի, որ սերը գալիս է ծառայությունից և հավերժական կյանքի հույս է ներշնչում։

Այսպիսով, մենք փորագրեցինք հացի տախտակներ, յուրաքանչյուրի վրա դնելով տանը պատրաստված հացի բոքոն, միասին գնացինք բաժանելու այրիներին և ընտանիքներին։ Յուրաքանչյուր հացի տախտակի վրա ես փորագրեցի՝ «J'aime et J'espere», որը ֆրանսերեն նշանակում է՝ «Ես սիրում եմ և հույսով եմ»։ Նրանց եզակի հոգևոր պարգևների ապացույցն ի հայտ եկավ ոչ թե իմ փորագրած տախտակների վրա,

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

Հոկտեմբեր 2012

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Բոյդ Ք. Փաքեր

Լ. Թոմ Փերի

Ռասսել Մ. Նելսոն

Դալլին Հ. Օուքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ռիչարդ Գ. Սքոթ

Ռոբերտ Դ. Հեյլս

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Վոլթեր Ֆ. Գոնզալես

Լ. Ուիթնի Քլեյթոն

Դոնալդ Լ. Հոլստրոմ

Թեդ Ռ. Քալիստեր

Ռիչարդ Ջ. Մեյնզ

Քրեյգ Ս. Քրիչենսեն

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ՔՎՈՐՈՒՄ

(այբենական կարգով)



Մարկոս Ա. Այդուկայտիս, Հոսե Լ. Ալոնսո, Կարլոս Հ. Ամադո, Յան Ս. Արդերն, Մերվին Բ. Առնոլդ, Դեյվիդ Ս. Բաքստեր, Շեյն Մ. Բոուեն, Քրեյգ Ա. Քարդոն, Յուն Հվան Չոյի, Դոն Ռ. Քլարկ

Քարլ Բ. Քուք, Լորենս Ե. Քորբրիջ, Կլաուդիո Ռ. Մ. Կոստա, Լեգռան Ռ. Քըրտիզ Կրտս., Բենջամին դե Հոյոս Ջոն Բ. Դիքսոն, Քեվին Ռ. Դանքըն, Լարի Էքո Հոք, Սթենլի Գ. Էլիս, Դեյվիդ Ֆ. Էվանս

Էնրիկե Ռ. Ֆալաբելլա, Էդուարդո Գավարետ, Ռոբերտ Ս. Գայ, Կարլոս Ա. Գոդոյ, Քրիստոֆել Գոլդեն Կրտս., Ջերիթ Վ . Գոնգ, Ս. Սքոթ Գրոու, Ջեյմս Ջ. Համուլա, Դանիել Լ. Ջոնսոն, Փոլ Վ. Ջոնսոն

Պատրիկ Քիրոն, Փոլ Ե. Քոլիքեր, Էրիկ Վ. Կոպիչկե, Մարկուս Բ. Նաշ, Բրենտ Հ. Նիլսոն, Ալլան Ֆ. Փաքեր, Քեվին Վ. Փիրսոն, Էնթոնի Դ. Փերքինս, Փոլ Բ. Փիփեր, Ռաֆայել Ի.Փինո

Բրուս Դ. Փորթեր, Դեյլ Գ. Ռենլանդ, Մայքլ Տ. Ռինգվոտ, Լին Գ. Ռոբինս, Ջոզեֆ Վ. Սիտատի, Սթիվեն Ե. Սնոու, Ուլիսես Սոարես, Մայքլ Ջոն Ու. Թեհ, Հոսե Ա. Թեքսեյրա, Խուան Ա. Ուսեդա



Ֆրանսիսկո Ջ. Վինաս, Վ. Քրիստոֆեր Վադել, Վիլիամ Ռ. Վոքեր, Ֆ. Մայքլ Վատսոն, Սքոթ Դ. Վայթինգ, Կազուհիկո Յամաշիտա, Ջորջ Ֆ. Զեբալոս, Կլաուդիո Դ. Զիվիկ, Վ. Քրեյգ Ցվիք

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՎՈՐՈՒՄ

(այբենական կարգով)

Վիլֆորդ Վ. Անդերսեն, Կոիչի Սոյազի, Ռանդալ Կ. Բենեթ, Բրուս Ա. Քարլսոն

Ջ. Դեվն Քորնիշ, Բրեդլի Դ. Ֆոսթեր, Օ. Վինսենթ Հալեք, Լարի Ռ. Լորենս

Փեր Գ. Մալմ, Ջեյմս Բ. Մարտինո, Ջայրո Մազագարդի, Քենտ Ֆ. Ռիչարդս

Գրեգորի Ա. Շվիցեր, Քենտ Դ. Վատսոն, Լարի Յ. Վիլսոն

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ

Ջեռալդ Կոսե Առաջին Խորհրդական, Գարի Ի. Սթիվենսոն Նախագահող Եպիսկոպոս, Դին Մ. Դեյվիս Երկրորդ Խորհրդական

Ի շնորհիվ նրա, ինչ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կոչեց «անանախադեպ ծածկույթ», Վերջին օրերի սրբերը ողջ աշխարհում վայելում են գերագույն համաժողովի օրհնությունները: Ժամացույցի սլաքի ուղղությամբ, վերևում ձախից սկսած պատկերված են անդամները և միսիոներները Քվիլիմեյնում՝ Մոզամբիկ, Թալինում՝ Էստոնիա, Վարշավայում՝ Լեհաստան, Մեխիկոյում՝ Մեքսիկա, Էդինբուրգում՝ Շոտլանդիա, Թայփելում՝ Տայվան, և Գաբորոնում՝ Բոտսվանա:

այլ ավելի պարզորոշ, երբ մենք բաժանեցինք դրանք նրանց, ովքեր կարիքի մեջ էին, կրում էին ցավ կամ կորուստ, ի հավաստիացում, որ Փրկչի սերը և Նրա Քավությունը կարող են հույսի կատարյալ պայծառություն պարգևել: Սա է հավերժական կյանքը իմ դուստրերի և մեզանից յուրաքանչյուրի համար:

Այժմ, գուցե դուք մտածեք. «Եղբայր Այրինգ, ուզում եք ասել, որ ես փորագրություն սովորե՞մ»: Պատասխանում եմ՝ ոչ: Ես փորագրել եմ սովորել միայն բարի ու շնորհալի վարպետի՝ այն ժամանակ Երեց Բոյդ Կ. Փաքերի օգնությամբ: Իմ այդ փոքր հմտությունը ձեռք եմ բերել՝ որպես փորագրող նրա հրաշալի պարգևի և որպես ուսուցիչ նրա համբերատարության շնորհիվ: Միայն երկինքը կարող է նման ուսուցիչ պարգևել, ինչպիսին է Նախագահ Փաքերը: Բայց կան տարբեր եղանակներ, որոնց օգնությամբ դուք կարող եք ներգործել երեխաների սրտի վրա՝ առանց փայտե տախտակներ փորագրելու:

Օրինակ, հաղորդակցման նոր տեխնոլոգիաները թույլ են տալիս հավատի և հույսի հաղորդագրություններ ուղարկել մեծ հեռավորությունների վրա, վայրկյանական և շատ էժան: Կինս օգնում է ինձ այդ գործում ամեն երեկո: Մենք սկսում ենք հեռախոսազրույցներով մեր երեխաների և թոռների հետ: Մենք խնդրում ենք նրանց պատմել իրենց անձնական հաջողությունների և մատուցած ծառայության մասին, նաև այդ օրվա գործերի մասին լուսանկարներ ուղարկել: Մենք օգտագործում ենք այդ լուսանկարները գրված մի քանի պարբերությունները նկարազարդելու համար: Ավելացնում ենք Մորմոնի Գրքից մեկ կամ երկու հատված: Գուցե Նեփին և Մորմոնը չտպավորվեին մեր նյութի հոգևոր որակով կամ սահմանափակ ջանքերով, որոնք անհրաժեշտ են ստեղծելու ինչպես մենք ենք կոչում՝ «Ընտանեկան օրագիր՝ փոքր թիթեղներ», բայց Քույր Այրինգն ու ես օրհնվել ենք այդ ջանքերի շնորհիվ: Մենք ոգեշնչվում ենք ընտրել սուրբ գրության հատվածներ և գրել հակիրճ վկայություն: Դրա արդյունքն ակնհայտ է նրանց կյանքում, երբ տեսնում ենք ինչպես են նրանց սրտերը դառնում դեպի մեզ և Փրկիչը և ի վեր:

Կան հասու լինելու այլ եղանակներ՝ դուք արդեն ներգրավվել եք դրանցից շատերում: Ձեր ընտանեկան աղոթքը և սուրբ գրություններ ընթերցելը կստեղծեն ավելի հարատև հիշողություններ և առաջ կբերեն սրտի ավելի մեծ փոփոխություններ, քան այժմ կարող եք պատկերացնել: Անգամ աշխարհիկ միջոցառումները, օրինակ՝ սպորտային միջոցառման այցելելը կամ կինոնկար դիտելը, կարող է ներգործել երեխայի սրտի վրա: Կարևորը ոչ թե միջոցառումն է, այլ դրանից բխող զգացմունքները: Ես հայտնագործել եմ միջոցառումը ստուգելու մի լավ թեսթ, պարզելով, թե տվյալ միջոցառումը որքանով կարող է տարբերություն բերել երեխայի կյանքում: Նրանք պետք է զգան, որ իրենց հետաքրքրող միջոցառումը եկել է որպես նվեր Աստծո կողմից: Իմ անձնական փորձից գիտեմ, որ դա հնարավոր է:

Երբ 12 տարեկանում դարձա սարկավագ, մենք ապրում էինք Նյու Ջերսիում, Նյու Յորք Սիթիից 80կմ հեռու: Ես երազում էի լավ բեյսբոլ խաղացող դառնալ: Հայրս համաձայնեց ինձ տանել Բրոնքսի հին ու պատմական Յանկիների մարզադաշտում տեղի ունեցող խաղը դիտելու: Դեռևս կարող եմ տեսնել, ինչպես Ջո Դիմաջիոն ճոճեց բեյսբոլի փայտը և հարվածեց դաշտի կենտրոն, հաշվի մեջ առաջ անցնելով, բոլորը ոգևորված կանգնեցին, հայրս նույնպես, որ կողքիս էր նստած: Դա միակ անգամն էր, որ մենք միասին գնացինք բեյսբոլի գլխավոր լիգայի խաղին:

Բայց մեկ այլ օր հայրս ընդմիշտ փոխեց իմ կյանքը: Նա ինձ տարավ Նյու Ջերսիից Սոլթ Լեյք Սիթի՝ կարգված հայրապետի տուն, որին ես նախկինում երբեք չէի տեսել: Հայրս ինձ թողեց դռան մոտ: Հայրապետն առաջարկեց նստել աթոռին, ձեռքերը դրեց իմ գլխին և տվեց օրհնություն՝ որպես պարգև Աստծուց, որի ժամանակ հնչեց սրտիս մեծագույն ցանկությունը:

Նա ասաց, որ ես նրանցից մեկն եմ, որի մասին ասվել է. «Օրհնյալ են խաղաղարարները»:[6] Ես այնքան զարմացած էի, որ կատարյալ օտար մարդը, կարողացավ իմանալ իմ սիրտը, և ես բացեցի աչքերս, որպեսզի տեսնեմ, թե որտեղ է նման հրաշքը կատարվում: Իմ հնարավորությունների մասին այդ օրհնությունը կերտեց իմ կյանքը, իմ ամուսնությունը և իմ քահանայական ծառայությունը:

Այդ փորձառությունից և դրանից հետո, ինչ տեղի ունեցավ, ես կարող եմ վկայել. «Քանզի բոլորին տրված չէ ամեն պարգև. քանզի կան շատ պարգևներ, և ամեն մարդու մի պարգև է տրված Աստծո Հոգուց»:[7]

Տիրոջ կողմից ինձ հայտնված պարգևի շնորհիվ ես կարողացա տեսնել և պատրաստվել հնարավորություններին, որպեսզի կիրառեմ դա ի օրհնություն նրանց, ում սիրում և ծառայում եմ:

Աստված գիտի մեր պարգևները: Իմ կոչն է ձեզ և ինձ՝ աղոթել ճանաչելու մեզ շնորհված պարգևները, իմանալ, ինչպես զարգացնել դրանք, և տեսնել մյուսներին ծառայելու հնարավորությունները, որ Աստված ընձեռում է մեզ: Ամենից շատ, ես աղոթում եմ, որ դուք ոգեշնչվեք օգնել մյուսներին՝ հայտնագործելու Աստվածատուր իրենց հատուկ պարգևները ծառայության համար:

Ես խոստանում եմ ձեզ, որ եթե խնդրեք, դուք կօրհնվեք օգնելու և բարձրացնելու մյուսներին, որ իրենց ներուժը լիովին օգտագործեն և ծառայեն նրանց, ում ղեկավարում և սիրում են: Ես վկայում եմ ձեզ, որ Աստված ապրում է, Հիսուսը Քրիստոսն է, սա Աստծո քահանայությունն է, որ մենք կրում ենք, և Աստված պատրաստել է մեզ՝ հատուկ պարգևների միջոցով, որպեսզի ծառայենք Իրենք մեր խորագույն հույսերից վեր: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Եսայիա 40.29–31:
2. Առակաց 28.1:
3. *Autobiography of Parley P. Pratt,* ed. Parley P. Pratt Jr. (1938), 211.
4. Վարդապետություն և Ուխտեր 62.3:
5. Հովհաննես 17.3–4:
6. Մատթեոս 5.9:
7. Վարդապետություն և Ուխտեր 46.11:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Տեսեք ուրիշներին այնպես, ինչպիսին նրանք կարող են դառնալ

Մենք պետք է զարգացնենք ունակություն՝ տեսնելու մարդկանց ոչ թե ինչպես նրանք կան ներկայում, այլ թե ինչպիսին նրանք կարող են դառնալ:

Իմ սիրելի եղբայրներ, տարին երկու անգամ այս փառահեղ Համաժողովների Կենտրոնը լեփ-լեցուն լցվում է Աստծո քահանայությունը կրողներով, երբ մենք հավաքվում ենք՝ լսելու ոգեշնչող ուղերձներ: Առկա է սքանչելի հոգի, որը տարածվում է Եկեղեցու քահանայության ընդհանուր ժողովում: Այդ հոգին ճառագում է համաժողովների կենտրոնից և մտնում ամեն շենք, որտեղ Աստծո որդիներն են հավաքվում: Մենք, իհարկե, զգացինք այդ հոգին այսօր:

Մի քանի տարի առաջ նախքան այս գեղեցիկ Համաժողովների Կենտրոնի կառուցվելը Սոլթ Լեյք Սիթիի Տաճարային Հրապարակի մի այցելու մասնակցեց գերագույն համաժողովի նիստին Թաբերնաքլում: Նա լսեց Եղբայրների ուղերձները: Նա ուշադրություն դարձրեց աղոթքներին: Նա գեղեցիկ երաժշտություն լսեց Թաբերնաքլի Երգչախմբի կատարմամբ: Նա հիացավ Թաբերնաքլի երգեհոնի ապշեցուցիչ վեհությամբ: Երբ ժողովն ավարտվեց, մարդիկ լսեցին, թե ինչպես նա ասաց. «Ես կտայի այն ամենը, ինչ ունեմ, եթե իմանայի, որ այն ինչ այդ խոսնակներն այսօր ասացին, ճշմարիտ էր»: Ըստ էության նա ասում էր. «Ես կկամենայի ավետարանի մասին վկայություն ունենալ»:

Բացարձակապես ոչինչ այս աշխարհում չի կարողպարգևել ավելի շատ հանգստություն և երջանկություն, որքան ճշմարտության վերաբերյալ վկայությունը: Չնայած տարբեր աստիճանների, ես հավատում եմ, որ ամեն մարդ կամ երիտասարդ տղամարդ այս երեկո այստեղ վկայություն ունի: Եթե զգում եք, որ դեռ չունեք վկայության ցանկալի խորությունը, և գուցե շատերն ունեն այդ զգացումը, ես հորդորում եմ ձեզ աշխատել հասնելու այդպիսի վկայության: Եթե այն ուժեղ է և խորը, աշխատեք պահել այն այդ ձևով: Որքան օրհնված ենք մենք ճշմարտության վերաբերյալ գիտելիք ունենալով:

Եղբայրներ, այս երեկո իմ ուղերձն է, որ կան անթիվ անձիք, ովքեր ունեն քիչ վկայություն կամ այժմ ոչ մի վկայություն էլ չունեն, նրանք, ովքեր կկարողանային և կստանային այդպիսի վկայություն, եթե մենք ջանք գործադրեինք կիսվելով մեր վկայությամբ և օգնեինք նրանց փոխվել: Որոշ դեպքերում *մենք* կարող ենք փոփոխության համար խթան հանդիսանալ: Ես առաջինը նշում եմ նրանց, ովքեր անդամներ են, բայց ովքեր ներկայումս նվիրված չեն ավետարանին:

Շատ տարիներ առաջ, տարածքի համաժողովում, որը տեղի ունեցավ Հելսինկիում, Ֆինլանդիա, ես լսեցի մի հիշարժան և ոգևորող ուղերձ, որը տրվեց մայրերի և դուստրերի նիստում: Ես չեմ մոռացել այդ ուղերձը, չնայած որ 40 տարի է ՌՋ եմ լսել այն: Շատ ճշմարտությունների շարքում, որոնք խոսնակը ներկայացրեց, նա նշեց, որ կնոջը պետք է ասել, որ նա գեղեցիկ է: Պետք է ասել, որ նա թանկ է և կարևոր է:

Եղբայրներ, ես գիտեմ, որ այդ առումով տղամարդիկ շատ նման են կանանց: Մենք կարիք ունենք ասվելու, որ մենք ինչ որ բան արժենք, որ մենք ընդունակ ենք և կարևոր: Մեզ պետք է տրվի հնարավորություն ծառայելու: Այն անդամները, ովքեր ոչ ակտիվ են դարձել կամ ովքեր հեռու են իրենց պահում և մնում ոչ ակտիվ, մենք կարող ենք աղոթքով փնտրել մի ուղի նրանց հասնելու համար: Նրանց խնդրելը, որ ծառայեն, ինչ որ ձևով կարող է լինել առիթ, որը նրանց անհրաժեշտ է՝ լիակատար ակտիվության վերադառնալու համար: Բայց այն ղեկավարները, ովքեր կկարողանային ինչ որ ձևով օգնել այդ հարցում երբեմն դժկամություն են ցուցաբերում այդ անելիս: Մենք պետք է պահենք մեր

մտքում, որ մարդիկ կարող են փոխվել: Նրանք կարող են հրաժարվել վատ սովորույթներից: Նրանք կարող են ապաշխարել օրինազանցություններից: Նրանք կարող են արժանավորապես կրել քահանայությունը: Եվ նրանք կարող են Տիրոջը ջանասիրաբար ծառայել: Ես կբերեմ մի քանի օրինակներ:

Երբ առաջին անգամ դարձա Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, ես հնարավորություն ունեցա ուղեկցել Նախագահ Ն. Էլդոն Թաններին՝ Նախագահ Դեյվիդ Օ. Մակ-Քեյի խորհրդականին, Ալբերտայում, Կանադա տեղի ունեցող ցցի մի համաժողովում: Ժողովի ժամանակ ցցի նախագահը կարդաց չորս եղբայրների անուններ, ովքեր արժանացել էին ձեռնադրվելու որպես երեցներ: Նրանք մարդիկ էին, որոնց Երեց Թանները ճանաչում էր, քանի որ որոշ ժամանակ նա ապրել էր այդ տարածքում: Բայց Նախագահ Թանները ճանաչում և հիշում էր նրանց ինչպես մի ժամանակ եղել էին և չգիտեր, որ նրանք հեղաշրջել էին իրենց կյանքը և լիովին որակավորվել երեցներ դառնալու համար:

Ցցի նախագահը կարդաց առաջին մարդու անունը և խնդրեց նրան կանգնել: Նախագահ Թանները շշնջաց ինձ. «Նայիր նրան: Երբեք չէի կարծում, որ նրա մոտ կստացվեր»: Ցցի նախագահը կարդաց երկրորդ մարդու անունը և նա կանգնեց: Նախագահ Թանները նորից թեթևակի հրեց ինձ արմունկով և հայտնեց իր զարմանքը: Եվ այդպես եղավ բոլոր չորս եղբայրների հետ:

Ժողովից հետո Նախագահ Թանները և ես հնարավորություն ունեցանք շնորհավորելու այդ չորս եղբայրներին: Նրանք ցույց տվեցին, որ տղամարդիկ կարող էին փոխվել:

1940–1950-ականներին մի ամերիկացի բանտապետ Քլինթոն Դաֆի անունով, լավ հայտնի էր իր բանտում մարդկանց ուղղելու իր ջանքերի շնորհիվ: Մի քննադատ ասել էր. «Դուք պետք է իմանաք, որ կարմիր կովն իր կաշին չի փոխում»:

Վարդեն Դաֆը պատասխանել

էր. «Դուք պետք է իմանաք, որ ես չեմ աշխատում կովերի հետ: Ես աշխատում եմ մարդկանց հետ, իսկ մարդիկ փոխվում են ամեն օր»:[1]

Շատ տարիներ առաջ ես հնարավորություն եմ ունեցել ծառայելու որպես Կանադական Միսիայի նախագահ: Այնտեղ մենք մի ճյուղ ունեինք, որտեղ շատ քիչ թվով քահանայություն կրողներ կային: Մենք միշտ որևէ միսիոների էինք հանձնարարում նախագահել ճյուղում: Ես ստացա շատ ուժեղ հուշում, որ մենք պետք է ճյուղում ունենանք այնտեղ նախագահող անդամ:

Մենք մի տարիքով անդամ ունեինք ճյուղում, որը սարկավագ էր Ահարոնյան Քահանայությունում, բայց որը բավականաչափ չէր հաճախում, որպեսզի առաջադրվեր քահանայության: Ես ոգեշնչվեցի կանչել նրան որպես ճյուղի նախագահ: Ես միշտ կհիշեմ այն օրը, երբ նրա հետ հարցազրույց անցկացրեցի: Ես ասացի նրան, որ Տերը ոգեշնչել է ինձ կանչել նրան լինելու ճյուղի նախագահ: Նրա կողմից շատ դիմադրությունից հետո և նրա կնոջ կողմից շատ քաջալերանքից հետո, նա համաձայնվեց, որ կծառայեր: Ես ձեռնադրեցի նրան քահանա:

Դա նոր օրվա սկիզբ էր այդ մարդու համար: Նրա կյանքը արագ կարգի ընկավ, և նա հավաստիացրեց, որ կապրեր պատվիրաններով, քանի որ իրենից ակնկալվում էր դրանցով ապրել: Մի քանի ամիս անց նա ձեռնադրվեց երեց: Նա և իր կինն ու ընտանիքը վերջապես տաճար գնացին և կնքվեցին: Նրանց երեխաները ծառայեցին միսիաներ և ամուսնացան Տիրոջ տանը:

Երբեմն երբ մեր եղբայրներին ցույց ենք տալիս, որ իրենց կարիքը կա և գնահատվում են, կարող է օգնել նրանց կատարել այդ քայլը դեպի պարտավորություն և լիակատար ակտիվություն: Սա կարող է ճիշտ լինել քահանայություն կրողների համար անկախ տարիքից: Մեր պարտականությունն է նրանց հնարավորություններ տալ ապրելու այնպես, ինչպես որ նրանք պարտավոր են: Մենք կարող ենք օգնել նրանց հաղթահարել իրենց թերությունները: Մենք պետք է զարգացնենք ունակություն՝ տեսնելու մարդկանց ոչ թե ինչպես նրանք ներկայում են, այլ թե ինչպիսին նրանք կարող են դառնալ, երբ ստանան վկայություններ՝ Քրիստոսի ավետարանի վերաբերյալ:

Մի անգամ ես ժողովի մասնակցեցի Լիդվիլում, Կոլորադո: Լիդվիլը գտնվում է ավելի քան 3000 մետր բարձրության վրա: Ես հիշում եմ այդ առանձնահատուկ ժողովը ոչ միայն բարձր դիրքի, այլև այդ երեկո այնտեղ տեղի ունեցածի պատճառով: Ներկա էին քիչ թվով քահանայության կրողներ: Ինչպես Կանադական Միսիայի ճյուղում,

այդ ճյուղում էլ միշտ նախագահում էր միսիոներ:

Այդ գիշեր մենք հրաշալի ժողով անցկացրեցինք, բայց երբ երգում էինք փակիչ հիմնը, ինձ ոգեշնչում եկավ, որ այդտեղ տեղական ճյուղի նախագահ պետք է նախագահի: Ես դիմեցի միսիայի նախագահին և հարցրեցի. «Չկա՞ որևէ մեկը այստեղ ով կկարողանար նախագահել, տեղացի մի մարդ»:

Նա պատասխանեց. «Ես չգիտեմ այդպիսի մեկին»:

Օրհներգը երգելիս ես ուշադիր նայեցի տղամարդկանց, ովքեր նստել էին առաջին երեք շարքերում: Ուշադրությունս թվում է կենտրոնացավ եղբայրներից մեկի վրա: Ես ասացի միսիայի նախագահին. «Կարո՞ղ է նա ծառայել որպես ճյուղի նախագահ»:

Նա պատասխանեց. «Ես չգիտեմ: Հավանաբար կարող է»:

Ես ասացի. «Նախագահ, ես նրան կտանեմ մյուս սենյակը և հարցազրույց կանցկացնեմ նրա հետ: Դուք խոսեք փակիչ օրհներգից հետո, մինչև մենք վերադառնանք»:

Երբ մենք երկուսով ետ վերադարձանք սենյակ, միսիայի նախագահը վերջացնում էր իր վկայությունը: Ես ներկայացրեցի եղբոր անունը, որպես ճյուղի նոր նախագահ: Այդ օրվանից Լիդվիլը, Կոլորադո, ունեցավ ղեկավարող տեղական անդամ այդ միավորում:

Եղբայրներ, նույն սկզբունքը վերաբերում է նրանց, ովքեր դեռ անդամներ չեն: Մենք պետք է ունակություն զարգացնենք տեսնելու մարդկանց ոչ թե ինչպես նրանք կան, այլ ինչպիսին նրանք կարող են դառնալ, երբ Եկեղեցու անդամ դառնան, երբ նրանք ավետարանի վերաբերյալ վկայություն ունենան և երբ նրանց կյանքը ներդաշնակության մեջ լինի դրա ուսմունքների հետ:

1961 թվականին մի համաշխարհային համաժողով տեղի ունեցավ միսիայի նախագահների համար և Եկեղեցու բոլոր միսիայի նախագահները եկան Սոլթ Լեյք Սիթի մասնակցելու այդ ժողովներին: Ես եկա Սոլթ Լեյք Սիթի Կանադայի Տորոնտոյի իմ միսիայից:

Մի հատուկ ժողովում Ն. Էլդոն Թանները, որն այն ժամանակ Տասներկուսի Քվորումի օգնական էր, հենց նոր էր վերադարձել իր առաջին փորձառությունից որպես Մեծ Բրիտանիայի և արևմտյան Եվրոպայի միսիաների նախագահ: Նա պատմեց մի միսիոների մասին, ով իր հանդիպածների մեջ ամենահաջողակն էր եղել իր վարած բոլոր հարցազրույցների ժամանակ: Նա ասաց, որ երբ հարցազրույց անցկացրեց այդ միսիոների հետ, ինքն ասաց նրան. «Ենթադրում եմ, որ բոլոր մարդիկ, ում դուք մկրտեցել եք, Եկեղեցի են եկել միջնորդների միջոցով»:

Երիտասարդը պատասխանեց. «Ոչ, մենք նրանց բոլորին գտել ենք որոնումների գնալով»:

Եղբայր Թանները հարցրեց նրան, թե ինչումն էր կայանում նրա մոտեցման առանձնահատկությունը, ինչու էր նա ունեցել այդպիսի աննախադեպ հաջողություն, երբ մյուսները չէին ունեցել: Երիտասարդն ասաց, որ նա փորձում էր մկրտել ամեն մարդու, ում հանդիպում էր: Նա ասաց, որ երբ նա թակում էր դուռը և տեսնում

գլանակ ծխող և հին շորեր հագած մարդու և կարծես անտարբեր, հատկապես կրոնի հանդեպ, միսիոները պատկերացնում էր իր մտքում, թե ինչպիսի տեսք կունենար այդ մարդը այլ հանգամանքներում: Իր մտքում նա տեսնում էր նրան մաքուր սափրված և հագին սպիտակ վերնաշապիկ և սպիտակ տաբատ: Եվ միսիոները կարողանում էր տեսնել, թե ինչպես է ինքն առաջնորդում այդ մարդուն դեպի մկրտության ջրերը: Նա ասաց. «Երբ ես նայում եմ որևէ մեկին այդ ձևով, ես կարողանում եմ բերել նրան իմ վկայությունն այնպես, որ այն հուզի նրա սիրտը»:

Մենք պատասխանատվություն ունենք նայել մեր ընկերներին, մեր ծանոթներին, մեր հարևաններին այս ձևով: Կրկին, մենք պատասխանատվություն ունենք տեսնելու անձանց ոչ թե ինչպես նրանք կան, այլ ավելի շուտ, թե նրանք ինչպիսին կարող են դառնալ: Ես կաղերսեի ձեզ մտածել նրանց մասին այս ձևով:

Եղբայրներ, Տերն ասել է մեզ որոշ բան այս քահանայության կարևորության մասին, որը մենք կրում ենք: Նա ասել է մեզ, որ մենք ստանում ենք այն երդումով և ուխտով: Նա մեզ տվել է հրահանգ, որ մենք պետք է հավատարիմ լինենք և ճշմարիտ բոլոր բաներում, որ մենք ստանում ենք և որ մենք ունենք պատասխանատվություն պահելու այս ուխտը, նույնիսկ, մինչև վերջ: Եվ այդ ժամանակ այն ամենը, ինչ ունի Հայրը, կտրվի մեզ:[2]

Խիզախությունը այն խոսքն է, որ մենք կարիք ունենք լսելու և մեր սրտին մոտ պահելու, խիզախություն մեջքով շրջվելու դեպի գայթակղությունը, խիզախություն բարձրացնելու մեր ձայնը վկայություն բերելու բոլորին, ում մենք հանդիպում ենք, հիշելով, որ ամեն մեկը պետք է ունենա հնարավորություն լսելու ուղերձը: Մեծ մասի համար դա հեշտ չէ: Բայց մենք կարող ենք սկսել հավատալ Պողոսի խոսքերին, որոնք ուղղված էին Տիմոթեոսին.

«Որովհետեւ Աստուած
չտուաւ մեզ երկչոտութեան

հոգի, այլ զորութեան եւ սէրի եւ զգաստութեան։

Ուրեմն ամոթ մի համարիր մեր Տիրոջ վկայութիւնը»։[3]

1974 թվականի մայիսին ես Եղբայր Ջոն Հ. Գրոբերգի հետ գտնվում էի Տոնգայի կղզիներում։ Մենք պայմանավորվածություն ունեինք այցելելու Տոնգայի թագավորին և հանդիպեցինք նրան պաշտոնական նիստում։ Մենք փոխանակեցինք սովորական հաճելի խոսքեր։ Այնուամենայնիվ, նախքան մեր մեկնելը Ջոն Գրոբերգն ասաց մի բան, որն անսովոր էր։ Նա ասաց. «Ձերդ պայծառափայլություն, դուք պետք է իսկապես Մորմոն դառնաք և ձեր ենթակաները նույնպես, քանի որ այդ ժամանակ ձեր խնդիրները և նրանց խնդիրները զգալիորեն կլուծվեն»։

Թագավորը լայն ժպտաց և պատասխանեց. «Ջոն Գրոբերգ, դուք հավանաբար ճիշտ եք»։

Ես մտածեցի Ագրիպպասի առջև կանգնած Պողոս Առաքյալի մասին։ Ես մտածեցի Պողոսի վկայության վերաբերյալ Ագրիպպասի պատասխանի մասին. «Քիչ է մնում, որ ինձ համոզես որ քրիստոնեայ դառնամ»։[4] Եղբայր Գրոբերգը խիզախություն ունեցավ բերել իր վկայությունը թագավորին։

Այսօր մեր շարքերում կան հարյուր հազարավորներ, ովքեր լիաժամկետ ծառայում են Տիրոջը որպես Նրա միսիոներներ։ Արձագանքելով կոչին, նրանք ետևում են թողել տուն, ընտանիք, ընկերներ և համալսարան և առաջ գնացել ծառայելու։ Նրանք, ովքեր չեն հասկանում, հարց են տալիս. «Ինչո՞ւ են նրանք այդպես պատրաստակամորեն արձագանքում և հոժարակամորեն տալիս այդքան շատ բան»։

Մեր միսիոներները կարող են լավ պատասխանել Պողոսի՝ վաղ օրերի այդ անզուգական միսիոների խոսքերով.«Որովհետև եթէ աւետարանը քարոզեմ, դա ինձ պարծանք չէ, որովհետեւ դա հարկ է դրուած ինձ վերայ. Եւ վայ է ինձ, եթէ աւետարանը չքարոզեմ»։[5]

Սուրբ գրությունները չեն պարունակում ավելի տեղին հայտարարություն, պատասխանատվություն, որն ավելի պարտավորեցնող է, հրահանգ, որն ավելի ուղղակի է, քան այն պատվիրանը, որը տրվեց հարություն առած Տիրոջ կողմից, երբ Նա հայտնվեց տասնմեկ աշակերտներին Գալիլեայում։ Նա ասաց.

«Ամեն իշխանութիւնն ինձ տրուեցաւ երկնքումն եւ երկրումս.

Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցէք, նորանց մկրտելով Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունովը.

Նորանց սովորեցնելով, որ ամեն ինչ որ ձեզ պատուիրեցի՝ պահեն. Եւ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր մինչեւ աշխարհքի վերջը»։[6]

Այս աստվածային հրամանը իր փառահեղ խոստման հետ միասին մեր ուղեցույցն է այսօր, ինչպես որ ժամանակների գագաթնակետին էր։ Միսիոներական աշխատանքը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բնորոշ առանձնահատկությունն է։ Միշտ էլ եղել է և միշտ էլ կլինի։ Ինչպես Մարգարե Ջոզեֆ Սմիթն է հայտարարել. «Այն բոլորից հետո ինչ ասվեց, մեծագույն և ամենակարևոր պարտականությունը Ավետարանը քարոզելն է»։[7]

Երկու կարճ տարիների ընթացքում բոլոր լիաժամկետ միսիոներները, ովքեր ներկայումս ծառայում են Աստծո այս թագավորական բանակում, կավարտեն իրենց լիաժամկետ աշխատանքները և կվերադառնան իրենց տները և իրենց սիրելիների մոտ։ Նրանց փոխարինողները գտնվում են այս երեկո Եկեղեցու Ահարոնյան Քահանայության շարքերում։ Երիտասարդներ, արդյոք պատրա՞ստ եք արձագանքելու։ Կամենո՞ւմ եք աշխատել։ Արդյոք նախապատրաստվա՞ծ եք ծառայելու։

Նախագահ Ջոն Թեյլորն ամփոփեց պահանջները. «Որպես այս ավետարանի ուղերձը կրողներ կամենում ենք այնպիսի տղամարդիկ, ովքեր հավատք ունենան առ Աստված, տղամարդիկ, ովքեր հավատք ունեն իրենց կրոնի հանդեպ, տղամարդիկ, ովքեր հարգում են իրենց քահանայությունը, . . . Սուրբ Հոգով և Աստծո զորությամբ լցված տղամարդիկ . . . պատվի, ազնվության, առաքինության և մաքրության տղամարդիկ»։[8]

Եղբայրներ, մեզանից յուրաքանչյուրին գալիս է պարտադիր հրաման կիսվել Քրիստոսի ավետարանով։ Երբ մեր կյանքը համապատասխանում է Աստծո սեփական չափանիշներին, նրանք, ովքեր մեր ազդեցության ոլորտում են, երբեք չեն ասի այս ողբը. «Հունձքը անցավ, ամառը վերջացաւ. բայց մենք չփրկուեցանք»։[9]

Մեր հոգիների կատարյալ Հովիվը, միսիոները, ով փրկագնեց մարդկությունը, տվել է մեզ Իր աստվածային հավաստիացումը.

«Եվ, եթե լինի այնպես, որ դուք տքնեք ձեր բոլոր օրերում, ապաշխարություն աղաղակելով այս ժողովրդին, և ինձ մոտ բերեք զեթ մեկ հոգի, որքան մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ իմ Հոր արքայությունում։

Եվ արդ, եթե ձեր ուրախությունը մեծ կլինի մեկ հոգու հետ, որին դուք բերել եք ինձ մոտ՝ իմ Հոր արքայություն, որքան մեծ կլինի ձեր ուրախությունը, եթե դուք շատ հոգիներ բերեք ինձ մոտ»։[10]

Նրա մասին, ով խոսել է այս խոսքերը, ես հայտարարում եմ իմ անձնական վկայությունը։ Նա Աստծո Որդին է, մեր Քավիչը և մեր Փրկիչը։

Աղոթում եմ, որ մենք ունենանք խիզախություն բարեկամական ձեռք մեկնելու, վճռականություն՝ կրկին ու կրկին փորձելու, և անհրաժեշտ խոնարհություն՝ առաջնորդություն փնտրելու մեր Հորից, երբ մենք կատարենք ավետարանով կիսվելու հրամանը։ Պատասխանատվությունը մեզ վրա է, եղբայրներ։ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. In Bill Sands, *The Seventh Step* (1967), 9.
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.33–39։
3. Բ Տիմոթեոս Ա.7–8։
4. Գործք ԻԶ.28։
5. Ա Կորնթացիս Թ.16։
6. Մատթեոս ԻԸ.18–20։
7. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները՝ Ջոզեֆ Սմիթ* (2007), 330։
8. *Teachings of Presidents of the Church: John Taylor* (2001), 73.
9. Երեմիա Ը.20։
10. Վարդապետություն և Ուխտեր 18.15–16։

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Որտե՞ղ է տաղավարը

Տաղավարը, որ թվում է, թե արգելափակում է աստվածային օժանդակությունը, չի ծածկում Աստծուն, այլ այն երբեմն ծածկում է մեզ: Աստված երբեք չի թաքնվում, իսկ մենք երբեմն թաքնվում ենք:

Խորը տառապանքների մեջ գտնվելով Լիբերթիի բանտում՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթը աղաղակեց. «Ով Աստված, որտե՞ղ ես դու: Եվ որտեղ է տաղավարը, որ ծածկում է քո թաքնված տեղը»:[1] Մեզանից շատերին անձնական տառապանքի պահերին թվում է, թե Աստված հեռու է գտնվում մեզանից: Տաղավարը, որ թվում է, թե արգելափակում է աստվածային օժանդակությունը, չի ծածկում Աստծուն, այլ այն երբեմն ծածկում է մեզ: Աստված երբեք չի թաքնվում, իսկ մենք երբեմն թաքնվում ենք, ծածկվում դրդապատճառների տաղավարով, որ հեռացնում է մեզ Աստծուց և այնպիսի տպավորություն է գործում, կարծես Նա հեռվում է գտնվում և անհասանելի է: Երբ մեր իսկ ցանկությունները փոխարինում են «Քո կամքը լինի»[2] ասելուն, ստեղծում են տաղավարի տպավորություն՝ փակելով առ Աստված տանող ճանապարհը: Աստված միշտ էլ կարող է տեսնել և շփվել մեզ հետ, սակայն մենք կարող է չկամենանք լսել կամ հնազանդվել Նրա կամքին և Նրա ժամանակին:

Աստծուց բաժանվելու մեր զգացողությունները գնալով կքչանան, մինչ մենք դառնանք ավելի երեխաների նման Նրա առջև: Դա հեշտ չէ մի աշխարհում, որտեղ այլ մարդկանց կարծիքները կարող են մեծ ազդեցություն ունենալ մեր դրդապատճառների վրա: Սակայն այն կօգնի մեզ հասկանալ այդ ճշմարտությունը. Աստված մոտ է մեզ և գիտի մեր մասին և երբեք չի թաքնվում Իր հավատարիմ զավակներից:

Իմ երեք տարեկան թոռնուհին լուսաբանել է անմեղության և հեզության զորությունը, որ կապում է մեզ Աստծո հետ: Իր ընտանիքի հետ նա գնացել էր Յուտա՝ Բրիգամ Սիթի Տաճարի բաց դռների օրը: Այդ գեղեցիկ շինության սենյակներից մեկում նա նայել էր իր շուրջը և հարցրել. «Մայրիկ, որտե՞ղ է Հիսուսը»: Նրա մայրը բացատրել էր, որ նա չէր տեսնի Հիսուսին տաճարում, սակայն նա կկարողանար զգալ Նրա ազդեցությունը իր սրտում: Էլիզան լրջորեն խորհեց իր մայրիկի պատասխանի վերաբերյալ և հետո կարծես բավարարված դրանով ասաց. «Օ՜, Հիսուսը գնացել է օգնելու ինչ-որ մեկին», հայտնել էր նա իր եզրակացությունը:

Ոչ մի տաղավար չէր ծածկել Էլիզայի հասկացողությունը կամ խոչընդոտ չէր հանդիսացել, որ նա տեսներ իրականությունը: Աստված մոտ է նրան, և նա մոտ է զգում իրեն Նրան: Նա գիտեր, որ տաճարը Տիրոջ տունն է, բայց նաև հասկանում էր, որ հարություն առած և փառավորված Հիսուս Քրիստոսը ունի մարմին և կարող է տվյալ պահին լինել միայն մեկ վայրում:[3] Եթե Նա իր տանը չէր, նա նկատեց, որ Նա պետք է լիներ մեկ այլ վայրում: Ելնելով այն ամենից, ինչ նա գիտեր Փրկչի մասին, նա հասկացավ, որ Նա կլիներ որևէ վայրում՝ բարիք անելով Իր Հոր զավակների համար: Պարզ երևում էր, որ նա հույս ուներ տեսնել Հիսուսին, ոչ թե Նրա գոյությունը հաստատող հրաշք տեսնելու համար, այլ պարզապես քանի որ նա սիրում էր Նրան:

Հոգին կարող էր հայտնել նրա մանկական մտքին և սրտին մխիթարությունը, որի կարիքը մենք բոլորս էլ ունենք և ցանկանում ենք: Հիսուս Քրիստոսն ապրում է, գիտի մեզ, պահպանում է մեզ և հոգ է տանում մեր համար: Ցավի, միայնակության կամ շփոթված պահերին մենք կարիք չունենք տեսնելու Հիսուս Քրիստոսին, որ իմանանք Նա գիտի մեր պայմանների մասին և որ Նրա առաքելությունը օրհնելն է:

Իմ կյանքի փորձից ելնելով ես գիտեմ, որ մենք էլ կարող ենք ունենալ Էլիզայի փորձառությունը նույնիսկ մանկության տարիներից շատ հետո: Իմ կարիերայի վաղ տարիներին ես ջանասիրաբար աշխատում էի, որ Ստենֆորդի Համալսարանում ձեռք բերեի մշտական դասախոսի պաշտոնավարման իրավունք: Ես կարծում էի, որ լավ կյանք էի ապահովել իմ և իմ ընտանիքի համար: Մենք մոտ էինք ապրում իմ կնոջ ծնողներին՝ շատ հարմարավետ շրջապատում: Աշխարհի չափանիշներով ես հաջողության էի հասել: Սակայն Եկեղեցու կողմից ինձ ընտրություն տրվեց թողնել Կալիֆորնիան և գնալ Ռիկս Քոլեջ Ռեքսբուրգում, Այդահո: Իմ կյանքում կարիերայի հետ կապված նպատակները կարող էին տաղավար դառնալ, բաժանելով ինձ

սիրող Հորից, ով ավելի լավ գիտեր, քան ես, թե ինչ էր ինձ սպասվում ապագայում: Սակայն ես օրհնված էի իմանալու, որ ինչ հաջողություն էլ ունեի իմ կարիերայում և ընտանեկան կյանքում մինչ այդ պահը, պարգև էր Աստծո կողմից: Եվ ուստի, ինչպես մի երեխա, ես ծնկի իջա աղոթելու, որ հարցնեի, թե ինչ պետք է անեի: Ես կարողացա լսել մի մեղմ ձայն իմ մտքում, որ ասաց. «Դա իմ դպրոցն է»: Չկար տաղավար, որ հեռացներ ինձ Աստծուց: Հավատքով ու հեզությամբ ես հնազանդեցի իմ կամքը Նրան, և զգացի Նրա հոգատարությունն ու մոտ լինելը:

Ռիքսի Քոլեջում անցկացրած իմ տարիների ընթացքում, երբ ես փորձում էի փնտրել Աստծո կամքը և կատարել այն, հեռու պահեցին տաղավարը, որ այն չծածկեր ինձ կամ անհասկանալի դարձներ Աստծո ակտիվ դերը իմ կյանքում: Մինչ ես փնտրում էի կատարել Իր աշխատանքը, ես մոտ զգացի Նրան և հավաստիացում զգացի, որ Նա գիտեր իմ կյանքին վերաբերող բաները և խորապես մտահոգված էր իմ երջանկությամբ: Սակայն ինչպես Ստենֆորդում, աշխարհիկ դրդապատճառներ սկսեցին հանդես գալ: Մեկը գրավող աշխատանքի առաջարկ էր, որ տրվեց հենց այն ժամանակ, երբ ավարտին էր մոտենում Ռիքսի Քոլեջի նախագահը լինելու իմ հինգերորդ տարին: Ես խորհեցի այդ առաջարկության մասին և աղոթեցի այդ մասին, և նույնիսկ քննարկեցի այն Առաջին Նախագահության հետ: Նրանք ջերմորեն արձագանքեցին և մի փոքր հումորով, սակայն ոչ որոշակի առաջնորդությամբ: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը լսեց ինձ, մինչ ես նկարագրում էի մեծ ընկերության կողմից ինձ արված առաջարկը և ասաց. «Լավ, Հալ, թվում է, թե դա հրաշալի հնարավորություն է: Եվ եթե մենք երբևէ ունենանք քո կարիքը, մենք կիմանանք որտեղ գտնել քեզ»: Նրանք կիմանային որտեղ գտնել ինձ, սակայն մասնագիտական հաջողությունների իմ ցանկությունները միգուցե տաղավար ստեղծեին, որը դժվար կդարձներ ինձ համար Աստծուն գտնելը և դժվար կլիներ ինձ համար լսել և հետևել Նրա հրավերներին:

Իմ կինը, սա զգալով, ուժեղ տպավորություն ունեցավ, որ մենք չպետք է թողնեինք Ռիքսի Քոլեջը: Ես ասացի. «Դա բավարար է ինձ համար»: Սակայն նա խոհեմությամբ պնդեց, որ ես պետք է ստանայի իմ սեփական հայտնությունը: Եվ ուստի, ես կրկին աղոթեցի: Այս անգամ ես հրահանգ ստացա՝ իմ մտքում լսելով մի ձայն, որ ասաց. «Ես քեզ *թույլ կտամ* մի քիչ էլ մնալ Ռիքսի Քոլեջում»: Իմ անձնական փառասիրությունը միջուցե մթագնել էր իմ տեսողությունը իրականությունը տեսնելու համար և դժվարացրել էր հայտնություն ստանալը:

Գործնական առաջարկը մերժելուց և Ռիքսի Քոլեջում մնալու ոգեշնչված որոշումը կայացնելու օրհնությունից երեսուն օր անց պայթեց մոտակա գլխավոր Տետոն ամբարտակը: Աստված գիտեր, որ ամբարտակը պայթելու էր և հարյուրավոր մարդիկ օգնության կարիք էին ունենալու: Նա թույլ տվեց ինձ խորհուրդ փնտրել և ստանալ Նրա թույլտվությունը Ռիքսի Քոլեջում մնալու համար: Նա գիտեր բոլոր պատճառները, որ իմ ծառայությունը դեռ կարող էր կարևոր լինել քոլեջում և Ռեքսբուրգում: Ուստի ես այնտեղ էի, որ հաճախակի աղոթքով հարցնեի Երկնային Հորը, թե ինչ կպատվիրեր նա ինձ անել օգնելու համար նրանց, ում ունեցվածքը և կյանքը վտանգված էր: Ես ժամերով աշխատում էի այլ մարդկանց հետ, որ տներից մաքրեի ցեխն ու ջուրը: Նրա կամքը իմանալու և կատարելու իմ ցանկությունը ինձ տվեց հոգեպես լարվելու հնարավորություն:

Այդ միջադեպը լուսաբանում է մեկ այլ եղանակ, որով մենք կարող ենք խոչընդոտ ստեղծել Աստծո կամքն իմանալու կամ մեր հանդեպ Նրա սերը զգալու համար. մենք չենք կարող համառորեն հետևել *մեր* օրակարգին, երբ Տերն ունի Իր սեփականը: Ես կարծում էի, որ ես Ռեքսբուրգում բավականաչափ ժամանակ էի տրամադրել իմ ծառայություններին և շտապում էի առաջ շարժվել: Երբեմն մեր սեփական օրակարգի համաձայն գործելու մեր համառությունը կարող է թաքցնել մեզ վերաբերվող Նրա կամքը:

Լիբերթիի բանտում Մարգարե Ջոզեֆը խնդրեց Տիրոջը, որ պատժեր նրանց, ովքեր Միսսուրիում հալածում էին Եկեղեցու անդամներին: Նրա աղոթքը որոշակի և շուտափույթ հատուցում էր ակնկալում: Սակայն Տերը պատասխանեց, որ «ոչ շատ տարիներ անց»[4] Նա կպատժեր Եկեղեցու այդ թշնամիներին: Վարդապետություն և Ուխտերի 121-րդ բաժնի 24 և 25-րդ հատվածներում Նա ասում է.

«Ահա, իմ աչքերը տեսնում են և գիտեն բոլոր նրանց գործերը, և իր ժամանակին ես սրընթաց դատաստան ունեմ պահած, նրանց բոլորի համար.

Քանզի նշանակված ժամանակ կա ամեն մարդու համար՝ ըստ կատարած գործերի»:[5]

Մենք հեռացնում ենք տաղավարը, երբ մենք զգում և աղոթում ենք՝ «Թող քո կամքը լինի» և «Քո ժամանակին»: Նրա ժամանակը պետք է բավականաչափ շուտ լինի մեզ համար, քանի որ մենք գիտենք, որ Նա ուզում է միայն լավագույնը:

Իմ որդիներից մեկի կինը երկար տարիներ անց էր կացրել ունենալով այնպիսի զգացողություն, որ Աստված տաղավար էր դրել իր վրա: Նա երեք երեխաների երիտասարդ մայր էր, ով ցանկանում էր ունենալ ավելի շատ երեխաներ: Երկու վիժումներից հետո նրա աղերսանքի աղոթքները վերածվեցին տառապանքի: Մինչ ավելի շատ անպտուղ տարիներ էին անցնում, նա զգաց, որ գայթակղվում էր բարկանալ: Երբ նրա կրտսերը դպրոց գնաց, նրա տան դատարկությունը թվում է մեղադրում էր նրան մայրության վրա կենտրոնացած լինելու համար, այդ ազդեցությունն էին թողնում նաև ծանոթների չպլանավորված և նույնիսկ անցանկալի հղիությունները: Նա զգում էր այնպես հավատարիմ և նվիրված, ինչպես Մարիամը, ով հայտարարեց. «Ահա Տիրոջ աղախինն եմ»:[6] Սակայն անկախ այն բանից, որ նա ասում էր այս խոսքերը իր սրտում,

նա չէր կարողանում ոչինչ լսել ի պատասխան:

Հուսալով բարձրացնել նրա տրամադրությունը՝ ամուսինը հրավիրեց նրան միանալ իրեն դեպի Կալիֆորնիա կատարվող գործնական ուղևորության ժամանակ; Մինչ ամուսինը հաճախում էր ժողովների, նա քայլում էր գեղեցիկ, ամայի ծովափում: Նա բարձրաձայն աղոթեց, մինչ իր սիրտը կարծես պատրաստ էր պայթել: Առաջին անգամ նա խնդրեց ոչ թե ևս մեկ երեխա, այլ իմանալ աստվածային նպատակը: «Երկնային Հայր»,- աղաղակեց նա,- «ես կտամ քեզ իմ ողջ ժամանակը. խնդրում եմ, ցույց տուր ինձ, թե ինչպես լցնեմ այն»: Նա արտահայտեց իր հոժարությունը տանել իր ընտանիքն այնտեղ, որտեղ էլ որ նրանցից պահանջվի գնալ: Այդ աղոթքը առաջ բերեց խաղաղության անսպասելի զգացողություն: Այն չբավարարեց նրա մտքի ցանկությունը, սակայն տարիների ընթացքում առաջին անգամ այն խաղաղություն բերեց նրա սրտին:

Աղոթքը հեռացրեց տաղավարը և բացեց երկնքի պատուհանները: Երկու շաբաթից նա իմացավ, որ նա հղի էր: Երեխան ընդամենը մեկ տարեկան էր, երբ իմ տղան ու նրա կինը միսիայի կանչ ստացան: Քանի որ նա խոստացել էր գնալ ցանկացած տեղ և անել ցանկացած բան, նա մի կողմ դրեց վախը և իր երեխաներին տարավ անդրծովյան երկրներ: Միսիայի ժամանակ նա ունեցավ ևս մեկ երեխա՝ միսիոներների տեղափոխությունների օրը:

Երկնքի կամքին լիովին հնազանդվելը, ինչպես այս երիտասարդ մայրն արեց, առանցքային դեր ունի հոգևոր տաղավարները հեռացնելու հարցում, որոնք մենք երբեմն դնում ենք մեր գլխավերևում: Սակայն այդ չի երաշխավորում շուտափույթ պատասխաններ մեր աղոթքների համար:

Աբրահամի սիրտը թվում է երկար ժամանակ արդար էր, նախքան Սառան ունեցավ Իսահակին և նախքան նրանք ստացան իրենց խոստումի երկիրը: Երկինքը նախ այլ նպատակներ ուներ իրագործելու: Այդ նպատակները ներառում էին ոչ միայն Աբրահամի և Սառայի հավատքը զարգացնելը, այլ նաև նրանց հավերժական ճշմարտություններ ուսուցանելը, որոնք նրանք կիսեցին ուրիշների հետ իրենց ճանապարհին, երկար ժամանակ շրջագայելով, մինչև կհասնեին իրենց համար նախապատրաստված երկիրը: Տիրոջ հետաձգումները հաճախ երկար են թվում. որոշները տևում են ողջ կյանքի ընթացքում: Սակայն դրանք միշտ նախատեսված են օրհնություն բերելու համար: Դրանք երբեք չպիտի լինեն միայնակության, վշտի կամ անհամբերության ժամանակներ:

Չնայած, որ միշտ չէ Նրա ժամանակը համընկնում մեր ժամանակի հետ, մենք կարող ենք վստահ լինել, որ Տերը պահում է Իր խոստումները: Ձեզանից յուրաքանչյուրի համար, ով այժմ զգում է, որ Նա դժվար հասանելի է, ես վկայում եմ, որ կգա օրը, երբ մենք բոլորս էլ կտեսնենք նրան դեմ առ դեմ: Ճիշտ ինչպես այժմ ոչինչ չկա, որ խանգարի Նրան տեսնել մեզ, չի լինի ոչինչ, որ կխանգարի մեզ տեսնել Նրան: Մենք բոլորս էլ կկանգնենք Նրա առջև անհատապես: Ինչպես իմ թոռնուհին, մենք բոլորս ուզում ենք տեսնել Հիսուս Քրիստոսին այժմ, սակայն մեր անտարակուսելի հանդիպումը Նրա հետ դատաստանի ժամանակ կլինի ավելի հաճելի, եթե մենք նախ անենք այն բաները, որոնք կօգնեն մեզ այնպես ճանաչել Նրան, ինչպես Նա է ճանաչում մեզ: Մինչ մենք ծառայում ենք Նրան, մենք նմանվում ենք Նրան, և մենք ավելի մոտ ենք զգում Նրան, մինչ մենք մոտենում ենք այն օրվան, երբ ոչինչ չի փակի մեր տեսադաշտը:

Աստծուն մոտենալու այս գործընթացը կարող է շարունակական բնույթ կրել: «Եկեք, ով իմ Հոր օրհնածները, ժառանգեցեք աշխարհքի սկզբից ձեզ համար պատրաստված թագավորությունը»,[7] ուսուցանում է Փրկիչը: Եվ հետո Նա ասում է մեզ, թե ինչպես.

«Որովհետև սովեցի, և դուք տվիք ինձ ուտել. ծարավեցի և խմեցրիք ինձ. օտար էի, և ինձ ձեզ մոտ առաք.

Մերկ էի, և հագցրիք ինձ. հիվանդ էի, և ինձ այցելեցիք. բանտի մեջ էի, և ինձ մոտ եկաք:

Այն ժամանակ արդարները կպատասխանեն նորան և կասեն. Տեր, ե՞րբ տեսանք քեզ սոված, և կերակրեցինք, կամ ծարավ, և խմեցրինք:

Ե՞րբ տեսանք քեզ օտար, և մեզ մոտ առանք, կամ մերկ, և հագցրինք:

Ե՞րբ տեսանք քեզ հիվանդ, կամ բանտի մեջ, և եկանք քեզ մոտ:

Եվ թագավորն էլ կպատասխանէ և կասէ նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք»:[8]

Երբ մենք անում ենք այն, ինչ Նա է ուզում, որ մենք անենք Իր Հոր զավակների համար, Տերը համարում է դա Իր համար գործված բարություն, և մենք ավելի մոտ կզգանք Նրան, երբ զգանք Նրա սերը և Նրա հավանությունը: Կգա ժամանակ, երբ մենք կդառնանք Նրա նման և Դատաստանի Օրվա մասին կմտածենք ուրախ ակնկալությամբ:

Տաղավարը, որ թվում է թաքցնում է ձեզ Աստծուց, կարող է լինել մարդկային վախը ուրիշներին ծառայելու այս ցանկության փոխարեն: Փրկչի միակ դրդապատճառը եղել է մարդկանց օգնելը: Ձեզանից շատերը, ինչպես և ես, վախեցել ենք մոտենալ մեկին, ում վիրավորել ենք, կամ ով ցավ է պատճառել մեզ: Սակայն ես տեսել եմ, թե ինչպես է Տերը ժամանակ առ ժամանակ փափկացրել սրտեր, ներառյալ իմ սեփականը: Եվ ուստի, ես պատվիրում եմ ձեզ գնալ մեկի մոտ Տիրոջ համար, անկախ ձեր ունեցած ցանկացած մտահոգությունից,

հղել սեր և ներողամտություն: Ես խոստանում եմ ձեզ, որ մինչ դուք անեք դա, դուք կզգաք Փրկչի սերը այդ մարդու հանդեպ և կզգաք Նրա սերը ձեր հանդեպ, և կզգաք, որ այն գալիս է ոչ շատ հեռվից: Ձեր համար այդ դժվարությունը կարող է լինել ընտանիքում, այն կարող է լինել համայնքում, կամ այն կարող է լինել մեկ այլ ազգի մեջ:

Սակայն եթե դուք Տիրոջ անունով գնաք օրհնելու ուրիշներին, Նա կտեսնի և կհատուցի ձեզ: Եթե դուք բավականաչափ հաճախ անեք դա և բավականաչափ երկար ժամանակ, դուք փոփոխություն կզգաք ձեր իսկ էության մեջ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Դուք ոչ միայն մոտ կզգաք Նրան, այլ դուք նաև ավելի ու ավելի կզգաք, որ դուք դառնում եք Նրա նման: Այնուհետև, երբ դուք տեսնեք Նրան, ինչպես մենք բոլորս էլ կտեսնենք, դա ձեր համար կլինի այնպես, ինչպես Մորոնիի համար էր, երբ նա ասաց. «Եվ այժմ, ես հղում եմ բոլորիդ՝ մնաք բարով: Ես շուտով գնալու եմ հանգիստ առնելու Աստծո դրախտում, մինչև որ իմ հոգին և մարմինը կրկին կվերամիավորվեն, և ես առաջ կբերվեմ հաղթական, օդի միջով՝ հանդիպելու ձեզ, մեծ Եհովայի՝ թե ողջերի, թե մեռածների Հավերժական Դատավորի հաճելի դատարանի առջև: Ամեն»:[9]

Եթե մենք ծառայենք հավատքով, հեզությամբ և Աստծո կամքը կատարելու ցանկությամբ, ես վկայում եմ, որ մեծ Եհովայի դատաստանը հաճելի կլինի: Մենք կտեսնենք մեր սիրող Երկնային Հորը և Նրա Որդուն, ինչպես նրանք տեսնում են մեզ այժմ՝ կատարյալ պարզությամբ և կատարյալ սիրով: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 121.1:
2. Տես Մատթեոս 6.10; Ղուկաս 11.2; 3 Նեփի 13.10; Եթեր 12.29; Վարդապետություն և Ուխտեր 109.44; Մովսես 4.2:
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 130.22:
4. Վարդապետություն և Ուխտեր 121.15:
5. Վարդապետություն և Ուխտեր 121.24–25:
6. Ղուկաս 1.38:
7. Մատթեոս 25.34:
8. Մատթեոս 25.35–40:
9. Մորոնի 10.34:

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Քավությունը

Ուր էլ որ մեր անդամները և միսիոներները գնան, մեր ուղերձը հավատքի և հույսի ուղերձ է առ Փրկիչ Հիսուս Քրիստոսը:

Իմ ուղերձն ուղղված է մեր մեջ նրանց, ովքեր տառապում են, կքված են մեղքի, թուլության, անհաջողության, վշտի և հուսահատության տակ:

1971թ. ինձ հանձնարարվել էր մասնակցել ցցի համաժողովին Արևմտյան Սամոայում և նոր ցցի կազմավորմանը Յուպոլո կղզում: Հարցազրույցներից հետո մենք չարտերային փոքր ինքնաթիռով թռանք Սավայի կղզի, այնտեղ ցցի համաժողովն անցկացնելու համար: Ինքնաթիռը վայրէջք կատարեց խոտով ծածկված դաշտում Ֆապալայում, իսկ հաջորդ օրը պետք է մեզ հետ տաներ Ուպոլո կղզի:

Այն օրը, երբ մենք վերադառնում էինք Սավայիից, անձրևոտ էր: Իմանալով, որ ինքնաթիռը չէր կարող վայրէջք կատարել թաց խոտի վրա, մենք մեքենայով գնացինք դեպի կղզու արևմտյան ծայրը, որտեղ ջրի կորալային հատվածում կար վազքուղի: Մենք սպասեցինք մինչև մթնելը, սակայն ոչ մի ինքնաթիռ չեկավ: Վերջապես մենք ռադիոկապով տեղեկացանք, որ փոթորկի պատճառով ինքնաթիռը չէր կարողացել թռիչք կատարել: Մենք ռադիոկապով հայտնեցինք, որ կարող էինք գալ փոքր նավով: Մեզ պետք է որևէ մեկը դիմավորեր Մուլիֆանուայում:

Դուրս գալով Սավայի նավահանգստից, 12 մետրանոց նավի նավապետը հարցրեց միսիայի նախագահին, թե արդյոք նա էլեկտրական լապտեր ունի: Բարեբախտաբար, նա ուներ և տվեց այն նավապետին: Մենք անցանք 21 կմ դեպի Յուպոլո կղզի բավականին ալեկոծված ջրերով: Մեզանից ոչ ոք չէր մտածում անգամ, որ տրոպիկական կատաղի փոթորիկը վրա էր հասել կղզուն, իսկ մենք գնում էինք ուղիղ դրա ուղղությամբ:

Մենք հասանք Մուլիֆանուայի նավահանգիստ: Մենք պետք է անցնեինք ժայռերի կողքով ձգվող նեղ ջրանցքով: Սովորաբար ափին բլրի վրա շողում էր մի լույս, իսկ ավելի ցածր՝ երկրորդ լույսը, որոնք նշմարում էին ճանապարհը նեղուցի միջով: Եթե նավը այնպիսի դիրք ընդուներ, որ երկու լույսերը մեկը մյուսի վրա հայտնվեին, ապա այն կուղղվեր նեղուցի երկարությամբ և ճիշտ կշարժվեր վտանգավոր ժայռերի միջով:

Բայց այդ գիշեր կար միայն մեկ լույս: Երկու երեց ափին սպասում էին մեզ, սակայն անցումը սովորականից շատ ավելի ժամանակ խլեց: Ժամեր շարունակ մեր նավից ազդանշաններ չստանալուց հետո,

երեցները հոգնել էին և քնել, մոռանալով վառել երկրորդ՝ ավելի ցածր լույսը: Արդյունքում, ժայռերի միջով անցումը լավ չէր երևում:

Նավապետը փորձում էր հնարավորինս ուղղել նավը ափի բարձր լույսի ուղղությամբ, մինչ նավաստին աշխատում էր պարտքով վերցրած լապտերով լուսավորել առջևում հանդիպող ժայռերը: Մենք լսում էինք, ինչպես էին ալիքները ուժով հարվածում ժայռերին: Երբ մենք այնքան էինք մոտենում, որ տեսնում էինք դրանք, նավապետը ողջ ուժով գոռում էր, որ ետ դառնայինք և սկսեինք կրկին փնտրել անցումը:

Բազմաթիվ փորձերից հետո նա հասկացավ, որ անցումը գտնել հնարավոր չէր: Մենք կարող էինք միայն փորձել հասնել 64 կմ հեռավորության վրա գտնվող Ապիա նավահանգստին: Մենք անզոր էինք տարերքի մոլեգնած ուժերի առաջ: Ես չեմ հիշում, թե երբևէ եղել եմ նման մթության մեջ:

Առաջին մեկ ժամվա ընթացքում մենք ոչ մի հաջողության չհասանք, թեև շարժիչը խեղդվելով աշխատում էր: Նավը դժվարությամբ բարձրացավ ուղղահայաց ալիքի վրա, մի պահ ուժասպառ կանգնեց ծայրին, և պտուտակները դուրս եկան ջրից: Պտուտակների թրթիռը այնպես էր ցնցում նավը, որ այն գրեթե կտորկտոր եղավ, մինչև որ շուռ եկավ մյուս կողմի վրա:

Մենք փռված պառկել էինք բեռնամասի ծածկի վրա, մի կողմից բռնվելով ձեռքերով, իսկ ոտքերի թաթերով սեղմելով մյուս կողմը, որպեսզի ջուրը մեզ չքշեր ծովը: Եղբայր Մարկ Լիթլֆորդը բաց թողեց ձեռքերը և քշվեց երկաթե ստորին ճաղաշարքի վրա: Նրա գլուխը կտրված էր, բայց ճաղաշարքը պահում էր նրա մարմինը:

Ի վերջո, մենք առաջ շարժվեցինք և լուսաբացին վերջապես հասանք Ապայի նավահանգիստ: Նավերը կապած էին իրար ապահովության համար: Դրանք ամբողջովին պատել էին նավամատույցը: Մենք զգույշ անցանք դրանց միջով, աշխատելով չարթանացնել տախտակամածին քնած մարդկանց: Մենք հասանք Պեսեգա, չորացրեցինք մեր հագուստը և ուղղվեցին դեպի Վայլութայի՝ նոր ցիցը բացելու:

Ես չգիտեմ, թե ով էր մեզ սպասում Մուլիֆանուայի ծովափին: Ես թույլ չտվեցի, որ ինձ ասեին: Բայց իրականությունն այն էր, որ առանց այդ ցածր լույսի մենք բոլորս կարող էինք կորած լինել:

Մեր օրիներգերի գրքում կա մի շատ հին և հազվադեպ երգվող օրիներգ, որը հատուկ նշանակություն ունի ինձ համար:

Փարոսի լույսը բարի
Ողորմության լույսը մեր Հոր
Լուսավորում է մեր ուղին
Դեպի ափերն ապահով:
Թող լույսերը վառ լինեն,
Ծովի վրա շողերն զցեն,
Որ նավաստիներն տանջված
Փրկության ճամփան գտնեն:

Մութ է գիշերը մեղքի,
Բարձր է գոռոցն ալիքի:
Իսկ աչքերը մեր անքուն
Ափի լույսերն են փնտրում:

Եղբայր, լապտերդ վառիր,
Որ խեղճ ու հոգնած նավաստին
Նավահանգիստը գտնի,
Կուլ չգնա խենթ ծովին:[1]

Այսօր ես դիմում եմ նրանց, ովքեր կարող են մոլորված լինել և փնտրում են այդ ցածր լույսը, որ օգնի իրենց վերադառնալ հետ:

Ամենասկզբից պարզ էր, որ մահկանացու կյանքում մենք հեռու ենք լինելու կատարյալից: Չէր ակնկալվում, որ մենք պետք է ապրեինք առանց խախտելու այս կամ այն օրենքը:

«Քանզի բնական մարդն Աստծո մի թշնամի է, և եղել է Ադամի

անկումից ի վեր և կլինի հավիտյանս հավիտենից, մինչև նա չենթարկվի Սուրբ Հոգու հորդորներին և հանի բնական մարդուն ու դառնա սուրբ, Տեր Քրիստոսի քավությամբ»:[2]

Թանկագին Մարգարիտից մենք հասկանում ենք, որ «ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել [Աստծո արքայության մեջ»,[3] և այդ պատճառով ճանապարհ է տրվել բոլոր նրանց, ովքեր մեղք կգործեն, որ ապաշխարեն և դառնան արժանի կրկին լինելու մեր Երկնային Հոր ներկայության մեջ:

Միջնորդ, Քավիչ ընտրվեց, ով կապրեր Իր կյանքը կատարյալ ձևով, չէր գործի ոչ մի մեղք և «իրեն զոհ է մատուցում մեղքի համար՝ բավարարելու օրենքի պահանջները, բոլոր նրանց համար, ովքեր ունեն կոտրված սիրտ ու փշրված հոգի. և ուրիշ ոչ մեկի համար օրենքի պահանջները չեն կարող բավարարվել»:[4]

Քավության կարևորության մասին Ալմայում մենք սովորում ենք. «Քանզի անհրաժեշտ է, որ մի քավություն արվի . . . այլապես, ողջ մարդկությունն անխուսափելիորեն պիտի կորչի»:[5]

Եթե դուք սխալներ չեք գործում, դուք Քավության կարիքը չունեք: Եթե դուք սխալներ եք գործում, իսկ մենք բոլորս ենք գործում՝ չնչին, թե լուրջ, ապա դուք ահռելի կարիք ունեք պարզելու, թե ինչպես կարող եք ջնջել դրանք, որպեսզի այլևս մթության մեջ չմնաք:

«[Հիսուս Քրիստոսն է] լույսն ու կյանքն աշխարհի»:[6] Եթե մենք մեր հայացքը սևեռենք Նրա ուսմունքների վրա, մենք կուղղորդվենք դեպի հոգևոր ապահովության նավահանգիստը:

Հավատո երրորդ հանգանակն ասում է. «Մենք հավատում ենք, որ Քրիստոսի Քավության շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին»:[7]

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է. «Մարդիկ չեն կարող ներել իրենց սեփական մեղքերը, նրանք չեն կարող ինքնուրույն

մաքրվել իրենց սեփական մեղքերի հետևանքներից: Մարդիկ կարող են դադարել մեղք գործելը և ճիշտ գործել ապագայում, և քանի դեռ նրանց արարքները ընդունելի են Տիրոջ կողմից, նրանք կարող են արժանի համարվել: Բայց ո՞վ պետք է վերականգնի այն վնասները, որ նրանք հասցրել են իրենց և ուրիշներին, որոնք իրենք ինքնուրույն, կարծես, չեն կարող վերականգնել: Հիսուս Քրիստոսի քավության միջոցով ապաշխարողի մեղքերը կմաքրվեն, թեև դրանք լինեն ալ կարմիր, կդարձվեն ճերմակ բրդի նման [տես Եսայիա 1.18]: Սա է ձեզ տրված խոստումը»:[8]

Մենք հստակ չգիտենք, թե ինչպես Տերը կատարեց Քավությունը: Բայց մենք գիտենք, որ խաչելիության դաժան տանջանքները միայն մի մասն էին այն ահավոր ցավի, որը սկսվեց Գեթսեմանում՝ տառապանքի սուրբ վայրում, և ավարտվեց Գողգոթայի վրա:

Ղուկասը գրում է.

«Եվ ինքը նորանցից հեռացավ մի քարընկեցի չափ, ծունր դրավ, աղոթք էր անում,

Եվ ասում. Հայր, եթե կամիս այս բաժակը անցրու ինձանից, սակայն ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի:

Եվ հրեշտակ երևեցավ նորան երկնքիցը, և զորացնում էր նորան:

Եվ նա տագնապի մեջ լինելով, ավելի եռանդով էր աղոթք անում: Եվ նորա քրտինքն էր ինչպես արյունի կաթիլներ, որ թափվում են երկրի վերայ»:[9]

Առայժմ ես կարող եմ ասել, որ կա միայն մեկ գրառում, ըստ որի Փրկիչն իր սեփական խոսքերով նկարագրում է այն, ինչ տարել է Գեթսեմանի այգում: Հայտնությունը գրում է.

«Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն.

Բայց, եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես.

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից»:[10]

Ձեր կյանքի ընթացքում կարող են լինել ժամանակներ, երբ դուք գնաք այնպիսի տեղեր, ուր երբեք չպետք է գնայիք և անեք բաներ, որ երբեք չպետք է կատարեիք: Եթե դուք ետ շրջվեք մեղքից, դուք մի օր կկարողանաք զգալ այն խաղաղությունը, որը գալիս է լիարժեք ապաշխարության ուղով գնալու արդյունքում:

Անկախ նրանից, թե ինչպիսին են եղել մեր մեղսագործությունները, անկախ նրանից, թե որքան են մեր արարքները վնասել մյուսներին, այդ մեղքը կարող է մաքրվել: Ինձ համար, երևիթե, բոլոր սուրբ գրություններում ամենասքանչելի արտահայտությունը Տիրոջ հետևյալ խոսքերն են. «Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք»:[11]

Դա է Հիսուս Քրիստոսի ավետարանի և Քավության խոստումը՝ վերցնել նրան, ով գալիս է, նրան, ով կմիանա, և անցկացնել նրանց փորձառության միջով այնպես, որպեսզի կյանքի վերջում նրանք կարողանան գնալ վարագույրի մյուս կողմը՝ ապաշխարած իրենց մեղքերից և մաքրված Քրիստոսի արյան միջոցով:[12]

Դա է այն, ինչ անում են Վերջին Օրերի Սրբերը ողջ աշխարհում: Դա է այն Լույսը, որը մենք առաջարկում ենք նրանց, ովքեր խավարի մեջ են և կորցրել են իրենց ճանապարհը: Ուր էլ որ մեր անդամները և միսիոներները գնան, մեր ուղերձը

հավատքի և հույսի ուղերձ է առ Փրկիչ Հիսուս Քրիստոսը:

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը գրել է «Արդյոք երկա՞ր է ճամփադ» օրհներգի խոսքերը: Նա իմ թանկագին ընկերն էր: Այն պարունակում է խրախուսանք և խոստում նրանց համար, ովքեր կցանկանան հետևել Փրկչի ուսմունքներին.

Արդյոք երկա՞ր է ճամփադ,
Կարծես անծայր անապատ:
Արդյո՞ք դժվար, քարքարոտ,
Գնում ես ճամփով այս փշոտ,
Արևի տակ թեժ կեսօրի,
Գնում ես բարձունքներ դեպի:

Արդյո՞ք սիրտդ է վշտացած,
Եվ հոգիդ վաղուց հոգնած
Բեռից՝ բաժին քեզ հասած:
Արդյո՞ք ծանր է բեռը այդ
Որ կրում ես դու ստիպված:
Չկա՞ մեկը, որ օգնի՝ բեռը քո
թեթևացնի:

Սիրտդդ թող չնվաղի,
Աջևում կա նոր ուղի,
Կա Նա, ով կողքիդ է միշտ:
Գլուխը բարձր քո պահիր,
Նրա ձեռքից ամուր բռնիր,
Նա կտանի քեզ դեպի նոր

Բարձունքները լուսավոր,
Ուր նեղ օրերդ չես հիշի:
Կյանքդ մեղքից Նա կազատի
Արցունքներդ կարբի,
Վշտերը քո կփարատի:
Ձեռքը բռնած Նրա հետ ճամփադ
դժվար այս անցիր:[13]

Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. "Brightly Beams Our Father's Mercy," *Hymns,* no. 335.
2. Մոսիա 3.19:
3. Մովսես 6.57:
4. 2 Նեփի 2.7:
5. Ալմա 34.9:
6. Մոսիա 16.9:
7. Հավատո հանգանակներ 1.3:
8. *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (1998), 99–100.
9. Ղուկաս 22.41–44:
10. Վարդապետություն և Ուխտեր 19.16–18:
11. Վարդապետություն և Ուխտեր 58.42:
12. Տես Հայտնություն 1.5:
13. "Does the Journey Seem Long?" *Hymns,* no. 127.



Լինդա Ք. Բըրթըն
Սփոփող Միության գերագույն նախագահ

Նախ նկատեք, ապա ծառայեք

Փորձ ձեռք բերելու հետ մեկտեղ յուրաքանչյուրս ավելի է նմանվում Փրկչին, ծառայելով Աստծո զավակներին:

Ս եծագույն ապացույցներից մեկը, որ մեր սիրելի մարգարեն՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը ընտրված ծառա է, այն է, որ նա սովորել է հետևել մարդկանց անհատապես՝ մեկ առ մեկ ծառայելու Փրկչի օրինակին: Մեզանից նրանք, ովքեր մտել են մկրտության ջրերը, ուխտել են անել նույնը: Մենք ուխտել ենք «միշտ հիշել [Փրկչին] և պահել նրա պատվիրանները»,[1] իսկ Նա ասել է. «Սա է իմ պատվիրանը, որ իրար սիրեք, ինչպես ես ձեզ սիրեցի»:[2]

Նկատեք, թե ինչպես են Նախագահ Մոնսոնի հետևյալ խոսքերը նույն հրավերը պարունակում. «Մենք շրջապատված ենք նրանցով, ովքեր մեր ուշադրության, մեր խրախուսանքի, մեր աջակցության, մեր սփոփանքի, մեր բարության կարիքն ունեն: . . . Մենք Տիրոջ ձեռքերն ենք այստեղ՝ երկրի վրա, հանձնարարական ունենալով ծառայելու և բարձրացնելու Նրա զավակներին: Նա ապավինում է մեզանից յուրաքանչյուրին»:[3]

Դուք լսեցի՞ք դա, հրավեր՝ սիրել միմյանց: Ոմանց համար մեկ առ մեկ ուրիշներին ծառայելը կամ սպասավորելը, հետևելով Փրկչի օրինակին, այդքան էլ հեշտ չէ: Սակայն փորձ ձեռք բերելու հետ մեկտեղ յուրաքանչյուրս ավելի է նմանվում Փրկչին, ծառայելով Աստծո զավակներին: Որպեսզի մենք ավելի շատ սիրենք միմյանց, ես կառաջարկեմ հիշել չորս բառ. «Նախ նկատեք, ապա ծառայեք»:

Մոտ 40 տարի առաջ ամուսինս և ես ուրբաթ օրվա մեր ժամադրությանը գնացինք տաճար: Մենք շատ կարճ ժամանակ էր, ինչ ամուսնացած էինք, և ես հուզված էի, քանի որ որպես նորապսակ դա իմ երկրորդ այցելությունն էր: Կողքս նստած մի քույր, հավանաբար, դա նկատեց: Նա մոտեցավ և ակնածալից շշնջաց. «Մի մտահոգվիր: Ես կօգնեմ քեզ»: Վախերս փարատվեցին և ես կարողացա վայելել տաճարի նիստի մնացած մասը: Նա նկատեց, ապա ծառայեց:

Մենք բոլորս հրավիրված ենք հետևել Հիսուսի ուսմունքներին և սպասավորել մյուսներին: Այս հրավերը չի սահմանափակվում հրեշտակի հոգի ունեցող քույրերով: Մինչ ես կկիսվեմ անդամների մի քանի առօրյա օրինակներով, ովքեր սովորել են նկատել, ապա ծառայել, ուշադրություն դարձրեք Հիսուսի

ուսմունքներին, որոնք պարունակվում են այդ օրինակներում:

Երեխաների խմբի վեցամյա մի երեխա ասել է. «Երբ ես ընտրվեցի լինելու դասարանի օգնական, ես կարող էի ընտրել մի ընկեր, որը կաշխատեր ինձ հետ: Ես ընտրեցի [մի տղայի, որն ինձ նեղացնում էր], որովհետև ոչ ոք նրան չէր ընտրում: Ես ուզում էի, որ նա իրեն լավ զգար:[4]

Ի՞նչ էր նկատել այդ երեխան: Նա նկատել էր, որ դասարանի չարաճճին երբեք չէր ընտրվում: Ի՞նչ նա արեց, որպեսզի ծառայեր: Նա պարզապես ընտրեց նրան լինելու դասարանի օգնականի իր ընկերը: Հիսուսն ուսուցանել է. «Սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին, բարի արեք ձեզ ատողներին»:[5]

Մի ծխում, Ահարոնյան Քահանայություն կրողները սկզբում նկատեցին, ապա ծառայեցին իմաստալից եղանակով: Ամեն շաբաթ երիտասարդ տղամարդիկ վաղ ժամանում են և կանգնում հավաքատան դրսում՝ անձրևի, ձյան կամ թեժ արևի տակ, սպասելով իրենց ծխի տարեց անդամներին: Նրանք բարձրացնում են նրանց անվասայլակներից կամ օգնում դուրս գալ մեքենաներից, ամուր ձեռք մեկնում՝ բռնվելու համար, և համբերատարությամբ ուղեկցում են ճերմակած մազերով տարեցներին դեպի շենք: Նրանք իսկապես կատարում են Աստծո առաջ իրենց պարտականությունը: Նկատելով և ծառայելով, նրանք ապրում են ըստ Փրկչի ուսմունքի. «Այս իմ փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք»:[6] Երբ երիտասարդների նոր ուսումնական ծրագիրը սկսի գործել, այս երիտասարդ տղամարդկանց աչքերը, անկասկած, բաց կլինեն քրիստոսանման եղանակով ծառայելու էլ ավելի շատ հնարավորությունների համար:

Նկատելը և ծառայելը երբեմն մեծ ջանք է պահանջում: Ալեքսանդրիա անունով ոգեշնչված մի երիտասարդ աղջիկ նկատել էր, որ իր բարեկամուհին՝ Մեդիսոնը դժվարանում էր կատարել իր Անձնական Զարգացման պահանջները, քանի

որ հիվանդ էր ծանր աուտիզմով: Ալեքսանդրիան հավաքեց իր ծխի երիտասարդ կանանց, խորհրդակցեց նրա ղեկավարների հետ և որոշեց անել այն մասը, որը Մեդին չէր կարող անել ինքնուրույն: Երիտասարդ կանանցից յուրաքանչյուրը փոխարինաբար կատարեց Անձնական Զարգացման վարժությունների և ծրագրերի մասերը, որպեսզի Մեդին կարողանար ստանալ իր մեդալիոնը:[7]

Այդ երիտասարդ կանայք լավ առաջընթաց կունենան մայրության և Սփոփող Միության քույրության իրենց դերերում, որովհետև սովորում են նկատել և ծառայել գթասիրտ ձևով:

Նախագահ Մոնսոնը հիշեցրել է մեզ, որ «գթությունը՝ Քրիստոսի մաքուր սերը»[8], կամ այլ խոսքերով, նկատելը և ծառայելը, ակնհայտ է, երբ տարեց այրի կնոջը չեն մոռանում և ընդգրկում են ծխի գործերի մեջ, և երբ Սփոփող Միությունում միայնակ նստած կնոջը հրավիրում են, ասելով. «Եկեք, մեզ հետ նստեք»:[9] Այստեղ կիրառելի է ոսկե կանոնը. «Բոլոր բաները, որ դուք կամենում եք, որ մարդիկ անեն ձեզ, նույն ձևով դուք արեք նրանց»:[10]

Մի նկատող ամուսին ծառայեց երկու կարևոր ուղիներով: Նա պատմում է.

«Մի կիրակի ես օգնում էի կնոջս Երեխաների խմբում, որը լի էր եռանդուն յոթամյա երեխաներով: Երբ սկսվեց Երեխաների միացյալ ժամը, ես նկատեցի, որ դասարանի անդամներից մեկը անհանգիստ էր իր տեղում և, ակնհայտորեն, վատ էր իրեն զգում: Հոգին ինձ շշնջաց, որ նա հանգստության կարիք ունի, և ես նստեցի նրա կողքին և ցածր հարցրեցի, թե ինչ էր պատահել: Նա չպատասխանեց, . . . այնպես որ ես սկսեցի մեղմ երգել նրա համար:

Երեխաների խումբը նոր երգ էր սովորում, և երբ մենք երգեցինք. «Եթե սրտով լսեմ, Փրկչի ձայնը կլսեմ», ես սկսեցի զգալ, ինչպես մի աննկարագրելի լույս և ջերմություն լցրեցին իմ հոգին: . . . Ես անձնական վկայություն ստացա նրա և իմ հանդեպ Փրկչի սիրո մասին: . . . Ես իմացա, որ մենք Փրկչի ձեռքերում ենք, երբ ծառայում ենք որևէ մեկին»:[11]

Քրիստոսանման եղբայրը ոչ միայն նկատեց իր կնոջը եռանդուն յոթամյա երեխաներով լի դասարանում օգնելու կարիքը, այլ նաև անհատական ծառայություն մատուցեց կարիքի մեջ գտնվող երեխային: Նա հետևեց Փրկչին, որն ուսուցանել է. «Այն, ինչ դուք տեսաք ինձ անելիս, հենց այդ պետք է դուք անեք»:[12]

Վերջերս տեղի ունեցած ջրհեղեղը շատ հնարավորություններ բացեց Հիսուս Քրիստոսի աշակերտների համար՝ նախ նկատելու, ապա ծառայելու համար:

Տղամարդիկ, կանայք, դեռահասները և երեխաները տեսան, ինչպես քանդվեցին բիզնեսները և տները, թողեցին ամեն ինչ, որպեսզի օգնեին մաքրել և վերանորոգել վնասված կառույցները: Ոմանք նկատեցին լվացք անելու մեծածավալ աշխատանքով օգնելու կարիքը: Մյուսները խնամքով չորացնում էին լուսանկարները, իրավական փաստաթղթերը, նամակները, կարևոր այլ թղթերը, և զգուշորեն կախում էին դրանք, որ չորանային, փորձելով պահպանել, ինչ-որ հնարավոր էր: Նկատելը, ապա ծառայելը միշտ չէ, որ հարմար է, և ոչ միշտ է տեղավորվում մեր ժամանակացույցի մեջ:

Կա՞ նախ նկատելու, ապա ծառայելու ավելի լավ վայր, քան տունը: Դա ցուցադրում է Երեց Ռիչարդ Գ. Սքոթի կյանքից մի օրինակ.

«Մի գիշեր, մեր փոքր տղան՝ Ռիչարդը, որը սրտի խնդիր ուներ, լաց լինելով արթնացավ: Սովորաբար կինս էր վեր կենում լաց լինող երեխային խնամելու համար, բայց այս անգամ ես ասացի. «Ես կհոգամ նրա մասին»:

Նրա հիվանդության պատճառով, երբ նա սկսում էր լաց լինել, նրա փոքր սիրտը շատ արագ էր բաբախում: Նա փսխում էր և կեղտոտում անկողինը: Այդ գիշեր ես նրան շատ մոտ էի ինձ պահում, փորձելով հանգստացնել նրա արագ խփող սիրտը և դադարեցնել լացը, միևնույն ժամանակ փոխելով նրա շորերը և անկողնու սպիտակեղենը: Ես պահեցի նրան գրկումս, մինչև որ քնեց: Այդ ժամանակ ես չգիտեի, որ մի քանի ամիս անց նա մահանալու էր: Ես միշտ կհիշեմ, ինչպես էի պահում նրան իմ ձեռքերի մեջ այդ գիշերվա կեսին»: [13]

Հիսուսն ասել է. «Ձեզանից ով որ կամենայ մեծ լինիլ, թող ձեզ ծառա լինի»:[14]

Երբեմն մենք գայթակղվում ենք ծառայելու այն ձևով, որով ցանկանում ենք, և ոչ թե այնպես, ինչպես պահանջվում է այդ պահին: Երբ Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը սովորեցնում էր խնայողաբար ապրելու սկզբունքը, նա կիսվեց իր կնոջ համար նվեր առնելու իր օրինակով:

Կինը հարցրեց. «Դու սա գնո՞ւմ ես իմ, թե քո համար»:[15] Եթե մենք կիրառենք այդ հարցը մեզ համար, երբ ծառայում ենք, և հարցնենք. «Ես սա անում եմ Փրկչի՞, թե ինձ համար», ապա մեր ծառայությունը ավելի նման կլինի Փրկչի ծառայությանը: Փրկիչը հարցրել է, և մենք նույնպես պետք է հարցնենք. «Ի՞նչ եք ուզում, որ անեմ ձեզ»:[16]

Մի քանի շաբաթ առաջ ես շտապում և վազվզում էի իմ անելիքների ցանկի գործերի ետևից: Ես հույս ունեի այդ օրը տաճար գնալ, սակայն զգում էի, որ չափից դուրս զբաղված էի: Այն պահին, երբ տաճար գնալու համար չափազանց զբաղված լինելու միտքը թափանցեց իմ ուղեղը, այն արթնացրեց ինձ, ասելով, թե ինչն էր ամենակարևորը, որ ես պետք է անեի: Ես դուրս եկա իմ գրասենյակից, քայլելով դեպի Սոլթ Լեյքի Տաճար, մտածելով, թե երբ պետք է վերականգնեի ժամանակը, որը կորցնում էի: Բարեբախտաբար, Տերը համբերատար և մեծահոգի է, և հիանալի դաս ինձ ուսուցանեց այդ օրը:

Երբ ես նստած էի նիստերի սենյակում, մի երիտասարդ քույր մոտեցավ և ակնածանքով շշնջաց. «Ես այնքան հուզված եմ: Սա իմ երկրորդ այցն է տաճար: Դուք կարո՞ղ եք ինձ օգնել»: Ինչպե՞ս նա կարող էր իմանալ, որ դրանք հենց այն խոսքերն էին, որոնց կարիքը ես ունեի: Նա չգիտեր, բայց Երկնային Հայրը գիտեր: Նա նկատել էր իմ մեծագույն կարիքը: Ես կարիք ունեի ծառայելու: Նա հուշեց այդ խոնարհ երիտասարդ քրոջը ծառայել ինձ՝ հրավիրելով ինձ ծառայել իրեն: Ես հավատացնում եմ ձեզ, որ ես էի այն մարդը, որ առավելագույնս շահեց դրանից:

Խորը երախտագիտություն եմ հայտնում քրիստոսանման բազմաթիվ մարդկանց, ովքեր ծառայել են մեր ընտանիքին տարիների ընթացքում: Ես սրտանց շնորհակալություն եմ հայտնում իմ սիրելի ամուսնուն և ընտանիքին, ովքեր անձնազոհ և մեծ սիրով են ծառայում:

Թող որ մենք բոլորս նախ նկատենք, ապա ծառայենք: Եթե մենք այդպես ենք անում, մենք պահում ենք պատվիրանները և մեր ծառայությունը, ինչպես Նախագահ Մոնսոնի ծառայությունը, կլինի մեր աշակերտ լինելու ապացույցը: Ես գիտեմ, որ Փրկիչն ապրում է: Նրա Քավությունը հնարավորություն է տալիս մեզ ապրել Իր ուսմունքներով: Ես գիտեմ, որ Նախագահ Մոնսոնը այսօր մեր մարգարեն է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 20.77:
2. Հովհաննես 15.12:
3. Թոմաս Ս. Մոնսոն, «Ի՞նչ եմ ես արել մեկի համար այսօր», *Լիահոնա*, նոյ. 2009, 86:
4. Canyon H., “A Good Choice,” *Friend,* Jan. 2012, 31.
5. Մատթեոս 5.44:
6. Մատթեոս 25.40:
7. Տես “For Madison,” lds.org/youth/video/for-madison:
8. Մորոնի 7.47:
9. Թոմաս Ս. Մոնսոն, «Գթությունը երբեք չի խափանվում», *Լիահոնա,* նոյ. 2010, 125; տես նաև *Իմ արքայության դուստրերը՝ Սիոնի Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 101:
10. 3 Նեփի 14.12:
11. Al VanLeeuwen, “Serving the One,” *Liahona,* Aug. 2012, 19; տես նաև Սալլի Դեֆորդ, «Եթե սրտով լսեմ», *2011 Միացյալ ժամի ծրագիր,* 28:
12. 3 Նեփի 27.21:
13. Ռիչարդ Գ. Սքոթ, «Ամուսնության հավերժական օրհնությունները», *Լիահոնա,* մայիս 2011, 96:
14. Մատթեոս 20.26:
15. Ռոբերտ Դ. Հեյլս, «Դառնալով տնտեսվար մատակարար՝ աշխարհիկ և հոգևոր», *Լիահոնա,* մայիս 2009, 9:
16. Մատթեոս 20.32:

Երեց Վոլթեր Ֆ. Գոնզալես
Յոթանասունի Նախագահություն

Սրտով սովորել

Քրիստոսի մոտ գալու մեկ միջոց է՝ ձգտել սրտով սովորել հիմնական ճշմարտությունները:

«Եկեք ինձ մոտ, որպեսզի կարողանաք շոշափել և տեսնել»:[1] Սա պատվիրան էր, որ Փրկիչը տվեց հնագույն Ամերիկայի բնակիչներին: Նրանք իրենց ձեռքերով շոշափեցին և իրենց աչքերով տեսան, որ Հիսուսը Քրիստոսն էր: Այս պատվիրանը նույնքան կարևոր է մեզ համար այսօր, որքան իրենց ժամանակներում էր: Գալով դեպի Քրիստոսը մենք կարող ենք զգալ և «իմանալ անկասկած»,[2] ոչ թե մեր ձեռքերով և աչքերով, այլ ողջ սրտով և մտքով, որ Հիսուսը Քրիստոսն է:

Քրիստոսի մոտ գալու մեկ միջոց է՝ ձգտել սրտով սովորել հիմնական ճշմարտությունները: Այդ ժամանակ Աստծո կողմից եկող տպավորությունները մեզ գիտելիք կպարգևեն, որը մենք չենք ստանա այլ միջոցներով: Պետրոս Առաքյալը հաստատ գիտեր, որ Հիսուսը Քրիստոսն էր, կենդանի Աստծո Որդին: Փրկիչը բացատրեց, որ Պետրոսի գիտելիքի աղբյուրը ոչ թե «մարմինը և արյունն է . . . այլ Հայրը որ երկնքումն է»:[3]

Մարգարե Աբինադին բացատրեց Աստծուց մեր սիրտ եկող այդ զգացումների դերը: Նա ուսուցանեց, որ մենք չենք կարող լիարժեք հասկանալ սուրբ գրությունները, եթե մեր սիրտը չենք նվիրում հասկանալուն:[4]

Այդ ճշմարտությունը հրաշալիորեն է ներկայացված Անտուան դը Սենտ Էքզյուպերիի *Փոքրիկ Իշխանը* հանրաճանաչ մանկական գրքում: Այդ պատմության մեջ փոքրիկ իշխանը ընկերանում է աղվեստի հետ: Բաժանվելիս աղվեսը փոքրիկ իշխանի հետ կիսվում է մի գաղտնիքով: Նա ասում է. «Ահա իմ գաղտնիքը՝ . . . Միայն սիրտն է սրատես. ամենագլխավորը աչքով չես տեսնի»:[5]

Ութսունութ տարեկան Եղբայր Թոմաս Կոէլոն լավ օրինակ է հանդիսանում այն մարդու, որն իր սրտով տեսավ կարևոր բաները: Նա Ուրուգվայի Փայսանդույում մեր բարձրագույն խորհրդի հավատարիմ անդամն էր: Նախքան Եկեղեցուն միանալը նա իր մոտոցիկլը վարելիս վթարի ենթարկվեց: Երբ նա գետնին պառկած չէր կարողանում շարժվել, երկու միսիոներներ օգնեցին նրան ոտքի կանգնել և վերադառնալ տուն: Նա ասաց, որ ինչ-որ հատուկ զգացողություն ունեցավ, երբ միսիոներները մոտեցան օգնելու իրեն: Ավելի ուշ նա ուժեղ զգացողություն ունեցավ կրկին, երբ միսիոներներն ուսուցանում էին նրան: Այդ զգացումն այնպիսի ազդեցություն գործեց իր վրա, որ նա ընդամենը մի քանի օրում ծայրից-ծայր կարդաց Մորմոնի Գիրքը: Նա մկրտվեց և այդ օրից ի վեր աննախանձ ծառայեց: Ես հիշում եմ ինչպես էր նա իր մոտոցիկլը վարում մեր քաղաքի փողոցներով, անգամ ցուրտ և անձրևոտ ձմեռներին, մյուսներին բերելով Եկեղեցի, որպեսզի նրանք էլ, իր պես, կարողանային տեսնել, զգալ և անկասկած իմանալ:

Այսօր այնքան շատ տեղեկությամբ շրջապատված, թվում է, թե միլիոնավոր կայք էջեր քննելով կգտնենք մեզ անհրաժեշտ ամեն ինչ: Մենք կարող ենք գտնել լավ և վատ տեղեկություն համացանցում, սակայն տեղեկությունն ինքնին բավական չէ: Աստված մեզ տվել է մեկ այլ ավելի մեծ գիտելիքի, այսինքն՝ երկնքից ուղարկված գիտելիքի աղբյուր:[6] Մեր Երկնային Հայրը կարող է տալ մեզ նման գիտելիք, երբ մենք սրտով և մտքով զննենք սելեստիալ համացանցը: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ նա ուներ «հնագույն գիրքը [իր] սրտում, այսինքն՝ Սուրբ Հոգու պարգևը»:[7]

Մենք հասու ենք դառնում այդ սելեստիալ աղբյուրին, օրինակ՝ երբ կարդում ենք սուրբ գրությունները, լսում ենք կենդանի մարգարեին և աղոթում ենք: Նաև կարևոր է ժամանակ տրամադրել՝ հանգիստ լինել[8] և զգալ երկնային հուշումները և հետևել դրանց: Այդ ժամանակ մենք «կզգանք և կտեսնենք» բաներ, որոնք չենք կարող սովորել ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով: Երբ այդ սելեստիալ ցանցում զննում կատարելով փորձ ձեռք բերենք, մենք կտեսնենք ճշմարտությունը, անգամ երբ կարդանք աշխարհիկ պատմություն կամ այլ նյութեր: Ճշմարտության ազնիվ որոնողները Սուրբ Հոգու զորությամբ կիմանան ճշմարտությունը բոլոր բաների մասին:[9]

Այժմ, իմ զգուշացնող խոսքն է՝ այդ սելեստիալ ցանց մուտք գործելուն խանգարում են անօրինությունը և Տիրոջը մոռանալը: Նեփին ասաց իր եղբայրներին, որ նրանք չեն կարողանում «զգալ [Տիրոջ] խոսքերը», որովհետև «սրընթաց են անօրինություն գործելիս [և] դանդաղ Տիրոջը հիշելիս»:[10] Անօրինությունը նվազեցնում է տեսնելու, զգալու և

Բարսելոնա, Իսպանիա

մյուսներին սիրելու մեր ունակությունը: Մշտապես Տիրոջը հիշելը, որն է՝ աղոթել «սրտի ողջ կորովով»[11] և մտաբերել մեր հոգևոր փորձառությունները, կնպաստի, որպեսզի մեծանա Քրիստոսին վերաբերող բաները տեսնելու և զգալու մեր ունակությունը: Այժմ հարցնում եմ ձեզ.

- Հիշո՞ւմ եք խաղաղությունը, որ զգացիք, երբ շատ նեղություններից հետո հզոր աղոթքով կանչեցիք Հորը:
- Հիշո՞ւմ եք, որ ձեր սրտի հուշումին հետևելով փոխեցիք ձեր գործերի հաջորդականությունը:

Մորմոնի Գրքի մեծ մարդիկ ձգտում էին ավելի մեծ գիտելիքի հասու լինել՝ մտաբերելով իրենց հիմնական հոգևոր փորձառությունները: Ալման ամրացրեց և զորացրեց իր զավակներին՝ հիշեցնելով նրանց իր դարձի գալու մասին:[12] Հելամանն ուսուցանեց Նեփիին և Լեքիին հիշել, որ Քրիստոսի վեմի վրա պետք է կառուցեն իրենց հիմքը, որպեսզի դևը իշխանություն չունենա իրենց վրա:[13] Մենք նույնը պետք է անենք: Աստծուն հիշելը՝ օգնում է մեզ զգալ և ապրել: Դա ավելի իմաստալից է դարձնում Բենիամին թագավորի խոսքերը, որն ասաց. «Եվ այժմ, ո՛վ մարդ, հիշի՛ր և մի ոչնչացի՛ր»:[14]

Իմ փայփայած ամենասուրբ հիշողություններից մեկն այն զգացողությունն էր, երբ ես իմացա, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է: Այդ իսկ օրը ես անկասկած զգացի և իմացա բաներ, որ չէի կարող իմանալ այլ ճանապարհով: Ես իմացա, որ մենք կարող ենք ուրախություն զգալ, որոնք խոսքերն անկարող են արտահայտել: Նման հիշողությունն է, որ օգնում է հարատև երախտագիտություն ունենալ իմ կյանքում, այն զորացնում է ինձ դժվար պահերին:

Նա, ով գիտելիք է ստանում ոչ թե մարդուց, այլ մեր Երկնային Հորից, անկասկած կիմանա, որ Հիսուսը Քրիստոսն է, և սա Նրա Եկեղեցին է: Այդ գիտելիքն է, որ ուժ է տալիս անհրաժեշտ փոփոխություններ կատարել՝ Քրիստոսի մոտ գալու համար: Այդ նպատակով մենք հրավիրում ենք բոլորին՝ այժմ մկրտվել, ապաշխարել և դառնալ դեպի Նա այժմ:[15]

Գալով դեպի Քրիստոսը, ամեն ոք կարող է տեսնել, զգալ և անկասկած իմանալ, որ Քրիստոսը տառապեց մեր մեղքերի համար և քավեց մեր մեղքերը, որ մենք հավերժական կյանք ունենանք: Եթե ապաշխարենք, մենք անտեղի չենք տառապի:[16] Նրա շնորհիվ վիրավոր հոգիները կարող են բժշկվել և կոտրված սրտերը՝ ապաքինվել: Չկա բեռ, որ Նա չկարողանա թեթևացնել կամ վերցնել: Նա գիտի մեր թուլությունների և հիվանդությունների մասին: Ես խոստանում եմ և վկայում եմ ձեզ, որ երբ թվա, բոլոր դռները փակվել են, և ամեն ինչ կարծես ձախողվում է, Նա չի ձախողվի: Քրիստոսը կօգնի, և Նա է ելքը, երբ պայքար է մղվում հակվածության, լարվածության կամ մեկ այլ բանի դեմ: Նա գիտի «ինչպես պետք է օգնի իր ժողովրդին»:[17] Ամուսնություններն ու ընտանիքները, որոնք մաքառում են տարբեր պատճառներով՝ տնտեսական դժվարություններ, լրատվության ազդեցություն կամ ընտանեկան իրավիճակներ, կզգան երկնքի հանգստացնող ազդեցությունը: Սփոփող է, երբ «զգում ես և տեսնում ես», որ նա բարձրացավ մեռելներից «Իր թևերի մեջ ունենալով բժշկություն»,[18] որ Նրա շնորհիվ է, որ մենք կրկին կհանդիպենք և կգրկենք մեր մահացած սիրելիներին: Ճշմարտապես, դեպի Նա մեր դարձի վարձքը մեր բժշկությունն է:[19]

Ես անկասկած գիտեմ, որ այս ամենը ճշմարիտ է: Այդ պատճառով ես իմ ձայնն եմ միացնում հնագույն Ամերիկայի բնակիչներին, բացականչելով. «Ովսա՜ննա: Օրհնյա՜լ լինի Ամենաբարձյալ Աստծո անունը»:[20] Նա մեզ պարգևում է փրկություն: Ես վկայում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է՝ սուրբ Մեսիան: Նա է Զորաց Տերը՝ մեր Փրկիչն ու Քավիչը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 3 Նեփի 18.25:
2. 3 Նեփի 11.15:
3. Տես Մատթեոս 16.16–17:
4. Տես Մոսիա 12.27:
5. Անտուան դը Սենթ Էքզյուպերի, *Փոքրիկ իշխանը*, թարգմ. Ս. Հարությունյան (1966):
6. Տես Եթեր 4.13:
7. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 132.
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 101.16:
9. Տես Մորոնի 10.3–5:
10. 1 Նեփի 17.45:
11. Մորոնի 7.48:
12. Տես Ալմա 36.5–24; 38.6–9:
13. Տես Հելաման 5.12:
14. Մոսիա 4.30:
15. Տես 3 Նեփի 9.13:
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 19.16:
17. Ալմա 7.12:
18. 2 Նեփի 25.13; տես նաև 3 Նեփի 25.2:
19. Տես 2 Նեփի 16.10; 3 Նեփի 9.13:
20. Տես 3 Նեփի 11.15–17:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Առաջին մեծ պատվիրանը

Տիրոջ հանդեպ սերը մենք պետք է արտահայտենք նվիրված աշակերտի կյանքով:

Պատմության մեջ գրեթե չկա այլ խումբ, որի հանդեպ ես ավելի շատ կարեկցանք ունենամ, որքան այն տասնմեկ առաքյալների հանդեպ, ովքեր մնացել էին անմիջապես աշխարհի Փրկչի մահից հետո: Կարծում եմ, երբեմն մոռանում ենք, թե որքան անփորձ էին դեռ նրանք և, անհրաժեշտությունից ելնելով, որքան կախված էին նրանք դեռևս Հիսուսից: Ավելի շուտ Նա ասաց նրանց. «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ եւ ինձ չճանաչեցի՞ք»:[1]

Բայց, իհարկե, նրանց կարծիքով Հիսուսն այդքան էլ երկար չէր մնացել իրենց հետ: Երեք տարին այնքան էլ երկար ժամանակ չէ, որպեսզի մի բուռ նորադարձներից կանչել Տասներկու Առաքյալների մի ամբողջ քվորում, զտել նրանցից հին սովորությունները, ուսուցանել նրանց Հիսուս Քրիստոսի ավետարանի հրաշալիքները, և ապա թողնել նրանց՝ աշխատանքն առաջ տանելու, մինչև որ նրանք ևս կսպանվեն: Բավական ապշեցուցիչ հեռանկար նոր կարգված մի խումբ երեցների համար:

Հատկապես ցավոտ էր միայնակ մնալու մասը: Բազմիցս Հիսուսը փորձել էր նրանց ասել, որ *չի* պատրաստվում ֆիզիկապես ներկա մնալ նրանց հետ, բայց նրանք կա՛մ չէին կարողանում, կա՛մ էլ չէին ցանկանում ընդունել նման ցավոտ միտք: Մարկոսը գրել է.

«Նա իր աշակերտներին ուսուցանում էր եւ նրանց ասում. «Մարդու Որդին մատնուելու է մարդկանց ձեռքը, նրանք պիտի սպանեն նրան. եւ երբ նա սպանուի, երրորդ օրը յարութիւն պիտի առնի»:

Բայց նրանք չէին հասկանում այդ խօսքը եւ վախենում էին նրան հարցնել»:[2]

Ապա, նման կարճ ժամանակ սովորելուց, իսկ պատրաստելու համար նույնիսկ ավելի քիչ ժամանակ ունենալուց հետո, տեղի ունեցավ աներևակայելին՝ անհավատալի ճշմարտություն դարձավ: Իրենց Տերն ու Վարդապետը, իրենց Խորհրդականն ու Թագավորը խաչվեց: Նրա մահկանացու ծառայությունն ավարտվել էր, եւ նրա հաստատած մաքառող փոքր Եկեղեցին կարծես դատապարտված էր ծաղրանքի ու ոչնչացման ճակատագրի: Նրա Առաքյալները տեսան Նրան Իր հարություն առած վիճակում, սակայն դա միայն սաստկացրեց նրանց տարակուսանքը, քանի որ նրանք, անշուշտ, պետք է որ մտածած լինեին. «Ի՞նչ պետք է անենք հիմա»: Նրանք պատասխանի համար դիմեցին Պետրոսին, որն ավագ Առաքյալն էր:

Այստեղ ես հայցում եմ ձեր ներողամտությունը, քանի որ ազատություն կցուցաբերեմ նկարագրելու նրանց խոսակցությունը, որը չկա սուրբ գրություններում: Պետրոսն ասաց իր գործընկերներին նման մի բան. «Եղբայրներ, սրանք երեք փառահեղ տարիներ էին: Ամիսներ առաջ մեզանից ոչ ոք չէր կարող պատկերացնել այնպիսի հրաշքներ, որոնց ականատես եղանք եւ այնպիսի աստվածայնություն, որը վայելեցինք: Մենք զրուցել ենք, մենք աղոթել ենք եւ մենք աշխատել ենք անձամբ Աստծո Որդու հետ: Մենք քայլել ենք Նրա հետ եւ լաց ենք եղել Նրա հետ, իսկ ավարտի այն սարսափելի գիշերը ոչ ոք այդքան դառնությամբ լաց չեղավ, որքան ես: Բայց ամեն ինչ վերջացել է: Նա ավարտել է իր աշխատանքը եւ բարձրացել է գերեզմանից: Նա իրականացրել է և՛ Իր փրկությունը, և՛ մերը: Այժմ դուք հարցնում եք. «Ի՞նչ անենք հիմա»: Ես ավելին չեմ կարող ասել, բացի այն, որ ուրախանալով վերադառնաք ձեր նախկին կյանքին: Ես ինքս «գնում եմ ձուկ որսալու»»: Եվ մնացած տաս Առաքյալներից առնվազն վեցը, համաձայնվելով, ասացին. «Մենք էլ ենք գալիս քեզ հետ»: Հովհաննեսը, որ նրանցից մեկն էր, գրում է. «Նրանք գնացին եւ անմիջապես նավը մտան»:[3]

Բայց, ցավոք, ձկնորսությունը հաջող չէր: Լիճ վերադառնալու նրանց առաջին գիշերը նրանք ոչինչ բռնեցին, նույնիսկ մի ձուկ: Արշալույսի առաջին ճառագայթների հետ նրանք հիասթափված նայեցին դեպի ափը, որտեղից հեռավորության վրա երևացող մի մարդ կանչում էր նրանց, «Երեխե՛ք, մի բան բռնե՞լ եք»: Մռայլ դեմքով՝ Առաքյալները, որ կրկին ձկնորս էին դարձել, տվեցին մի պատասխան, որը ոչ մի ձկնորս չի ուզում տալ: «Ո՛չ, ոչինչ չենք բռնել», - փնթփնթացին նրանք, վիրավորանքը սաստկացած լինելով նրանից, որ իրենց

«երեխեք» են անվանում:[4]

«Ուռկանը զցեցէ՛ք նաւակի աջ կողմը եւ կը գտնէք»,[5] - բարցրաձայնեց անծանոթը, և այդ հասարակ խոսքերը ծանոթ հնչեցին նրանց ականջին: Երեք տարի էր միայն անցել, երբ այդ նույն մարդիկ ձուկ էին որսում այդ նույն ծովում: Այդ ժամանակ ևս նրանք «ողջ գիշեր չարչարվել էին և ոչինչ չէին բռնել»,[6] - ասում է սուրբ գրությունը: Սակայն Գալիլեացի մի հայրենակից նրանց հորդորեց ուռկանը զցել և նրանք «մեծ քանակութեամբ ձկներ բռնեցին»[7], այն աստիճան, որ նրանց ուռկանները պատռում էին», որսած ձկներն էլ երկու նաւակ լցրեցին այնքան, որ քիչ էր մնում սուզվեին:

Այժմ պատմությունը կրկնվում էր: Այդ «երեխաները», ինչպես նրանց արդարացիորեն անվանել էին, անհամբեր իջեցրեցին իրենց ուռկանը և «ձկների բազմութիւնից չէին կարողանում այն դուրս քաշել»:[8] Հովհաննեսն ասաց ակնհայտը. «Տերն է»[9]: Եվ անհամբեր Պետրոսը նավի բերանից իրեն ծովը նետեց:

Հարություն առած Հիսուսի հետ ուրախ վերամիավորումից հետո, Պետրոսը հաղորդակցություն ունեցավ Փրկչի հետ, որը ես համարում եմ առաքելական ծառայության վճռական՝ շրջադարձային պահ ընդհանուր առմամբ, և անշուշտ անձամբ Պետրոսի համար, շարժելով այդ մեծ ժայռ մարդկանց դեպի նվիրված ծառայության և ղեկավարության փառահեղ կյանքը: Նայելով նրանց ծեծված փոքր նավակին, քրքրված ցանցերին եւ ցնցող 153 ձկների կույտին՝ Հիսուսն ասաց իր ավագ Առաքյալին. «Պետրո՛ս, սիրո՞ւմ ես ինձ աւելի, քան դրանք»: Պետրոսը պատասխանեց. «Այո՛, Տէ՛ր. դու գիտես, որ սիրում եմ քեզ»:[10]

Փրկիչը արձագանքում է այդ պատասխանին, սակայն շարունակում է նայել Իր աշակերտի աչքերին և կրկին ասում է. «Պետրո՛ս, սիրո՞ւմ ես ինձ»: Հարցի կրկնությունից փոքր ինչ շփոթված, անկասկած, մեծ ձկնորսը պատասխանում է երկրորդ անգամ. «Այո՛, Տեր. դու գիտես, որ ես սիրում եմ քեզ»:[11]

Փրկիչը կրկին համառոտ արձագանքում է, սակայն անողոք հայացքով Նա հարցնում է երրորդ անգամ. «Պետրոս, սիրո՞ւմ ես ինձ»: Այդ պահին արդեն Պետրոսն իրապես անհարմար է զգում: Հավանաբար, նրա սրտում արթնացել էր հիշողությունը, որ միայն մի քանի օր առաջ, երբ նրան երեք անգամ նմանատիպ մեկ այլ հարց տվեցին, նա հավասարապես համոզված պատասխան տվեց՝ միայն բացասական պատասխան: Կամ, հավանաբար, նա սկսեց կասկածել, թե արդյոք ճիշտ է հասկանում Վարպետ Ուսուցչի հարցը: Կամ, գուցե, նա սկսեց իր սիրտը քննել, անկեղծ հաստատում փնտրելով շատ արագ, գրեթե ինքնաբերաբար տված իր պատասխաններին: Ինչպիսին էլ լինեին զգացումները, Պետրոսը երրորդ անգամ պատասխանեց. «Տեր . . . դու գիտես, որ ես սիրում եմ քեզ»:[12]

Որին Հիսուսը պատասխանեց (և այստեղ ես կրկին խոստովանում եմ, որ իմ ենթադրածը չկա սուրբ գրություններում), հավանաբար, ասելով նման մի բան. «Այդ դեպքում, Պետրոս, ինչո՞ւ ես դու այստեղ: Ինչո՞ւ ենք մենք կրկին այս նույն ծովափին, այս նույն ուռկանների կողքին, նույն բանի մասին խոսում: Մի՞թե ակնհայտ չէր այն ժամանակ և մի՞թե ակնհայտ չէ հիմա, որ եթե իմ ուզածը ձուկ լիներ, ես կարողանում եմ ձուկ հայթայթել: Իմ ուզածը, Պետրոս, աշակերտներ են, և նրանք ինձ պետք են հարատև: Ինձ պետք է մեկը, ով կկերակրի իմ ոչխարներին ու կփրկի իմ գառներին: Ինձ պետք է մեկը, ով կքարոզի իմ ավետարանը և կպաշտպանի իմ հավատքը: Ինձ պետք է մեկը, ով սիրում է ինձ, իրապես, իրապես սիրում է ինձ, և սիրում է ինձ լիազորած մեր Երկնային Հոր գործը: Մեր պատգամը խամրող պատգամ չէ, ոչ էլ անցողիկ հանձնառություն: Այն անհեռանկար ու անհույս չէ, ոչ էլ մատնված է պատմության մոռացության մոխրին: Այս աշխատանքը Ամենազոր Աստծունն է և այն փոխելու է աշխարհը: Այնպես որ, Պետրոս, երկրորդ և ենթադրում եմ, վերջին անգամ ես քեզ խնդրում եմ թողնել այս բոլորը և գնալ ուսուցանելու և վկայելու, ջանք թափելու և նվիրված ծառայելու, մինչև օրը գա, երբ քեզ հետ կվարվեն ճիշտ այնպես, ինչպես ինձ հետ վարվեցին»:

Այնուհետև, շրջվելով դեպի մնացած Առաքյալները, Նա, շատ հնարավոր է, ասած լիներ նման մի բան. «Մի՞թե դուք այնքան անխոհեմ էիք, որքան դպիրներն ու փարիսեցիները, որքան Հերոդեսն ու Պիղատոսն էին: Մի՞թե դուք նրանց պես կարծում էիք, որ այս աշխատանքը հնարավոր է սպանել, պարզապես ինձ սպանելով: Մի՞թե դուք նրանց պես կարծում էիք, որ խաչը, բևեռները և գերեզմանն այդ ամենի վերջն էր և յուրաքանչյուրը կարող էր երանավետ վերադառնալ իր նախկին կյանքին: Երեխաներ, մի՞թե իմ կյանքն ու իմ սերը ձեր սրտին ավելի խորը չդիպչեցին, քան այդ ամենը»:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես համոզված չեմ, թե մենք ինչ փորձառություն կունենանք Դատաստանի օրը, բայց ես շատ զարմացած կլինեմ, եթե այդ խոսակցության ինչ-որ պահի Աստված չհարցնի մեզ այն, ինչ Քրիստոսը հարցրեց Պետրոսին. «Սիրո՞ւմ ես ինձ»: Կարծում եմ, նա կցանկանա իմանալ, թե արդյոք նույն մահկանացու, նույն անբավարար և երբեմն երեխայական ըմբռնման հետ մեկտեղ մենք առնավազն հասկացե՞լ ենք *մեկ* պատվիրան՝ բոլոր պատվիրաններից առաջինն ու ամենամեծը՝ «Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտով, քո բոլոր հոգով, քո բոլոր զորությամբ և քո բոլոր մտքով»:[13] Եվ եթե այդ պահին մենք կակազելով ասենք. «Այո՛, Տեր, դուք գիտես, որ ես քեզ սիրում եմ», այդ ժամանակ նա կարող է մեզ հիշեցնել, որ սիրո բնորոշման գերագույն բնութագիրը նվիրվածությունն է:

«Եթէ ինձ սիրում էք, պահէք իմ պատուիրանները»,[14] - ասում էր Հիսուսը: Այնպես որ մենք ունենք հարևաններ՝ օրհնելու, երեխաներ՝ պաշտպանելու, աղքատներ՝ բարձրացնելու, և ճշմարտություն՝ պաշտպանելու: Սխալներ կան, որ մենք պետք է ճիշտ դարձնենք, ճշմարտություններ, որ պետք է կիսվենք, և բարիք, որ պետք է



գործենք: Կարճ ասած՝ Տիրոջ հանդեպ սերը մենք պետք է արտահայտենք նվիրված աշակերտի կյանքով: Մենք չենք կարող դադարել, և չենք կարող ետ դառնալ: Կենդանի Աստծո Որդուն հանդիպելուց հետո ոչինչ կրկին նախկինի պես չի լինի: Հիսուս Քրիստոսի Խաչելությունը, Քավությունը և Հարությունը քրիստոնյա կյանքի սահմանագիծն է, բայց ոչ թե վերջը, այլ սկիզբը: Այդ ճշմարտությունն էր՝ այդ իրականությունն էր, որ հնարավորություն տվեց գալիլեացի մի բուռ ձկնորսների կրկին վերափոխվել Առաքյալների, ովքեր չունենալով որևէ ժողովարան, ոչ էլ սուր,[15] առաջ գնացին՝ կերտելու աշխարհի պատմությունը, որում ներկայումս ապրում ենք[15]:

Սրտիս խորքից, հոգուս ուժգնությամբ, ես վկայում եմ բոլորին, ովքեր կարող են լսել իմ ձայնը, որ առաքելական այդ բանալիները վերականգնվել են երկրի վրա և դրանք գտնվում ենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Քրիստոսի այս վերջին մեծ գործին մեզ չմիացած մարդկանց մենք ասում ենք. «Խնդրում ենք, եկե՛ք»: Իսկ նրանց, ովքեր ժամանակին մեզ հետ են եղել, բայց նահանջել են, նախընտրելով ճաշակել վերականգնված ավետարանի հարուստ սեղանի միայն մշակութային նախուտեստները, թողնելով խրախճանքի մնացած մասը, նրանց ես ասում եմ. «Դուք դատարկ ուռկաններով շատ գիշերներ եք անցկացնում»: Մենք կանչում ենք ձեզ՝ վերադարձեք, հավատարիմ մնացեք, սիրեք Աստծուն և գործակից դարձեք: Այդ հավատարմության նորոգման իմ հրավերում ես ընդգրկում եմ յուրաքանչյուր վերադարձած միսիոների, որը երբևէ կանգնել է մկրտության ավազանում, ձեռքը անկյուն բարձրացրած ասել է. «Լիազորված լինելով Հիսուս Քրիստոսի կողմից»:[16] Այդ լիազորությունը նախատեսում էր մշտապես փոխել նորադարձին, բայց նաև ենթադրում էր մշտապես փոխել ձեզ: Եկեղեցու երիտասարդներին, որոնք աճում են միսիայի ծառայության և տաճարային ամուսնության համար, մենք ասում ենք. «Սիրեք Աստծուն և մաքուր մնացեք այս սերնդի արյունից ու մեղքերից: Դուք մնայուն աշխատանք ունեք անելու, որն երեկ առավոտյան ստորագծվեց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի սքանչելի հայտարարությամբ: Ձեր Երկնային Հայրն ակնկալում է ձեր նվիրվածությունը և սիրում է ձեզ կյանքի յուրաքանչյուր փուլում»:

Իմ ձայնի հասանելիության սահմաններում գտնվող բոլոր մարդկանց՝ Քրիստոսի ձայնը զրնգում է ժամանակի գավիթներում՝ հարցնելով յուրաքանչյուրիս. «Սիրո՞ւմ ես ինձ»: Եվ բոլորիս անունից ես պատասխանում եմ հոգուս ողջ կորովով. «Այո՛, Տեր, մենք Քեզ իսկապես սիրում ենք»: Եվ մեր «ձեռքը մաճի վրա դնելով»,[17] մենք ետ չենք նայի, մինչև որ աշխատանքն ավարտվի և Աստծո և մերձավորի սերը կղեկավարի աշխարհը: Հիսուս Քրիստոսի անունով՝ ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 14.9:
2. Մարկոս 9.31–32:
3. Հովհաննես 21.3:
4. Տես Հովհաննես 21.5:
5. Հովհաննես 21.6:
6. Ղուկաս 5.5:
7. Ղուկաս 5.6:
8. Հովհաննես 21.6:
9. Հովհաննես 21.7:
10. Հովհաննես 21.15:
11. Հովհաննես 21.16:
12. Հովհաննես 21.17:
13. Ղուկաս 10.27, տես նաև Մատթեոս 22.37–38:
14. Հովհաննես 14.15:
15. Frederic W. Farrar, *The Life of Christ* (1994), 656, տես գլուխ 6 այս նոր հիմնադրված Եկեղեցու վիճակի մասին:
16. Վարդապետություն և Ուխտեր 20.73:
17. Ղուկաս 9.62:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Հիշեք օրհնությունները

Մեր Երկնային Հայրը քաջառեղյակ է մեր կարիքների մասին և կօգնի մեզ, երբ մենք օգնություն խնդրենք Նրանից:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, այս համաժողովը նշանավորում է 49 տարին, երբ 1963թ. հոկտեմբերի 4-ին ես հաստատվեցի որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ: Քառասունինը տարին երկար ժամանակ է: Ինչ-որ տեղ էլ, կարծես, թե քիչ ժամանակ է անցել այն օրից, երբ կանգնեցի Թաբերնաքլի ամբիոնի մոտ և հղեցի իմ առաջին գերագույն համաժողովի ելույթը:

Շատ բան է փոխվել 1963թ. հոկտեմբերի 4-ից: Մենք ապրում ենք աշխարհի պատմության մեջ յուրահատուկ ժամանակներում: Մենք օրհնվել ենք այնքան շատ բաներով: Սակայն երբեմն դժվար է մեր շուրջը տեսնել խնդիրներ և ամենաթողություն, և չհուսահատվել: Ես գտել եմ, որ անցանկալի երևույթների մասին մտածելու փոխարեն, եթե մեկ քայլ ետ գնանք և վերանայենք մեր կյանքի օրհնությունները, նույնիսկ թվացյալ փոքր, երբեմն անտեսված օրհնությունները, մենք կարող ենք ավելի մեծ երջանկություն գտնել:

Վերանայելով անցած 49 տարիները, ես որոշ հայտնագործություններ կատարեցի: Դրանցից մեկը՝ անթիվ փորձառություններն են, որոնք չի կարելի համարել արտառոց: Իրենց ժամանակին դրանք հաճախ ոչնչով չեն առանձնացել և անգամ սովորական են համարվել: Բայց տարիների կտրվածքով դիտելիս ակնհայտ է դառնում, որ դրանք հարստացրել և օրհնել են կյանքեր, այդ թվում նաև իմ կյանքը: Ես կառաջարկեի այդ նույնը դուք անեիք, այսինքն՝ քննեիք ձեր կյանքը և փնտրեիք հատկապես ձեր ստացած օրհնությունները, լինեն՝ մեծ, թե փոքր:

Տարիների անձնական դիտարկումն ամրապնդել է իմ այն գիտելիքը, որ մեր աղոթքները լսվում և պատասխանվում են: Մեզ ծանոթ է Մորմոնի Գրքի 2 Նեփիում տրված ճշմարտությունը. «Մարդիկ կան, որ ուրախություն ունենանան»:[1] Ես վկայում եմ, որ այդ ուրախությունը, հիմնականում, գալիս է, երբ հասկանում ենք, որ կարող ենք հաղորդակցվել մեր Երկնային Հոր հետ աղոթքի միջոցով, և որ այդ աղոթքները լսվում և պատասխանվում են, գուցե ոչ այնպես և այն ժամանակ, երբ մենք ենք ակնկալում, բայց դրանք *կպատասխանվեն* Երկնային Հոր կողմից, ով ճանաչում և սիրում է մեզ կատարելապես և ով ցանկանում է մեր երջանկությունը: Նա խոստացել է մեզ. «Եղիր խոնարհ. և Տերը՝ քո Աստվածը, ձեռքդ բռնած կառաջնորդի քեզ և կպատասխանի քո աղոթքներին»:[2]

Ինձ հատկացված հաջորդ մի քանի րոպեներին ձեզ հետ կկիսվեմ իմ փոքր փորձառություններով, երբ աղոթքները լսվել և պատասխանվել են, և որոնք, հետադարձ հայացք գցելով, տեսնում եմ, որ օրհնել են իմ և մյուսների կյանքը: Իմ օրագիրը, որտեղ նշումներ եմ կատարել այս բոլոր տարիների ընթացքում, օգնել է ինձ առանձնացնել որոշ դեպքեր, որոնք այլկերպ գուցե չկարողանայի հիշել:

1965 թվի սկզբին ինձ հանձնարարվել էր այցելել ցցի համաժողովներին և այլ ժողովներ անցկացնել Հարավ-Խաղաղօվկիանոսյան կղզիներում: Դա իմ առաջին այցելությունն էր այդ աշխարհամաս, և ես այդ օրերը երբեք չեմ մոռանա: Այդ հանձնարարության շրջանակում ղեկավարների, անդամների և միսիոներների հետ իմ հանդիպումների ժամանակ հոգևոր բնույթի իրադարձություններ տեղի ունեցան:

Փետրվարի 20 և 21-ին, շաբաթ-կիրակի օրերին մենք Ավստրալիայի Բրիսբանում էինք, Բրիսբանի ցցի հերթական համաժողովի նիստերն անցկացնելու համար: Շաբաթ օրվա ժողովների ժամանակ ինձ ծանոթացրեցին հարևան տարածքից մի շրջանի նախագահի հետ: Նրա ձեռքը սեղմելիս ես ուժեղ տպավորություն ստացա, որ պետք է խոսեմ նրա հետ և խորհուրդ տամ, այնպես որ հետաքրքրվեցի, թե արդյոք նա կկարողանար ընկերակցել ինձ Կիրակնօրյա առավոտյան նիստին:

Կիրակնօրյա նիստից հետո մենք միասին հանդիպելու առիթ ունեցանք և խոսեցինք որպես շրջանի նախագահ նրա բազմաթիվ պատասխանատվությունների մասին: Այդ ընթացքում ես զգացի, որ պետք է նրան հատուկ խորհուրդներ տայի միսիոներական աշխատանքի վերաբերյալ, և թե ինչպես կարող է նա իր անդամների հետ միասին օգնել այդ տարածքում ծառայող լիաժամկետ միսիոներներին: Հետագայում ես իմացա, որ այդ մարդն աղոթել էր այդ մասին առաջնորդություն ստանալու համար: Նրա համար մեր հանդիպումը հատուկ վկայություն էր, որ իր աղոթքները լսվել և

պատասխանվել էին: Դա կարծես թե ոչնչով աչքի չընկնող հանդիպում էր, սակայն համոզված եմ, որ այն առաջնորդվել էր Հոգով և մեծ դեր խաղաց այդ շրջանի նախագահի կյանքում և ծառայության մեջ, նրա անդամների կյանքում և տեղի միսիոներների հաջողության գործում:

Իմ եղբայրներ և քույրեր, Տիրոջ նպատակները հաճախ կատարվում են, երբ մենք ուշադրություն ենք դարձնում Հոգու առաջնորդությանը: Ես հավատում եմ՝ որքան շատ ենք մենք գործում մեր ունեցած ոգեշնչմամբ և տպավորություններով, այնքան շատ Տերը կվստահի մեզ Իր գործը:

Ինչպես նշել եմ իմ նախորդ ելույթների ժամանակ, ես սովորել եմ, երբեք չհետաձգել հուշումը: Տարիներ առաջ մի անգամ լողանում էի Սոլթ Լեյք Սիթիի հին Դեզերեթ մարզասրահի լողավազանում, երբ ներշնչում ունեցա գնալ Համալսարանական հիվանդանոց այցելելու իմ լավ ընկերոջը, որը քաղցկեղի պատճառով կորցրել էր իր ոտքերը: Ես անմիջապես դուրս եկա լողավազանից, հագնվեցի և գնացի տեսնելու այդ լավ մարդուն:

Մտնելով նրա սենյակ, ես տեսա, որ այն դատարկ էր: Հարցուփորձ անելով իմացա, որ կարող եմ նրան գտնել հիվանդանոցի լողավազանում, որն օգտագործվում էր ֆիզիոթերապիայի համար: Այդպես էլ կար: Նա իր անվասայլակով գնացել էր այնտեղ և միայնակ էր: Նա լողավազանի մյուս ծայրում էր՝ խորը մասում: Ես նրան կանչեցի, և նա շրջեց իր անվասայլակը, որպեսզի ինձ ողջուներ: Մենք հաճելի հանդիպում ունեցանք, ես նրան ուղեկցեցի իր հիվանդասենյակ, որտեղ նրան օրհնություն տվեցի:

Ավելի ուշ ընկերոջիցս իմացա, որ նա այդ օրն իրեն լիովին վիճակված էր զգացել և մտածել էր ինքնասպանություն գործելու մասին: Նա աղոթել էր սփոփանք ստանալու համար, սակայն սկսել էր զգալ, որ իր աղոթքներն անպատասխան են մնում: Նա գնացել էր լողավազան այն մտքով, որ այդկերպ վերջ կդնի իր թշվառ վիճակին, անվասայլակն ուղղելով դեպի լողավազանի խորքը: Ես այնտեղ հասա ճակատագրական պահին, իմ կարծիքով, ի պատասխան բարձրից եկող ոգեշնչմանը:

Ընկերս ապրեց երկար տարիներ՝ երջանկությամբ և երախտագիտությամբ լի տարիներ: Որքան ուրախ եմ, որ գործիք եմ եղել Տիրոջ ձեռքում, այդ ճակատագրական օրը հայտնվելով լողավազանում:

Մեկ ուրիշ անգամ, երբ Քույր Մոնսոնի հետ ընկերներին այցելելուց հետո մենք մեքենայով տուն էինք վերադառնում, ես զգացի, որ պետք է գնայինք քաղաք, որի համար պետք է մի քանի մղոն վարեի, որպեսզի այցելեինք մի ծեր այրու, որը մի ժամանակ մեր ծխում էր ապրել: Նրա անունն էր Զելլա Թոմաս: Այդ ժամանակ նա ապրում էր ծերանոցում: Կեսօր էր, և մենք գտանք նրան շատ թույլ, բայց հանգիստ պառկած իր անկողնու վրա:

Զելլան երկար ժամանակ կույր էր եղել, սակայն անմիջապես ճանաչեց մեր ձայները: Նա խնդրեց ինձ օրհնություն տալ իրեն, ավելացնելով, որ պատրաստ էր մեռնելուն, եթե Տերը ցանկանում է, որ ինքը վերադառնար տուն: Կար մի հաճելի, խաղաղ հոգի այդ սենյակում,

և մենք բոլորս գիտեինք, որ նրան ապրելու քիչ ժամանակ էր մնացել: Զելլան բռնեց իմ ձեռքը և ասաց, որ ջերմեռանդ աղոթել էր, որ ես գնայի և իրեն օրհնություն տայի: Ես նրան ասացի, որ եկել էինք, որովհետև ուղղակի ոգեշնչում էինք ստացել մեր Երկնային Հորից: Ես համբուրեցի նրա ճակատը, մտածելով, որ գուցե այս կյանքում նրան էլ չտեսնեմ: Այդպես էլ եղավ, քանի որ նա մահացավ հաջորդ օրը: Անուշիկ Զելլային սփոփանք և խաղաղություն տալու հնարավորությունն օրհնություն էր նրա և ինձ համար:

Մեկ ուրիշի կյանքում օրհնություն լինելու առիթն անսպասելիորեն է գալիս: 1983–84թթ. մի ցրտաշունչ շաբաթ երեկոյան Քույր Մոնսոնի հետ մեքենայով մի քանի մղոն գնացինք Յուտայի Միդվեյ հովիտ, որտեղ մենք տուն ունենք: Այդ գիշեր ջերմաստիճանը -31°C աստիճան էր, և մենք ուզում էինք հավաստիանալ, որ ամեն ինչ լավ էր այդ տանը: Մենք ստուգեցինք և տեսնելով, որ ամեն ինչ նորմալ էր, ճանապարհ ընկանք դեպի Սոլթ Լեյք Սիթի: Մի քանի մղոն դեռ հազիվ էինք անցել, երբ մեր մեքենան կանգ առավ: Մենք դժվար կաղության մեջ էինք: Ես շատ քիչ դեպքերում եմ այդքան շատ մրսել:

Դժկամորեն մենք սկսեցինք քայլել դեպի մոտակա քաղաքը, մեքենաները սլանում էին մեր կողքով: Վերջապես մի մեքենա կանգնեց և մի երիտասարդ տղա օգնություն առաջարկեց: Մենք պարզեցինք, որ վառելիքը բենզոբաքում ցրտից խտացել էր, որի պատճառով մեքենան կանգ էր առել: Այդ բարի երիտասարդը իր մեքենայով մեզ տարավ ետ՝ մեր Միդվեյի տուն: Ես փորձեցի փոխհատուցել նրա ծառայության համար, սակայն նա մեծահոգաբար մերժեց: Նա նշեց, որ պատանի սկաուտ էր և ցանկանում էր բարի գործ կատարել: Ես ներկայացա նրան, և նա իր ուրախությունը հայտնեց, որ արտոնություն էր ունեցել օգնելու: Ենթադրելով, որ նա միսիոների տարիքի էր, ես հետաքրքրվեցի, թե արդյոք ծրագրում էր միսիա ծառայել: Նա նշեց, որ դեռ չէր որոշել:

Հաջորդ երկուշաբթի առավոտյան ես նամակ գրեցի այդ երիտասարդ տղային և շնորհակալություն հայտնեցի նրան իր բարի վերաբերմունքի համար: Նամակում ես նրան քաջալերեցի լիաժամկետ միսիա ծառայել: Ես նամակի հետ ուղարկեցի իմ գրքերից մեկը և նշեցի միսիոներական ծառայության մասին գլուխները:

Մեկ շաբաթ անց այդ երիտասարդի մայրը զանգահարեց և ասաց, որ իր որդին հրաշալի տղա է, սակայն իր կյանքում որոշ ազդեցությունների պատճառով կորցրել է միսիայում ծառայելու իր երկար փայփայած ցանկությունը: Նա նշեց, որ ամուսնու հետ ծոմ են պահել և աղոթել, որ նրա սիրտը փոխվի: Նրանք որդու անունը տեղադրել էին Պրովո Տաճարում աղոթելու համար: Նրանք հույս ունեին, որ ինչ-որ կերպ, նա կներշնչվի և կվերագտնի միսիա մեկնելու և Տիրոջը հավատարմորեն ծառայելու իր ցանկությունը: Մայրը ցանկացել էր ինձ տեղեկացնել, որ այդ ցրտաշունչ երեկոյան տեղի ունեցածը համարում էր տղայի համար ասված իր աղոթքների պատասխանը: Ես ասացի. «Համաձայն եմ»:

Այդ երիտասարդի հետ մի քանի ամիս տևած հաղորդակցությունից հետո, ես և քույր Մոնսոնը մեծ ուրախությամբ այցելեցինք նրան միսիայի ճանապարհելու երեկոյին, նա մեկնում էր Կանադա Վանկուվերի Միսիա:

Պատահականությո՞ւն էր արդյոք, որ մեր ուղիները խաչվեցին այդ դեկտեմբերյան ցրտաշունչ գիշերը: Ես դրան չեմ հավատում, փոխարենը հավատում եմ, որ մեր հանդիպումը պատասխանն էր այն սրտառուչ աղոթքների, որ ծնողներն ասել էին իրենց սիրելի որդու համար:

Դարձյալ, իմ եղբայրներ և քույրեր, մեր Երկնային Հայրը քաջատեղյակ է մեր կարիքների մասին և կօգնի մեզ, երբ մենք օգնություն խնդրենք Նրանից: Ես հավատում եմ, որ մեր ոչ մի մտահոգություն շատ փոքր կամ անկարևոր չէ: Տերը գիտի մեր կյանքի մանրամասները:

Կուզենայի վերջում պատմել հինգ ամիս առաջ տեղի ունեցած մի դեպքի մասին, որն ազդեցություն ունեցավ հարյուրավոր մարդկանց վրա: Դա Կանզաս Սիթիի Տաճարի մշակութային տոնակատարության ժամանակ էր: Մեր կյանքում այնքան շատ բան է տեղի ունենում, որ ամեն անգամ, թվում է, թե հերթական փորձառություն է, որտեղ ամեն ինչ ի վերջո հարթվում է: Ինչևէ, տաճարի նվիրագործման նախորդ երեկոյան տեղի ունեցած տոնահանդեսի հետ կապված հանգամանքների մասին տեղեկանալով, հասկացա, որ այդ երեկոյի ներկայացումը ոչ թե սովորական, այլ բավականին ուշագրավ էր:

Ինչպես հատուկ է տաճարի նվիրագործումների հետ կապված բոլոր մշակութային երեկոներին, այս անգամ էլ Կանզաս Սիթի Միսսուրի Տաճարի շրջանի երիտասարդները ներկայացումը փորձել էին տարբեր խմբերով իրենց տարածքներում: Ծրագիրը հետևյալն էր. ներկայացման շաբաթ օրվա առավոտյան նրանք պետք է բոլորը միասին հավաքվեին մեծ, վարձակալված մշակույթի կենտրոնում, որպեսզի իմանային, երբ է իրենց մուտքը, որտեղից են մտնում, որտեղ պետք է կանգնեն, որքան տարածք պետք է լինի իրենց և մյուս կատարողի միջև, ինչպես դուրս գան բեմահարթակից և այլ բազմաթիվ մանրամասներ, որոնք պետք է հասկանային, երբ կազմակերպիչները ընդհանուր տեսարանի տարբեր հատվածները միացնելով իրար կստանային վերջնական հղկված և կատարյալ ներկայացումը:

Այդ օրը մի մեծ խնդիր էր ծագել: Ողջ ծրագիրը կախված էր նախապես տեսագրված հատվածներից, որոնք պետք է ցուցադրվեին մեծ էկրանի վրա, որը հայտնի է որպես Jumbotron: Այդ տեսագրված հատվածները շատ կարևոր էին ողջ ծրագրի համար, այն ոչ միայն կապում էր այդ ամենը իրար, այլև տեսագրության յուրաքանչյուր հատվածը ներկայացնելու էր հաջորդ կատարումը: Այդ տեսագրությունները ներկայացնում էին այն հիմքը, որից կախված էր ողջ

ներկայացումը: Իսկ Jumbotron-ը չէր աշխատում:

Մասնագետներն ինքնամոռաց աշխատում էին ծագած խնդիրները լուծելու ուղղությամբ, իսկ հարյուրավոր երիտասարդներ սպասում էին, կորցնելով փորձի թանկ ժամանակը: Իրավիճակն արդեն թվում էր անելանելի:

Տոնահանդեսի սցենարիստն ու ռեժիսորը՝ Սյուզան Կուպերը հետագայում բացատրել է. «Երբ մենք անցնում էինք ծրագրից ծրագիր, տեսնում էինք, որ չի ստացվում . . . Նայելով ժամանակացույցին, մենք գիտեինք, որ մեր ուժերից վեր էր դա, սակայն գիտեինք, որ ներքևում՝ բեմահարթակի վրա ունենք մեծագույն ուժերից մեկը՝ 3000 երիտասարդներ: Անհրաժեշտություն եղավ, որ գնանք ներքև և նրանց ասենք, թե ինչ է կատարվում և ակնկալեինք իրենց հավատքը»:[3]

Մշակութային կենտրոն հանդիսատեսի գալուց ընդամենը մեկ ժամ առաջ, 3000 երիտասարդներ ծնկի իջան հատակին և միասին աղոթեցին: Նրանք աղոթեցին, որ Jumbotron-ի վրա աշխատողները ներշնչվեն իմանալու, թե ինչպես վերանորոգեն այն: Նրանք խնդրեցին Երկնային Հորը լրացնել այն պակասը, որ իրենք ժամանակի սղության պատճառով չկարողացան անել:

Հետագայում այդ մասին գրվեց. «Դա աղոթք էր, որը երիտասարդները երբեք չեն մոռանա, ոչ թե նրա համար, որ հատակը չոր էր, այլ որ Հոգին հալեց նրանց ոսկորները»:[4]

Շատ չանցած տեխնիկներից մեկը մոտեցավ և ասաց, որ խնդիրը հայտնաբերվել և շտկվել է: Նա ասաց, որ լուծումը «բախտի» բան էր, բայց բոլոր երիտասարդներն ավելի լավ գիտեին:

Երբ այդ երեկո մենք ներս մտանք մշակույթի կենտրոն, գաղափար անգամ չունեինք այդ օրվա խնդիրներից: Միայն ավելի ուշ իմացանք դրանց մասին: Ինչևէ, մենք ներկա գտնվեցինք մի գեղեցիկ, փայլուն ներկայացման, որն իմ տեսածներից լավագույն էր: Երիտասարդները ճառագում էին փառավոր, հզոր հոգի, որը զգում էին բոլոր ներկաները: Նրանք գիտեին, որտեղից պետք է մտնեին, որտեղ կանգնեին և ինչպես համագործակցեին իրենց շուրջը գտնվող մյուս կատարողների հետ: Ես ապշեցի, երբ իմացա, որ նրանց փորձերը կրճատվել էին և շատ համարներ չէին փորձվել ամբողջ խմբի կողմից: Ոչ ոք չէր կարող դա կռահել: Տերն իրոք լրացրել էր պակասը:

Ես երբեք չեմ դադարում զարմանալ, թե ինչպես է Տերը կարողանում ուղղորդել և ղեկավարել Իր արքայության ամեն մանրուքը և դեռևս ժամանակ ունենալ ոգեշնչում ապահովել մեկ մարդու, մեկ մշակութային տոնահանդեսի կամ Jumbotron-ի վերաբերյալ: Ինձ համար վկայություն է այն փաստը, որ Նա կարողանում է և Նա անում է:

Իմ եղբայրներ և քույրեր, Տերը մեր կյանքի բոլոր ոլորտներում է: Նա սիրում է մեզ: Նա ցանկանում է օրհնել մեզ: Նա ցանկանում է, որ մենք փնտրենք Իր օգնությունը: Երբ Նա առաջնորդի և ղեկավարի մեզ, և երբ լսի և պատասխանի մեր աղոթքներին, այստեղ և այժմ մենք երջանկություն կգտնենք, որը Նա է ցանկանում մեզ համար: Թող որ մենք ունենանք Նրա օրհնությունները մեր կյանքում, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 2 Նեփի 2.25:
2. Վարդապետություն և Ուխտեր 112.10:
3. Susan Cooper, in Maurine Proctor, "Nothing's Too Hard for the Lord: The Kansas City Cultural Celebration," *Meridian Magazine,* May 9, 2012, ldsmag.com.
4. Proctor, *Meridian Magazine,* May 9, 2012.

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Լինել ավելի քրիստոսանման քրիստոնյա

Սա Քրիստոսի կոչն է, ուղղված այսօր յուրաքանչյուր քրիստոնյայի. «Արածեցրու իմ ոչխարները:. . . Արածեցրու իմ ոչխարները»:

Ի՞նչ է նշանակում լինել քրիստոնյա

Քրիստոնյան հավատք ունի առ Տեր Հիսուս Քրիստոսը, որ Նա բառացիորեն Աստծո Որդին է, ուղարկված Իր Հոր կողմից տանջվելու մեր մեղքերի համար դրդված զերագույն սիրուց, որը մենք գիտենք որպես Քավություն:

Քրիստոսնյան հավատում է, որ Հայր Աստծո և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի շնորհի միջոցով մենք կարող ենք ապաշխարել, ներել մյուսներին, պահել պատվիրանները և ժառանգել հավերժական կյանք:

Քրիստոնյա բառը նշանակում է վերցնել մեզ վրա Քրիստոսի անունը: Մենք դա անում ենք մկրտվելով և ձեռնադրությամբ ստանալով Սուրբ Հոգու պարգևը նրանց կողմից, ովքեր կրում են Նրա քահանայության իշխանությունը:

Քրիստոնյան գիտի, որ դարեր շարունակ Աստծո մարգարեները միշտ վկայել են Հիսուս Քրիստոսի մասին: Այդ նույն Հիսուսը, Երկնային Հոր ուղեկցությամբ, 1820թ. հայտնվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին և վերականգնեց ավետարանը և Իր սկզբնական Եկեղեցու կառուցվածքը:

Սուրբ գրություններից և Ջոզեֆ Սմիթի վկայությունից մենք գիտենք, որ Աստված, մեր Երկնային Հայրը, ունի մսից և ոսկորից փառավոր և կատարյալ մարմին: Հիսուս Քրիստոսը Նրա Միածին Որդին է մարմնում: Սուրբ Հոգին ոգեղեն էակ է, որի աշխատանքն է վկայել Հոր և Որդու մասին: Աստվածագլուխը կազմված է երեք առանձին և անհատական էակներից, որոնք միավորված են մի նպատակի մեջ:

Եթե այս վարդապետությունները մեր հավատքի հիմքն են, ապա կա՞ արդյոք որևէ կասկած կամ առարկություն, որ մենք, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներս, քրիստոնյաներ ենք: Ինչևէ, ամեն քրիստոնյայի համար հարց է, թե ինչ տեսակի քրիստոնյաներ ենք մենք: Այլ խոսքերով, ինչպե՞ս ենք մենք կատարում Հիսուսին հետևելու մեր առաջադրանքը:

Ինձ հետ միասին մտածեք երկու քրիստոնյա աշակերտների փորձառության մասին.

«Հիսուսը Գալիլեացիների ծովի եզրումը ման գալիս՝ տեսավ երկու եղբարց՝ Սիմոնին որ Պետրոս է կոչված, և նորա Անդրեաս եղբորը, որ ուռկան էին գցում ծովը, որովհետև ձկնորս էին.

Եվ ասեց նորանց. Իմ ետևից եկեք և ես ձեզ մարդկանց որսորդ կշինեմ:

Եվ նորանք շուտով իրենց ուռկանները թողած նորա ետևից գնացին»:[1]

Որպես քրիստոնյաներ, այսօր մենք հնարավորություն ունենք գործելու ուղղակիորեն, անմիջապես և վճռականապես, ճիշտ ինչպես արեցին Պետրոսը և Անդրեասը, երբ «իրենց ուռկանները թողած նորա ետևից գնացին»:[2] Մեզ նույնպես կոչ է արվել թողնել մեր ուռկանները, հրաժարվել աշխարհիկ սովորություններից և ավանդույթներից: Մեզ նույնպես կոչ է արվել այլևս մեղք չգործել: «Եվ [Հիսուսը] ժողովուրդն . . . իրան մոտ կանչեց և նորանց ասեց. Ով որ ուզում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանայ և իր խաչն վերն առնէ, և իմ ետևից գայ»:[3] Ոչ աստվածային պահվածքից հրաժարվելը ապաշխարության սկիզբն է, որը բերում է սրտի զորեղ փոփոխություն մինչև որ «մենք այլևս հակված չենք գործելու չարիք»:[4]

Այս փոփոխությունը, որը կոչվում է դարձ, հնարավոր է միայն Փրկչի միջոցով: Հիսուսը խոստացել է. «Եվ եթե մարդիկ գան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը: . . . Եվ իմ շնորհը բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առջև. քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ,

նրանց թույլ կողմերը *ես կդարձնեմ ուժեղ նրանց համար*»:[5] Քանի որ մենք *նորացվում* ենք Քրիստոսում, փոխվում է մեր իսկ էությունը և մենք այլևս չենք ցանկանում վերադառնալ մեր հին օրերին:

Այդ ամենով հանդերձ, հավատարիմ քրիստոնյաները միշտ օրհնված կլինեն դժվարություններով և հուսահատություններով: Երբ այդ կատարելագործող խնդիրները առաջ են գալիս, մենք, հնարավոր է, գայթակղվենք վերադառնալու մեր հին ուղիներին: Փրկչի Խաչելությունից հետո Նա հայտնվեց կանանց և ասաց նրանց, որ եղբայրները կգտնեն Իրեն Գալիլեայում: Երբ Պետրոսը, ավագ Առաքյալը, վերադարձավ Գալիլեա, նա նույնպես վերադարձավ այն գործին, ինչը գիտեր, ինչը իրեն համար հարմար էր անել: «Գնում եմ ձուկ բռնելու»,[6]- բացատրեց նա և Իր հետ վերցրեց մի քանի աշակերտների:

Իրականում, Պետրոսը և մյուսները ձկնորսություն արեցին ողջ գիշեր և չորսացին ոչ մի ձուկ: Հաջորդ առավոտ Հիսուսը հայտնվեց ափին և կանչեց նրանց ջրերի վրայով. «Ուռկանը նավի աջ կողմը գցեցեք»: Նավի մեջ գտնվող աշակերտները հետևեցին Փրկչի ցուցումներին և անմիջապես հայտնաբերեցին, որ իրենց ուռկանները հրաշքով ամբողջովին լցված էին ձկներով: Հովհաննեսը ճանաչեց Փրկչի ձայնը, իսկ Պետրոսը անմիջապես գցվեց ջուրը և լողաց դեպի ափը:[7]

Քրիստոնյաները, ովքեր վերադարձել են իրենց հին, ոչ այդքան հավատալից ուղիներին, կարող են մտածել Պետրոսի հավատքի օրինակի մասին: Մի հապաղեք: Եկեք, լսեք և ճանաչեք Վարդապետի ձայնի կանչը: Ապա ուղղակիորեն վերադարձեք Նրա մոտ և կրկին անգամ ստացեք Նրա առատ օրհնությունները:

Երբ եղբայրները վերադարձան ափ, հայտնվեցին ձկան և հացի խնջույքի: «Եկեք ճաշեցեք»,[8]- հրավիրեց Փրկիչը: Կերակրելով նրանց, Նա հարցրեց Պետրոսին երեք անգամ. «Սիմոն Հովնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ»: Երբ Պետրոսը խոսեց իր սիրո մասին, Փրկիչը խնդրեց նրան. «Արածեցրու իմ ոչխարները: . . . Արածեցրու իմ ոչխարները»:[9]

Սա Քրիստոսի կոչն է, ուղղված այսօր յուրաքանչյուր քրիստոնյայի. «Արածեցրու իմ ոչխարները: . . . Արածեցրու իմ ոչխարները»՝ կիսվեք իմ ավետարանով երիտասարդների և մեծահասակների հետ, բարձրացնելով, օրհնելով, սփոփելով, խրախուսելով և շենացնելով նրանց, հատկապես նրանց, ովքեր մտածում և հավատում են ոչ այնպես, ինչպես մենք: Մենք արածացնում ենք Նրա ոչխարները մեր տներում, երբ ապրում ենք ավետարանով՝ պահելով պատվիրանները, աղոթելով, ուսումնասիրելով սուրբ գրությունները և մարմնավորելով Նրա սերը: Մենք արածացնում ենք Նրա ոչխարները Եկեղեցում, երբ ծառայում ենք քահանայության քվորումներում և օժանդակ կազմակերպություններում: Եվ մենք արածացնում ենք Նրա ոչխարները ամբողջ աշխարհում, լինելով լավ քրիստոնյա հարևաններ, կիրառելով այրիներին, հայրազուրկներին, աղքատներին և բոլոր կարիքավորներին այցելելու և ծառայելու մաքուր կրոնը:

Շատերի համար քրիստոնյա լինելու կոչը կարող է պահանջող, անգամ ծանրաբեռնող լինել: Բայց մենք չպետք է վախենանք ոչ համապատասխան լինելուց կամ զգանք մեզ այդպես: Փրկիչը խոստացել է, որ Նա մեզ համապատասխան կդարձնի Իր աշխատանքին: «Իմ ետևից եկեք, - ասել է Նա, - և *ես* ձեզ մարդկանց որսորդ կշինեմ»:[10] Եթե հետևենք Իրեն, Նա կօրհնի մեզ պարգևներով, տաղանդներով և զորությամբ անելու Իր կամքը, թույլ տալով մեզ դուրս գալ հարմարավետության մեր տարածքից և անել այն, ինչը երբեք հնարավոր չենք համարել: Դա կարող է լինել հարևանների հետ ավետարանով կիսվելը, հոգևորապես մոլորվածներին փրկելը, լիաժամկետ միսիայում ծառայելը, տաճարում աշխատելը, հատուկ կարիքներով երեխային մեծացնելը, անառակին սիրելը, հիվանդ ընկերոջը ծառայելը, այլ կարծիքները հանդուրժելը կամ դժվարություններ տանելը: Դա նշանակում է պատրաստել մեզ Նրա կանչին պատասխանելուն, ասելով. «Ես կգնամ, ուր ուզում ես,3որ գնամ: Ես կասեմ, ինչ ուզում ես, որ ասեմ: Ես կանեմ, ինչ ուզում ես, որ անեմ: Ես կլինեմ, ինչ ուզում ես, որ լինեմ»:[11]

Որպեսզի լինենք այն, ինչ ուզում է Երկնային Հայրը, մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին: Ես վկայում եմ, որ Նա շարունակ կանչում է մեզ հետևել Իրեն: Եթե դուք նոր եք սվորում Վերջին Օրերի Սրբերի քրիստոնեական պարտավորվածության մասին կամ եթե լիարժեք չեք մասնակցում Եկեղեցում և ցանկանում եք նորից հետևել Նրան, մի վախեցեք: Տիրոջ առաջին աշակերտները՝ բոլորը Եկեղեցում նոր անդամներ էին, նոր դարձի եկած դեպի Նրա ավետարանը: Հիսուսը համբերատար սովորեցրեց նրանցից յուրաքանչյուրին: Նա օգնեց նրանց կատարել իրենց պարտականությունները: Նա կոչեց նրանց Իր ընկերները և Իր կյանքը տվեց նրանց համար: Եվ նույնը Նա արել է ձեզ և իմ համար:

Ես վկայում եմ, որ Նրա անսահման սիրո և շնորհի միջոցով մենք կարող ենք դառնալ ավելի քրիստոսանման քրիստոնյա: Մտածեք քրիստոսանման հետևյալ

հատկանիշների մասին: Ի՞նչ ենք մենք անում մեր մեջ դրանք ամրացնելու համար:

Քրիստոնեական սեր: Փրկիչը արժեքավորում էր յուրաքանչյուրին: Լինելով բարի և կարեկից բոլորի հանդեպ, Նա թողեց ինսունիններին՝ մեկին գտնելու համար,[12] քանի որ «[մեր] գլխի բոլոր մազերն էլ համարված են»[13] Նրա մոտ:

Քրիստոնեական հավատք: Չնայած գայթակղություններին, փորձություններին և հալածանքներին, Փրկիչն ապավինեց մեր Երկնային Հորը և որոշեց լինել հավատարիմ և հնազանդ Նրա պատվիրաններին:

Քրիստոնեական զոհաբերություն: Իր կյանքի ընթացքում Փրկիչը նվիրաբերեց Իր ժամանակը, եռանդը և, ի վերջո, Քավության միջոցով Իր կյանքը, որպեսզի Աստծո բոլոր զավակները կարողանան հարություն առնել և ունենալ հավերժական կյանք ժառանգելու հնարավորություն:

Քրիստոնեական հոգատարություն: Բարի Սամարացու նման Փրկիչը մշտապես օգնության էր հասնում, սիրում և սնուցում էր Իր շուրջը գտնվող մարդկանց, անկախ նրանց մշակույթից, հավատքից կամ պայմաններից:

Քրիստոնեական ծառայություն: Լիներ դա ջրհորից ջուր հանելը, ուտելու համար ձուկ պատրաստելը, թե կեղտոտված ոտքեր լվանալը, Փրկիչն Իր օրերը անցկացրեց մյուսներին ծառայելու մեջ՝ բարձրացնելով հոգնածին և ամրացնելով թույլին:

Քրիստոնեական համբերություն: Իր վշտերի և տանջանքների մեջ Փրկիչը սպասում էր Իր Հորը: Մեր հանդեպ համբերատարությամբ Նա սպասում է, որ մենք վերադառնանք ինքներս դեպի մեզ և գանք տուն՝ Նրա մոտ:

Քրիստոնեական խաղաղություն: Իր ծառայության ընթացքում Նա խրախուսում էր հասկացողությունը և խաղաղությունը: Հատկապես Իր աշակերտների մեջ Նա ուսուցանում էր, որ քրիստոնյաները չեն կարող հակառակվել մյուս քրիստոնյաներին, անգամ տարբերություններ ունենալով:

Քրիստոնեական ներում: Նա ուսուցանել է մեզ օրհնել նրանց, ովքեր հալածում են մեզ: Նա ցույց է տվել մեզ ճանապարհը, աղոթելով նրանց ներման համար, ովքեր խաչեցին Իրեն:

Քրիստոնեական դարձ: Պետրոսի և Անդրեասի նման, շատերը ընդունում են ավետարանի ճշմարտությունը, երբ լսում են այն: Նրանք անմիջապես դարձի են գալիս: Մյուսների համար դա կարող է ավելի երկար տևել: Ջոզեֆ Սմիթի միջոցով տրված հայտնության մեջ Փրկիչն ուսուցանում է. «Այն, ինչ Աստծուց է՝ լույս է. և նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս. և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում»,-[14] կատարյալ օրը՝ մեր դարձի: Հիսուս Քրիստոսն է «լույսը և Քավիչն աշխարհի. ճշմարտության Հոգին»:[15]

Քրիստոնեական համբերություն մինչև վերջ: Իր բոլոր օրերում Փրկիչը երբեք չհրաժարվեց Իր Հոր կամքը կատարելուց, այլ շարունակեց ապրել արդարակեցության, բարության, ողորմածության և ճշմարտության մեջ մինչև Իր մահկանացու կյանքի վերջը:

Սրանք հատկանիշներ են, բնորոշ նրանց, ովքեր լսում և հետևում են Փրկչի ձայնին: Որպես երկրի վրա Նրա հատուկ վկաներից մեկը, ես բերում եմ իմ քրիստոնեական վկայությունը, որ Նա կանչում է ձեզ այսօր. «Եկ հետևիր ինձ»:[16] Եկեք և քայլեք ճանապարհով, որը տանում է դեպի հավերժական երջանկություն, ուրախություն և հավիտենական կյանք մեր Երկնային Հոր արքայությունում: Հիսուս Քրիստոսի, մեր Փրկչի և Քավիչի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 4.18–20:
2. Մարկոս 1.18:
3. Մարկոս 8.34:
4. Մոսիա 5.2:
5. Եթեր 12.27; շեշտադրումն ավելացված է:
6. Հովհաննես 21.3:
7. Տես Հովհաննես 21.3–8:
8. Հովհաննես 21.2:
9. Տես Հովհաննես 21.15–17:
10. Մատթեոս 4.19; շեշտադրումն ավելացված է:
11. See "I'll Go Where You Want Me to Go," *Hymns,* no. 270.
12. Տես Մատթեոս 18.12–14:
13. Ղուկաս 12.7:
14. Վարդապետություն և Ուխտեր 50.24:
15. Վարդապետություն և Ուխտեր 93.9:
16. Ղուկաս 18.22:

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մահացածներին փրկագնելու ուրախությունը

«Զավակների սրտերում Նա կսերմանի հայրերին տված խոստումները, և զավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը»:

Տերը Մարգարե Ջոզեֆ Սմիթին հայտնել է մկրտության սրբազան ծեսի երկնային վարդապետությունը: Այդ լույսը տրվեց, երբ քրիստոնեական մյուս եկեղեցիները ուսուցանում էին, որ մահը անվերադարձ, հավերժորեն վճռում է հոգու ճակատագիրը: Դրանք ուսուցանում էին, որ մկրտվածներին պարգևվում է անվերջ ուրախություն, մինչ բոլոր մնացածը արժանանում են հավերժական տանջանքների՝ առանց փրկագնման հույսի:

Տիրոջ հայտնությունն այն մասին, որ պատշաճ քահանայության իշխանության միջոցով մկրտությունը կարող է կատարվել մահացածի փոխարեն, պահպանում է Նրա հայտարարության արդարությունը. «Եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, նա չի կարող մտնել Աստծո արքայությունը»:[1] Փոխարինողների միջոցով մկրտությունը կարող է գթառատորեն պարգևել այս էական ծեսը բոլոր արժանի մահացածներին, ովքեր չեն ստացել այն մահկանացու կյանքում:

Այս փառավոր վարդապետությունը մեկ այլ վկայություն է Հիսուս Քրիստոսի Քավության համապարփակ էության մասին: Նա փրկությունը մատչելի է դարձրել յուրաքանչյուր ապաշխարող հոգու համար: Նրա Քավությունը հաղթել է մահը, և Նա թույլ է տալիս, որ արժանի մահացածները ստանան փրկության բոլոր ծեսերը փոխարինողների կողմից:

Ավելի քան 150 տարի առաջ գրած նամակում Ջոզեֆ Սմիթն ասում է. «Սրբերը արտոնություն ունեն մկրտվելու . . . իրենց բարեկամների համար, ովքեր մահացել են, . . . ովքեր ընդունել են ավետարանը հոգու վիճակում . . . նրանց . . . միջոցով, ովքեր հանձնարարվել են քարոզելու նրանց»:[2] Այնուհետև նա ավելացնում է. «Այն սրբերը, ովքեր անտեսում են դա իրենց մահացած բարեկամների համար, անում են դա իրենց սեփական փրկության հաշվին»:[3]

Եղիա մարգարեն շնորհել է փոխարինողների միջոցով աշխատանքի բանալիները Ջոզեֆ Սմիթին Կիրթլենդի տաճարում՝[4] իրականացնելու համար Տիրոջ խոստումը, որ «զավակների սրտերում նա կսերմանի հայրերին տված խոստումները, և զավակների սրտերը կդառնան դեպի *իրենց* հայրերը»:[5]

Ջոզեֆ Սմիթին և հաջորդ մարգարեներին տրված հետագա հայտնությունների միջոցով տրվում է ավելի խորը պատկերացում և ընթացակարգ տաճարային աշխատանքի և դրան աջակցող ընտանեկան պատմության ջանքերի վերաբերյալ: Ջոզեֆ Սմիթից սկսած յուրաքանչյուր մարգարե շեշտել է մեզ և մեր մահացած նախնիների համար բոլոր ծեսերը ապահովելու մեծագույն կարևորությունը:

Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը մեկ աշխատանք է՝ բաժանված երկու մասի: Դրանք կապված են միմյանց ինչպես մկրտության ծեսը և Սուրբ Հոգու պարգևը: Որոշ անդամներ չեն կարողանում կատարել երկու աշխատանքները՝ առողջական կամ տաճարից հեռու լինելու պատճառով:

Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ուսուցանել է.

«Մենք պետք է կատարենք քահանայության տաճարային ծեսերի աշխատանքը, որն անհրաժեշտ է մեր սեփական վեհացման համար: Այնուհետև մենք պետք է կատարենք անհրաժեշտ աշխատանքը նրանց համար, ովքեր հնարավորություն չեն ունեցել ընդունելու ավետարանը կյանքի ընթացքում: Մյուսների համար աշխատանքը կատարվում է երկու քայլով. առաջինը՝ ընտանեկան պատմության հետազոտությամբ գտնել մեր նախնիներին , և երկրորդը՝ կատարել տաճարային ծեսերը տալով նրանց նույն հնարավորությունները, որ ունեն ապրողները:

Սակայն, Եկեղեցու շատ անդամների համար տաճար այցելելու հնարավորությունները սահմանափակ են: Նրանք անում են, ինչ կարող են: Նրանք կատարում են ընտանեկան պատմության ուսումնասիրություն, որից հետո

տաճարային ծեսերը կատարվում են ուրիշների կողմից: Եվ հակառակը, կան անդամներ, ովքեր մասնակցում են տաճարային աշխատանքին, սակայն չեն զբաղվում իրենց սեփական տոհմաբանության պատմությամբ: Թեև նրանք աստվածային ծառայություն են մատուցում, օգնելով ուրիշներին, նրանք օրհնություն են կորցնում, երբ չեն փնտրում իրենց սեփական տոհմի նախնիներին, ինչպես աստվածայնորեն հրահանգել են վերջին օրերի մարգարեները: . . .

Ես գիտեմ, որ նրանք, ովքեր կատարում են ընտանիքի պատմության հետազոտություն և ապա կատարում տաճարային աշխատանք նրանց համար, ում անունները գտել են, կունենան լրացուցիչ ուրախություն, ստանալով օրհնության երկու մասերը»:[6]

Երկնային Հայրը ցանկանում է, որ յուրաքանչյուրս ստանա այս կենսական փոխարինող աշխատանքի օրհնության երկու մասերը: Նա ուղղորդել է ուրիշներին, որ ցույց տան, թե ինչպես մենք կարող ենք արժանի լինել դրանց: Ինձանից և ձեզանից է կախված այդ օրհնությունները ձեռք բերելը:

Տաճարում կատարված ցանկացած աշխատանք ժամանակի լավ տնօրինում է, սակայն որպես փոխանորդներ իսկ նախնիների համար ծեսեր ստանալը տաճարում անցկացրած այդ ժամանակը էլ ավելի սրբազան է դարձնում և բերում՝ էլ ավելի մեծ օրհնություններ: Առաջին Նախագահությունը հայտարարել է. «Մեր առաջնահերթ պարտականությունն է՝ փնտրել և գտնել *մեր սեփական* նախնիներին»:[7]

Երիտասարդներ, դուք ուզո՞ւմ եք ապահով ուղի՝ ձեր կյանքում թշնամու ազդեցությունը նվազեցնելու համար: Ընկղմվեք ձեր նախնիների հետազոտության մեջ, պատրաստեք նրանց անունները փոխարինողների միջոցով տաճարում մատչելի սրբազան ծեսերի համար, ապա գնացեք տաճար և փոխարինող դարձեք նրանց համար, ստանալով մկրտության ուխտերը և Սուրբ Հոգու պարգևը: Տարիքն առնելուն հետ դուք կարող եք մասնակցել այլ ծեսերի ստացմանը: Ես չգիտեմ ձեր կյանքում թշնամուց պաշտպանվելու ավելի մեծ պաշտպանության մասին:

Ռուսաստանի Դոնի Ռոստով միսիայում երիտասարդներին կոչ արվեց, որ յուրաքանչյուրը ինդեքսավորի 2000 անուն, ապա գտնի առնվազն մեկ անուն իր սեփական ընտանիքից՝ տաճարի ծեսերի համար: Նրանք, ովքեր կհասնեին այդ նպատակին, հրավիրվում էին եկար ճամփորդություն կատարել դեպի Ուկրաինա Կիևի նորակառույց տաճար: Մի երիտասարդ տղա կիսվել է այս փորձառությամբ. «Ես շատ ժամանակ էի վատնում համակարգչային խաղեր խաղալով: Երբ սկսեցի ինդեքսավորել, ժամանակ չունեի խաղեր խաղալու: Սկզբում ես մտածում էի. «Օ, ոչ: Չի կարող պատահել»: Երբ այս ծրագիրն ավարտվեց, ես արդեն կորցրել էի խաղեր խաղալու իմ հետաքրքրությունը: . . . Տոհմանաբանական աշխատանքը մի բան է, որ մենք կարող ենք անել այստեղ՝ երկրի վրա, և այն կմնա նաև երկնքում»:

Հավատարիմ շատ Սրբեր կատարել են իրենց ընտանեկան գծերի ուսումնասիրությունը և օգտվում են FamilySearch-ի պահեստային հնարավորությունից, պահելով ծեսերը իրենց սեփական ընտանիքի անդամների համար, որպեսզի իրենք հանդես գան որպես փոխարինողներ: Անունները պահեստավորելու

հնարավորությունը թույլ է տալիս որոշ ժամանակով ամրագրել նախնիների և տոհմաբանական գծերի համար ծեսերի կատարումը, խելամիտ ժամանակ տալով ձեզ դա կատարելու համար: Ներկայումս կան 12 միլիոն անուններ և միլիոնավոր համապատասխանող ծեսեր, որոնք ամրագրված են: Շատ անուններ պահվում են տարիների ընթացքում: Նախնիները, որոնք գտնվել են, անկասկած, անհամբերությամբ և ոգևորությամբ սպասում են, թե երբ իրենց անունները կներկայացվեն ծեսերի համար: Նրանք, սակայն, հնարավոր է, այդքան էլ ուրախ չեն, երբ շարունակում են անընդմեջ սպասել իրենց ծեսերի կատարմանը:

Մենք խրախուսում ենք ձեզ, ովքեր անունների մեծ պաշար ունեն, կիսվել դրանցով, որպեսզի ձեր բարեկամները կամ ծուխը և ցիցը կարողանան օգնել ձեզ ավարտել այդ աշխատանքը: Դուք կարող եք անել դա, բաժանելով տաճարային քարտեր ծխի և ցցի անդամներին, ովքեր ցանկանում են օգնել, կամ կարող եք օգտագործել FamilySearch համակարգչային ծրագիրը և ներկայացնել անունները անմիջապես տաճար: Այս վերջին տարբերակը Սինդի Բլեվինսը՝ Կասպերից, Վայոմինգ, օգտագործում է տարիներ շարունակ:

Քույր Բլեվինսը մկրտվել է դեռահաս տարիքում և եղել է իր ընտանիքի միակ անդամը, որը միացել էր Եկեղեցուն: Նա կատարել էր տոհմաբանական ահռելի աշխատանք: Սակայն իր և իր անմիջական ընտանիքի համար չափից շատ անուններ կային: Հետևաբար, քույր Բլեվինսը ներկայացրել է անունները տաճար, և, ինչպես նա է ասում, ծեսերը կատարվում են մի քանի շաբաթվա ընթացքում, սովորաբար, իր տանը մոտ մեկ կամ երկու տաճարներում: Նա ասում է, որ հաճույքով է մտածում այն մասին, որ իր սեփական ծխի և ցցի ընկերները և հարևանները նրանց շարքում են, ովքեր օգնում են կատարել իր նախնիների համար աշխատանքը: Նա գնահատում է նրանց օգնությունը:

Իմ սիրելի կինը՝ Ջենինը, սիրում է կատարել ընտանեկան պատմության ուսումնասիրություն: Երբ մեր երեխաները փոքր էին, նա խնդրում էր ընկերներին խնամել երեխաներին, որպեսզի մի քանի շաբաթը մեկ անգամ մի քանի ժամ ունենար իր ընտանիքի տոհմաբանությունը ուսումնասիրելու համար: Երբ մեր ամենակրտսեր երեխան տնից գնաց, նա իր անձնական օրագրում գրեց. «Ես հենց նոր որոշում կայացրեցի, և ուզում եմ կանգնել և գոչել այդ մասին: Մայքի հին ննջասենյակը դարձել է իմ տոհմաբանության աշխատասենյակը: Այն լավ կահավորված է՝ գրառումները դասավորելու և աշխատելու համար: Իմ կյանքը այժմ կենտրոնացած կլինի ընտանեկան ուսումնասիրության կենսական աշխատանքի և անունները տաճար ներկայացնելու շուրջ: Ես այնքան ոգևորված և ուրախ եմ դրա համար»:[8]

Օրագրում մեկ այլ գրառում ասում է. «Ինձ համար հրաշք տեղի ունեցավ Մել Օլսենի Ընտանեկան պատմության գրասենյակում, ով ինձ տվեց իմ նախնիների տոհմաբանության հայտնի բոլոր աղյուսակները, որոնք վերցվել էին տոհմաբանական հասարակությանը ուղարկված Նախնիների համակարգչային հաշվառման ծրագրից: Հիմնականում դրանք վերցվել էին չորս սերունդների ծրագրերի այն գրառումներից, որոնք Եկեղեցին օգտագործում էր տարիներ առաջ: Ինչ ճնշում էր այն միտքը, թե ինչ ահռելի ծավալի աշխատանք ես պետք է անեի, որպեսզի հավաքեի իմ բոլոր նախնիների ուսումնասիրության գրառումները ընտանեկան կազմակերպություններից և մուտքագրեի դրանք համակարգիչ՝ Նախնիների ֆայլի առաջին համակարգչային տարածման համար: Իսկ այժմ, ահա նրանք, գեղեցիկ, դասավորված, լազերային տպիչով տպված և դրված են իմ առջև սեղանի վրա: Ես այնքան ոգևորված էի և հուզված, որ ցնցված նստած էի, ապա սկսեցի երջանկությունից լաց լինել: . . . Մի մարդու համար, ով երեսուն տարի շարունակ համառորեն



մանրակրկիտ հետազոտություն է կատարել, այդ բոլոր գրառումների թվայնացումը իսկապես ոգեշնչող է: Եվ երբ ես մտածում եմ հարյուր հազարավոր մարդկանց մասին, ովքեր այժմ կամ շուտով համակարգչի մեջ կմուտքագրեն մարդահավաքների և մասնավոր հետազոտությունների գրառումները, ես այնքան եմ ոգևորվում: Սա իսկապես Տիրոջ աշխատանքն է և Նա է այն ղեկավարում»:[9]

Ես շատ եմ ճաշակել այս աստվածային աշխատանքի պտուղներից, իմանալով, որ Եղիայի բանալիները, որ վերականգնվել են Ջոզեֆ Սմիթին, թույլ են տալիս, որ մեր սրտերը կապվեն միմյանց և որ յուրաքանչյուրս կապվի մեր այն նախնիների հետ, ովքեր սպասում են մեր օգնությանը: Այստեղ՝ երկրի վրա սուրբ տաճարներում մեր ջանքերի միջոցով և Փրկչի կողմից տրված իշխանության շնորհիվ մեր նախնիները ստանում են փրկող ծեսերը, որոնք թույլ են տալիս իրենց վայելել հավերժական երջանկություն:

Անցյալում, ղեկավարվելով խորը համոզմամբ այս աշխատանքի սրբության մասին, մարդիկ արիաբար մոտեցել են խնդրին, որը նման է եղել մեկ ձեռքով Նեբրասկայի ողջ հացահատիկը հավաքելուն: Այսօր, գործի մեջ են մեծ ուժեր: Միասին մենք կարող ենք և կկատարենք պահանջվող աշխատանքը:

Ես վկայում եմ, որ Եղիայի Հոգին դիպչում է Հոր բազմաթիվ զավակների սրտերին ամբողջ աշխարհում, որի արդյունքում մահացածների համար աշխատանքը աննախադեպ արագություն է հավաքում:

Իսկ ի՞նչ կասեք ձեր մասին: Դուք աղոթե՞լ եք ձեր նախնիներին վերաբերվող աշխատանքի համար: Մի կողմ դրեք ձեր կյանքի այն գործերը, որոնք իրականում նշանակություն չունեն: Որոշեք անել մի բան, որը հավերժական հետևանքներ կունենա: Մի գուցե, դուք հուշում եք ստացել որոնել նախնիներին, սակայն զգում եք, որ տոհմաբանության մասնագետ չեք: Չե՞ք կարծում, որ դրա կարիքն այլևս չունեք: Ամեն-ինչ սկսվում է սիրելուց և անկեղծ ցանկությունից օգնելու նրանց, ովքեր վարագույրի մյուս կողմում են և չեն կարող օգնել իրենք իրենց: Նայեք ձեր շուրջը: Կլինի ինչ-որ մեկը ձեր տարածքում, ով կարող է օգնել ձեզ հաջողության հասնել այդ գործում:

Այս աշխատանքը հոգևոր աշխատանք է, վարագույրի երկու կողմերի համագործակցության ահռելի ջանք, երբ օգնությունը տրվում է երկու ուղղությամբ: Որտեղ էլ որ լինեք աշխարհում, աղոթքի, վճռականության, ջանասիրության և որոշ զոհաբերության շնորհիվ դուք կարող եք զորեղ ներդրում կատարել: Սկսեք այժմ: Ես խոստանում եմ ձեզ, որ Տերը կօգնի ձեզ գտնել ճանապարհը: Եվ դուք ձեզ հիանալի կզգաք: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 3.5:
2. *History of the Church,* 4:231.
3. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 471–72.
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 110.13–16:
5. Վարդապետություն և Ուխտեր 2.2; շեշտադրումն ավելացված է:
6. Howard W. Hunter, “A Temple-Motivated People,” *Liahona,* May 1995, 5–6.
7. Առաջին Նախագահության նամակ, 29 փետ., 2012; շեշտադրումն ավելացված է:
8. Jeanene Watkins Scott, personal journal, Apr. 1988.
9. Jeanene Watkins Scott, personal journal, Sept. 23, 1989.

Ռասսել Տ. Օսգաթորփ
Կիրակնօրյա դպրոցի գերագույն նախագահ

Մեկ քայլ մոտ Փրկչին

Դարձի գալը ավետարանն ուսանելու և ուսուցանելու ողջ նպատակն է: Դարձի գալը մեկ անգամյա իրադարձություն չէ: Դա Փրկչին նմանվելու կյանքի տևողություն ունեցող ձգտում է:

Անցյալ ամառ ես մի փոքր հոդված էի գրել, որը լույս տեսավ *Լիահոնա* և *Ensign.* ամսագրերում: Որդիս ինձ մի նամակ գրեց՝ ասելով. «Հայրի՛կ, ինչու մեզ չէիր ասում, որ քո հոդվածը հրատարակվելու է»: Ես պատասխանեցի. «Ես ուզում էի համոզվել, թե արդյո՞ք դուք կարդում եք Եկեղեցու ամսագրերը»: Նա պատասխանեց և բացատրեց, որ իր տաս տարեկան դուստրը անցել է ստուգարքը: Նա վերցրել էր *Ensign* ամսագիրը փոստարկղից, եկել էր տուն և կարդացել էր այն: Այնուհետև, նա եկավ մեր սենյակ ու մեզ ցույց տվեց քո հոդվածը»:

Իմ թոռնուհին կարդացել էր *Ensign* ամսագիրը, որովհետև սովորելու ցանկություն ուներ: Նա գործել էր ինքնուրույն՝ գործածելով կամքի իր ազատությունը: Առաջին Նախագահությունը վերջերս ուսանելու նոր ուսումնական նյութեր է հաստատել երիտասարդների համար, որը համահունչ կլինի ավետարանն ուսանելու, ապրելու և կիսվելու երիտասարդների ներքին ցանկությանը: Հունվարից մենք կսկսենք օգտագործել դրանք մեր դասարաններում: Սովորեք ավելին երիտասարդների համար ուսումնական նոր նյութերի մասին **lds.org/youth/learn** կայքում:

Երբ Փրկիչն ուսուցանում էր, ուսանողի կամքի ազատությունը գերակա դեր ուներ: Նա մեզ ցույց տվեց ոչ միայն այն, թե ինչ պետք է սովորեցնենք, այլ նաեւ այն, թե ինչպես պետք է ուսուցանենք: Նա կենտրոնանում էր ուսանողի կարիքների վրա: Նա մարդկանց օգնում էր ինքնուրույն բացահայտել ճշմարտությունը:[1] Նա միշտ լսում էր նրանց հարցերը:[2]

Ուսանելու այս նոր ուսումնական նյութերը բոլորիս կօգնեն Տիրոջ ձևով ուսանել և ուսուցանել մեր տներում ու մեր դասարաններում:[3] Այդպես վարվելով մենք կարձագանքենք Նրա «Հետևիր ինձ»[4] հրավերին, ինչպես այդպես գեղեցիկ ուսուցանեց Երեց Ռոբերտ Դ. Հեյլը: Մինչ այդ նոր ուսումնական նյութերը մշակվում էին, ես տեսել եմ, թե ինչպես են ղեկավարները, օժանդակ կազմակերպության ուսուցիչները, սեմինարիայի խորհրդի անդամները և ծնողները միասին աշխատել, որպեսզի կարողանային բավարարել իրենց ուսանողների կարիքները: Ես տեսել եմ, թե երիտասարդ աղջիկները՝ իրենց դասարաններում, երիտասարդ տղաները՝ Ահարոնյան Քահանայության քվորումներում եւ երիտասարդները՝ կիրակնօրյա դպրոցում, ինչպես են սովորում գործածել իրենց ազատ կամքը եւ ինքնուրույն գործ անում:

Կիրակնօրյա Դպրոցի երիտասարդների դասարանի մի ուսուցիչ մտածում էր, թե աուտիզմով տառապող երկու երիտասարդների ինչպես օգներ ինքնուրույն գործել: Երբ հրավիրեց դասարանի անդամների հետ կիսվել, թե ինչ են նրանք սովորել, նա մտահոգված էր, որ այդ երկու երիտասարդները կարող էին մերժել իր հրավերը: Բայց նրանք չմերժեցին: Մեկը կանգնեց կիսվելու, թե ինչ էր ինքը սովորել եւ ապա հրավիրեց միևնույն հիվանդությամբ դժվարախոս մյուս համադասարանցուն օգնել իրեն: Երբ առաջինը սկսեց դժվարանալ, դասընկերը մնաց նրա կողքին եւ շշնջաց նրա ականջին, որ նա կարողանա հաջողակ զգալ: Այդ օրը նրանք երկուսն էլ ուսուցիչ էին: Նրանք սովորեցնում էին այն, *ինչ* Փրկիչն էր ուսուցանում, և նրանք սովորեցնում էին նաև այն, թե *ինչպես* էր Փրկիչն ուսուցանում: Երբ Փրկիչն ուսուցանում էր, նրա շարժառիթը ուսուցանվողի հանդեպ սերն էր, ճիշտ այն, ինչ անում էր դասընկերն իր ընկերոջ հանդեպ:[5]

Երբ Իր խոսքն ուսանում եւ ուսուցանում ենք Նրա ձեւով, մենք ընդունում ենք Նրա «հետևիր ինձ» հրավերը: Փրկչին հետևելը լինում է քայլ առ քայլ: Յուրաքանչյուր քայլի հետ մենք ավելի շատ ենք մոտենում Փրկչին: Մենք փոխվում ենք: Տերը գիտի, որ հոգեւոր աճը տեղի չի ունենում միանգամից: Այն գալիս է աստիճանաբար: Ամեն անգամ, երբ ընդունում ենք Նրա հրավերը եւ ընտրում ենք հետեւել Նրան, մենք առաջ ենք ընթանում դարձի գալու ճանապարհի երկայնքով:

Դարձի գալը ավետարանն ուսանելու և ուսուցանելու ողջ նպատակն է: Դարձի գալը մեկանգամյա իրադարձություն չէ: Դա Փրկչին նմանվելու կյանքի տևողություն ունեցող ձգտում է: Երեց Օուքսը մեզ հիշեցրել է, որ *իմանալը* բավարար չէ: ««Դարձի եկած» լինելու համար մեզանից պահանջվում է *գործել* եւ *դառնալ*»[6]: Ուստի, դարձի գալու նպատակով սովորելը իմանալու, գործելու եւ

փոխվելու շարունակական գործընթաց է: Նմանապես, դարձի բերելու նպատակով ուսուցանելը պահանջում է հիմնական վարդապետության ուսուցում, գործելու հրավեր եւ օրհնությունների խոստում:[7] Երբ ճշմարիտ վարդապետություն ենք ուսուցանում, մենք օգնում ենք, որ սովորողը ճանաչի: Երբ հրավիրում ենք կիրառելու, մենք օգնում ենք մարդկանց գործել կամ ապրել ըստ վարդապետության: Իսկ երբ Տիրոջ խոստացած օրհնությունները գալիս են, մենք փոխվում ենք: Ինչպես Ալման, մենք կարող ենք դառնալ նոր արարած:[8]

Երիտասարդների նոր ուսումնական նյութերն ունեն մեկ կենտրոնական նպատակ՝ օգնել երիտասարդներին դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը: Վերջերս տեսա մի երիտասարդ տղայի երիտասարդական Կիրակնօրյա Դպրոցի դասարանում ճշմարտությունը իր համար բացահայտելիս: Երբ ես նկատեցի, որ նա դժվարանում է Քավությանը վերաբերող իրադարձություն հիշել իր կյանքից, ես նրան հարցրեցի, թե նա երբեւէ զգացել է, թե ինչպես է ներում ստացել: Նա պատասխանեց. «Այո, ես ֆուտբոլ խաղալիս պատահմամբ կոտրել էի մի տղայի քիթը: Ես վատ էի զգում դրա համար: Ես մտածում էի, թե ինչ պետք է անեմ, որպեսզի լավ զգամ: Այնպես որ, ես գնացի իրենց տուն եւ նրանից ներողություն խնդրեցի, բայց զգում էի, որ ինձ հարկավոր էր անել ավելին, այնպես որ ես աղոթեցի, եւ ապա զգացի, որ Երկնային Հայրը նույնպես ներել է ինձ: Սա է Քավության նշանակությունն ինձ համար»:

Կիսվելով այդ փորձառությամբ դասարանում, նա կարդաց Հովհաննեսի 3.16: «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ տվեց իր միածին Որդուն», և հետո վկայեց Քավության զորության մասին: Այդ վարդապետությունն այլևս վերացական դրույթ չէր այդ տղայի համար: Այն իր կյանքի մասը դարձավ, որովհետև նա իրեն հարց տվեց, և ապա իր ազատ կամքով հավատքը գործի դրեց:[9]



Այդ երիտասարդն ավելի շատ էր փոխվում եւ փոխվում էին նաև իր համադասարանցիները: Նրանք կենտրոնացած էին հիմնական վարդապետության վրա՝ ուսումնասիրելով սուրբ գրությունները: Նրանք այդ սրբազան խոսքերը նմանեցնում էին իրենց կյանքին եւ այնուհետև վկայում էին այն օրհնությունների մասին, որոնք իրենք ստացել էին այդ վարդապետությունով ապրելու արդյունքում: Երբ մենք ուսուցանում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանը, մենք կենտրոնանում ենք սուրբ գրությունների եւ ժամանակակից մարգարեների խոսքերի վրա: Մենք ապավինում ենք սրբազան գրվածքներին, որոնք օգնում են հավատքն ուժեղացնել, վկայություն կերտել եւ օգնել բոլորին լիովին դարձի գալ: Երիտասարդների նոր ուսումնական նյութերը կօգնեն բոլոր օգտագործողներին՝ հասկանալ եւ ապրել Աստծո խոսքով:

Կոստա Ռիկայում ուսուցանելու ժամանակ ես բարձրացրեցի *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* ձեռնարկը և հարցրեցի. «Ձեզանից քանիսն ունեն այս ձեռնարկը»: Գրեթե բոլորը ձեռք բարձրացրեցին: Ժպտալով՝ ես ասացի. «Համոզված եմ, որ դուք ամեն օր կարդում եք այն»: Ի զարմանս ինձ, առաջին շարքում նստած մի քույր ձեռք բարձրացրեց, ի նշան ամեն օր կարդալու: Ես խնդրեցի նրան գալ ամբիոնի մոտ ու բացատրել: Նա պատասխանեց. «Ամեն առավոտ ես կարդում եմ Մորմոնի Գիրքը: Դրանից հետո ես կարդում եմ մի բան *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* ձեռնարկից, որ իմանամ, թե հենց նոր կարդացածս ինչպես կարող եմ լավագույն ձևով ուսուցանել երեխաներիս»:

Նա ցանկանում էր ուսանել և ուսուցանել Նրա խոսքերը Նրա ձևով, այնպես որ նա ուսումնասիրում էր Նրա խոսքը սուրբ գրություններում, և ապա ուսումնասիրում էր, թե ինչպես Նրա խոսքը ուսուցանների, որպեսզի իր երեխաները դարձի գան: Ավետարանն ուսանելու և ուսուցանելու նրա օրինակելի փորձը, հավատացած եմ, միանգամից չէր ձևավորվել: Նա որոշում էր կայացրել ինչ-որ բան անել: Եվ որքան շատ էր նա հետևել իր որոշմանը, այնքան շատ էր Տերը ուժ տվել քայլելու Իր ճանապարհով: Յուրաքանչյուր քայլի հետ նա ընդունել էր Փրկչի «Հետևիր ինձ» հրավերը:

Երբեմն դարձի գալու ճանապարհը կարող է երկար և դժվար լինել: Իմ փեսան 50 տարի ակտիվ չէր Եկեղեցում: 60 տարեկանից հետո միայն նա սկսեց ընդունել վերադառնալու Փրկչի հրավերը: Այդ ճանապարհին շատերն էին նրան օգնել: Մի տնային ուսուցիչ 22 տարի շարունակ ամեն ամիս նրան բացիկ էր ուղարկում: Սակայն վերադառնալու համար նա պետք է որոշում կայացներ: Նա պետք է իր ազատ կամքը գործի դներ: Նա պետք է ընդուներ Փրկչի «Հետևիր ինձ» հրավերը: Վերադառնալուց հետո նրանք կնոջ հետ կնքվել են տաճարում և այժմ նա ծառայում է ծխի եպիսկոպոսությունում:

Վերջերս մենք նրան ցույց տվեցինք այն տեսանյութերը, որոնք մշակվել են, որպեսզի օգնեն ղեկավարներին եւ ուսուցիչներին կիրառել նոր ուսումնական նյութերը: Տեսանյութերը դիտելուց հետո, փեսաս թինկ տվեց իր աթոռին եւ ասաց, փոքր ինչ հուզված. «Եթե այս բաները լինեին, երբ ես երիտասարդ էի, հնարավոր է, ես մոլորված չլինեի»:

Մի քանի շաբաթ առաջ ես հանդիպեցի մի երիտասարդի, որը դժվարություններ ուներ: Ես հարցրեցի, թե արդյոք նա եղել է

Աթենք, Հունաստան

Եկեղեցու անդամ: Նա ինձ ասաց, որ ինքը թերահավատ է, սակայն, որ ավելի վաղ իր կյանքում նա առիթ է ունեցել ծանոթանալու Եկեղեցու հետ: Երբ ես ասացի կիրակնօրյա դպրոցում իմ կոչման մասին, եւ որ ես պետք է խոսեմ գերագույն համաժողովին, նա ասաց, «Դե՜, եթե դուք խոսում եք, ես կդիտեմ այդ նիստը»: Ես հույս ունեմ, որ նա դիտում է այսօր: Ես գիտեմ, որ եթե նա դիտում է, ապա ինչ-որ բան սովորած կլինի: Համաժողովների այս կենտրոնը ուսանելու եւ ուսուցանելու եզակի տեղ է դարձի գալու համար:

Երբ մենք ապրում ենք ըստ այն մարդկանց ուսուցանած սկզբունքների, ում մենք հաստատում ենք որպես մարգարեներ, տեսանողներ եւ հայտնողներ, մենք սովորում ենք Փրկչի ձևով:[10] Մենք մեկ քայլ մոտենում ենք Նրան: Մոտենալով այս համաժողովի ավարտին՝ ես հրավիրում եմ բոլորին, ովքեր լսում են իմ ձայնը՝ քայլ անել և ընդունել Տիրոջ «Հետեւիր ինձ» հրավերը: Հին Նեփիացիների նման, մենք կարող ենք վերադառնալ մեր «տները, եւ խորհել այն բաների վրա, որոնք [ասվեցին], եւ հարցնենք Հորը՝ [Քրիստոսի] անունով, որ [մենք] կարողանանք հասկանալ»:[11]

Մենք ցանկանում ենք, որ ամեն մի երիտասարդ հասկանա: Մենք ցանկանում ենք, որ նրանք ուսանեն, ուսուցանեն եւ ապրեն Հիսուս Քրիստոսի ավետարանով ամեն օր: Սա այն է, ինչ Տերն ուզում է Իր բոլոր զավակների համար: Անկախ նրանից, թե դուք երեխա եք, երիտասարդ, թե չափահաս, ես հրավիրում եմ ձեզ գալ եւ հետեւել Նրան: Եկեք ու քայլեք Նրա հետքերով: Մեր կատարած յուրաքանչյուր քայլի համար, ես վկայում եմ, որ Տերը կամրացնի մեզ: Նա կօգնի մեզ, որ մնացած ճանապարհն էլ անցնենք: Հետո, երբ խոչընդոտներ հայտնվեն, մենք կշարունակենք քայլել: Երբ կասկածները գան, մենք կշարունակենք քայլել: Մենք երբեք ետ չենք շրջվի: Մենք երբեք ճանապարհը չենք կորցնի:

Ես վկայում եմ, որ Հայր Աստված և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, ապրում են: Ես վկայում եմ, որ Փրկիչը շարունակում է մեզ կանչել, ինչպես որ անցյալում է կանչել. «Եկ, հետևի՛ր ինձ»: Մենք բոլորս կարող ենք ընդունել նրա հրավերը: Բոլորս կարող ենք ուսանել, ուսուցանել և ապրել Նրա խոսքով՝ Նրա ձևով, մեկ քայլ անելով, մոտենալով Փրկչին: Եթե դա անենք, մենք ճշմարտապես դարձի կգանք: Հիսուս Քրիստոսի անունով՝ ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Հովհաննես 3.1–7: Այս հատվածում Փրկիչը պատասխանեց այն հարցին, որն ինքը Նիկոդեմոսը բարձրացրեց: Նա սովորեցրեց Նիկոդեմոսի կարիքների համաձայն: Նա թույլ տվեց Նիկոդեմոսին գործածել սովորելու իր ազատ կամքը: Նա օգնեց Նիկոդեմոսին անձամբ բացահայտել պատասխանն իր համար:
2. Տես Հովհաննես 3.4; Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.18:
3. Տես "Teaching the Gospel in the Savior's Way," lds.org/youth/learn/guidebook/teaching:
4. Տես Ղուկաս 18.18–22:
5. Տես Ա Հովհաննես 4.19:
6. Դալլին Հ. Օուքս, «The Challenge to Become», *Լիահոնա*, հունվ. 2001, 41. «Վկայել՝ նշանակում է *խնամել* և *հայտարարել*: Ավետարանը մեր «դարձի գալու» մարտահրավերն է, որը պահանջում է *գործել* և *դառնալ*: Եթե մեզանից որեւէ մեկը հիմնված են բացառապես ավետարանի իր գիտելիքների եւ վկայության վրա, մենք նույն դիրքում ենք, որում գտնվում էին օրհնված, բայց դեռ ոչ լիովին փոխված Առաքյալները, որոնց Հիսուսը «դարձի գալու» մարտահրավեր նետեց: Բոլորս գիտենք ինչ-որ մեկին, որն ամուր վկայություն ունի, բայց չի գործում այնպես, որ փոխվի ու դարձի գա»:
7. Տես Աբրահամ 2.11:
8. Տես Մոսիա 27.24–26; Բ Կորնթացիս 5.17:
9. Տես Դեվիդ Ա. Բեդնար, «Հսկեցեք բոլոր հարատևությամբ» *Լիահոնա,* մայիս, 2010, էջ 43. «Ես և դուք օգնո՞ւմ ենք մեր երեխաներին դառնալ գործակալներ, ովքեր գործում են և ուսում են փնտրում, ուսումնասիրելով և հավատքով, թե՞ մենք մեր երեխաներին սովորեցրել ենք համբերատար սպասել ուսում ստանալուն և ներգործվելու միջոցով: Որպես ծնողներ՝ մի՞թե մենք հիմնականում մեր երեխաներին տալիս ենք հոգևոր ձկանը համարժեք ուտելիք, թե՞ մենք շարունակաբար նրանց օգնում ենք ներգործել՝ ինքնուրույն սովորել՝ հաստատուն ու անխախտ կանգնել: Օգնո՞ւմ ենք արդյոք մենք մեր երեխաներին ջերմեռանդ ներգրավված լինել խնդրելու, փնտրելու և թակելու գործում»:
10. Տես Dennis B. Neuenschwander, "Living Prophets, Seers, and Revelators," *Լիահոնա,* հունվ., 2001, 49–51:
11. 3 Նեփի 17.3:

Երեց Մարկուս Բ. Նաշ
Յոթանասունից

Հավատքով են կատարվում բոլոր բաները

Հավատքը կօգնի մեզ ապահով մագլցել ավետարանի արահետը, հաղթահարել մահկանացու կյանքի ամեն մարտահրավեր, և վերադառնալ մեր Երկնային Հոր վսեմափայլ ներկայությունը:

Ոչ շատ ժամանակ առաջ Նաշերի ընտանիքից մեզանից մի քանիսը բարձրացան Հուայնա Պիչու լեռան գագաթը, մի բարձր գագաթ հնադարյան Ինկերի Մաչու Պիչու ավերակների մոտ՝ Պերուի լեռներում: Այն շատ ուղղահայաց լեռ է մագլցելու համար՝ հիասքանչ տեսարաններով և գահավեժ վայրէջքներով: Դժբախտաբար որոշ զբոսաշրջիկներ կորցրել են իրենց կյանքը՝ ընկնելով այդ նեղ ուղղահայաց արահետներից: Այդպիսի ողբերգություններից խուսափելու համար ուժեղ պարաններ են ամրացվել այդ ամուր ժայռին Հուայնա Պիչուի լեռների կողմից: Մենք բռնում էինք այդ պարաններից և դրանք օգնում էին մեզ ապահով հասնել գագաթին, որտեղ տեսարանը փառահեղ էր:

Հուայնա Պիչուի արահետի նման, մեր մահկանացու ճամփորդությունը ուղղահայաց և դժվարին բարձունք է, որը պահանջում է մեր Երկնային Հոր օգնությունը՝ այն հաջողությամբ իրականացնելու համար: Այս պատճառով Նա հաստատել է ավետարանի սկզբունքներ և արարողություններ՝ բերելու մեզ դեպի Փրկիչը և Նրա փրկարար զորությունը:[1] Այդ սկզբունքներից առաջինը՝ հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս,[2] նման է Հուայնա Պիչուի պարաններին, եթե ուժեղ են և ապահով ամրացված մեր Քավչի վեմի վրա,[3] հավատքը կօգնի մեզ ապահով մագլցել ավետարանի արահետը, հաղթահարել մահկանացու կյանքի ամեն մարտահրավեր,[4] և վերադառնալ մեր Երկնային Հոր վսեմափայլ ներկայությունը: Բոլոր բաները կատարվում են հավատքով:[5]

Հավատքը ինչպես գործողության սկզբունք է, այնպես էլ զորություն:[6] Դա «բաների մասին կատարյալ գիտելիք ունենալը չէ, ուստի եթե [մենք] հավատք ունենք, [մենք] հույս ունենք բաների հանդեպ, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են»:[7] Դա Հոգու հավաստիացումն է,[8] ձեռք բերված գիտելիքով, որ մղում է մեզ գործելու[9] հետևելով Փրկչի օրինակին և աղոթքով պահելով Նրա պատվիրանները, նույնիսկ զոհաբերության և փորձության ժամանակների միջով անցնելիս:[10] Հավատքը բերում է մեզ Տիրոջ զորությունը, որն այլ բաների շարքում, դրսևորվում է գալիք լավ բաների հանդեպ հույսով,[11] հրաշքներով, որոնք հաստատում են մեր հավատքը[12] և աստվածային պաշտպանության՝ հոգևոր և աշխարհիկ հարցերում:[13]

Անն Ռոուլիի՝ Եկեղեցու վաղ շրջանի մի ռահվիրա կնոջ կյանքը ցույց է տալիս, թե ինչպես է հավատք գործադրելն ազդում մեր կյանքի վրա՝ ի բարին: Լինելով այրի Անգլիայից, Քույր Ռոուլին գործադրեց իր հավատքը՝ արձագանքելով Սիոնում հավաքվելու մարգարեի կոչին: Նա Վիլլի ձեռնասայլերի ընկերության անդամ էր, որը հանդիպեց ձյան խորը կուտակումների իր ճանապարհին 1856 թվականի աշնանը: Նրանք գաղթի ճանապարհին հասել էին մի կետի, որտեղ նրա յոթ երեխաները տառացիորեն սովի էին մատնվել: Նա գրել է. «Ինձ ցավ էր պատճառում տեսնել, թե ինչպես էին իմ երեխաները քաղցի մատնվել: . . . Գիշերը մոտենում էր և երեկոյան ճաշի համար ուտելիք չկար: Ինչպես միշտ, ես խնդրեցի Աստծո օգնությունը: Ես ծնկի իջա՝ հիշելով երկու չորացած թխվածքաբլիթները, որոնք . . . մնացել էին ծովային ճանապարհորդությունից: Դրանք մեծ չէին և այնքան չոր էին, որ հնարավոր չէր կոտրել: Դրանք իհարկե չէին կարող կերակրել 8 մարդու, բայց 5 հացն ու 2 ձուկն էլ բավական չէին կերակրելու 5000 մարդու, բայց հրաշքի միջոցով Հիսուսն այդ արեց: Այսպիսով, Աստծո օգնությամբ ոչ մի բան անհնարին չէ: Ես գտա թխվածքաբլիթները և դրեցի դրանք հոլանդական կաթսայի մեջ և ծածկեցի դրանք ջրով և խնդրեցի Աստծո օրհնությունը: Ապա դրեցի կաթսայի կափարիչը և տեղավորեցի այն ածուխների վրա: Երբ մի փոքր անց բարձրացրեցի կափարիչը, ես

տեսա, որ կաթսան լիքն էր ուտելիքով: Ես ծնկի իջա իմ ընտանիքի հետ և շնորհակալություն հայտնեցի Աստծուն իր բարության համար: Այդ գիշեր իմ ընտանիքը բավականաչափ ուտելիք ունեցավ:[14]

Անն Ռոուլին ապրում էր ավետարանով անձնական մեծ զոհաբերությամբ: Նա օգնության կարիք ուներ և խնդրեց այն աղոթքով: Իր հավատքի շնորհիվ նա լցվեց հույսով և իր ընտանիքի համար հրաշքով ուտելիք ապահովվեց: Տերը նաև օրհնեց նրան՝ «հավատքով մինչև վերջ»[15] համբերելու հավերժորեն կարևոր ունակությամբ: Չնայած անհայտ ապագային, նա չէր պահանջում իմանալ, թե ինչպես պետք է կերակրեր իր երեխաներին հաջորդ օրը, փոխարենը նա համբերատար սպասում էր Տիրոջը[16] և առաջ շարժվում հույսով, ճիշտ ինչպես այս գեղեցիկ օրհներգն է ասում.

Առաջնորդիր Լույս, օղակող խավարից բարությամբ, առաջնորդիր ինձ առաջ,
Գիշերը մութ է, և ես տնից հեռու, առաջնորդիր ինձ առաջ,
Դու պահիր իմ ոտքերը, ես չեմ խնդրում տեսնել
Հեռավոր տեսարանը, բավական է մեկ քայլն իսկ ինձ համար:[17]

Մենք ևս կարող ենք գործադրել այդպիսի հավատք առ Տերը, հավատալով և վստահելով, որ մեր բարի և անփոփոխ Աստվածը[18] կօրհնի մեզ իր հրաշագործ զորությամբ մեր իրավիճակի համաձայն՝ ըստ Իր ժամանակացույցի: Երբ այդպես անենք մենք ևս կտեսնենք Աստծո ձեռքի դրսևորումը՝ մեր կյանքում:

Տերը պատվիրում է մեզ [վերցնել] հավատքի վահանը, որի միջոցով դուք կկարողանաք հանգցնել չարի *բոլոր* կրակոտ նետերը»:[19] Այնպիսի բաներ ինչպիսիք են կասկածը, վախը կամ մեղքը սատանան գործի կդնի՝ գայթակղելու մեզ հավատքից հեռանալ և կորցնել պաշտպանությունը, որն այն տալիս է: Եկեք հերթով հակիրճ քննենք հավատքի դեմ ուղղված այս մարտահրավերներից յուրաքանչյուրը, որպեսզի կարողանանք ճանաչել և ականջ չդնել հակառակորդի գայթակղություններին:[20]

Առաջինը, անհավատությունը առ Տերը կամ Նրա ավետարանը կստիպի մեզ դիմադրել Աստծո Հոգուն:[21] Կասկածի համար Տիրոջ հակաթույնը պարզ է: Ինչպես թագավոր Բենյամինն է հայտարարել. «Հավատացեք Աստծուն. հավատացեք, որ նա կա, որ նա ստեղծել է բոլոր բաները՝ և երկնքում, և երկրի վրա. հավատացեք, որ նա ունի բոլոր իմաստությունը և բոլոր զորությունը՝ և երկնքում, և երկրի վրա,. հավատացեք, որ մարդ չի ըմբռնում այն բոլոր բաները, որոնք Տերը կարող է ըմբռնել»:[22]

Եթե անհավատության կամ կասկածի պատճառով դուք տեսնում եք, որ ձեր հավատքը տատանվում է, հիշեք, որ նույնիսկ հնադարյան Առաքյալներն էին աղերսում Տիրոջը. «մեր հավատքն ավելացրու»:[23] Մտքում պահելով, որ հավատքն ու դատողությունը անհրաժեշտ ընկերակիցներ են, մտածեք հետևյալ համանմանության մասին՝ հավատքն ու դատողությունը նման են օդանավի երկու թևերի: Երկուսն էլ կարևոր են թռիչքը պահպանելու համար: Եթե ձեր տեսանկյունից դատողությունը թվում է հակադրվում է հավատքին, կանգ առեք և հիշեք, որ մեր հեռանակարը խիստ սահմանափակ է համեմատած Տիրոջ հետ:[24] Այլևս դեն մի գցեք հավատքը, հակառակ դեպքում դուք կանջատեք ինքնաթիռից թևը թռիչքի ընթացքում: Ընդհակառակը, փայփայեք հավատքի մի մասնիկ և թույլ տվեք, որ այն հույսը, որ դա կառաջացնի, լինի խարիսխ ձեր հոգու և ձեր դատողության համար:[25] Այդ պատճառով մեզ պատվիրվում է «ուսում փնտրեք . . . ուսումնասիրելով *և նաև* հավատքով»:[26] Հիշեք, հավատքը նախորդում է և առաջացնում հրաշքներ, որի համար մենք անմիջապես բացատրություն չունենք, ելնելով մեր փորձառությունից՝ ինչպես օրինակ երկու փոքրիկ թխվածքաբլիթներից ուտելիքով լիքը հոլանդական կաթսան կամ բոլոր դժվարություններին ուղղակի հավատքով համբերելը:[27]

Երկրորդը, վախը շեղում է և վտանգի ենթարկում Փրկչի հանդեպ հավատքը: Պետրոս Առաքյալը նայեց Տիրոջը մի փոթորկոտ գիշեր և քայլեց ջրի վրայով, մինչև որ շրջեց հայացքը և տեսնելով, «որ քամին սաստիկ է, վախեցաւ», և սկսեց ընկղմվել փոթորկոտ ծովում:[28] Նա կարող էր շարունակել քայլելը, եթե չվախենար: Մեր կյանքի սաստիկ քամու և ալիքների վրա կենտրոնանալու և դրանցից վախենալու փոխարեն, Տերը կոչ է անում մեզ՝ «Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք»:[29]

Երրորդ, մեղքը նվազեցնում է Հոգու ներկայությունը մեր կյանքում, իսկ առանց Սուրբ Հոգու մենք կկորցնենք հոգևոր կենսունակությունը՝ շարունակելու և հավատք գործադրելու համար: Լավագույնը մեր հավատքը գործադրելն է. «ձեռք չտաք չար պարգևի, ոչ էլ անմաքուր բանի»[30] և «ջանասեր եղեք իմ բոլոր պատվիրանները պահելիս, չլինի թե . . . ձեր հավատքը պակասի, և ձեր թշնամիները հաղթեն ձեզ»:[31] Եթե մեղքը բծոտել է ձեր կյանքը, ես կոչ եմ անում ձեզ գործադրել «հավատք ի ապաշխարություն»[32] և Փրկիչը Քավության միջոցով կմաքրի և կբժշկի ձեր կյանքը:

Եղբայրներ և քույրեր, Տերը համաձայն մեր հավատքի կկատարի Իր խոստումները և կաշխատի մեզ հետ՝ հաղթահարելու ամեն մարտահրավեր:[33] Նա այդպես արեց Անն Ռոուլիի համար և այդպես է արել Իր ժողովրդի համար բոլոր ազգերի մեջ և ամեն դարում և սերնդում: Որովհետև Նա «հրաշքների Աստված» է և «չի փոփոխվում», Նա նմանապես կօրհնի մեզանից յուրաքանչյուրին հույսով, պաշտպանությամբ և զորությամբ՝ ըստ Նրա հանդեպ մեր հավատքի:[34] Անխախտ հավատքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ, Հուայնա Պիչուի արահետի պարանների նման կխարսխեն ձեզ և ձեր սիրելիներին մեր Քավչի վեմին, և փրկելու Նրա անզուգական ուժին»:[35]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը նշել է. «Ապագան այնպես պայծառ է, ինչպես ձեր հավատքը»:[36]

Ես վկայում եմ, այդ հուսալի վեհ ճշմարտության մասին և կոչ անում մեզանից յուրաքանչյուրին առաջ մղվել հավատքով առ Տերը, «առանց երկմտելու»:[37] Ես գիտեմ, որ Փրկիչն ապրում է, ով «հավատքի հեղինակն ու ամբողջացնողն է»[38] և «իրեն խնդրողներին վարձահատույց կլինի»:[39] Այսպես եմ ես վկայում Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.19–21:
2. Տես Հավատո Հանգանակ 1.4:
3. Հելաման 5.12:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.53:
5. Տես Եթեր 12.3:
6. Տես *Lectures on Faith* (1985), 3; տես նաև Հակոբ 4.6, Եթեր 12.7–22, Եբրայեցիս ԺԱ.4–40:
7. Ալմա 32.21:
8. Տես Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Եբրայեցիս ԺԱ.1 (Եբրայեցիս 11.1, տողատակի ծանուցում *բ*):
9. Տես 2 Nephi 25:23, Ալմա 34.15–17, Եթեր 12.6; Հակոբոս 2.17–26:
10. Տես Եթեր 12.4–6, *Lectures on Faith,* 69:
11. Տես Մորոնի 7.40–42:
12. Տես Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Հավատք», տես նաև Մորմոն 9.8–21; Մորոնի 7.33–37:
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 27.17; Ալմա 57.19–27; 58.10–13:
14. Ann Rowley, in Andrew D. Olsen, *The Price We Paid: The Extraordinary Story of the Willie and Martin Handcart Pioneers* (2006), 113.
15. Վարդապետություն և Ուխտեր 20.25:
16. Եսայիա 40.31:
17. "Lead, Kindly Light," *Hymns,* no. 97.
18. Տես Հակոբ 4.10, Մորմոն 9.9:
19. Վարդապետություն և Ուխտեր 27.17, շեշտադրումն ավելացված է:
20. Տես 1 Նեփի 8.33–34, Ալմա 37.33, Վարդապետություն և Ուխտեր 20.22:
21. Տես Ալմա 32.28:
22. Մոսիա 4.9:
23. Դուկաս ԺԷ.5:
24. Տես Մոսիա 4.9–10, Առակաց 3.5–7, Եսայիա ԾԵ.8–9:
25. Տես Եթեր 12.4:
26. Վարդապետություն և Ուխտեր 88.118, շեշտադրումն ավելացված է:
27. Տես Մորոնի 7.33–38, Եթեր 12.19:
28. Տես Մատթեոս ԺԴ.25–31:
29. Վարդապետոըություն և Ուխտեր 6.36:
30. Մորոնի 10.30:
31. Վարդապետություն և Ուխտեր 136.2:
32. Տես Ալմա 34.15–17, տես նաև Եթեր 12.3:
33. Տես Եթեր 12.29, Ալմա 7.27:
34. Տես Մորմոն 9.18–21, տես նաև Մորոնի 7.33–38, Ալմա 37.16–17:
35. Հելաման 5.12:
36. Թոմաս Ս. Մոնսոն, «Ուրախ եղեք», *Լիահոնա,* մայիս 2009, 92:
37. Տես Հակոբոս Ա.6–8:
38. Մորոնի 6.4, տես նաև Եբրայեցիս ԺԲ.2:
39. Եբրայեցիս ԺԱ.6, տես նաև Եթեր 12.41:

Երեց Դանիել Լ. Ջոնսոն
Յոթանասունից

Դառնալով ճշմարիտ հետևորդ

Երբ հնազանդվում ենք Նրա պատվիրաններին և ծառայում մեր մերձավորներին, մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի ավելի լավ հետևորդներ:

Մեզանից նրանք, ովքեր մտել են մկրտության ջրերը և ստացել Սուրբ Հոգու պարգևը, ուխտ են կապել, որ մենք հոժար ենք վերցնել մեզ վրա Հիսուս Քրիստոսի անունը, կամ այլ կերպ ասած մենք հայտարարել ենք, որ մենք Տիրոջ հետևորդներն ենք: Մենք նորացնում ենք մեր ուխտն ամեն շաբաթ, երբ ճաշակում ենք հաղորդությունը, ցույց ենք տալիս այդ հետևորդությունը մեր ապրելակերպով: Այդ հետևորդությունը հիանալի դրսևորվեց վերջին իրադարձությունների ժամանակ Մեքսիկայում:

Գարնանային մի գեղեցիկ օր էր պտղաբուծական համայնքերում Մեքսիկայի հյուսիսում: Մրգատու ծառերը լրիվ ծաղկել էին և առատ բերքահավաքի սպասումները մեծ էին: Արդեն պլաններ էին կազմվում վարկերը մարելու մասին, փոխելու անհրաժեշտ սարքավորումները և ծերացած մրգատու այգիները, և անձնական պարտավորությունները կատարելը, ինչպես օրինակ՝ ընտանիքի անդամների համար ուսման վարձը տալը: Պլաններ էին կազմվում նույնիսկ ընտանիքի արձակուրդների վերաբերյալ: Առկա էր լավատեսության մի համընդհանուր մթնոլորտ: Այնուհետև մի երկուշաբի կեսօրին մարտի վերջում սկսվեց ձմեռային մի փոթորիկ և սկսեց ձյուն գալ: Ձյուն տեղաց մինչև առավոտյան ժամը երեքը: Հետո երբ ամպերը հեռացան, ջերմաստիճանը կտրուկ նվազեց: Ողջ գիշերվա ընթացքում և վաղ առավոտյան բոլոր ջանքերը գործադրվեցին փրկելու առնվազն բերքի մի մասը: Ոչ մի բան չօգնեց: Ուղղակի շատ ցրտեց և մրգատու ծառերը ամբողջովին ցրտահարվեցին: Այս տարի չի լինելու ոչ մրգի բերքահավաք, ոչ էլ վաճառք: Երեքշաբթի օրը բացվեց այդ բոլոր սքանչելի ծրագրերի, սպասումների և հենց նախորդ օրվա երազանքների հիվանդագին և սրտակեղեք կորստով:

Ես մի նամակ ստացա էլ-փոստով այդ սոսկալի երեքշաբթի առավոտվա մասին Ջոն Հաթչի՝ այն ժամանակ Կոլոնիա Խուարեզ Չիհուահուա Տաճարի նախագահության առաջին խորհրդականի տիկնոջից՝ Սանդրա Հաթչից: Ես մեջ կբերեմ որոշ մասեր այդ նամակից.

«Ջոնը վեր կացավ վաղ առավոտյան 6:30 և գնացտաճար տեսնելու, թե արդյոք հետաձգելու էինք այս առավոտվա նիստը: Նա վերադարձավ և ասաց, որ կայանատեղը և ճանապարհը մաքուր էին, այսպիսով մենք որոշեցինք գործի անցնել: Մտածեցինք, որ գուցե այն աշխատողները, ովքեր մրգատու այգիներ չունեին, կգային և մենք բոլոր աշխատողներին կներգրավեինք նիստում: . . . Այնքան ոգեշնչող էր տեսնել տղամարդկանց մեկը մյուսի հետևից ներս մտնելիս: Ահա նրանք այստեղ էին, ողջ գիշեր չքնելուց հետո և խորհելով իրենց բերքի կորստի մասին: . . . Ես նայում էի նրանց մեր նախապատրաստական ժողովի ժամանակ, և նրանց համար դժվար էր արթուն մնալ: Բայց հասկանալով, որ նրանք լավ արդարացում ունեին չգալու համար, նրանք այդտեղ էին: Եվ նիստում կային 38 հոգի (լիակազմ նիստ): Մեզ համար դա ոգևորող ժողով էր, և մենք շնորհակալություն հայտնեցինք Երկնային Հորը լավ մարդկանց համար, ովքեր կատարում էին իրենց պարտականությունը, անկախ նրանից, թե ինչ էր կատարվում: Ես հատուկ ոգի զգացի այնտեղ այդ առավոտ: Ես համոզված եմ Նա գոհ էր՝ իմանալով, որ մենք սիրում ենք Նրա տունը և զգացինք, որ դա լավ տեղ էր գտնվելու համար այդպիսի դժվար առավոտյան:

Պատմությունը դրանով չավարտվեց և իրականում այն դեռ շարունակվում է:

Նրանց մեծ մասը, ովքեր կորցրել էին իրենց մրգի բերքը, ունեին ազատ հող, որի վրա կարող էին այդ սեզոնի համար այլ մշակաբույսեր տնկել, ինչպես օրինակ կծու պղպեղ կամ լոբի: Այս բույսերը գուցե ապահովեին առնվազն որոշ եկամուտ, որը բավական կլիներ գոյատևելու մինչև հաջորդ տարվա մրգի բերքահավաքը: Սակայն կար մի լավ եղբայր, երիտասարդ ընտանիքով, որն ավելորդ հող չուներ և ստիպված էր մեկ տարի շարունակ առանց եկամտի մնալ: Համայնքում մյուսները տեսնելով նրա դժվարին կացությունը և գործելով իրենց սեփական նախաձեռնությամբ և ծախսերով, պատրաստեցին մի հողակտոր, օգտագործեցին իրենց սարքավորումները հողը պատրաստելու համար և տվեցին պղպեղի սածիլներ, որ տնկեր:

Ես ճանաչում եմ այն տղամարդկանց, որոնց մասին նոր խոսեցի: Նրանց գիտենալով, ես չզարմացա, թե նրանք ինչ արեցին: Բայց նրանք, ովքեր չգիտեն նրանց, հավանաբար երկու հարց կտան երկուսն էլ *ինչու* հարցով: Ինչո՞ւ նրանք եկան տաճար կատարելու իրենց պարտականությունները և ծառայելու, ողջ գիշեր ոտքի վրա լինելուց հետո, գիտակցելով միայն, որ իրենք կորցրել էին իրենց տարեկան եկամտի մեծ մասը: Ինչո՞ւ էին օգտագործում այն, ինչը սակավ էր և շատ թանկարժեք ռեսուրս՝ կարիքի մեջ գնվողին օգնելու համար, իրենք էին այժմ այդպիսի սարսափելի ֆինանսական նեղության մեջ:

Երբ դուք հասկանում եք, թե ինչ է նշանակում լինել Հիսուս Քրիստոսի հետևորդ, ապա դուք կիմանաք այդ երկու հարցերի պատասխանը:

Ուխտ կապելով լինել Քրիստոսի հետևորդը կյանքի տևողությամբ գործընթացի սկիզբն է, իսկ ուղին միշտ չէ, որ հեշտ է: Երբ մենք ապաշխարում ենք մեր մեղքերից և ձգտում անել այն, ինչ Նա կկամենար, որ մենք անենք, և երբ ծառայում ենք մեր մերձավորին, ինչպես Նա կծառայեր նրանց, մենք անխուսափելիորեն կդառնանք Նրա նման: Դառնալով Նրա նման և լինելով մեկ Նրա հետ վերջնական նպատակն է և խնդիրը, և հիմնականում ճշմարիտ հետևորդության բուն սահմանումը:

Ինչպես Փրկիչը հարցրեց Իր հետևորդներին, երբ Նա այցելեց Ամերիկյան մայրցամաք. «Հետևաբար, ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել»: Այնուհետև պատասխանելով Իր իսկ հարցին, Նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27):

Փրկչի նման դառնալը հեշտ խնդիր չէ, հատկապես այն աշխարհում, որտեղ մենք ենք ապրում: Մենք դիմակայում ենք խոչընդոտների և ձախորդությունների մեր կյանքի ամեն օրը: Սրա համար պատճառ կա և սա մահկանացու կյանքի հիմնական նպատակներից մեկն է: Ինչպես կարդում ենք Աբրահամի 3.25 հատվածում. «Եվ դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց»:

Այս ստուգումները կամ փորձությունները տարբերվում են իրենց բնույթով և ուժգնությամբ: Բայց ոչ ոք չի թողնի այս մահկանացու գոյությունը առանց դրանց միջով անցնելու: Հիմնականում մենք պատկերացնում ենք փորձությունները որպես բերքի կամ աշխատանքի կորուստ, սիրելի անձնավորության մահ, հիվանդություն, ֆիզիկական, մտավոր կամ հուզական անկարողություն, աղքատություն կամ ընկերների կորուստ: Այնուամենայնիվ, նույնիսկ թվացող արժանավոր նպատակներ ունենալը կարող է բերել անօգտակար հպարտության իր իսկ վտանգները, որտեղ մենք ավելի շատ ոգևորվում ենք մարդկանց պատիվներից, քան երկնքի հավանությունից: Սրանք կարող են ներառել աշխարհիկ հանրաճանաչություն, հասարակության ընդունում, ֆիզիկական քաջություն, արտիստական կամ ատլետիկ տաղանդ, բարգավաճում և հարստություններ: Ինչ վերաբերում է այս վերջին փորձություններին մեզանից ոմանք *«Ջութակահարը տանիքի վրա»*-ում Տեվյեի արտահայտած զգացումների պես կարող են զգալ.

«Եթե հարստություններն անեծք են, թող ինձ [Աստված] զարկի դրանով, և թող ես երբեք չապաքինվեմ»:[1]

Բայց այս վերջին տիպի փորձությունները կարող են լինել նույնիսկ ավելի սոսկալի և վտանգավոր հաղթահարելու համար, քան նախորդները: Մեր հետևորդությունը կզարգանա և կստուգվի ոչ թե փորձությունների տեսակներով, որոնց մենք հանդիպում ենք, այլ նրանով, թե ինչպես ենք մենք հաղթահարում դրանք: Ինչպես ուսուցանվել ենք Նախագահ Հենրի Բ. Այրինգի կողմից. «Այսպիսով, կյանքի մեծագույն ստուգարքը տեսնելն է, թե արդյոք մենք կլսենք և կհնազանդվենք Աստծո հրամաններին կյանքի փոթորիկների մեջ: Դա կյանքի փոթորիներին դիմանալու մեջ չէ, այլ ճիշտը ընտրելն է, մինչ դրանք մոլեգնում են: Եվ կյանքի ողբերգությունն այն է, որ երբ ձախողվում ենք այդ ստուգարքում, ձախողվում ենք արժանանալ փառքով մեր երկնային տուն վերադառնալուն» (“Spiritual Preparedness: Start Early and Be Steady,” *Liahona,* Nov. 2005, 38):

Ես 23 թոռների հպարտ պապիկ եմ: Նրանք երբեք չեն դադարում զարմացնել ինձ հավերժական ճշմարտությունների իրենց ըմբռնմամբ, նույնիսկ իրենց շատ վաղ և դյուրազգաց տարիքում: Երբ պատրաստվում էի այս ելույթին, ես խնդրեցի նրանցից յուրաքանչյուրին ինձ ուղարկել համառոտ սահմանում, թե ինչ էին հասկանում Հիսուս Քրիստոսի աշակերտ կամ հետևորդ ասելով: Ես հրաշալի պատասխաններ ստացա նրանցից բոլորից: Սակայն կուզենայի ձեզ հետ կիսվել ութ տարեկան Բենջամինից ստացած հետևյալ պատասխանով. «Հիսուս Քրիստոսի հետևորդ լինել նշանակում է օրինակ լինել: Դա նշանակում է լինել միսիոներ և պատրաստվել միսիոներ լինելու: Դա նշանակում է ծառայել ուրիշներին: Դա նշանակում է կարդալ սուրբ գրությունները և ասել ձեր աղոթքները: Դա նշանակում է սուրբ պահել հանգստության օրը: Դա նշանակում է լսել Սուրբ Հոգու հուշումներին: Դա նշանակում է գնալ եկեղեցի և տաճար»:

Ես համաձայն եմ Բենջամինի հետ: Հետևորդությունը՝ ամբողջը անելու և դառնալու մասին է: Երբ մենք հնազանդվում ենք Նրա պատվիրաններին և ծառայում մեր մերձավորներին, մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի ավելի լավ հետևորդներ: Հնազանդությունը և Նրա կամքին ենթարկվելը բերում է Սուրբ Հոգու ընկերակցությունը խաղաղության, ուրախության և ապահովության օրհնությունների հետ, որոնք միշտ ուղեկցում են Աստվածազգխի այս երրորդ անդամին: Դրանք ուրիշ ոչ մի ճանապարհով չեն կարող գալ: Վերջապես դա Նրա կամքին լիակատար ենթարկվելն է, որ օգնում է մեզ դառնալ ինչպես մեր Փրկիչն է: Կրկին, դառնալով Նրա նման և լինելով մեկ Նրա հետ վերջնական նպատակն է և խնդիրը և հիմնականում ճշմարիտ հետևորդության բուն սահմանումը:

Հետևորդությունն այն է, ինչի ականատեսը եղա ես Կոլոնիա Խուարեզ Տաճարում և դրա մոտակա դաշտերում, որտեղ չնայած սրտակեղեք ձախորդությանը միևնույն հավատքի եղբայրները և քույրերը վերահաստատեցին իրենց պարտավորություններն Աստծո և միմյանց հանդեպ:

Ես վկայում եմ, որ երբ հնազանդվում ենք Նրա պատվիրաններին, ծառայում ուրիշներին և ենթարկում մեր կամքը Նրա կամքին, մենք իսկապես կդառնանք Նրա ճշմարիտ հետևորդները: Ես այսպես եմ վկայում Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. See Joseph Stein, Jerry Bock, Sheldon Harnick, *Fiddler on the Roof* (1964), 61.

Երեց Դոն Ռ. Քլարկ
Յոթանասունից

Հաղորդության օրհնությունները

Մենք կօրհնվենք, երբ երախտագիտություն ունենանք Հիսուս Քրիստոսի Քավության համար, նորացնենք մեր մկրտության ուխտերը, զգանք ներում և ոգեշնչում ստանանք Սուրբ Հոգուց:

Ես մեծացել եմ Ռեքսբուրգում, Այդահո, որտեղ ուսուցանվել եմ հրաշալի ընտանիքի, ընկերների, ուսուցիչների և ղեկավարների կողմից և մեծ ազդեցություն ունեցել նրանցից: Բոլորիս կյանքում կան հատուկ փորձառություններ, որոնք դիպչել են մեր հոգիներին և ընդմիշտ փոխել որոշ բաներ: Նման մի փորձառություն տեղի է ունեցել ինձ հետ պատանեկության շրջանում: Այդ փորձառությունը փոխել է իմ կյանքը:

Ես միշտ ակտիվ էի Եկեղեցում և առաջ էի գնում Ահարոնյան Քահանության մեջ: Երբ դեռահաս էի, Եղբայր Ջեյքոբը՝ իմ ուսուցիչը, խնդրեց ինձ բացիկի վրա գրի առնել այն ամենը, ինչի մասին ես մտածում էի հաղորդության ընթացքում: Ես վերցրեցի իմ բացիկը և սկսեցի գրել: Ցուցակում առաջինը բասկետբոլի խաղն էր, որում մենք հաղթել էինք նախորդ երեկո: Ապա ժամադրություն էր խաղից հետո, և այդպես շարունակ: Ամենաներքևում և, անշուշտ, ոչ թավ տառերով, գալիս էր Հիսուս Քրիստոսի անունը:

Բացիկը լրացվում էր ամեն կիրակի: Երիտասարդ Ահարոնյան կրողի համար հաղորդությունը և հաղորդության ժողովը ձեռք բերեց նոր, խորացված և հոգևոր իմաստ: Ես անհամբեր սպասում էի կիրակի օրվան և հաղորդությունից ճաշակելու հնարավորությանը, քանի որ Փրկչի Քավության մասին իմ հասկացողությունը փոխում էր ինձ: Ամեն կիրակի մինչև այս օրը, հաղորդությունը ճաշակելիս, ես տեսնում եմ իմ բացիկը և վերանայում եմ իմ ցուցակը: Իմ ցուցակում այժմ առաջին տեղում միշտ մարդկության Փրկիչն է:

Նոր Կտակարանում մենք կարդում ենք այն ժամանակի մասին, երբ Փրկիչը և Նրա Առաքյալները հավաքվեցին վերնահարկում՝ Զատկի ընթրիքին:

«Եվ հաց առավ, գոհացավ, կտրեց և նորանց տվավ, և ասեց. Այս է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. *այս արեք իմ հիշատակի համար:*

Այնպես էլ ընթրիքից հետո բաժակն առավ, և ասեց. Այս բաժակը նոր ուխտն է իմ արյունովը, *որ ձեզ համար թափվում է*»:[1]

Հիսուսը հաղորդության ծեսը հաստատեց նաև Նեփիացիների մոտ իր այցի ժամանակ:[2] Ես հասկացել եմ այս երկու իրադարձությունների կարևորությունը:

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ասել է. «Ես զգում եմ, որ պետք է շեշտեմ այն, ինչ Տերը նշանակել է որպես առավել կարևոր ժողով Եկեղեցում, և դա հաղորդության ժողովն է»:[3] Եթե մենք պատշաճ պատրաստվում ենք հաղորդությանը, մենք կարող ենք փոխել մեր կյանքը: Ես կցանկանայի առաջարկել հինգ սկզբունք, որոնք կարող են օրհնել մեր կյանքը, եթե մենք արժանիորեն ճաշակենք հաղորդությունից:

I. Ունեցեք երախտագիտության զգացում Հիսուս Քրիստոսի Քավության համար:

Առաջին սկզբունքն է՝ հաղորդության ընթացքում երախտագիտության զգացում ունենալ Երկնային Հոր հանդեպ Նրա Որդու Քավության համար: Հետևյալ պատմությունը հաղորդությունը բաժանելու մասին է:

«Հաղորդությունը իրականում ինձ համար այդքան մեծ նշանակություն չի ունեցել, մինչև որ մի կիրակի ես կարգվեցի որպես սարկավագ: Այդ օրը ես բաժանում էի հաղորդությունը առաջին անգամ: Ժողովից առաջ սարկավագներից մեկը ինձ զգուշացրեց. «Ուշադիր եղիր Եղբայր Շմիթի հանդեպ: Հնարավոր է, կարիք լինի արթնացնել նրան»: Վերջապես եկավ հաղորդությանը մասնակցելու իմ ժամանակը: Ես բաժանեցի առաջին վեց շարքերին բավականին լավ: Երեխաները և մեծահասակները ընդունեցին հացը առանց որևէ նկատելի խնդրի: Ապա ես հասա յոթերորդ շարքին, որտեղ սովորաբար նստում էր Եղբայր Շմիթը: Բայց ես զարմացած էի: Քնած լինելու փոխարեն նա լիովին արթուն էր: Ի տարբերություն շատերի, ում ես սպասավորել էի, նա վերցրեց հացը մտախոհ և խորն ակնածանքով:

Մի քանի րոպե անց ես կրկին մոտեցա յոթերորդ շարքին՝ ջրով: Այս անգամ ընկերս իրավացի էր:

Եղբայր Շմիթը նստած էր կախ գլխով և գերմանացու նրա մեծ աչքերը փակ էին: Նա, ակնհայտորեն, խորը քնած էր: Ի՞նչ ես կարող էի անել կամ ասել: Ես մի պահ նայեցի նրա ճակատին, կնճռոտ և ծերացած ծանր կյանքից և աշխատանքից: Նա միացել էր Եկեղեցուն, երբ դեռահաս էր, և շատ հալածանքներ էր տարել գերմանական իր փոքր քաղաքում: Ես շատ անգամ էի լսել այդ պատմությունները վկայության ժողովին: Վերջապես, ես որոշեցի մեղմ դիպչել նրա ուսին, հույս ունենալով արթնացնել նրան: Երբ ձեռքս մեկնեցի, որ անեմ դա, նրա գլուխը դանդաղ բարձրացավ: Նրա այտերով արցունքներ էին հոսում, և նայելով նրա աչքերի մեջ, ես տեսա սեր և ուրախություն: Նա հանգիստ երկարացրեց ձեռքը և վերցրեց ջուրը: Թեև այդ ժամանակ ես միայն տասներկու տարեկան էի, մինչ այսօր պարզ հիշում եմ, թե ինչ զգացի, տեսնելով, թե ինչպես էր այս քարե տարեց տղամարդը ընդունում հաղորդությունը: Անկասկած ես գիտեի, որ նա զգում էր հաղորդությունն այնպես, ինչպես ես երբեք չէի զգացել: Այդ ժամանակ ցանկացա, որ ես էլ ունենայի այդ նույն զգացումները»:[4]

Եղբայր Շմիթը հաղորդակցվում էր երկնքի հետ, իսկ երկինքը՝ նրա հետ:

II. Հիշեք, որ մենք նորացնում ենք մկտության ուխտերը

Երկրորդ սկզբունքն է հիշելը, որ, հաղորդությունից ճաշակելով, մենք նորացնում ենք մեր մկրտության ուխտերը: Որոշ խոստումներ, որոնք մենք անում ենք, գրված են սուրբ գրություններում, հետևյալն են.

Եկեք «Աստծո հոտը և կոչվե[ք] նրա ժողովուրդը, . . . կրելու մեկդ մյուսի բեռը, . . . սգալու նրանց հետ, ովքեր սգում են, . . . և կանգնելու որպես Աստծո վկաներ»:[5]

Առաջ եկեք «կոտրված սրտով և փշրված հոգով, . . . հոժար . . . ձեզ վրա վերցնելու Հիսուս Քրիստոսի անունը, վճռականություն ունենալով ծառայել նրան մինչև վերջ»[6] և պահել Նրա պատվիրանները և միշտ հիշել Նրան:[7]

Հաղորդության աղոթքները այդ ուխտերի հիշեցումներն են: Երբ մենք ճաշակում ենք հաղորդությունից, մենք նորացնում ենք այդ ուխտերով ապրելու մեր պարտավորվածությունը: Հավատացած եմ, որ պատշաճ կլինի անգիր սովորել հաղորդության աղոթքները՝ մտքում և սրտում: Սա մեզ կօգնի կենտրոնանալ մեր մկրտության ուխտերը նորացնելու վրա: Անկախ նրանից, թե մկրտվելուց մենք 8, թե 80 տարեկան ենք, հուսով եմ, մենք երբեք չենք մոռանա այդ օրը և մեր կապած ուխտերը:

III. Հաղորդության ժամանակ մենք կարող ենք զգալ, որ մեր մեղքերը ներված են

Երրորդը, հաղորդության ժամանակ մենք կարող ենք զգալ, որ մեր մեղքերը ներված են: Եթե մենք հաղորդության ժողովից առաջ ժամանակ հատկացնենք, ապաշխարելով մեր մեղքերից, մենք կարող ենք հեռանալ հաղորդության ժողովից, զգալով մեզ մաքուր և անարատ: Նախագահ Բոյդ Կ. Փաքերն ասել է. «Հաղորդությունը նորացնում է ներման գործընթացը: . . . Ամեն կիրակի, երբ սպասավորվում է հաղորդությունը, այդ արարողությամբ նորացվում է ներման գործընթացը: Ամեն կիրակի դուք մաքրում եք ձեզ, որպեսզի, երբ ժամանակը գա և դուք մահանաք, ձեր հոգին մաքուր լինի»:[8] Արժանիորեն հաղորդությունը ընդունելը կարող է օգնել մեզ զգալ Բենիամին թագավորի ժողովրդի նման, ովքեր «*լցվեցին ուրախությամբ,* ստացած լինելով *իրենց մեղքերին թողություն, և ունենալով խղճմտանքի խաղաղություն*»:[9]

IV. Մենք կարող ենք ոգեշնչում ստանալ մեր խնդիրների լուծումների վերաբերյալ

Չորրորդ սկզբունքն այն է, որ մենք կարող ենք մեր խնդիրների լուծումների հուշումները ստանալ հաղորդության ժողովի ժամանակ: Երբ ես միսիայի նախագահ էի Բոլիվիայում, կինս՝ Մերի Էննը, և ես օրհնված էինք, մասնակցելու միսիաների նախագահների սեմինարին, որը վարում էր Նախագահ Հենրի Բ. Այրինգը: Այդ ժողովին նա մեզ սովորեցրեց պատրաստվելու երեք կարևոր եղանակ, որպեսզի պատրաստ լինեինք օգուտ քաղել ժողովից: Մենք պետք է գանք մեր խնդիրներով հանդերձ, խոնարհ, ինչպես երեխաները, պատրաստ սովորելու և Աստծո զավակներին օգնելու ցանկությամբ:

Խոնարհությամբ գալով հաղորդության ժողովին մենք կարող ենք օրհնվել, ստանալով հուշումներ մեր առօրյա խնդիրները լուծելու համար: Մենք պետք է գանք պատրաստված, պատրաստ լսելու և չշեղվելու: Սուրբ գրություններում մենք կարդում ենք. «Բայց, ահա, ես ասում եմ քեզ, որ դու պետք է *քննես այն* քո մտքում. հետո դու պետք է *հարցնես ինձ, թե արդյոք դա ճիշտ է,* և եթե դա ճիշտ լինի, ես այնպես կանեմ, որ *կուրծքդ կայրվի* քո ներսում. ուստի, *դու պիտի զգաս, որ դա ճիշտ է*»:[10] Մենք կարող ենք իմանալ, թե ինչ պետք է անենք մեր խնդիրները լուծելու համար:

V. Հաղորդությունը արժանիորեն ընդունելը կօգնի մեզ լցվել Սուրբ Հոգով

Հաղորդությունը արժանիորեն ընդունելու հինգերորդ սկզբունքը կօգնի մեզ լցվել Սուրբ Հոգով: Նեփիացիներին Իր այցի ժամանակ հաղորդությունը սպասավորելիս

Հիսուսն ասաց. «Նա, ով ուտում է այս հացը, ուտում է իմ մարմնից՝ իր հոգու համար. և նա, ով խմում է այս գինուց, խմում է իմ արյունից՝ իր հոգու համար. և նրա հոգին երբեք չպիտի քաղցի, ոչ էլ ծարավի, այլ պիտի հագենա»:[11] Նրանց խոստացվեց, որ, եթե քաղց և ծարավ ունեն արդարության, ապա կլցվեն Սուրբ Հոգով: Հաղորդության աղոթքը նույնպես խոստանում է, որ, եթե մենք ապրենք մեր ուխտերով, միշտ մեզ հետ կունենանք Սուրբ Հոգին:[12]

Երեց Մելվին Ջ. Բալլարդն ասել է. «Ես վկա եմ, որ հաղորդությանը ներկա է մի ոգի, որը ջերմացնում է մեր հոգիները՝ ոտքից մինչև գլուխ. դուք զգում եք, ինչպես են բուժվում հոգու վերքերը և ինչպես է թեթևանում բեռը: Մխիթարություն և երջանկություն է գալիս հոգուն, որը արժանի է և իսկապես ցանկանում է ճաշակել այդ հոգևոր սննդից»:[13]

Մենք կօրհնվենք, երբ ամեն շաբաթ հաղորդությունն ընդունելիս երախտագիտություն ունենանք Հիսուս Քրիստոսի Քավության համար, նորացնենք մեր մկրտության ուխտերը, զգանք ներում և ոգեշնչում ստանանք Սուրբ Հոգուց: Հաղորդության ժողովը միշտ հիանալի իրադարձություն կլինի, եթե լինի մեր երկրպագության առանցքը: Ես արտահայտում եմ իմ երախտագիտությունը Հիսուս Քրիստոսի Քավության համար: Ես գիտեմ, որ Նա ապրում է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ղուկաս 22.19–20; շեշտադրումն ավելացված է:
2. Տես 3 Նեփի 18:
3. David O. McKay, in Conference Report, Oct. 1929, 11.
4. *Book of Mormon Student Manual* (Church Educational System manual, 1979), 417.
5. Մոսիա 18.8–9:
6. Վարդապետություն և Ուպտեր 20.37:
7. Տես Վարդապետություն և Ուպտեր 20.77:
8. Boyd K. Packer, *Mine Errand from the Lord* (2008), 196.
9. Մոսիա 4.3; շեշտադրումն ավելացված է.
10. Վարդապետություն և Ուպտեր 9.8; շեշտադրումն ավելացված է:
11. 3 Նեփի 20.8:
12. Տես Վարդապետություն և Ուպտեր 20.77:
13. Melvin J. Ballard, in Bryant S. Hinckley, *Sermons and Missionary Services of Melvin Joseph Ballard* (1949), 149.

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորում

Դարձ դեպի Տերը

Ավետարանի ճշմարտացի լինելու մասին գիտելիքը վկայության հիմքն է: Մշտապես ավետարանին հավատարիմ լինելը դարձի հիմքն է:

Իմ ուղերձը հիմնականում նվիրված է Հիսուս Քրիստոսի մասին վկայություն ձեռք բերելու և դեպի Նա ու Նրա ավետարանը դարձի գալու միջև կապին: Որպես կանոն, մենք վկայության և դարձի գալու թեմաներին առանձին-առանձին ենք անդրադառնում: Ինչևէ, այդ երկու թեմաները միասին դիտարկելով մենք կարող ենք անգին հեռանկար և ավելի մեծ հոգևոր համոզմունք ձեռք բերել:

Իմ աղոթքն է, որ ճշմարտությունները, որ մենք կդիտարկենք, խորը ներթափանցեն մեր սրտերը և առիթ դառնան, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը խորհի, ապաշխարի և ավելի նմանվի Վարդապետին: Ես փափագում և խնդրում եմ, որ Սուրբ Հոգին ուսուցանի և շենացնի մեզանից յուրաքանչյուրին:

Ո՞վ եք ասում ինձ համար:

Մենք վկայության և դարձի մասին շատ բան ենք սովորում Պետրոս Առաքյալի ծառայությունից:

Գալով Փիլիպպեա, Կեսարիայի կողմերը Հիսուսը հետևյալ խորաթափանց հարցը տվեց Իր աշակերտներին. «Իսկ դուք ո՞վ եք ասում ինձ համար»:

Պետրոսն անկեղծորեն պատասխանեց.

«Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին:

Եվ Հիսուսը պատասխան տվավ և ասեց նրան. Երանի քեզ, Սիմոն՝ Հովնանի որդի, որովհետև մարմինը և արյունը չհայտնեց քեզ, բայց իմ Հայրը որ երկնքումն է» (Մատթեոս ԺԶ.15–17):

Պետրոսի պատասխանը և Փրկչի հրահանգը ցույց են տալիս, որ վկայությունը հոգևոր ճշմարտության վերաբերյալ հայտնությամբ ստացված անձնական գիտելիք է: Վկայությունը պարգև է Աստծո կողմից և հասանելի է Իր բոլոր զավակներին: Ճշմարտության անկեղծ որոնողը կարող է վկայություն ձեռք բերել առ Հիսուս Քրիստոս, անհրաժեշտ «հավատքի մի մասնիկ գործադրելով, «փորձարկելով» (Ալմա 32.27) և «փորձելով խոսքի ուժը» (Ալմա 31.5), ենթարկվելով «Սուրբ Հոգու հորդորներին» (Մոսիա 3.19), և զարթնելով առ Աստված (տես Ալմա 5.7): Վկայությունը բերում է ավելի մեծ անձնական պատասխանատվություն և հանդիսանում է նպատակի, վստահության և ուրախության աղբյուր:

Հոգևոր ճշմարտության մասին վկայություն փնտրելու և ձեռք բերելու համար պետք է խնդրել, փնտրել և թակել (տես Մատթեոս 7.7; 3 Նեփի 14.7)՝ մաքուր սրտով, անկեղծ

միտումով և հավատք ունենալով առ Փրկիչ (տես Մորոնի 10.4)։ Վկայության հիմնարար բաղադրիչներն են՝ իմանալ, որ Երկնային Հայրն ապրում է և սիրում է մեզ, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է, և որ ավետարանի լրիվությունը վերականգնվել է երկրի վրա վերջին օրերին։

Երբ դու դարձի գաս։

Վերջին Ընթրիքի ժամանակ Փրկիչն, ուսուցանելով Իր աշակերտներին, ասաց Պետրոսին.

«Սիմոն, Սիմոն, ահա սատանան ձեզ ուզեց, որ մաղե ցորենի պես.

Բայց ես աղաչեցի քեզ համար, որ քո հավատքը չպակասի. և դու երբ որ դառնաս, եղբայրներիդ հաստատիր» (Ղուկաս 22.31–32)։

Հետաքրքիրն այն է, որ այդ զորավոր Առաքյալը զրուցում և քայլում էր Վարդապետի հետ, ականատեսն էր բազում հրաշքների և Փրկչի աստվածության մասին ամուր վկայություն ուներ։ Սակայն նույնիսկ Պետրոսն ուներ Հիսուսի կողմից լրացուցիչ հրահանգավորման կարիք՝ Սուրբ Հոգու դարձի բերող ու սրբագործող զորության և հավատարիմ ծառայելու իր պարտավորության վերաբերյալ։

Հիսուս Քրիստոսի ավետարանը հիմնարար և հարատև փոփոխություն է առաջացնում մեր բուն էության մեջ, որը հնարավոր է դառնում Փրկչի Քավությամբ։ Ճշմարիտ դարձը փոփոխություն է առաջացնում այն մարդու համոզմունքներում, սրտում և կյանքում, ով ընդունում և ենթարկվում է Աստծո կամքին (տես Գործք Գ.19; 3 Նեփի 9.20) և գիտակցաբար պարտավորվում է դառնալ Քրիստոսի աշակերտը։

Դարձը մեծացնում, խորացնում և ընդլայնում է վկայության հիմքը։ Դա արդյունքն է Աստծո հայտնության՝ զուգորդված անհատական ապաշխարությամբ, հնազանդությամբ և ջանասիրությամբ։ Ճշմարտության ազնիվ փնտրողը կարող է դարձի գալ սրտի հզոր փոփոխություն ապրելով և Աստծուց հոգեպես ծնվելով (տես Ալմա 5.12–14)։ Փրկության և վեհացման արարողությունները և ուխտերը պատվելով (տես ՎևՈւ 20.25), «Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ առաջ մղվելով» (2 Նեփի 31.20) և հավատքով համբերելով մինչև վերջ (տես ՎևՈւ 14.7), մենք դառնում ենք նոր արարածներ Քրիստոսում (տես Բ Կորնթացիս 5.17)։ Դարձն այն է, երբ մենք ինքներս մեզ որպես ընծա մատուցում ենք Աստծուն՝ ի երախտագիտություն վկայության պարգևի։

Մորմոնի Գրքում բերված դարձի օրինակներ

Մորմոնի Գիրքը լի է դարձի ոգեշնչող պատմություններով։ Հակոբի հետնորդ Ամաղեկին հայտարարել է. «Ես կկամենայի, որ դուք գայիք դեպի Քրիստոսը, որը Սուրբն է Իսրայելի, և ճաշակեիք նրա փրկությունից և նրա փրկագնման զորությունից։ Այո՛, եկե՛ք դեպի նա և մատուցե՛ք ձեր ողջ հոգիները, որպես ընծա առ նա» (Օմնի 1.26)։

Կարևոր և անհրաժեշտ է Սուրբ Հոգու զորությամբ իմանալ, որ Հիսուսը Քրիստոսն է։ Սակայն դեպի Նա հանստատակամորեն գալու և մեր հոգին ամբողջությամբ որպես ընծա մատուցելու համար անհրաժեշտ է շատ ավելին, քան լոկ իմանալը։ Դարձը պահանջում է մեր ողջ սիրտը, մեր ողջ զորությունը և մեր ողջ միտքն ու կարողությունը (տես ՎևՈւ 4.2)։

Բենիամին թագավորի ժողովուրդը ի պատասխան նրա ուսուցմանը բացականչեց. «Այո՛, մենք հավատում ենք բոլոր խոսքերին, որոնք դու ասել ես մեզ. և նաև, մենք գիտենք դրանց հավաստիության և ճշմարտացիության մասին՝ Ամենակարող Տիրոջ Հոգու շնորհիվ, որը մեր մեջ կամ մեր սրտերում մի զորեղ փոփոխություն է առաջացրել, այնպես որ մենք այլևս հակում չունենք չարիք անելու, այլ՝ շարունակ կատարելու բարիք» (Մոսիա 5.2)։ Հղված խոսքերն ընդունելը, դրանց ճշմարտացիության մասին վկայություն ձեռք բերելը և առ Քրիստոս հավատք գործադրելը սրտի հզոր փոփոխություն և ամուր վճռականություն են առաջ բերում՝ բարելավելով և ավելի լավը դարձնելով։

Հելամանի գրքում դարձի եկած Լամանացիները նկարագրվում են, որ գտնվում են «իրենց պարտականության ուղու վրա, և նրանք քայլում են զգուշորեն Աստծո առջև և նրանք պահում-պահպանում են նրա պատվիրանները, և նրա կանոններն ու նրա դատաստանները . . .

Եվ նրանք ձգտում են անխոնջ ջանասիրությամբ, որ կարողանան բերել իրենց եղբայրների մնացածին ճշմարտության իմացությանը» (Հելաման 15.5–6)։

Ինչպես այս օրինակներն են լուսաբանում, դարձին հատուկ հիմնական հատկանիշներն են՝ սրտի հզոր փոփոխությունը, մշտապես բարիք գործելը, պարտականության ուղով առաջ գնալը, զգուշորեն քայլելը Աստծո առաջ, պահել պատվիրանները և անխոնջ ջանասիրությամբ ծառայելը։ Ակնհայտ է, որ այդ հավատարիմ հոգիները խորապես նվիրված էին Տիրոջը և Նրա ուսմունքներին։

Դարձ

Շատերիս համար դարձը շարունակական գործընթաց է, ոչ թե մեկանգամյա իրադարձություն, և այն

զորավոր կամ ազդեցիկ փորձառության հետևանք է: Տող առ տող և ցուցում առ ցուցում, աստիճանաբար և, գրեթե, աննկատելիորեն մեր մտքերը, խոսքերը և գործերը դառնում են Աստծո կամքին համապատասխան: Դեպի Տերը դարձի գալու համար անհրաժեշտ է և՛ համառություն, և՛ համբերություն:

Սամուել Լամանացին նշել է առ Տերը դարձի գալու հինգ հիմնական տարրեր՝ (1) հավատալ սուրբ մարգարեների ուսմունքներին և մարգարեություններին, ինչպես դրանք տրված են սուրբ գրքերում, (2) հավատք գործադրել առ Տեր Հիսուս Քրիստոսը, (3) ապաշխարել, (4) սրտի հզոր փոփոխություն զգալ և (5) դառնալ «կայուն և հաստատուն հավատքում» (տես Հելաման 15.7–8): Սրանք են դեպի դարձ տանող քայլերը:

Վկայություն և դարձ

Վկայությունը շարունակական դարձի սկիզբն ու նախապայմանն է: Վկայությունը ելակետ է, ոչ թե վերջնական նպատակակետ: Ամուր վկայությունը հիմք է, որի վրա հիմնվում է դարձը:

Վկայությունն ինքնին բավարար չէ, որպեսզի պաշտպանի մեզ վերջին օրերի խավարի և չարի փոթորկից, որի պայմաններում մենք ապրում ենք: Վկայությունը կարևոր և անհրաժեշտ է, սակայն բավարար չէ մեզ համար անհրաժեշտ հոգևոր ուժ և պաշտպանություն ապահովելու համար: Եկեղեցու վկայություն ունեցող որոշ անդամներ սասանվել և հեռացել են: Նրանց հոգևոր գիտելիքը և պարտավորվածությունը բավարար չի եղել դիմակայելու համար իրենց դեմ ծառացած դժվարություններին:

Վկայության և դարձի մեջ գոյություն ունեցող կապի մասին կարևոր դասն ակնհայտ է դառնում Մոսիայի որդիների միսիոներական գործունեության մեջ:

«Բոլոր նրանք, ովքեր հավատացին, կամ բոլոր նրանք, ովքեր բերվեցին ճշմարտության իմացությանը՝ Ամմոնի և նրա եղբայրների քարոզելու միջոցով, համաձայն հայտնության և մարգարեության ոգուն, և Աստծո զորությանը՝ գործելով հրաշքներ նրանց մեջ, այո, . . . ինչպես կենդանի՛ է Տերը, Լամանացիներից բոլոր նրանք, որքեր հավատացին նրանց քարոզելուն, և դարձի եկան առ Տերը, երբեք չհեռացան:

Քանզի նրանք դարձան մի արդարակյաց ժողովուրդ. նրանք վայր դրեցին իրենց ապստամբության զենքերը, այնպես որ նրանք այլևս չկռվեցին Աստծո դեմ: . . .

Արդ, սրանք են, ովքեր դարձի բերվեցին առ Տերը» (Ալմա 23.6–8):

Երկու կարևոր տարրեր են նկարագրվում այս հատվածներում՝ (1) *ճշմարտության մասին գիտելիք*, որը կարող է մեկնաբանվել որպես վկայություն, և (2) *դարձ դեպի Տերը*, որը ես համարում եմ դարձ դեպի Փրկիչը և Նրա ավետարանը: Ուստի, վկայության և առ Տերը դարձի զորեղ համակցությունն առաջ էր բերել ամրություն, հաստատամտություն և պարգևել

հոգևոր պաշտպանություն:

Նրանք երբեք չհեռացան և հրաժարվեցին իրենց ապստամբության զենքերից, նրանք չկռվեցին Աստծո դեմ: Փայփայած «ապստամբության զենքները», օրինակ՝ եսասիրությունը, հպարտությունը և անհնազանդությունը, մի կողմ դնելու համար պահանջվում է ավելի քան սոսկ հավատք և գիտելիք: Համոզվածություն, համեստություն, ապաշխարություն և հնազանդություն է անհրաժեշտ մեր ապստամբության զենքերը վայր դնելու համար: Արդյո՞ք դուք և ես դեռևս ունենք ապստամբության զենքեր, որոնք խոչընդոտում են առ Տերը դարձի գալուն: Եթե այդպես է, մենք պետք է այժմ ապաշխարենք:

Նկատեցի՞ք, որ Լամանացիները դարձի չեկան դեպի իրենց ուսուցանող միսիոներները կամ Եկեղեցու զերազանց ծրագիրը, նրանք դարձի չեկան դեպի իրենց ղեկավարները, իրենց մշակույթը կամ իրենց հայրերի ավանդույթները պահպանելը: Այլ նրանք դարձի եկան առ Տերը՝ իրենց Փրկիչը, և Նրա աստվածությունն ու վարդապետությունը, և նրանք երբեք չհեռացան:

Վկայությունը հոգևոր գիտելիք է, որը ձեռք է բերվում Սուրբ Հոգու զորությամբ: Շարունակելի դարձը հաստատուն նվիրվածությունն է առ հայտնված ճշմարտությունը, որ ստացել ենք կամեցող սրտով և արդար դրդապատճառներով: Ավետարանի ճշմարտացի լինելու մասին գիտելիքը վկայության հիմքն է: Մշտապես ավետարանին հավատարիմ լինելը դարձի հիմքն է: Մենք պետք է իմանանք, որ ավետարանը ճշմարիտ է, և հավատարիմ լինենք ավետարանին:

Վկայություն, դարձ և տաս կույսերի առակը

Այժմ, վկայության և դարձի գալու միջև կապը լուսաբանելու համար, ես ցանկանում եմ օգտագործել տաս կույսերի առակի բազում մեկնաբանություններից մեկը: Տաս կույսերը, որոնցից հինգը իմաստուն էին, իսկ հինգը՝ հիմար, վերցրեցին իրենց լամպերն ու գնացին դիմավորելու փեսային:

Պատկերացրեք կույսերի լամպերը որպես վկայության լամպեր: Հիմար կույսերը վերցրեցին իրենց վկայության լամպերը, սակայն յուղ չվերցրեցին իրենց հետ: Նկարագրված յուղը համարենք դարձի գալու յուղը:

«Սակայն իմաստուններն իրանց [դարձի]ամաններումը ձեթ վեր առան իրանց [վկայությունների] լապտերների հետ մեկտեղ:

Եվ երբոր փեսան ուշացավ, ամենքը թմրեցան և քնեցին:

Եվ կեսգիշերին աղաղակ եղավ՝ Ահա փեսան գալիս է. դուրս եկեք նրան դիմավորելու:

Այն ժամանակ ամեն կույսերը վեր կացան և իրանց [վկայությունների] լապտերները պատրաստեցին:

Բայց հիմարներն ասեցին իմաստուններին. Տվեք մեզ ձեր յուղիցը [այսինքն՝ դարձի յուղիցը], որովհետև մեր [վկայության] լապտերները [թույլ են] և հանգչում են»:

Իմաստուններն էլ պատասխանեցին և ասեցին. Մի գուցե մեզ և ձեզ բավական չլինի. բայց ավելի լավ՝ գնացեք ծախողների մոտ և գնեցեք ձեզ համար» (Մատթեոս ԻԵ.4–9):

Արդյո՞ք հինգ իմաստուն կույսերը եսասեր էին և չկամեցան կիսվել յուղով, թե՞ նրանք ճիշտ ձևով ցույց են տալիս, որ դարձի յուղը հնարավոր չէ պարտք տալ: Կարո՞ղ է մեկ ուրիշին տրվել այն հոգևոր ուժը, որ առաջ է գալիս պատվիրանները մշտապես պահելուց: Կարո՞ղ է ջանասեր ուսանելու և սուրբ գրությունների շուրջ խորհրդածելու արդյունքում ձեռք բերված

գիտելիքը փոխանցվել կարիքի մեջ գտնվողին: Կարո՞ղ է արդյոք ավետարանի միջոցով հավատարիմ Վերջին Օրերի Սրբին հասու դարձած խաղաղությունը փոխանցվել դժբախտություն և մեծ դժվարություններ կրող անհատին: Այս հարցերից յուրաքանչյուրի հստակ պատասխանն է՝ ոչ:

Ինչպես իմաստուն կույսերը հստակ նշեցին, մեզանից յուրաքանչյուրը պետք է «գնի իր համար»: Այդ ոգեշնչված կանայք չէին նկարագրում բիզնես գործարք, այլ նրանք շեշտում էին մեր անհատական պատասխանատվությունը՝ պահել մեր վկայության լամպերը և ձեռք բերել դարձի յուղի բավականաչափ պաշար: Այս թանկարժեք յուղը ձեռք է բերվում կաթիլ առ կաթիլ՝ «տող առ տող [և] ցուցում առ ցուցում» (2 Նեփի 28.30), համբերությամբ և հաստատակամությամբ: Մենք չենք կարող ընտրել կարճ ճանապարհ և վերջին ռոպեին հապճեպ պատրաստություն տեսնել:

«Ուստի, հավատարիմ եղեք, միշտ աղոթելով, ունենալով ձեր լապտերները պատրաստ ու վառ, և ձեթ՝ ձեզ հետ, որ պատրաստ լինեք Փեսայի գալստի ժամանակ» (ՎևՈւ 33.17):

Վկայություն

Ես խոստանում եմ, որ եթե ունենանք ճշմարտության մասին գիտելիք և դարձի գանք դեպի Տերը, մենք կմնանք անսասան, հաստատակամ և երբեք չենք հեռանա: Անկոտրում մենք մի կողմ կդնենք ապստամբության զենքերը: Կօրհնվենք մեր վկայության լապտերների պայծառ լույսով և կունենանք դարձի գալու յուղի բավականաչափ պաշար: Եվ մեզանից յուրաքանչյուրը լիովին դարձի գալով կամրացնի իր ընտանիքը, իր ընկերներին և իր մերձավորներին: Ես վկայում եմ, որ Երկնային Հայրն ապրում է և սիրում է մեզ: Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է: Ավետարանի լիությունը վերականգնվել է երկրի վրա այս վերջին օրերին: Այս ճշմարտությունների մասին ես վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Տեր ընդ ձեզ մինչև նոր հանդիպում

Ընդունելով վերջին երկու օրերի ուղերձները մեր սրտերում և մեր կյանքում, մենք կօրհնվենք:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք մոտեցանք ևս մեկ ոգեշնչող գերագույն համաժողովի ավարտին: Ես անձամբ հոգևորապես սնվեցի և ոգեշնչվեցի, և գիտեմ, որ դուք նույնպես զգացիք այս համաժողովի հատուկ հոգին:

Մենք հայտնում ենք մեր սրտանց երախտագիտությունը բոլորին, ովքեր որևէ ձևով մասնակցեցին: Ավետարանի ճշմարտությունները սքանչելի ձևով ուսուցանվեցին և վերահաստատվեցին: Ընդունելով վերջին երկու օրերի ուղերձները մեր սրտերում և մեր կյանքում, մենք կօրհնվենք:

Ինչպես միշտ, այս համաժողովի նյութերը մատչելի կլինեն *Ensign* և *Լիահոնա* ամսագրերի գալիք համարներում: Ես խրախուսում եմ ձեզ կրկին անգամ կարդալ ելույթները և խորհել դրանց մեջ պարունակվող ուղերձների մասին: Իմ անձնական կյանքում ես հասկացել եմ, որ ավելին եմ քաղում այս ոգեշնչված քարոզներից, երբ ուսումնասիրում եմ դրանք ավելի մեծ խորությամբ:

Այս համաժողովը աննախադեպ ծածկույթ է ունեցել, հասնելով մայրցամաքներում և օվկիանոսների կղզիների մարդկանց ամենուրեք: Թեև մենք շատ հեռու ենք ձեզանից շատերից, մենք զգում ենք ձեր հոգին և ուղարկում ենք մեր սերը և երախտագիտությունը ձեզ:

Մեր Երդբայրներին, ովքեր ազատվեցին այս համաժողովին, թույլ տվեք հայտնել իմ սրտանց երախտագիտությունը մեր բոլորի կողմից՝ նվիրված ծառայության ձեր բազմաթիվ տարիների համար: Անթիվ մարդիկ են օրհնվել Տիրոջ գործին ձեր նվիրվածության շնորհիվ:

Եղբայրներ և քույրեր, միայն վերջերս ես նշեցի իմ 85-ամյակը, և շնորհակալ են ամեն տարվա համար, որ Տերը պարգևում է ինձ: Անդրադարձ կատարելով կյանքիս փորձառություններին, ես շնորհակալություն եմ հայտնում ինձ տրված Նրա բազմաթիվ օրհնությունների համար: Ինչպես նշեցի այս առավոտ իմ ուղերձի մեջ, ես ուղղակիորեն զգացել եմ Նրա ձեռքը իմ ջանքերում, երբ ջանասիրաբար աշխատել եմ ծառայել Նրան և ձեզ բոլորիդ:

Եկեղեցու Նախագահի պաշտոնը պատասխանատու աշխատանք է: Որքան շնորհակալ եմ ես իմ երկու հավատարիմ խորհրդականների համար, ովքեր ծառայում են իմ կողքին և միշտ պատրաստ են և բացառիկորեն ունակ են օգնել այն աշխատանքում, որը բաժին է հասնում Առաջին Նախագահությանը: Ես արտահայտում եմ նաև իմ երախտագիտությունը ազնվազարմ տղամարդկանց, ովքեր կազմում եմ Տասներկու Առաքյալների Քվորումը: Նրանք առանց հոգնելու աշխատում են Վարդապետի գործի համար, ոգեշնչված աջակցություն ստանալով Յոթանասունի Քվորումների անդամների կողմից:

Ես նաև ցանկանում եմ գովեստի խոսքեր հղել ձեզ՝ եղբայրներ և քույրեր, որտեղ էլ որ լինեք աշխարհում, այն ամենի համար, ինչ դուք անում եք ձեր ծխերում և ճյուղերում, ցցերում և շրջաններում: Պատրաստակամ կատարելով ձեր կոչումները, երբ ձեզ խնդրում են այդ մասին, դուք օգնում եք կառուցել Երկրի վրա Աստծո արքայությունը:

Եկեք ուշադիր լինենք միմյանց նկատմամբ, օգնելով կարիքի պահերին: Եկեք չլինենք քննադատական և մեղադրող, այլ լինենք հանդուրժող, անգամ մարմնավորող բարությունը սիրելու Փրկչի օրինակը: Այդ ոգով, եկեք մենք պատրաստակամորեն ծառայենք միմյանց: Եկեք աղոթենք ոգեշնչման համար, որպեսզի իմանանք մեր շուրջը գտնվողների

կարիքները, այնուհետև կարողանանք առաջ գնալ և օգնություն տրամադրել:

Քաջացեք: Թեև մենք ապրում ենք ավելի ու ավելի վտանգավոր ժամանակներում, Տերը սիրում է մեզ և մտահոգվում է մեզ համար: Նա միշտ մեր կողմում է, երբ մենք ճիշտն ենք անում: Նա կօգնի մեզ կարիքի ժամանակ: Դժվարություններ են լինում մեր կյանքում՝ խնդիրներ կլինեն, որոնք մենք չենք ակնկալում և երբեք չէինք ընտրի: Ոչ ոք մեզանից անձեռնամխելի չէ: Մահկանացու կյանքի նպատակն է սովորել և աճել՝ ավելի նմանվելով մեր Հորը, և հաճախ դժվար ժամանակներում է, որ մենք սովորում ենք առավելագույնս, որքան էլ որ ցավալի լինեն այդ դասերը: Մեր կյանքը կարող է նաև լցվել ուրախությամբ, եթե մենք հետևենք Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսմունքներին:

Տերը խրատել է. «Քաջացեք. ես հաղթել եմ աշխարհքին»:[1] Ինչպիսի մեծ երջանկություն պետք է որ այս գիտելիքը մեզ պարգևի: Նա ապրել է մեզ համար և մահացել մեզ համար: Նա վճարել է մեր մեղքերի գինը: Թող որ մենք հետևենք Նրա օրինակին: Թող որ մենք ցույց տանք մեր խորին երախտագիտությունը Նրան, ընդունելով Նրա զոհաբերությունը և ապրելով այնպիսի կյանքով, որ արժանի լինենք վերադառնալ և մի օր ապրել Նրա հետ:

Ինչպես ես նշել էի նախորդ համաժողովին, ես շնորհակալություն եմ հայտնում ինձ համար ասված ձեր աղոթքների համար: Ես ունեմ դրանց կարիքը, ես զգում եմ դրանք: Մենք՝ Բարձրագույն Իշխանություններս, նույնպես հիշում ենք ձեր բոլորի մասին և աղոթում ենք, որ մեր Երկնային Հոր ընտրյալ օրհնությունները լինեն ձեզ հետ:

Այժմ, իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք փակվում ենք վեց ամսով: Թող Աստված լինի ձեզ հետ մինչև մենք նորից հանդիպենք: Մեր Փրկիչ և Քավիչ՝ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 16.33:

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ | *29 սեպտեմբերի, 2012թ.*



Լինդա Կ. Բըրթըն
Սփոփող Միության գերագույն նախագահ

Արդյոք Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ հավատքը գրվա՞ծ է մեր սրտերում

Մեր ուխտերը կապելը, պահպանելը և ուրախանալը կլինի այն ապացույցը, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը իսկապես գրված է մեր սրտերում:

Իմ սիրելի քույրեր, դուք իմ մտքում էիք և իմ սրտում ամիսներ շարունակ, երբ ես խորհում էի այս դժվար պարտականության մասին: Չնայած ես հավասար չեմ համարում ինձ իմ վրա դրված պարտականությանը, ես գիտեմ, որ կանչը եկել է Տիրոջից՝ Իր ընտրյալ մարգարեի միջոցով և այժմվա համար դա բավական է: Սուրբ գրություններն ուսուցանում են, որ «լինի դա [Տիրոջ] ձայնով, թե [Նրա] ծառաների ձայնով միևնույն է»:[1]

Այս կոչման հետ կապված թանկարժեք պարգևներից մեկն այն համոզմունքն է, որ Երկնային Հայրը սիրում է Իր բոլոր դուստրերին: Ես զգացել եմ Նրա սերը մեզանից յուրաքանչյուրի հանդեպ:

Ձեզ պես ես էլ եմ սիրում սուրբ գրությունները: Երեմիայի գրքում գտնվում է մի սուրբ գրություն, որը շատ սիրելի է իմ սրտին: Երեմիան ապրում էր դժվար ժամանակներում և վայրում, բայց Տերը թույլ տվեց նրան «կանխատեսել հույսի մի ժամանակ Իսրայելի վերջին օրերի հավաքման մասին»[2] մեր օրերում: Երեմիան մարգարեացավ.

«Այն օրերից յետոյ, ասում է Տերը. Իմ օրէնքը պիտի դնեմ նորանց ներսումը, եւ *նորանց սրտի վերան պիտի գրեմ այն,* եւ ես պիտի լինեմ նորանց Աստուած, եւ նորանք պիտի ինձ համար ժողովուրդ լինեն: . . .

. . . Նորանք ամենքը պիտի ճանաչեն ինձ, նորանց փոքրերիցը մինչև նորանց մեծերը, ասում է Տերը. Որովհետև ես պիտի ներեմ նորանց անօրէնութիւնը, եւ նորանց մեղքերը այլ եւս պիտի չյիշեմ»:[3]

Մենք ենք այն ժողովուրդը, որ տեսավ Երեմիան: Արդյոք մենք հրավիրե՞լ ենք Տիրոջը գրել օրենքը կամ վարդապետությունը մեր սրտերում: Արդյոք մենք հավատում ենք, որ ներումը, որը հասանելի է Քավության միջոցով, որն ակնարկում է Երեմիան, վերաբերում է մեզ՝ անձնապես:

Մի քանի տարի առաջ Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը կիսվեց իր զգացումներով ռահվիրաների խորը արմատավորված հավատքի վերաբերյալ, ովքեր առաջ շարժվեցին դեպի Սոլթ Լեյքի հովիտ, նույնիսկ իրենց երեխաների մահից հետո: Նա ասաց. «Նրանք չէին անում դա ինչ որ ծրագրի համար, նրանք չէին անում դա որպես հասարակական գործունեության նպատակ, նրանք արեցին դա, որովհետև Հիսուս Քրիստոսի ավետարանի հավատքը նրանց հոգում էր, այն նրանց ոսկորների ծուծքում էր»:

Նա արտահայտեց դա մեծ հուզմունքով.

«Դա, միակ ուղին էր, որով մայրերը կարող էին թաղել [իրենց մանկիկներին] հացի արկղում» և առաջ շարժվել, ասելով. «Խոստացված երկիրն այնտեղ ինչ որ տեղ է: Մենք կհաղթահարենք և կհասնենք հովիտ»:

Նրանք կարողանում էին ասել դա՝ ուխտերի և վարդապետությունների, հավատքի և հայտնության ու հոգու շնորհիվ»:

Նա ավարտեց մտքեր առաջացնող հետևյալ խոսքերով.«Եթե մենք կարողանանք պահել դա մեր ընտանիքներում և Եկեղեցում, գուցե շատ այլ բաներ սկսեն իրենք իրենց հոգ տանել: Գուցե ուրիշ ոչ շատ անհրաժեշտ բաներ դուրս ընկնեն սայլից: Ինձ ասել են, որ այդ ձեռնասայլերը կարող էին միայն այդքանը տանել: Ճիշտ ինչպես մեր նախնիները ստիպված էին ընտրել, թե ինչ վերցնեին, նույնպես էլ 21 դդ դարը կհարկադրի մեզ որոշել. «Ի՞նչ մենք կարող ենք դնել այդ ձեռնասայլակին: Դա մեր հոգու էությունն է, դա այն նյութն է, որը գտնվում է մեր ոսկորների ծուծքում»:[4] Կամ այլ կերպ ասած, դա այն է, ինչ *գրված է մեր սրտերում:*

Որպես Սփոփող Միության նոր նախագահություն, մենք լրջորեն որոնել ենք Տիրոջը՝ իմանալու համար, թե ինչ հիմնական բաներ Նա կկամենար, որ մենք դնեինք մեր Սփոփող Միության ձեռնասայլին՝ շարունակելու Նրա աշխատանքն առաջ տանել: Մենք զգացել ենք, որ Երկնային Հայրը կկամենար, որ առաջինը մենք օգնեինք Նրա սիրելի դուստրերին հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավության վարդապետությունը: Երբ մենք այդպես անենք, մենք գիտենք, որ մեր հավատքը կմեծանա ինչպես նաև արդար ապրելու մեր ցանկությունը: Երկրորդ, երբ մենք մտածում ենք, որ կրիտիկական անհրաժեշտություն կա զորացնելու ընտանիքները և տները, մենք զգացինք, որ Տերը կկամենար, որ մենք խրախուսեինք Իր սիրելի դուստրերին զվարթորեն կառչել իրենց ուխտերից: Երբ ուխտերը պահվում են ընտանիքները զորացվում են: Ի վերջո մենք զգում ենք Նա կկամենար, որ մենք աշխատեինք միասնաբար մյուս օժանդակ կազմակերպությունների հետ և մեր քահանայության ղեկավարների հետ, ձգտելով փնտրել և գտնել նրանց, ովքեր կարիքի մեջ են արահետով առաջ գնալու համար: Մեր ջերմեռանդ աղոթքն է, որ մեզանից յուրաքանչյուրը բացի իր սիրտը և թույլ տա, որ Տերը փորագրի դրանց մեջ Քավության վարդապետությունները, ուխտերն ու միասնությունը:

Ինչպե՞ս կարող ենք սպասել զորացնել ընտանիքները կամ օգնել ուրիշներին, մինչև մենք առաջինը չգրենք մեր իսկ սրտերում խորը և մնայուն հավատք Հիսուս Քրիստոսի և Նրա անսահման Քավության հանդեպ: Այս երեկո ես կցանկանայի կիսվել Քավության երեք սկզբունքներով, որ եթե գրվեն մեր սրտերում կմեծացնեն մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս: Իմ հույսն է, որ այս սկզբունքները հասկանալը կօրհնի մեզանից յուրաքանչյուրին, անկախ նրանից մենք նոր ենք Եկեղեցում, թե անդամներ ենք ողջ կյանքի ընթացքում:

Սկզբունք 1. «Այն ամենը, ինչ անարդար է կյանքում, կարող է ճիշտ դարձվել՝ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով»:[5]

Մենք ձեզ հետ վկայություն ենք բերում մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Մեր վկայությունները ձեր վկայությունների նման գրվել են մեր սրտերում, երբ մենք դիմակայել ենք առանձնահատուկ հոգեմաշ մարտահրավերների և ձախորդությունների: Առանց հասկանալու Երկնային Հոր երջանկության կատարյալ ծրագիրը և Փրկչի Քավությունը որպես այդ ծրագրի կենտրոնական առանձնահատկություն, այս մարտահրավերները կարող են անարդար թվալ:Մենք բոլորս միասին ենք տանում կյանքի փորձությունները: Բայց հավատարիմ սրտերում գրված է. «Բոլորն ինչ անարդար է կյանքում, կարող է դարձվել ճիշտ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով»:

Ինչո՞ւ է Տերը թույլ տալիս տառապանքն ու ձախորդությունը մեզ պատահի այս կյանքում: Ուղղակի համարեք, որ դա մեր աճի և առաջընթացի ծրագրի մի մասն է: Մենք «ուրախությունից բացականչեցինք»,[6] երբ իմացանք, որ հնարավորություն կունենանք զալ երկիր մահկանացու կյանքի փորձառությունը անցնելու: Երեց Դալին Հ. Օուքսն ուսուցանել է. «Մեզ անհրաժեշտ զրույցները հաճախ ավելի հեշտորեն են ստացվում տառապանքի և ձախորդության միջոցով, քան հարմարավետության և հանգստության միջոցով»:[7]

Հավատարիմ քույր ռահվիրայի օրինակը ցույց է տալիս այս ճշմարտությունը: Մարի Լյուիս Ուոքերը ամուսնացավ 17 տարեկանում Ջոն Թ. Մորիսի հետ Սենթ Լյուիսում, Միսսուրի: Նրանք անցան տափաստաններով 1853 թվականին Սրբերի հետ միասին, մտնելով Սոլթ Լեյքի Հովիտ իրենց առաջին տարեդարձը նշելուց ոչ շատ անց: Իրենց ճանապարհորդության ժամանակ նրանք

տարան այն զրկանքներն ու ձախորդությունները, որոնք բնորոշ էին մյուս Սրբերին: Բայց նրանց տառապանքներն ու ձախորդությունը չվերջացավ, երբ նրանք հասան Սոլթ Լեյքի հովիտ: Հաջորդ տարի Մարին այդ ժամանակ 19 տարեկան էր, գրեց. «Տղա ծնվեց մեզ: . . . Մի երեկո, երբ նա երկու թե երեք ամսեկան էր . . . ինչ որ բան շշնջաց ինձ. «Դու կկորցնես այդ փոքրիկին»:

Զմռան ընթացքում մանկիկի առողջությունը վատացավ: «Մենք արեցինք այն ամենը, ինչ կարող էինք, . . . բայց մանկիկի վիճակն անընդհատ վատթարանում էր: . . . Փետրվարի երկուսին նա մահացավ . . . և այսպես ես խմեցի դառը բաժակից՝ բաժանվելով իմ սեփական մսից և արյունից»: Բայց նրա փորձությունները դեռ չէին վերջացել: Մարիի ամուսինը նույնպես հիվանդացավ և իր երեխային կորցնելուց երեք շաբաթ անց, նա մահացավ:

Մարին գրեց. «Այդպես էլ ես, դեռ իմ դեռահաս տարիքում զրկվելով 20 օրվա կարճ ժամանակահատվածում ամուսնուցս և իմ միակ երեխայից մի օտար երկրում հարյուրավոր մղոններ հեռու իմ արյունակից ազգականներից և ունենալով մի դժվարության լեռ իմ առջև . . . ես կամեցա, որ ես նույնպես մեռնեի և միանայի իմ սիրելիներին»:

Մարին շարունակում է. «Մի կիրակի երեկոյան, երբ ես զբոսնում էի իմ ընկերոջ հետ . . . ինձ հիշեցվեց [ամուսնուս] բացակայության և իմ լիակատար միայնակության մասին և երբ ես դառնորեն լալիս էի, տեսա իմ մտավոր տեսողությամբ ուղղահայաց կյանքի լեռը, որը ես պետք է մագլցեի և զգացի դրա իրական լինելը մեծ ուժով: Խորը ճնշվածությունը պատեց ինձ, քանզի թշնամին գիտի, երբ հարձակվի մեզ վրա, *բայց մեր [Փրկիչ Հիսուս Քրիստոսը] հզոր է փրկելիս:* Հոր կողմից տրված օգնության միջոցով ես կարողացա ճակատամարտել բոլոր ուժերի հետ, որոնք թվում էր ուղղված էին իմ դեմ այդ ժամանակ»:[8]

Մարին սովորեց 19 տարեկան դյուրազգաց հասակում, որ Քավությունը տալիս է մեզ համոզվածություն, որ բոլոր բաները, որոնք

անարդար են այս կյանքում, կարող են և կդարձվեն ճիշտ՝ նույնիսկ, ամենախորը վշտերը:

Սկզբունք 2. Քավության մեջ կա զորություն հնարավորություն տալու մեզ հաղթահարել բնական մարդուն կամ կնոջը և դառնալու Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ:[9]

Կա մի ուղի, որ իմանանք, թե երբ ենք սովորել ավետարանի որևէ վարդապետություն կամ սկզբունք: Դա այն ժամանակ է, երբ մենք կարողանում ենք ուսուցանել վարդապետությունը կամ սկզբունքը մի ձևով, որ երեխան կարողանա հասկանալ այն: Կարևոր ռեսուրսներից մեկը, որով մենք կարող ենք ուսուցանել երեխաներին հասկանալ Քավությունը համամանությունն է, որը գտնվում է Երեխաների Միության դասում: Հավանաբար սա կօգնի մեզ, երբ մենք ուսուցանենք մեր իսկ երեխաներին, թոռնիկներին կամ ուրիշ հավատքի ընկերներին, ովքեր կամենում են հասկանալ այս հիմնական վարդապետությունը:

« Մի[կին] ճանապարհով քայլելիս ընկավ մի խորը փոս, այնքան խորը, որ չկարողացավ դուրս գալ: Ինչ էլ արեց, նա չկարողացավ ինքնուրույն դուրս գալ: [Կինը] օգնություն կանչեց և ուրախացավ, երբ մի բարի անցորդ լսեց [նրան] և մի աստիճան իջեցրեց ներքև փոսի մեջ: Դա թույլ տվեց [նրան] դուրս մագլցել փոսից և վերգտնել [իր] ազատությունը:

Մենք նման ենք փոսի միջի [կնոջը]: Մեղք գործելը նման է փոսի մեջ ընկնելուն և մենք չենք կարող դուրս գալ ինքնուրույն: Ճիշտ ինչպես բարի անցորդը լսեց [կնոջ] օգնություն կանչող աղաղակը այնպես էլ Երկնային Հայրն ուղարկեց իր Միածին Որդուն ապահովելու փախուստի ուղի: Հիսուս Քրիստոսի Քավությունը կարելի է համեմատել աստիճանը փոսի մեջ իջեցնելուն, այն տալիս է մեզ հնարավորություն դուրս մագլցելու»:[10] Բայց Փրկիչն անում է ավելին, քան աստիճանը իջեցնելը, Նա «ներքև է իջնում փոսի մեջ և հնարավոր դարձնում մեզ համար օգտագործել աստիճանը փախստի համար»:[11] Ճիշտ ինչպես փոսում գտնվող կինը պետք է մագլցեր աստիճանով վեր, մենք պետք է ապաշխարենք մեր մեղքերից և հնազանդվենք ավետարանի սկզբունքներին և արարողություններին՝ դուրս գալու մեր փոսից և Քավությունը գործի դնելու մեր կյանքում: Այսպիսով, այն ամենից

հետո, ինչ մենք կարող ենք անել, Քավությունը հնարավոր է դարձնում մեզ համար արժանի դառնալ՝ վերադառնալու Երկնային Հոր ներկայությունը»:[12]

Վերջերս ես արտոնություն ունեցա հանդիպել ներկա օրերի ռահվիրայի՝ Աստծո մի սիրելի դստեր և վերջերս դարձի եկած նորադարձի հետ Չիլիի Եկեղեցում: Նա միայնակ մայր է երկու փոքր որդիներով: Քավության զորության միջոցով նա հնարավորություն է ունեցել ետևում թողնել իր անցյալը և այժմ լրջորեն ձգտում է դառնալ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդ:Երբ ես մտածում եմ նրա մասին, Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի ուսուցանած մի սկզբունք միտքս է գալիս. «Մի բան է իմանալ, որ Հիսուս Քրիստոսն աշխարհ եկավ *մեռնելու* մեզ համար, որը ֆունդամենտալ է և հիմնադրույթային Քրիստոսի վարդապետության համար, մեկ այլ բան է նաև գնահատելը, որ Տերն ուզում է Իր Քավության միջոցով և Սուրբ Հոգու զորությամբ *ապրել* մեր մեջ, ոչ միայն մեզ ղեկավարելու համար, այլ նաև մեզ արտոնելու համար»:[13]

Այս Չիլիացի քրոջ հետ, երբ քննարկում էինք, թե ինչպես մնալ արահետի վրա, որը տանում է դեպի հավերժական կյանք, նա եռանդուն հավաստիացնում էր ինձ, որ վճռական էր շարունակել ճանապարհը: Նա իր կյանքի մեծ մասը եղել էր ուղուց դուրս և նա հայտարարեց, որ ոչինչ չկար ուղուց «դուրս այնտեղ», որ նա կամենար կրկին ետ բերել իր կյանք: Քավության զորացնող ուժն ապրում է նրա մեջ: Այն գրվում է նրա սրտում:

Այդ զորությունը ոչ միայն հնարավորություն է տալիս մեզ փոսից դուրս գալ, այլ նաև մեզ ուժ է տալիս շարունակել նեղ և անձուկ արահետում, որը տանում է մեզ ետ՝ դեպի մեր Երկնային Հոր ներկայությունը:

Սկզբունք 3. Քավությունը, Իր զավակների հանդեպ Հոր սիրո վերաբերյալ մեծագույն ապացույցն է:

Լավ կանենք խորհել Երեց Օուքսի կողմից ասված այս հուզիչ

մտքի մասին. «Մտածեք թե ինչպես պետք է մեր Երկնային Հորը միշտ պատճառներ ուղարկելու Իր Որդուն՝ տանելու աներևակայելի տառապանք մեր մեղքերի համար: Դա մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Նրա սիրո մեծագույն ապացույցն է»:[14]

Այդ գերագույն սիրո ակտը պետք է մեզանից յուրաքանչյուրին ուղարկի մեր ծնկների վրա՝ խոնարհ աղոթքով շնորհակալություն հայտնելու մեր Երկնային Հորը մեզ բավականաչափ սիրելու համար, որ Նա ուղարկեց Իր միածին և կատարյալ Որդուն տառապելու մեր մեղքերի, նեղսրտությունների և այն բոլորի համար, ինչն անարդար է թվում մեր սեփական անձնական կյանքում:

Հիշեք այն կնոջը, որի մասին Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը վերջերս խոսեց: Նա ասաց. «Մի կին, որը տարիներ շարունակ եղել էր փորձության և տառապանքի մեջ, ասաց իր արցունքների միջից. «Ես սկսեցի գիտակցել, որ ես հին 20 դոլարանոց թղթադրամի նման եմ՝ ճմրթված, պատռված, կեղտոտ, անարգված և սպիներով պատված: Բայց այնուամենայնիվ ես 20 դոլարանոց թղթադրամ եմ: Ես ինչ որ բան արժեմ: Չնայած ես գուցե այնքան տեսք չունեմ և չնայած ես տրորված եմ և օգտագործված, ես դեռ լիովին արժեմ 20 դոլար»:[15]

Այս կինը գիտի, որ նա իր Երկնային Հոր սիրելի դուստրն է և որ նա բավականաչափ արժեք ունի Նրա համար, որ ուղարկեց Իր Որդուն՝ նրա համար անձնապես քավություն անելու: Եկեղեցում յուրաքանչյուր քույր պետք է իմանա այն, ինչ այս կինը գիտի, որ նա Աստծո սիրելի դուստրն է: Ինչպես կարող է Նրա համար մեր արժեքն իմանալը օգնել փոխել թե ինչպես ենք պահում մեր ուխտերը: Ինչպե՞ս է Նրա համար մեր արժեքն իմանալը ազդել ուրիշներին ծառայելու մեր ցանկության վրա: Ինչպե՞ս է մեր արժեքը Նրա համար իմանալը մեծացնում մեր ցանկությունը օգնելու նրանց, ովքեր կարիք ունեն հասկանալու Քավությունը ինչպես մենք ենք խորապես հասկանում այն: Երբ մեզանից յուրաքանչյուրն ունենա Քավության վարդապետությունը գրված մեր սրտերում, ապա մենք կդառնանք այնպիսի ժողովուրդ ինչպիսին Տերն է կամենում, որ մենք լինենք, երբ Նա կրկին գա:Նա կընդունի մեզ, որպես ճշմարիտ հետևորդներ:

Թող որ Հիսուս Քրիստոսի Քավությունը մի «հզոր փոփոխություն» առաջացնի մեր սրտերում:[16] Երբ մենք արթնանանք այս վարդապետության հանդեպ, որը հայտարարվել է Աստծո հրեշտակի կողմից «մեծ ուրախության ավետիք»[17] ես խոստանում եմ, որ մենք կզգանք ինչպես թագավոր Բենյամինի ժողովուրդն էր զգացել: Հզոր աղոթք հղելուց հետո, որ Քավությունը կիրառվեր իրենց կյանքում «Նրանք լցվեցին ուրախությամբ»[18] և «հոժար [էին] մտնել ուխտի մեջ . . . Աստծո հետ՝ կատարելու նրա կամքը և բոլոր բաներում հնազանդ լինելու նրա պատվիրաններին»[19] «մեր ոիտերը կապելը, պահելը և ուրախանալը կլինի այն ապացույցը, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը իսկապես գրված է մեր սրտերում: Խնդրում եմ հիշեք այս երեք սկզբունքները, քույրեր.

1. «Այն ամենը, ինչ անարդար է կյանքում, կարող է ճիշտ դարձվել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով»:[20]
2. Քավության մեջ կա զորություն հնարվորություն տալու մեզ

հաղթահարել բնական մարդուն կամ կնոջը և դառնալու Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ:[21]

3. Քավությունը, Իր զավակների հանդեպ Հոր սիրո վերաբերյալ մեր ունեցած մեծագույն ապացույցն է:[22]

«Այն օրերից յետոյ, ասում է Տերը. Իմ օրէնքը պիտի դնեմ նորանց ներսումը, եւ *նորանց սրտի վերան պիտի գրեմ այն,* եւ ես պիտի լինեմ նորանց Աստուած եւ նորանք պիտի ինձ համար ժողովուրդ լինեն»:[23] Ես կոչ եմ անում մեզ խնդրել Տիրոջը գրել Քավության այս սկզբունքները մեր սրտերում: Ես վկայում եմ, որ դրանք ճշմարիտ են: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 1.38:
2. *Հին Կտակարանի ավետարանական վարդապետության ուսուցչի ձեռնարկ* (2001), 198:
3. Երեմիա ԼԱ.33–34, շեշտադրումն ավելացված է:
4. Jeffrey R. Holland, "Roundtable Discussion," *Worldwide Leadership Training Meeting,* Feb. 9, 2008, 28.
5. *Քարոզիր իմ ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 52:
6. Հոբ ԼԸ.7:
7. Դալին Հ. Օուքս, «Դառնալու մարտահրավերը», *Լիահոնա,* հունվ. 2001, 42:
8. Autobiography of Mary Lois Walker Morris (copy in possession of Linda Kjar Burton).
9. Տես Դեյվիդ Ա. Բեղնար, «Քավությունը և մահկանացու կյանքի ճամփորդությունը», *Լիահոնա,* ապր. 2012, 12–19:
10. *Երեխաների Միություն 7. Նոր Կտակարան* (1997), 104:
11. Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. (1954–56), 1:123.
12. *Երեխաների Միություն 7,* 104:
13. Դեյվիդ Ա. Բեղնար, *Լիահոնա,* ապր. 2012, 14:
14. Դալին Հ. Օուքս, «Մեր և Օրենք», *Լիահոնա,* Նոյ. 2009, 26:
15. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Դուք իմ ձեռքերն եք», *Լիահոնա,* մայիս 2010, 69:
16. Տես Ալմա 5.12–14:
17. Մոսիա 3.3:
18. Տես Մոսիա 4.1–3:
19. Տես Մոսիա 5.2–5:
20. *Քարոզիր Իմ Ավետարանը,* 52:
21. Տես Դեյվիդ Ա. Բեղնար, *Լիահոնա,* ապր. 2012, 12–19:
22. Տես Դալին Հ. Օուքս, *Լիահոնա,* նոյ. 2009, 26:
23. Երեմիա ԼԱ.33, շեշտադրումն ավելացված է:

Քերոլ Մ. Սթեֆենս
Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական

Արթնանանք մեր պարտականության մեջ

Մենք պետք է արթուն լինենք մեր պարտականությունների մեջ և հավատքով շարունակենք, ապավինելով Քավության մխիթարող, ամրացնող, կարողություն պարգևող և բուժող զորությանը:

Սփոփող Միության գերագույն նախագահություն կանչվելուց հետո ես ցանկություն զգացի ավելին իմանալ այն կանանց մասին, ովքեր ծառայել էին ինձանից առաջ: Ինձ տպավորեցին Քույր Զինա Դ. Յանգի ուսմունքները, ով ծառայել էր որպես Սփոփող Միության երկրորդ գերագույն նախագահության առաջին խորհրդական: Նա ասել է. «Քույրեր, մենք պետք է մեծապես արթուն լինենք մեր պարտականությունների մեջ»:[1] Ես խորհեցի *արթուն* և *պարտականություն* բառերի մասին և լրացուցիչ ուսումնասիրություն կատարեցի սուրբ գրքերում:

Նոր Կտակարանում Պողոսն ուսուցանում է իր օրերի սրբերին.

«Ժամ է արդեն քնից զարթնել. որովհետև մեզ հիմա ավելի մոտ է փրկությունը: . . .

Գիշերն անցավ զնաց, և ցերեկը մոտեցել է. . . . հագնենք լույսի զենքերը»:[2]

Մորմոնի Գրքում Ալման իր ժողովրդին ուսուցանում է նրանց սուրբ պարտականությունների մասին, ովքեր ուխտի մեջ են մտնում Աստծո հետ.

«Եվ արդ, քանի որ դուք փափագում եք գալ Աստծո հոտը և կոչվել նրա ժողովուրդը, և հոժար եք կրելու մեկդ մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն,

Այո, և հոժար եք սգալու նրանց հետ, ովքեր սգում են. այո, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում . . .

Արդ, ես ասում եմ ձեզ, եթե սա է ձեր սրտի իղձը, ի՞նչ ունեք դուք դեմ Տիրոջ անունով մկրտվելուն՝ որպես մի վկայություն նրա առաջ, որ դուք մտել եք նրա հետ ուխտի մեջ, որ կծառայեք նրան և կպահեք նրա պատվիրանները, որպեսզի նա իր Հոգին ավելի առատորեն

դուրս թափի ձեր վրա:

Եվ այժմ, երբ ժողովուրդը լսեց այս խոսքերը, նրանք ուրախությունից ծափ տվեցին, և բացականչեցին. Այս է մեր սրտի իղձը»:[3]

Քույր Յանգի խոսքերը և այս սուրբ գրությունները ստիպեցին ինձ մտածել այն «պարտականությունների» մասին, որոնց համար մենք պետք է արթուն լինենք մեր օրերում:

Երբ մկրտվում ենք, մենք ուխտի մեջ ենք մտնում: Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ուսուցանել է. «Երբ մենք կապում և պահում ենք ուխտեր, մենք դուրս ենք գալիս աշխարհից և մտնում Աստծո թագավորություն»:[4]

Մենք փոխվում ենք: Մենք այլ տեսք ենք ձեռք բերում, մենք այլ կերպ ենք գործում: Այն, ինչ մենք լսում և կարդում ենք, տարբերվում է, այն, ինչ, մենք հագնում ենք, տարբերվում է, որովհետև մենք դառնում ենք Աստծո դուստրերը՝ կապված Նրա հետ ուխտով:

Երբ մենք հաստատվում ենք, մենք ստանում ենք Սուրբ Հոգու պարգևը՝ իրավունք մեզ հետ ունենալու Աստվածագլխի անդամի մշտական ազդեցությունը, որն ուղղորդում, սփոփում և պաշտպանում է մեզ: Նա նախազգուշացնում է մեզ, երբ մենք փորձում ենք շեղվել մեր ուխտերից և վերադառնալ աշխարհ: Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ուսուցանել է, որ մեզանից ոչ ոք «երբեք լուրջ սխալ չի կատարի առանց նախազգուշացում ստանալու Սուրբ Հոգու կողմից»:[5]

Պարգևը ստանալու և Հոգին միշտ մեզ հետ ունենալու համար մենք պետք է արժանի լինենք և անդադար ստուգենք մեր սրտի վիճակը: Արդյո՞ք մեր սիրտը փափուկ է: Արդյո՞ք մենք ունենք խոնարհ սիրտ, ուսուցանվող սիրտ, մեղմ սիրտ: Թե՞ մեր սրտերը աստիճանաբար կարծրանում են, երբ մենք թույլ ենք տալիս, որ աշխարհի աղմուկը շեղի մեզ մեղմ հուշումներից, որոնք անշուշտ գալիս են Հոգուց:

Երբ մենք մկրտվում ենք, մեր սրտերը փոխվում են և արթնանում են, դառնալով դեպի Աստված: Մեր մահկանացու ճանապարհին, մենք անընդմեջ պետք է հարցնենք մեզ. «Արդյո՞ք ես զգում եմ սրտի փոփոխություն, . . . զգո՞ւմ եմ ես դա դեռ»:[6] Եվ եթե ոչ, ապա՝ ինչո՞ւ:

Վաղ Սրբերից շատերը զգացել են «սրտի զորեղ փոփոխությունը»:[7] Դա արթնացրել է նրանց և նրանք ստացել են տաճարի օրհնությունները, որոնք ամրացրել են նրանց՝ իրենց պարտականություններում: Նավույում վաղ Սրբերը գնում էին «տաճար ամբողջ օր ու գիշեր»[8]՝ ստանալու ծեսերը և ուխտեր կապելու դեպի արևմուտք ճանապարհ ընկնելուց առաջ:

Սառա Ռիչը՝ Սփոփող Միության մի քույր Նավույից, ասել է. «Շատ էին այն օրհնությունները, որ մենք ստացանք Տիրոջ տանը, որոնք մեզ ուրախություն և սփոփանք պարգևեցին մեր վշտերի պահին և թույլ տվեցին հավատք ունենալ Աստծո հանդեպ, իմանալով, որ Նա կառաջնորդի և կսատարի մեզ մեր առջև ընկած անհայտ ճամփորդության ընթացքում»:[9]

Առ Փրկիչ հավատքով փոխված սրտերով նրանք ապավինեցին Նրա Քավության զորությանը: Նրանք արթուն էին՝ գործելու համար: Իրենց սրտի խորքում նրանք գիտեին, որ կար միայն մեկը՝ Փրկիչը, ով հասկանում էր իրենց անձնական դժվարությունները, որովհետև տանջվել էր իրենց համար Գեթսեմանի այգում և խաչի վրա: Նա զգացել էր իրենց վախը, իրենց կասկածները, իրենց ցավը և իրենց միայնակությունը: Նա տարել էր իրենց վշտերը, իրենց հալածանքները, իրենց սովը, իրենց հոգնածությունը և իրենց կորուստները: Եվ որովհետև Նա տառապել էր այդ ամենի համար, Նա կարող էր ասել նրանց. «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ»:[10]

Եվ նրանք եկան: Նրանք վստահեցին և հետևեցին մարգարեին: Նրանք գիտեին, որ ճանապարհը երկար էր լինելու, իսկ իրենց պարտականությունները՝ դժվար: Նրանք գիտեին, որ զոհաբերություն էր պահանջվելու, սակայն մխիթարվում էին իրենց հավատքով և կառչում իրենց ուխտերից. նրանք հոգևորապես պատրաստված էին:

Նավույից հեռանալուց առաջ

Սրբերի մի խումբ մի ուղերձ գրեց տաճարի հավաքների սրահում, որը ստիպված էր լքել. «Տերն ընդունեց մեր զոհաբերությունը: Եկեք մեր ետևից»:[11]

Վերջերս մեր ծխի երիտասարդ տղամարդկանց և կանանց հետ միասին ես մասնակցեցի պիոներների հետքերով ուղևորությանը: Ամեն առավոտ ես ինձ հարցնում էի. «Ո՞րն է իմ զոհաբերությունը: Ինչպե՞ս ես կարող եմ գնալ նրանց ետևից»:

Ուղևորության երկրորդ օրը մենք քշեցինք մեր ձեռնասայլակները 13 կմ, երբ հասանք մի վայր, որը կոչվում էր «կանանց հատված»: Տղամարդիկ և կանայք բաժանվեցին և տղամարդիկ առաջ գնացին, բարձրանալով բլուրը: Երբ մենք սկսեցինք քշել ձեռնասայլակները, ես նայեցի վերև, որտեղ մեր քահանայության եղբայրները՝ երիտասարդ և տարիքով, շարված էին ճանապարհի երկու կողմերում, գլխարկները հանած՝ ի հարգանք կանանց:

Սկզբում ճանապարհը հեշտ էր, բայց շուտով մենք խորը ավազի մեջ էինք, իսկ բլուրը կտրուկ վեր էր բարձրանում: Ես գլուխս կախ ամբողջ ուժով հրում էի, երբ զգացի, որ սայլակը դեմ առավ ինչ-որ բանի, և աչքերս բարձրացնելով տեսա մեր երիտասարդ կանանցից մեկին և իմ հարևանուհուն՝ Լեքսիին: Նա իր սայլակը հասցրել էր բլրի գագաթը և, տեսնելով, որ մենք օգնության կարիք ունեինք, վազել էր հետ: Երբ մենք հասանք վերև, ես այնքան էի ուզում ետ վազել և օգնել նրանց, ովքեր մեր ետևում էին, բայց ես ծանր էի շնչում, սիրտս այնքան ուժեղ էր խփում, որ *սրտի կաթված* բառերը միանգամից ներխուժեցին միտքս: Ես երախտագիտությամբ նայում էի, ինչպես էին մյուս երիտասարդ կանայք գցում իրենց սայլակները և վազում օգնելու:

Երբ բոլորը հասան գագաթին, մենք մի քանի րոպե հատկացրեցինք մեր զգացումների մասին օրագրերում գրառելու համար: Ես գրեցի. «Ես ֆիզիկապես բավականաչափ պատրաստ չէի, և ուժ չունեցա, որ օգնեի իմ ետևից եկողներին: Մի գուցե ես երբեք

ձեռնասայլակ քաշելու կարիք չունենամ, սակայն երբեք չեմ ցանկանա իմ քույրերին հոգևոր առումով ետևում թողնել, երբե՛ք»:

Դա սրբազան փորձառություն էր, որն ինձ ստիպեց հոգեպես արթնանալ և հիշել իմ պարտականությունները ընտանիքիս և մյուսների հանդեպ: Մեր ճանապարհորդության ընթացքում, ես հիշում էի այն, ինչ սովորել էի:

Առաջինը, ես մտածեցի իմ քույրերի մասին, ովքեր քաշում *էին* և ովքեր *շարունակում են այսօր* միայնակ քաշել իրենց ձեռնասայլակները: Վաղ ժամանակների ձեռնասայլակների այդ խմբի կանանց մոտ 20 տոկոսը միայնակ էին, առնվազն ճանապարհի մի մասը: Ոմանք ամուսնացած չէին, ոմանք բաժանված կամ այրիներ էին. Շատերը միայնակ մայրեր էին:[12] Նրանք բոլորը միասին էին քաշում՝ ուխտի դուստրեր, երիտասարդ և մեծահասակ, գտնվելով կյանքի տարբեր իրավիճակներում, բայց նույն ուղու վրա, նույն նպատակով:

Նրանք, ովքեր վազում էին օգնելու իրենց կարիքի մեջ ընկած քույրերին, հիշեցնում էին ինձ փրկարարների՝ տեսանելի և անտեսանելի, որոնք արագ նկատում էին, տեսնում կարիքը և գործում:

Ես մտածեցի Տիրոջ խոսքերի մասին. «Ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»:[13]

Արահետի երկու եզրերին կանգնած էին հավատարիմ, հնազանդ, ուխտեր պահող տղամարդիկ:

Նրանց քահանայության զորությունը՝ Աստծո զորությունը, որով Նա օրհնում է Իր զավակներին, բարձրացրել, ամրացրել և սատարել է մեզ: Նրանք հիշեցնում են այն բանի, որ մենք երբեք միայնակ չենք: Մենք կարող ենք միշտ մեզ հետ ունենալ այդ զորությունը, եթե պահենք մեր ուխտերը:

Ես մտածեցի այն տղամարդկանց մասին, ովքեր ճանապարհորդության ժամանակ բաժանվել էին իրենց ընտանիքներից, թողնելով նրանց ինքնուրույն քշելու իրենց սայլակները: Շատ տղամարդիկ մահացել էին ճանապարհին: Կային որդիներ, որոնք մնացել էին միսիաներ ծառայելու իրենց հայրենի հողերում: Մյուսներն ավելի շուտ էին գաղթել, որպեսզի պատրաստեին իրենց ընտանիքների ժամանումը Սոլթ Լեյքի հովիտ: Որոշ տղամարդիկ կամավոր էին բացակայում, ընտրելով ուխտերը չպահելու ուղին:

Ինչպես նրանք, ովքեր առաջ էին գնացել, այսօր շատերը ապրում են ոչ կատարյալ պայմաններում: Մենք շարունակում ենք ուսուցանել և ձգտել կատարյալին, որովհետև գիտենք, որ շարունակ ձգտելը կօգնի մեզ առաջ գնալ ուղով և կպատրաստի մեզ բոլոր խոստացված օրհնություններին, մինչ մենք սպասում ենք Տիրոջը:[14]

Յուրաքանչյուրս ունի և կշարունակի ունենալ դժվարություններ կյանքում: Այս մահկանացու կյանքը փորձաշրջան է, և մենք կշարունակենք հնարավորություններ ունենալ օգտագործելու մեր ազատ ընտրությունը և ընտրել, սովորելով մեր դժվարություններից, որոնք անշուշտ կգան:

Որպես Աստծո դուստրեր մենք շարունակում ենք շարժվել հավատքի ուղով, որովհետև, ինչպես սովորեցնում է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, մենք ընդունում ենք, որ «տաճարի փրկող ծեսերը, որոնք թույլ են տալիս մեզ մի օր վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ՝ հավերժական ընտանիքի կապերի մեջ և օժտվել օրհնություններով և զորությամբ ի վերուստ, արժեն ցանկացած զոհաբերություն և ցանկացած ջանք»:[15]

Բավական չէ միայն լինել ճամփորդության մեջ, մենք պետք է արթուն լինենք մեր պարտականությունների մեջ և հավատքով շարունակենք, ապավինելով Քավության մխիթարող, ամրացնող, կարողություն պարգևող և բուժող զորությանը:

Քույրեր, ես սիրում եմ ձեզ: Ձեզանից շատերին անձամբ չեմ ճանաչում, բայց ես գիտեմ, թե *ով* եք դուք: Մենք ուխտեր պահող դուստրեր ենք Նրա արքայության մեջ և օժտված ենք զորությամբ մեր ուխտերի միջոցով, պատրաստ կատարելու մեր պարտականությունը:

Սփոփող Միությունը պատրաստում է կանանց հավերժական կյանքի օրհնություններին, հոգեպես արթնացնելով մեզ, որ մեծանա մեր հավատքը և անձնական արդարակեցությունը: Եկեք սկսենք ինքներս մեզանից: Եկեք սկսենք այն տեղից, որտեղ գտնվում ենք: Եկեք սկսենք այսօր: Եթե մենք հոգևոր առումով արթուն լինենք, մենք կկարողանանք ավելի լավ ամրացնել մեր ընտանիքները և տները և օգնել մյուսներին:

Սա փրկության աշխատանք է, և Քավության ամրացնող և զորացնող ուժը այն հնարավոր է դարձնում: Արթնանանք և հիշենք, թե ով ենք մենք: Արթնանանք մեր պարտականության մեջ: Մենք դուստրերն ենք մեր Երկնային Հոր, ով սիրում է մեզ: Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Zina D. Young, in *Woman's Exponent,* Oct. 15, 1877, 74.
2. Հռովմայեցիս 13.11–12:
3. Մոսիա 18.8–11:
4. Robert D. Hales, "Modesty: Reverence for the Lord," *Liahona,* Aug. 2008, 21.
5. Բոյդ Ք: Փաքեր, «Ինչպես գոյատևել թշնամու տարախքում», *Լիահոնա,* հոկտ. 2012, 35:
6. Ալմա 5.26:
7. Ալմա 5.14:
8. *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 29.
9. Sarah Rich, in *Daughters in My Kingdom,* 30.
10. Մատթեոս 11.28:
11. In *Daughters in My Kingdom,* 30.
12. Research conducted by Jolene S. Allphin from stories and company rosters; see *Tell My Story, Too*, 8th ed. (2012).
13. Վարդապետություն և Ուխտեր 84.88:
14. Եսայիա 40.31:
15. Թոմաս Ս. Մոնսոն, «Սուրբ տաճար՝ լույս աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2011, 92:



Լինդա Ռ. Ռիվս
Սփոփող Միության Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդական

Տերը մեզ չի մոռացել

Մեր Երկնային Հայրը և մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, գիտեն մեզ և սիրում են մեզ: … Մենք կարող ենք զգալ Նրանց սերը և կարեկցանքը մեր տառապանքի մեջ:

Հանդիպելով քույրերով աշխարհով մեկ, մենք հիանում ենք ձեր վկայությունների ուժով: Ձեզանից շատերը առաջին կամ երկրորդ սերունդն են, որ Եկեղեցու անդամ են: Մենք տեսնում ենք շատ քույրերի, որ ծառայում են բազմաթիվ կոչումներում, երկար ճանապարհ են անցնում Եկեղեցի այցելելու համար և զոհաբերություններ են անում սրբազան տաճարային ուխտեր կապելու և պահելու համար: Մենք հարգում ենք ձեզ: Դուք Տիրոջ արդի ժամանակաշրջանի պիոներներն եք:

Վերջերս իմ ամուսին Մելը և ես Ավստրալիայում թանգարան այցելելիս հանդիպեցինք Մոլլի Լենթալ անունով մի կամավոր էքսկուրսավարի: Մենք պարզեցինք, որ սիրալիր կինը՝ Մոլլին՝ մոտ 70 տարեկան, երեխաներ չուներ և երբեք չէր ամուսնացել: Նա միակ երեխան էր, և նրա ծնողները մահացել էին շատ տարիներ առաջ: Նրա ամենամոտ բարեկամները երկու զարմիկներն են, ովքեր ապրում են շատ հեռվում: Հանկարծ ես լցվեցի Հոգով, ով վկայեց էր ինձ, կարծես, թե Երկնային Հայրը խոսեր ինձ հետ. «Մոլլին միայնակ *չէ*: Մոլլին *իմ* դուստրն է: Ես նրա Հայրն եմ: Նա շատ կարևոր դուստր է *իմ* ընտանիքում և նա *երբեք միայնակ չէ*»:

Փրկչի կյանքի իմ ամենասիրած պատմություններից մեկը Ղազարոսի պատմությունն է: Սուրբ գրությունները մեզ ասում են, որ «Հիսուսը սիրում էր Մարթային, . . . նորա քրոջը [Մարիամին], եւ [նրանց եղբորը] Ղազարոսին»:[1] Հիսուսին լուր ուղարկեցին, որ Ղազարոսը շատ հիվանդ էր, սակայն Հիսուսն անմիջապես չեկավ. Նա ևս երկու օր մնաց հեռվում, նշելով, որ «այն հիվանդությունը . . . Աստծո փառքի համար է, որ Աստծո Որդին նրանով փառավորվի»:[2]

Լսելով, որ Հիսուսը գալիս է, Մարթան «գնաց նրան դիմավորելու»,[3] պատմելով նրան, թե ինչ էր պատահել: Ղազարոսը «արդեն չորս օր գերեզմանի մեջ»[4] էր: Խորապես վշտացած՝ Մարթան ետ վազեց իր տուն, որ ասեր Մարիամին, որ Տերն էր եկել:[5] Վշտաբեկ Մարիամը վազեց Հիսուսի մոտ, ընկավ Նրա ոտքերը և լաց եղավ:[6]

Մեզ ասվել է, որ «Հիսուսն էլ երբ որ [Մարիամին] տեսավ որ լաց էր լինում, . . . իր հոգովը խռովեց և հուզվեց», և հարցրեց, թե որտեղ էին դրել նրան:

«Նրան ասեցին. Տեր, եկ և տես»:[7]

Այնուհետև մենք կարդում ենք

սուրբ գրությունների ամենակարեկցող, սիրառատ խոսքերը. «Հիսուսը արտասվեց»:[8]

Առաքյալ Ջեյմս Ի. Թալմիջը գրել է. «Մեծ վիշտ ապրող երկու կանանց տեսնելը այնքան վշտացրեց Հիսուսին, որ Նա հոգով խռովեց և խորապես հուզվեց»:[9] Այս փորձառությունը վկայում է կարեկցանքի, ուրիշի ցավը ըմբռնելու և սիրո մասին, որ մեր Փրկիչը և մեր Երկնային Հայրը զգում են մեզանից յուրաքանչյուրի հանդեպ ամեն անգամ, երբ մենք խորապես հուսահատվում ենք տառապանքի, մեղքի, դժբախտությունների և կյանքի ցավալի իրադարձությունների պատճառով:

Սիրելի քույրեր, մեր Երկնային Հայրը և մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, գիտեն մեզ և սիրում են մեզ: Նրանք տեղյակ են, երբ մենք ցավ ենք ապրում կամ տառապում ենք ինչ-որ ձևով: Նրանք չեն ասում. «Ոչինչ, որ դուք հիմա ցավ եք զգում, քանի որ շուտով ամեն ինչ լավ կլինի: Դուք կլավանաք, կամ ձեր ամուսինը աշխատանք կգտնի, կամ ձեր թափառող զավակը կվերադառնա»: Նրանք զգում են մեր վշտի խորությունը , և մենք կարող ենք զգալ Նրանց սերը և կարեկցանքը մեր տառապանքի մեջ:

Ալման վկայել է.

«Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի. և դա՝ որպեսզի խոսքը կարողանա իրագործվել, որն ասում է. նա վեր կառնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները:

Եվ նա իր վրա վեր կառնի . . . նրանց թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, . . . որպեսզի նա կարողանա իմանալ, . . . ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների»:[10]

Երբ մենք ուզում ենք իմանալ, *թե* արդյոք մեր Փրկիչն ու մեր Երկնային Հայրը ճանաչում են մեզ կամ *որքան լավ* են Նրանք մեզ անհատապես ճանաչում, մենք կարող ենք հիշել Փրկչի խոսքերը՝ ուղղված Օլիվեր Քաուդերիին.

«Եթե դու լրացուցիչ վկայություն ես փափագում, ուղղիր միտքդ դեպի այն գիշերը, երբ դու ինձ էիր կանչում քո սրտում, որպեսզի իմանայիր այս բաների ճշմարտության մասին»:[11]

Ավելի վաղ Փրկիչն ասել է նրան. «Չկա ուրիշ ոչ մեկը, բացի Աստծուց, որ իմանա քո մտքերը և մտադրությունները քո սրտի»:[12]

Փրկիչը հիշեցրեց Օլիվերին, որ նա գիտեր այդ աղերսող աղոթքի յուրաքանչյուր մանրամասը, և հիշում էր ստույգ ժամը, հենց այդ գիշերը:

Շատ տարիներ առաջ իմ ամուսինը ծանր հիվանդացավ հազվադեպ հիվանդությամբ: Մինչ շաբաթներն անցնում էին և նա ավելի հիվանդ էր դառնում, ես ավելի էի համոզվում, որ նա մահանում էր: Ես ոչ ոքի չէի ասում իմ մտավախության մասին: Մենք ունեինք մեծ, երիտասարդ ընտանիք և հավերժական ամուսնություն, և իմ ամուսնուն կորցնելու և իմ երեխաներին ինքնուրույն մեծացնելու միտքը լցնում էր ինձ միայնակությամբ, հուսահատությամբ և նույնիսկ զայրույթով: Ես ամաչում եմ ասել, որ ես հեռացել էի իմ Երկնային Հորից: Օրեր շարունակ ես դադարեցի աղոթել, ես դադարեցի ծրագրել: Ես լալիս էի: Ես վերջապես հասկացա, որ չէի կարող դա անել միայնակ:

Շատ օրերի ընթացքում առաջին անգամ ես ծնկի իջա և դուրս թափեցի իմ սիրտը իմ Երկնային Հոր առաջ, աղաչելով ներողամտություն, որ հեռացել էի Նրանից, պատմելով Նրան իմ բոլոր խորին զգացմունքները, և, վերջապես, բացականչելով, որ եթե սա իրոք այն էր, ինչ Նա ուզում էր, որ ես անեի, ես կանեի դա: Ես գիտեի, որ Նա պետք է ծրագիր ունենար մեր կյանքի համար:

Մինչ ես շարունակում էի ծնկների վրա դուրս թափել իմ սիրտը, ամենաքաղցր, ամենախաղաղ, սիրառատ զգացմունքը պարուրեց ինձ: Ինձ թվաց, թե սիրո վերմակը ցած իջավ ինձ վրա: Այն այնպիսի զգացողություն տվեց ինձ, որ, կարծես, Երկնային Հայրն ասում էր ինձ. «Սա այն ամենն էր, ինչ ես պետք է իմանայի»: Ես որոշեցի այլևս երբեք չհեռանալ Նրանից: Աստիճանաբար և զարմանալիորեն իմ ամուսինը սկսեց լավանալ, մինչև որ ամբողջովին ապաքինվեց:

Տարիներ անց իմ ամուսինն ու ես ծնկի էինք իջել մեր 17-ամյա դստեր կողքին և աղերսում էինք նրա կյանքի համար: Այս անգամ պատասխանը ոչ էր, սակայն սիրո և խաղաղության այդ նույն զգացողությունը, որ մեր Փրկիչը խոստացել էր մեզ, նույնքան հզոր էր, և մենք գիտեինք, չնայած, որ Երկնային Հայրը նրան ետ էր կանչում տուն, ամեն ինչ լավ կլիներ: Մենք սովորեցինք, թե ինչ է նշանակում դնել մեր բեռները Տիրոջ վրա, իմանալ, որ Նա սիրում է մեզ և կարեկցանք է զգում մեր հանդեպ մեր վշտի ու ցավի պահին:

Մորմոնի Գրքի հայր-որդի հարաբերությունների ամենաքաղցր պահերից է, երբ Ալմա Կրտսերը վկայում է իր որդի Հելամանին: Ալման նկարագրում է «աննկարագրելի սոսկումը», որը նա զգում էր, երբ պատկերացնում էր, որ պիտի գար Աստծո ներկայության մեջ, որ դատվեր իր բազում անօրինությունների համար: Իր բոլոր մեղքերի ծանրությունը երեք օր ու գիշեր զգալուց հետո նա ապաշխարեց և աղերսեց Փրկչին ողորմալ իրեն: Նա նկարագրեց Հելամանին իր ցավերը «այլևս» չհիշելու «ուժգին և քաղցր» ուրախությունը: Աստծո գահի առջև գալու մտքից «աննկարագրելի սոսկում» զգալու փոխարեն, Ալման տեսիլքում տեսավ «Աստծուն՝նստած իր գահի վրա» և հայտարարեց. «Իմ հոգին *տենչում* էր լինել այնտեղ»:[13]

Արդյոք դա այն չէ՞, ինչ մենք ենք զգում, իմ թանկագին քույրեր, երբ մենք ապաշխարում ենք և խորհում սիրո, ողորմության մասին և երախտագիտություն զգում մեր Երկնային Հոր և մեր Փրկչի հանդեպ, որ մենք նույնպես «տենչում ենք լինել այնտեղ», որ Նրանց սիրով լի բազուկները ևս մեկ անգամ գրկեն մեզ:

Ճիշտ ինչպես Տերը վկայել է ինձ, որ Նա չի մոռացել Իր թանկարժեք դստերը՝ Մոլլի Լենթալին, ես վկայում եմ, որ Նա *չի մոռացել ձեզ՝*: Ինչ մեղք կամ թուլություն կամ ցավ էլ որ դուք ունեք, ինչ փորձության կամ դժվարության միջով էլ որ դուք անցնում եք հիմա, Նա գիտի և հասկանում է այդ պահերը: Նա սիրում է ձեզ: Եվ Նա կտանի ձեզ այդ պահերի միջով, ճիշտ ինչպես Նա արեց Մարիամի և Մարթայի դեպքում: Նա վճարել է գինը, որ կարողանա իմանալ, թե ինչպես սատարել ձեզ: Դրեք ձեր բեռները Նրա վրա: Ասեք ձեր Երկնային Հորը, թե ինչպես եք ձեզ զգում: Ասեք Նրան ձեր ցավի ու չարչարանքների մասին և այնուհետև տվեք դրանք Նրան: Ուսումնասիրեք սուրբ գրությունները *ամեն օր*: Այնտեղ դուք նույնպես կգտնեք մեծ մխիթարություն և օգնություն:

Մեր Փրկիչը հարցրել է.

«Քանզի կարո՞ղ է կինը մոռանալ իր ծծկեր մանկանը, որ կարեկցանք չունենա իր արգանդի որդուն: Այո, նրանք կարող է մոռանան, սակայն ես քեզ չեմ մոռանա: . . .

. . . Ես փորագրել եմ քեզ իմ ձեռքերի ափերի վրա»:[14]

«Ես պատվիրեցի, որ ձեզանից *ոչ ոք* հեռու չգնա, այլ ավելի ճիշտ պատվիրեցի, որ դուք գաք ինձ մոտ, որպեսզի կարողանաք շոշափել և տեսնել. ճիշտ նույնպես դուք պիտի անեք աշխարհին»:[15]

Դա մեր պարտականությունն է: Մենք պետք է ինքներս զգանք և տեսնենք, և այնուհետև օգնենք Երկնային Հոր բոլոր զավակներին զգալ և տեսնել և իմանալ, որ մեր Փրկիչը ոչ միայն Իր վրա է վերցրել մեր բոլոր մեղքերը, այլ նաև մեր ցավերը և մեր տառապանքները և չարչարանքները, որպեսզի կարողանար իմանալ, թե ինչ ենք մենք զգում, և թե ինչպես մխիթարեր մեզ: Ես վկայում եմ Նրա մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես ԺԱ.5:
2. Հովհաննես ԺԱ.4:
3. Հովհաննես ԺԱ.20:
4. Հովհաննես ԺԱ.17:
5. Տես Հովհաննես ԺԱ.28:
6. Տես Հովհաննես ԺԱ.32:
7. Հովհաննես ԺԱ.33–34:
8. Հովհաննես ԺԱ.35:
9. James E. Talmage, *Jesus the Christ,* 3rd ed. (1916), 493.
10. Ալմա 7.11–12:
11. Վարդապետություն և Ուխտեր 6.22:
12. Վարդապետություն և Ուխտեր 6.16:
13. Տես Ալմա 36.14–22, շեշտադրումն ավելացված է:
14. 1 Նեփի 21.15–16:
15. 3 Նեփի 18.25, շեշտադրումն ավելացված է:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Խնամատարներ

Դուք ուժ կստանաք բայց նաև կոգեշնչվեք՝ իմանալու ծառայելու ձեր կարողության չափը:

Ես երախտապարտ եմ վայելելու ձեր ընկերակցությունն այս երեկո: Հիսուս Քրիստոսի Եկեղեցու կանայք առաջ են ընթանում դեպի քույրերի այնպիսի հասարակություն, ինչպիսին Մարգարե Ջոզեֆ Սմիթի մայրը՝ Լյուսի Մակ Սմիթն է նկարագրել այս խոսքերով. «Մենք պետք է փայփայենք միմյանց, հոգանք միմյանց մասին, սփոփենք միմյանց և ուսուցանվենք, որպեսզի բոլորս միասին նստենք երկնքում»[1]:

Աստծո հետ երջանիկ լինելու վիճակի բնութագիրը բաղկացած է երեք մասից: Մեկը՝ միմյանց մասին հոգալն է, մյուսը՝ միմյանց ուսուցանելն ու ուսուցանվելը: Եվ երրորդը՝ Աստծո հետ միասին նստելն է:

Այս երեկո իմ նպատակն է՝ օգնել ձեզ զգալ, որ Աստված մեծապես գնահատում և հավանություն է տալիս այն ամենին, ինչ արդեն իսկ արել եք՝ օգնելով միմյանց հասնելու այդ վեհ նպատակին: Եվ երկրորդ նպատակն է ներկայացնել, թե դեռևս ինչ է սպասվում ձեզ այդ միացյալ ծառայության գործում:

Վաղ ժամանակների քույրերի պես դուք արձագանքել եք մյուսներին օգնելուն ուղղված Տիրոջ կանչին: 1856թ. մարգարե Բրիգամ Յանգը խնդրել է Սրբերին, որ օգնության հասնեն լեռներում ձների մեջ խարխափող ձեռնասայլերով ռահվիրաներին: Այդ կարիքի պահին, զերագույն համաժողովի ժամանակ, նա ասաց անդամներին. «Ձեր հավատքը, կրոնը և դավանանքը երբեք չի փրկի ձեր հոգին Աստծո սելեստիալ թագավորությունում, եթե դուք կյանքի չկոչեք այն սկզբունքները, որ ես այժմ ուսուցանում եմ ձեզ: Գնացեք և բերեք տափաստանում գտնվողներին, և լիարժեք հոգ տարեք այն ամենի համար, ինչը մենք կոչում ենք նյութական կարիքներ այլապես ձեր հավատքն ապարդյուն կլինի»[2]:

Յուտայում հարյուրավոր կանայք արձագանքեցին այդ կոչին: Չնայած իրենց աղքատությանը, նրանք բեռնակառքերը լցրեցին այն ամենով, ինչ խնայել էին և ինչ կարող էին հավաքել մյուսներից, որպեսզի սփոփեին նեղության մեջ գտնվողներին: Այդ քաջարի քույրերից մեկն արձանագրել է. «Ես երբեք ավելի մեծ բավարարվածություն, և ինչու չէ, նաև հաճույք չեմ զգացել իմ կյանքում կատարած որևէ այլ աշխատանքից, որտեղ նման համերաշխություն էր տիրում»[3]:

Երբ փրկարար աշխատանքներն ավարտվել էին և ձյունը հալվել էր, այդ նույն քույրը գրեց իր հավատարիմ սրտից բխող հարցը. «Ո՞րն է հաջորդ բանը, որ կամեցող ձեռքերը պետք է անեն»[4]:

Մեր ժամանակներում, քաջարի քույրերի խմբերը ողջ երկրագնդով մեկ իրենց հավատքը գործի են դրել հարյուրավոր վայրերում: Եվ իրենց սրտերում և աղոթքներում նրանք նույն հարցն են ուղղում ծառայության կյանքի վերաբերյալ:

Ձեզանից յուրաքանչյուրը գտնվում է դեպի հավերժական կյանք տանող իր ճամփորդության յուրահատուկ փուլում: Ոմանք ունեն տարիների փորձ, իսկ մյուսները գտնվում են իրենց մահկանացու աշակերտության վաղ փուլում: Յուրաքանչյուրդ առանձնահատուկ անձնական պատմություն և դժվարություններ ունի: Սակայն բոլորդ քույրեր եք և սիրելի դուստրերն եք մեր Երկնային Հոր, ով ճանաչում և հետևում է ձեզանից յուրաքանչյուրին:

Այն, ինչ դուք միասին հրաշալիորեն անում եք՝ միմյանց փայփայելը, հսկելը և սփոփելն է: Մեկ ամիս առաջ մի քրոջը մատուցած ձեր ծառայության այդ եռակի հրաշքի ականատեսն եմ եղել ես: Որպես նրա հայր, շնորհակալություն եմ հայտնում ձեզ և ցանկանում եմ իմ գոհությունը հայտնել Աստծուն, որ ուղղորդել էր մի այցելող ուսուցչի:

Մեր դուստրը՝ Էլիզաբեթը, ով ապրում է մեկ ուրիշ նահանգում և այլ ժամանակային գոտում, տանն էր իր երեքամյա դստեր հետ: Նրա մյուս երեխան արդեն մեկ շաբաթ էր, մանկապարտեզ էր հաճախում: Էլիզաբեթը վեց ամսական հղի էր, և սպասում էր իր երրորդ զավակի լույս աշխարհ գալուն, որը բժիշկների կանխորոշմամբ աղջիկ էր: Նրա ամուսինը՝ Ջոշուան, գնացել էր աշխատանքի:

Երբ նա նկատեց, որ արյունահոսում է և որ այն գնալով սաստկանում է, նա զանգահարեց ամուսնուն: Վերջինս խորհուրդ տվեց կնոջը զանգահարել շտապ օգնություն, իսկ ինքը շտապեց նրան դիմավորել հիվանդանոցում, որը 20 րոպե հեռավորության վրա էր գտնվում իրենց տնից: Մինչ կհասցներ զանգել, Էլիզաբեթը լսեց դռան թակոցը:

Դռան շեմին նա զարմանքով տեսավ Սփոփող Միության իր

ընկերակից այցելող ուսուցչին: Նրանք այդ առավոտ ոչ մի պայմանավորվածություն չունեին, պարզապես այդ քույրը զգացել էր, որ պետք է զար Էլիզաբեթին տեսակցելու:

Քույրը օգնեց Էլիզաբեթին նստել մեքենա: Նրանք հասան հիվանդանոց Ջոշուայի հիվանդանոց ժամանելուց մի քանի րոպե առաջ: Բժիշկներն ընդամենը 20 րոպեում որոշեցին վիրահատական եղանակով հանել երեխային՝ փրկելով Էլիզաբեթի և նրա մանկան կյանքը: Այսպիսով, ժամկետից 15 շաբաթ առաջ բարձրաձայն ճչալով մի փոքրիկ աղջիկ լույս եկավ աշխարհ: Նա կշռում էր 765գ, սակայն կենդանի մնաց մայրիկի հետ միասին:

Լյուսի Մակ Սմիթի խոսքերը մասամբ իրականացան այդ օրը: Սփոփող Միության հավատարիմ անդամը Սուրբ Հոգու հուշումով հսկեց, փայփայեց և սփոփեց Աստծո արքայության իր քրոջը: Նա և տասնյակ հազարավորներ, ովքեր նման ոգեշնչված ծառայություն էին մատուցել սերունդներ շարունակ, արժանացել են ոչ միայն նրանց, ում օգնել են, և իրենց սիրելիների շնորհակալությանը, այլ նաև Տիրոջ երախտագիտությանը:

Դուք հիշում եք Նրա երախտիքի խոսքերն ուղղված նրանց, ովքեր գնահատանքի գրեթե չեն արժանանում իրենց բարյացակամության համար. «Թագավորն էլ կպատասխանե և կասե նրանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք»[5]:

Իսկ Սփոփող Միության մեկ քրոջ ժամանակին օգնության հասնելու հրաշքը բազմապատկվում է քույրերի համերաշխ միության ուժի շնորհիվ: Ահա երեխայի ծննդից մի քանի ժամ անց Էլիզաբեթին և Ջոշուային իրենց եպիսկոպոսի կողմից ուղարկված նամակից մի հատված. «Սփոփող Միության նախագահը վերահսկում է ամեն ինչ: Մենք արդեն մշակում ենք ապագա ծրագիր, որը նախատեսված է օգնելու տանը երեխաների հարցում, որպեսզի Էլիզաբեթը կարողանա այցելել հիվանդանոց, որքան որ իր մանկիկը այնտեղ կլինի: Մենք արդեն երկար ժամանակ է նման փորձ ունենք, և առիթի դեպքում [մեր] մարդիկ շտապում են օգնության»:

Այնուհետև եպիսկոպոսը գրել էր՝ իր անունից և ծխի անունից. «Նույնիսկ այցելել ենք հիվանդանոց և նստել ենք երեխաների հետ խաղասենյակում, երբ մայրիկները չեն ցանկացել թողնել նրանց մեկ ուրիշ տեղում»:

Եվ ապա. «Իհարկե, մեր ծրագիրը գործի չենք դնի առանց ձեր հետ համակարգելու և համաձայնեցնելու: Պարզապես ուզում եմ ձեզ տեղեկացնել, որ հանգիստ լինեք այն հարցերում, որ մենք կարող ենք օգնել»:

Նրանց ցուցաբերած օգնության շնորհիվ դուստրս կարողացավ վայելել իր համար թանկ պահը՝ առաջին անգամ գրկելով իր փոքրիկ դստերը:

Ապա Ջոշուային և Էլիզաբեթին ուղղված իր նամակը եպիսկոպոսը եզրափակում էր այն խոսքով, որը քույրերը հղում են երկրագնդով մեկ հանուն Վարդապետի մյուսներին ծառայելու իրենց պարտավորության մասին՝ «Պահիր հավատը»:

Ճիշտ է ձեր անհատական պայմաններն ու անցյալի փորձը տարբեր են, ես կասեմ, թե ինչ է սպասվում ձեզ առաջիկայում: Պահելով հավատքը, դուք Տիրոջ կողմից հաճախ կհրավիրվեք ծառայելու որևէ կարիքավորի, երբ թվա հարմար չէ: Թերևս դա թվա տհաճ և նույնիսկ անհնարին խնդիր: Երբ հնարավորությունը թակում է դուռը, ապա հնարավոր է թվա, որ ձեր կարիքը չկա կամ գուցե մեկ ուրիշը ավելի հեշտ օգնության կհասնի:

Հիշեք, որ երբ Տերը մեզ հնարավորություն է տալիս հանդիպել դժբախտության մեջ գտնվող մարդուն, մենք պատվում ենք բարի Սամարացուն ոչ թե իր արածի, այլև ավելի շատ իր չարածի համար: Նա չանցավ ճանապարհի մյուս կողմը, թեպետ ճանապարհին ընկած անցորդն օտար էր և գուցե թշնամի: Նա ծեծված մարդու համար արեց ինչ կարողացավ և ապա հատուկ ծրագիր կազմեց, որ մյուսներն ավելին անեն: Նա արեց դա, որովհետև գիտակցեց, որ օգնելու համար թերևս պահանջվի ավելին, քան մեկ մարդը կարող է անել:

Այդ պատմության դասերը կարող են ուղղորդել ձեզ ապագայում:

Այդ նույն դասերը առկա են եղել ձեր իսկ մանկության տարիներին և վերջին փորձառությունների ժամանակ:

Թեկուզև մեկ անգամ, և գուցե հաճախ, դուք անակնկալի եք եկել՝ հանդիպելով հոգածության կարիք ունեցող մարդու: Գուցե դա եղել է հիվանդ կամ հաշմանդամ ծնող, պապիկ կամ տատիկ, քույր կամ երեխա: Ձեր կարեկցանքը հաղթահարել է ձեր մարդկային ցանկություններին: Այնպես որ դուք սկսել եք օգնել:

Բարի սամարացու սուրբ գրային պատմության ճամփորդի պես, հավանաբար, կարիք լինի, որպեսզի անհրաժեշտ օգնությունը վերածվի երկարատև հոգածության, որը դո՛ւք միայն կարող եք ցուցաբերել: Անհրաժեշտություն եղավ, որ սամարացին ճամփորդին հանձներ իջևանատիրոջ խնամքին: Կարիքի մեջ գտնվողներին ծառայելու համար Տիրոջ ծրագիրը թիմեր է տրամադրում:

Եպիսկոպոսները և Սփոփող Միության նախագահները միշտ կոչ են անում ընտանիքի անդամներին՝ օգնել միմյանց, երբ կարիքը կա: Այդ սկզբունքի համար շատ պատճառներ կան: Ամենագլխավորն է՝ ավելի շատ մարդկանց հասցնել մեծագույն սիրո օրհնությունը, որը գալիս է միմյանց ծառայելու արդյունքում:

Դուք տեսել և զգացել եք այդ օրհնությունը: Ամեն անգամ, երբ դուք հոգ եք տարել ինչ-որ մեկի համար անգամ մի կարճ ժամանակով, դուք սեր եք տածել այն մարդու հանդեպ, ում ծառայել եք: Երբ տրամադրվող անհրաժեշտ օգնությունը երկարել է, սիրո զգացումն ավելի է մեծացել:

Քանի որ մենք մահկանացու ենք, սիրո այդ աճը գուցե ընդհատվի հուսախաբության և հոգնածության պատճառով: Դա մեկ այլ պատճառ է, թե ինչու է Տերը թույլ տալիս, որ մենք ունենանք մյուսների օգնությունը կարիքի մեջ գտնվողին ծառայելու ժամանակ: Ահա թե ինչու է Տերը ստեղծել խնամատարների միություն:

Մի քանի շաբաթ առաջ ես ներկա էի մի հաղորդության ժողովի, որի ժամանակ մի երիտասարդ աղջիկ ոտքի կանգնեց, որպեսզի հաստատվի որպես այցելող ուսուցիչների համակարգողի օգնական՝ կոչում, որը ես չգիտեի, որ գոյություն ուներ: Ես մտածեցի, արդյոք նա տեղյա՞կ է, թե ինչպիսի պատվի է արժանացրել իրեն Տերը: Քանի որ այդ կնոջ երեխան անհանգիստ էր, նա ստիպված շուտ գնաց ժողովից, և ես չկարողացա նրան ասել, թե որքան է Տերը սիրում և գնահատում նրան՝ Իր աշակերտների աշխատանքը համակարգելու գործում նրա ցուցաբերած օգնության համար:

Կարիքի մեջ գտնվողներին հոգ տանելու համար անհրաժեշտ է թիմ՝ սիրող և համերաշխ միություն: Ահա թե ինչ է Տերը կերտում ձեր մեջ: Նա սիրում է ձեզ ինչպիսին էլ որ լինի ձեր դերը:

Դրա ապացույցներից մեկն այն է, որ Աստված թույլ է տալիս ձեզ օգնել Իրեն՝ ծառայելով կարիքավորին: Այդ պատճառով եք դուք արտասվում ինչ-որ մեկի մահվան ժամանակ, որին ծառայել եք երկար ժամանակ: Նրանց մասին հոգալու հնարավորությունը կորցնելն ավելի մեծ կորուստ կարող է թվալ, քան ժամանակավոր բաժանումը: Վերջերս լսեցի մի կնոջ վկայությունը, որին ճանաչել եմ երկար ժամանակ, որի ամուսինը մեկ շաբաթ առաջ էր մահացել: Նա երախտագիտության

խոսքեր էր ասում կյանքի վերջին օրերին նրան ծառայելու հնարավորության համար: Արցունքները տեսանելի չէին, սակայն նրա դեմքին երջանիկ ժպիտ կար:

Թեպետ մարդկանց ցուցաբերած երկարատև և սիրով լի ծառայությունն առատորեն հատուցվում է, դուք գիտեք, որ կան ֆիզիկական, էմոցիոնալ և ֆինանսական սահմանափակումներ: Երկար ժամանակ խնամք ապահովող մարդը ինքն էլ է հոգածության կարիք ունենում:

Տերը, որը կարիքի մեջ հայտնված մարդկանց մասին Հոգացող Վարդապետն է, հետևյալ ոգեշնչող խորհուրդն է տվել հոգնած խնամատարներին Մորմոնի Գրքում գրված Բենյամին թագավորի արտահայտած հետևյալ խոսքերով. «Հանուն ձեր մեղքերի թողության օրեցօր պահպանման . . . ես կկամենայի, որ դուք բաժին հանեիք ձեր ստացվածքից աղքատներին՝ ամեն մարդ ըստ նրա, ինչ ինքն ունի, ինչպես օրինակ, կերակրելով քաղցածին, հագցնելով մերկին, այցելելով հիվանդին, և ծառայելով ի սփոփանք նրանց՝ և՛ հոգևորով, և՛ աշխարհիկով, ըստ նրանց կարիքների»[6]:

Այնուհետև, Նա շարունակում է զգուշացնել ձեզանից նրանց, ովքեր թերանում են տեսնել այն փաստը, որ չափից շատ և չափից երկար են տրվում սիրառատ ծառայությանը. «Եվ տեսեք, որ բոլոր այս բաներն արվեն իմաստությամբ և կարգով. քանզի հարկավոր չէ, որ մարդ վազի ավելի արագ, քան ինքն ուժ ունի: Եվ կրկին անհրաժեշտ է, որ նա ջանասեր լինի, որ այդպիսով նա կարողանա նվաճել մրցանակը. ուստի, բոլոր բաները պիտի արվեն կարգով»[7]:

Այդ խորհուրդը դժվար կլինի կիրառել, երբ ընտրությունը կարծես թե հավասարակշռում է մյուսներին օգնելու նպատակով ձեր ուժերի սահմանում ամեն ինչ կատարելու ցանկությունը իմաստության հետ, որպեսզի խելամտորեն բավարարեք ձեր իսկ կարիքները՝ խնայելով ձեր ուժը ծառայելու համար: Գուցե տեսել եք նրանց, ովքեր մաքառում են նման դժվար ընտրությունների հետ: Մեկ օրինակ է, երբ ընտրում

եք խնամել կյանքի մայրամուտին մոտ գտնվող անձին իր տանը կամ ծերանոցում, երբ դուք գրեթե ուժասպառ եք:

Փրկության ծրագրի մասին գիտելիքը կարող է լինել ձեր ուղեկիցը նման դժվարին ընտրություններում: Դա էր պատճառներից մեկը, որ Լյուսի Մակ Սմիթն իմաստուն կերպով ասաց, որ քույրերը պետք է «ուսուցանվեն»:

Դա օգնում է անսասան վստահություն ունենալ, որ Տերը նպատակ ունի մահկանացու կյանքի փորձություններով անցնող յուրաքանչյուր Աստծո զավակի համար: Նման ձևով Տերն ուսուցանեց փրկության ծրագրի բուն էությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթին, երբ վերջինս ջանում էր հասկանալ իր անվերջ թվացող փորձությունները. «Եվ հետո, եթե դու լավ համբերես, Աստված քեզ վեր կբարձրացնի»[8]:

Այդ դեպքում դժվար փորձությունների միջով անցնող մարդուն լավագույնս օգնելու մեր ընտրությունն է դառնում. «Ի՞նչ ուղու հետևեմ, որը լավագույնս կօգնի իմ սիրած անձին, որ նա «լավ համբերի»: Մեզանից է հիմնականում կախված, որ նա կարողանա հավատք գործադրել առ Քրիստոս, պահեն հավերժական կյանքի վառ հույսը և բարյացակամություն, այսինքն՝ Քրիստոսի մաքուր սերը դրսևորեն մինչև իրենց կյանքի վերջը:

Արքայությունում ես տեսնում եմ քույրեր, ովքեր ուշադրությունը կենտրոնացնում են Փրկչի և Նրա նպատակի վրա: Հիշեք այն պահերը, երբ մտնում եք Սփոփող Միության, Երեխաների Միության կամ Երիտասարդ աղջիկների դասարան:

Գուցե աչքի չի զարնում Փրկչի նկարը կամ Նրա խոսքերը, բայց դուք գիտեք, որ այդ դասին զգացվում է Նրա Քավության իրականության և արժեքի մասին վկայությունը, ինչպես այս երեկո: Գուցե չլինի սուրբ տաճարի նկարը կամ «Ընտանիքները կարող են հավերժ լինել» արտահայտությունը, բայց դուք կարող եք տեսնել հույս նրանց ժպիտներում:

Եվ ինձ նման, դուք էլ ականատես եք եղել, թե ինչպես իմաստուն այցելող ուսուցիչը վստահություն է ներշնչում մաքառող քրոջ մեջ, որ ուրիշին մատուցած ծառայությունը, անգամ եթե թերի է, ինչպես իրենը, դեռևս անհրաժեշտ և արժեքավոր է: Սփոփող Միության հրաշալի նախագահները հնարավորություն են ընձեռում նրանց, ովքեր իրենք են կարիքի մեջ, օգնեն հոգալ ուրիշների մասին: Նրանք օգնում են քույրերին լավ համբերել փորձության ժամանակ՝ միմյանց մասին հոգ տանելով Քրիստոսի մաքուր սիրով: Դա կարող է լինել՝ հոգնատանջ խնամք տանողին մեղմ հորդորելը, որ հանգստանա և ընդունի մյուսների օգնությունը:

Քույրերը դա հնարավոր են դարձնում՝ փորձելով չդատել փորձությունների միջով անցնողներին: Շատերը, ովքեր ծանր բեռ են կրում, սկսում են կասկածել իրենց վրա և իրենց արժանավորությանը: Մենք թեթևացնում ենք նրանց բեռը, երբ համբերատար ենք նրանց թուլությունների հանդեպ և նշում ենք այն լավ բաները, որ տեսնում ենք նրանց մեջ: Տերն անում է դա: Եվ մենք կարող ենք հետևել Նրա օրինակին. Նա ամենամեծ խնամատարն է:

Մենք հաճախ ենք խոսում Հիսուս Քրիստոսի Եկեղեցում քույրերի շրջանակի ուժի մասին: Մենք պետք է սովորենք հասկանալ, որ Փրկիչը միշտ այդ շրջանակում է, երբ մենք հրավիրում ենք Նրան:

Ավելի ու ավելի շատ անգամ մենք կտեսնենք Աստծո դուստրերին իրենց շրջանակ ավելի շատ քույրերի հրավիրելիս: Երբ քույրերը գալիս են ժողովի և նստատեղ են փնտրում, նրանք կլսեն մեղմ հրավերը. «Խնդրում եմ, ե՛կ կողքս նստիր»:

Մենք կլսենք այդ խոսքերը Լյուսի Մակ Սմիթի կանխատեսած գալիքի օրը, երբ քույրերը «միասին կնստեն երկնքում»: Այդ օրվան չենք պատրաստվում մեկ ակնթարթում: Դա հնարավոր է օրերի և տարիների ընթացքում միմյանց մասին հոգալու և հավերժական կյանքի խոսքերը մեր սրտի մեջ փայփայելու շնորհիվ:

Իմ աղոթքն է, որ մեզանից շատերը միասին լինեն մեր առջև բացվող փառահեղ ապագայում: Ես բերում եմ իմ վկայությունը, որ այդ օրերի հետ կապված ձեր հույսը կարդարանա: Տեր Հիսուս Քրիստոսն Իր անսահման Քավությամբ դա հնարավոր է դարձրել մեզանից յուրաքանչյուրի համար: Երկնային Հայրը լսում և պատասխանում է հավատքի ձեր աղոթքներին, երբ ուղղություն և օգնություն եք աղերսում Նրա համար ձեր ծառայության մեջ համբերելու համար:

Սուրբ Հոգին ուղարկվել է ձեզ և նրանց, ում մասին հոգ եք տանում: Դուք ուժ կստանաք բայց նաև կոգեշնչվեք՝ իմանալու ծառայելու ձեր կարողության չափը: Հոգին կսփոփի ձեզ, երբ հարցնեք. «Արդյո՞ք բավականաչափ եմ արել»:

Ես վկայում եմ, որ Տերը կլինի ձեզ հետ, Նա ձեր ուղին կպատրաստի և կնախանշի, երբ ծառայեք կարիքի և փորձության մեջ գտնվողներին, ում Նա սիրում է: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Lucy Mack Smith, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 25.
2. Brigham Young, in *Daughters in My Kingdom,* 36.
3. Lucy Meserve Smith, in *Daughters in My Kingdom,* 37.
4. Lucy Meserve Smith, in *Daughters in My Kingdom,* 37.
5. Մատթեոս 25.40:
6. Մոսիա 4.26:
7. Մոսիա 4.27:
8. Վարդապետություն և Ուխտեր 121.8:

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցանման այլ առիթների ժամանակ: Համարը ցույց է տալիս ելույթի առաջին էջը:

ԽՈՍՆԱԿ	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Նիլ Լ. Անդերսեն	(39) Ընտանիքի հավատքը չի սասանվում դստեր մահից հետո:
Շեյն Մ. Բոուեն	(15) Շեյն Մ. Բոուենը և նրա միսիոներական զուգընկերը ուսուցանում են մի ընտանիքի այն մասին, որ փոքր երեխաները կարիք չունեն մկրտվելու:
Լինդա Ք. Բըրթըն	(78) Մի կին օգնում է Լինդա Կ. Բըրթընին ամուսնանալուց հետո տաճարային իր երկրորդ այցի ժամանակ: (111) Պիոներ Մերի Լոյս Վոքերը կորցնում է իր ամուսնուն և երեխային՝ տապաստաններով անցնելիս:
Քրեյգ Ս. Քրիսչենսեն	(12) Վեցամյա Բեն Քրիսչենսենը զգում է Սուրբ Հոգին, երբ այցելում է տաճար բաց դռների օրը:
Դ. Թոդ Քրիստոֆերսոն	(47) Մի պատանի Հնդկաստանից քրտնաջան աշխատում է՝ իր ընտանիքին օգնելու և կրթություն ստանալու համար:
Քվենթին Լ. Քուք	(6) Բրիտանացի օլիմպիացի Էրիկ Լիդելը հրաժարվում է վազքի մրցումներից կիրակի օրերին:
Էնն Մ. Դիբ	(10) Երիտասարդ աղջիկը վստահորեն կրում է Եկեղեցու իր անդամությունը հռչակող վերնաշապիկը:
Լարի Էքո Հոք	(32) Լարի Էքո Հոքի մարզիչը գտնում է նրա Մորմոնի Գիրքը:
Հենրի Բ. Այրինգ	(60) Հենրի Բ: Այրինգը փորագրություն է կատարում իր տղաներից յուրաքանչյուրի համար՝ նրանց հատուկ պարգևները ներկայացնելու համար: (72) Հենրի Բ: Այրինգի թոռնուհին նայում է Հիսուսին տաճարի բաց դռների օրը: (72) Հենրի Բ: Այրինգը թողնում է Ստենֆորդի Համալսարանը Ռիքս Քոլեջում աշխատելու համար: (72) Հենրի Բ: Այրինգի հարսը աղոթում է ափին և նվիրում իր ժամանակը Տիրոջը:
Ռոբերտ Ս. Գայ	(34) Ռոբերտ Ս. Գայի հայրը հարցնում է նրան, թե արդյոք նա կվաճառեր իր հոգին հինգ սենթով: (34) Ռոբերտ Ս. Գայը հետևում է ճանապարհի կողքին լաց լինող տղային օգնելու հուշումին:
Դանիել Լ. Ջոնսոն	(101) Վերջին օրերի սրբերը այցելում են տաճար նրանից հետո, երբ փոթորիկը ոչնչացնում է բերքը:
Թոմաս Ս. Մոնսոն	(68) Ն. Էլդոն Թանները զարմանքով նկատում է, ինչպես են չորս տղամարդ առաջընթաց ապրում քահանայության մեջ: (68) Թոմաս Ս. Մոնսոնը ոգեշնչում է ստանում՝ կանչելու ճյուղի նախագահներ: (68) Ջոն Հ. Գրոբերգը բերում է իր վկայությունը Թոնգայի թագավորին: (86) Թոմաս Ս. Մոնսոնը հետևում է հուշումին և խորհուրդներ տալիս միսիոներական աշխատանքի վերաբերյալ: (86) Թոմաս Ս. Մոնսոնը հետևում է հիվանդանոցում ընկերոջն այցելելու հուշումին: (86) Թոմաս Ս. Մոնսոնը խրախուսում է երիտասարդ տղային ծառայել միսիայում: (86) Երիտասարդների աղոթքը տաճարի մշակութային տոնակատարության ժամանակ պատասխան է ստանում:
Ռասսել Մ. Նելսոն	(18) Տղամարդը արձագանքում է «կանգնեցրու հեծանվով տղաներին» հուշումին:
Ռասսել Տ. Օսգութորփ	(96) Կիրակնօրյա դպրոց այցելող երիտասարդները օգնում են աուտիզմով տառապող դասարանի երկու անդամների կիսվել իրենց սովորածով:
Բոյդ Ք. Փաքեր	(75) Բոյդ Ք. Փաքերի նավակը հայտնվում է օվկիանոսի սաստիկ փոթորկի մեջ արևմտյան Սամոայում:
Լինդա Շ. Ռիվս	(118) Լինդա Ս. Ռիվսը շրջվում է դեպի Աստված, երբ իր ամուսինը հիվանդանում է:
Ռիչարդ Գ. Սքոթ	(93) Ռուսաստանում երիտասարդները յուրաքանչյուրը ինդեքսավորում է 2000 նախնիների անուն և ներկայացնում դրանք տաճարային աշխատանքի համար:
Քերոլ Մ. Սթեֆենս	(115) Երիտասարդ կանայք հասնում եմ օգնելու միմյանց պիոներների հետքերով ճանապարհորդության ժամանակ:
Գարի Ի. Սթիվենսոն	(51) Քոլեջի ուսանողը Ճապոնիայում լքում է երեկույթը, մարիխուանայի սիգարեթներից հրաժարվելուց հետո:
Սքոթ Դ. Վայթինգ	(37) Տաճարի կապալառուները վերանորոգում են երկու փոքր ճեղքերը Լեյ Հավայան Տաճարում:

Նվազեցվել են միսիոներական ծառայության տարիքային պահանջները

Հիթեր Վիթլ Ռիգլի
Եկեղեցու նորությունները և իրադարձությունները

182-րդ կիսամյա գերագույն համաժողովի բացման նիստին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարեց, որ անմիջապես ուժի մեջ է մտնում որոշումն այն մասին, որ տղամարդիկ կարող են սկսել ծառայել միսիայում 18, իսկ կանայք՝ 19 տարեկանից:

Ավելի ուշ, մամլո ասուլիսին Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, շեշտեց, որ այդ փոփոխությունը կամավոր ընտրություն է. «Երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք չպետք է սկսեն իրենց ծառայությունը, քանի դեռ պատրաստ չեն հոգեպես և նյութապես», - ասաց նա: Ուսումը, ընտանեկան պայմանները և առողջությունը կարևոր դեր են խաղում միսիոներական ծառայության ժամանակը որոշելիս:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրեց, որ ծառայության պատրաստ միսիոներները կարող են երաշխավորվել լիաժամկետ միսիայի իրենց եպիսկոպոսի կամ ցցի նախագահի կողմից 18 տարեկան դառնալուց 120 օր առաջ կամ երբ կարող են: Երիտասարդ տղամարդիկ կարող են մուտք գործել միսիոներների ուսուցման կենտրոն (ՄՈՒԿ) ավագ դպրոցը կամ դրան համարժեք ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո և 18 տարեկանը լրանալուց հետո, իսկ կանայք՝ 19-ը:

Ծառայության պատրաստ միսիոներներին առաջարկվում է խորացնել իրենց նախամիսիոներական պատրաստվածությունը՝ ՄՈՒԿ մուտք գործելուց առաջ:

«Աստված արագացնում է Իր աշխատանքը, - ասաց Երեց Հոլլանդը,- Նա կարիք ունի ավելի ու ավելի պատրաստակամ և արժանի միսիոներների, որ տարածեն Հիսուս Քրիստոսի ավետարանի լույսը, ճշմարտությունը, հույսը և փրկությունը հաճախ խավար և վախերով լի աշխարհում»:

Երեց Հոլլանդն ասաց, որ հավանական է լրացուցիչ միսիաների ստեղծումը:

Հաշվի առնելով աշխարհով մեկ միսիաներում միսիոներների թվի ակնկալվող աճը, ՄՈՒԿ-ում անցկացվող ժամանակը բոլոր միսիոներների համար կնվազեցվի մեկ-երրորդով: Վերջերս կիրառված 12 շաբաթանոց ուսուցման ծրագիրը, որն իրականացվում է միսիայի վայրում, կօգնի շարունակել միսիոներների պատրաստումը: ■

Կարդացեք ավելին՝ "missionary age requirement" բաժնում, news.lds.org:

Երիտասարդ տղամարդիկ կարող են սկսել ծառայել միսիայում 18, իսկ կանայք 19 տարեկանից, կախված անձնական իրավիճակից և տեղական քահանայության ղեկավարի որոշումից:

© 2004 IRI

Մեր ժամանակների ուսմունքները

2012թ. հոկտեմբերից մինչև 2013թ. մարտի չորրորդ կիրակիները Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության դասերը պետք է մատուցվեն 2012թ. գերագույն համաժողովի մեկ կամ ավելի ելույթներից: 2013թ. ապրիլից ելույթները կարող են ընտրվել կամ 2012.թ հոկտեմբերի, կամ 2013թ. ապրիլի համաժողովից: Ցցերի և շրջանների նախագահները պետք է որոշեն, թե որ ելույթներն ընտրվեն իրենց տարածքներում:

Իմացեք ավելին, ուսումնասիրելով «Մեր ժամանակների ուսմունքները» բաժինը 2012թ. մայիսի *Լիահոնա*-ում (lds.org/liahona): ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՋՐԻՄՏՐԱ ՍՄԻԹ, © IRI

Եկ, ինձ հետևիր *ուսումնական նոր ծրագիրը կօգնի ուսուցիչներին ուսուցանել Փրկչի ձևով և օգնել երիտասարդներին ավելի լիարժեք դարձի գալ դեպի ավետարանը:*

Եկեղեցին հայտարարում է 2013թ. երիտասարդների նոր ուսումնասկան ծրագիրը

Եկեղեցին հայտարարեց նոր ուսումնասկան ծրագիրը՝ *Եկ, հետևիր ինձ՝. Ուսումնական նյութեր երիտասարդների համար*—, նախատեսված 2013թ. Ահարոնյան Քահանայության քվորումների, Երիտասարդ Կանանց և Կիրակնօրյա դպրոցի երիտասարդների դասարանների համար:

Եկ, հետևիր ինձ ծրագրի հիմնական նպատակներից մեկն է՝ օգնել ուսուցիչներին եկեղեցում և տանը ուսուցանել Փրկչի ձևով, նմանեցնելով դասերն ավելի շատ ավետարանի շուրջ կենտրոնացած զրույցների: Երիտասարդները կիրավիրվեն ավելի մեծ դեր խաղալու ուսուցման և ուսման գործընթացներում:

«Շեշտը կդրվի հավատքը, դարձը և վկայությունը ամրացնելու և կառուցելու վրա, օգտագործելով Բարձրագույն Իշխանությունների և օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունների առավել արդի ուսմունքները», - ասվում է 2012թ. սեպտեմբերի 12-ի Առաջին Նախագահության նամակում:

Եկ, հետևիր ինձ ծրագիրը կազմված է միավորներից, որոնք ամեն ամիս կենտրոնանում են մեկ վարդապետական թեմայի վրա և ուսուցանում այն կիրակնօրյա դպրոցում, Երիտասարդ Կանանց և Ահարոնյան Քահանայության դասարաններում:

Յուրաքանչյուր միավոր պարունակում է թվով ավելի շատ դասեր, քան կարելի է ուսուցանել մեկ ամսվա ընթացքում, այնպես որ ուսուցիչներին և ղեկավարներին առաջարկվում է ոգեշնչում փնտրել և համակարգված գործել՝ որոշելու համար, թե որ դասերն օգտագործել:

Ուսուցանել ավետարանը Փրկչի ձևով նոր ուղեցույցը կօգնի ղեկավարներին և ուսուցիչներին ավելի լավ հասկանալ, թե ինչպես կարելի է հարմարեցնել դասերը իրենց երիտասարդների կարիքներին և օգնել նրանց սովորել ավետարանը:

Բոլոր դասերը կարելի է տպել համացանցից: *Եկ, հետևիր ինձ* ծրագրի տպագիր տարբերակը մատչելի կլինի ավելի ուշ: Մինչև 2012թ. վերջը բոլոր դասերի ծրագրերը մատչելի կլինեն առցանց 23 լեզուներով:

Անդամները, ղեկավարները և ուսուցիչները կարող են ավելին սովորել ուսումնական նոր ծրագրի մասին առցանց՝ **lds.org/youth/learn**:

Տարածքային և տեղական ղեկավարները կարող են ուսուցում տրամադրել ղեկավարներին և ուսուցիչներին մինչև 2012 թվականի վերջը: ■

Ավելին՝ news.lds.org կայքում:
Տես նաև այս համարի էջ 96-ը:

Նոր գործիքներ, որոնք օգնում են անդամներին պատրաստել ընտանիքի անունները

2012թ. հոկտեմբերի 8-ի նամակում Առաջին Նախագահությունը հրավիրել է երիտասարդներին և երիտասարդ ամուրիներին, մասնավորապես, ստանալ տաճարային ամբողջական օրհնությունները, պատրաստելով իրենց ընտանիքների անունները՝ տաճար ներկայացնելու համար:

Ավելին, «ընտանեկան անունների մեծ քանակ ամրագրած Եկեղեցու անդամներին [խրախուսվում է] որոշ ժամանակ անց հանել այդ ամրագրումները, որպեսզի նրանց համար կատարվեն անհրաժեշտ ծեսերը»:

Օգնելու համար անդամներին արձագանքել Առաջին Նախագահության կոչին, Եկեղեցին մշակում է նոր նյութեր և պատրաստում փորձառություններ, որոնք 10 լեզուներով կարելի է գտնել familysearch .org կայքում:

Օրինակ՝ new.familysearch.org-ի նոր տարբերակը, որը կոչվում է Ընտանեկան Ծառ, ավելի խորացված մոտեցում է տրամադրում մեր ընտանեկան պատմությանը, թույլ տալով օգտվողներին (1) կապվել և համագործակցել ընդհանուր ընտանեկան գծերով, (2) խմբագրել և ջնջել սխալ տվյալները, և (3) հեշտությամբ ներկայացնել նախնիների անունները տաճարային արարողությունների համար: Օգտվողները կարող են նաև գտնել տեսաֆիլմեր «Անուններ տաճար ներկայացնելը» և այլ ուսուցումների վերաբերյալ familysearch .org/treetraining կայքում: ■

Երեց Քրեյգ Ս. Քրիսչենսեն

Յոթանասունի Նախագահությունից

Երեց Քրեյգ Ս. Քրիսչենսենը սկսել է ծառայել որպես Յոթանասունի Նախագահության անդամ 2012թ. օգոստոսի 1-ին՝ այդ պաշտոնին 2012թ. ապրիլին կանչվելուց հետո:

Երեց Քրիսչենսենը ծնվել է Շերոն և Քոլին Քրիսչենսենների ընտանիքում Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, ԱՄՆ, 1956թ. մարտին և մեծացել է հյուսիսային Կալիֆոռնիայում «ակտիվ և դաստիարակող ՎՕՍ ընտանիքում»: Նա շեշտում է, որ միշտ հավատացել է, որ ավետարանը ճշմարիտ է, թեև իր վկայությունն ամրացել է Չիլիյում իր միսիոներական ծառայության ընթացքում:

«Միսիոներ լինելու ընթացքում, Սուրբ Հոգին զգալու իմ ցանկությունը դարձավ մշտական, իսկ ավետարանի մասին վկայությունս խորացավ և դարձավ ինձ համար շատ ավելի շոշափելի», - ասել է նա: Իր միսիայի ընթացքում նա սիրեց Մորմոնի Գիրքը և այդ սերը շարունակվում է երևալ այսօր նրա ուսմունքների մեջ:

Երեց Քրիսչենսենը Յոթանասունի Առաջին և Երկրորդ Քվորումների անդամ է եղել 2002 թվականից: Վերջերս նա ծառայում էր որպես Քահանայության Բաժնի Գործադիր Տնօրեն: Անցյալում նրա կոչումները ներառում են Մեքսիկա Հարավային Տարածքի, Մեխիկո Սիթիի Արևելյան միսիայի նախագահ, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական և միսիայի նախագահ:

Երեց Քրիսչենսենը ստացել է բակալավրի աստիճան հաշվապահության գծով Բրիգամ Յանգ Համալսարանում և բիզնես կառավարման մագիստրոսի կոչում Վաշինգտոնի Համալսարանում: Նա ունեցել և վարել է բիզնեսներ մեծածախ ավտոմեքենաների և անշարժ գույքի զարգացման բնագավառներում, հանդիսացել է այցելող ուսուցիչ մի քանի համալսարաններում:

Երեց Քրիսչենսենը ամուսնացել է Դեբորա Ջոնսի հետ 1978թ. մարտի 28-ին: Նրանք բնակվում են Հոլլադեյում, Յուտա, ունեն չորս երեխա և հինգ թոռ: ■

Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Քերոլ Մ. Սթեֆենս
Առաջին Խորհրդական



Լինդա Ք. Բըրթըն
Նախագահ

Լինդա Շ. Ռիվս
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ

Մերի Ն. Քուք
Առաջին Խորհրդական

Էլեյն Ս. Դալտոն
Նախագահ



Էնն Մ. Դիբ
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Ջին Ա. Սթիվենս
Առաջին Խորհրդական

Ռոզմարի Մ. Վիքսոմ
Նախագահ



Շերիլ Ա. Էսփլին
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Լարի Մ. Գիբսոն
Առաջին Խորհրդական

Դեյվիդ Լ. Բեք
Նախագահ

Ադրիան Օչոա
Երկրորդ Խորհրդական

ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑ

Դեյվիդ Մ. Մակքոնկի
Առաջին Խորհրդական

Ռասսել Տ. Օսգաթորփ
Նախագահ

Մեթյու Օ. Ռիչարդսոն
Երկրորդ Խորհրդական

© MICHAEL T. MALM, ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հավատքի քայլ,
Մայքլ Թ. Մալմ

«Եվ աշակերտներն երբոր տեսան [Հիսուսին] ծովի վերայ գնալիս, շփոթվեցան. . .

Եվ Հիսուսը շուտով խոսեց նորանց հետո և ասեց. Քաջ եղեք, ես եմ՝ մի վախենաք։

Եվ Պետրոսը պատասխան տվավ նորան և ասեց. Տեր, եթե դու ես, հրամայիր ինձ, որ ջրերի վերայով քեզ մոտ գամ։

Նա էլ ասեց. Եկ։ Եվ Պետրոսը նավիցը իջնելով ջրերի վերայովը գնաց, որ գայ Հիսուսի մոտ» (Մատթեոս 14.26–29)։

«Ես հաճույքով հայտարարում եմ, որ այս պահից ուժի մեջ է մտնում այն, որ բոլոր արժանի երիտասարդ տղամարդիկ, ովքեր ավարտել են ավագ դպրոցը կամ դրան համարժեք դպրոց, անկախ իրենց բնակության վայրից, հնարավորություն ունեն երաշխավորվելու միսիոներական ծառայության 19-ի փոխարեն 18 տարեկանից», - հայտարարեց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Եկեղեցու 182-րդ կիսամյա գերագույն համաժողովի բացման նիստին: Նա նաև ասաց. «Այսօր ես ուրախությամբ հայտարարում եմ, որ արժանի երիտասարդ կանայք, ովքեր ծառայելու ցանկություն ունեն, կարող են երաշխավորվել միսիոներական ծառայության սկսած ոչ թե 21, այլ 19 տարեկանից»:

ARMENIAN

4 021049120 1 0

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ